

## ՀՐԱՀԱՆԳ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱԿԱՏԻ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒՂԱՓԱՌ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ

Աշխատասիրությամբ՝ վարժապետ Մսեր Գրիգորյան Ձմյուռնացու  
Թարգմանությունը գրաբարից՝ Գևորգ Բաբկենի Թոսունյանի

### ՀՐԱՄԱՆ

տպագրության համար

Ընթերցելով Հայոց Առաքելական ամենաբարեպաշտ եկեղեցու քրիստոնեական հավատքի և դավանանքի սույն համառոտությունը ճիշտ հնվատությամբ՝ շարադրված համաձայն բազմաթիվ վկայությունների, ՀՐԱՄԱՅՎՈՒՄ է իջեցնել տպագրության հոգուտ մեր մանուկների: Տպագրության համար դնում ենք մեր Պատրիարքական կնիքը և ստրագրում այն մեր ձեռքով

1850թ մարտի 30 Պատրիարք, Կաթողիկոս ամենայն Հայոց ՆԵՐՍԵՍ

Խոնարհական նվեր Հայաստանյաց ամենամաքուր եկեղեցու մեծ խնամակալ, սուրբ առաքյալներ Թադեոսի և Բարդուղիմեոսի արժանաժառանգ աթոռակալ, ամենայն Հայոց եպիսկոպոսապետ և կաթողիկոս ՏԵՐ ՆԵՐՍԵՍԻՆ

Իմ ջանքերի այս չնչին պտուղը, որ վաղուց սկսել էի Ձեր նախահրաման ակնարկությամբ Հնչեշտում իմ մեկուսացման ժամանակ և այժմ ամենահզոր Աստծու հաջողությամբ ավարտին հասցրի, ջանում եմ ջերմեռանդ սրտով և ամենապատկառելի ակնածությամբ դարձյալ նվիրել Ձեզ, ո՛վ Աստվածային քահանայապետ: Ձեր վեհափառ տերության Նվաստ ծառա, թեմական սպասավոր Մսեր Գրիգորյան Ձմյուռնեացի

### ԱՌԱՋԱԲԱՆ

Աստծու մասին խոսելը դժվար է, և որքան դժվարին, այնքան էլ կարևոր է: Այս նկատի ունենալով՝ մեր ազգի առաջին երանաշնորհ հովվապետները և վարդապետները հենց սկզբից հոգ տարան ըստ Աստվածային Հոգու պարգևների, որոնցով հարստացան, անմնացորդ կերպով ուսուցանել Քրիստոնեական կրոնի գիտությունը եկեղեցու մանուկներին: Եվ հաճելի էր նրանց այն կատարելու՝ որը համառոտ, որն էլ ընդարձակ խոսքերով վարդապետելով՝ դեպքերի հարկավորության և ժամանակի պահանջի համաձայն: Եվ ոչ միայն առանձին-առանձին մատյաններում՝ մեկնական, վարդապետական, աղոթական, խրատական, ինչպես նաև հրաշալի Աստվածօրհնություններում, որոնցով էլ ավելի պնդալի ու ավելի պայծառ լուսավորվեց Հայաստանյաց եկեղեցին, մինչև անգամ այդ մասին հրապարակավ դնելով հունականի վկայությունը, որն այլ կարծիքի էր մեր մասին, ինչպես որ Գրիեորիսն է ասում հնջորդ

Շնորհալուն<sup>1</sup>, թե «Ձեր (պաշտամունքի) երգերով և օրհնություններով, այն է՝ շարականներով, ճանաչեցինք ձեր ճշմարիտ հավատի ուղղափառ դավանանքն առ Աստված»:

Այսպիսով փոքր կամ թեթևագույն հանդգնություն չէ, եթե նրա շնորհներից ետ մնացողներից մեկը, ըստ իս, ինքնախոս քննադատ խոսքերով ձգտի ուսուցանել հավատի մասին, որպես թե ինչ-որ ձևով կարծելով աստվածաբանել\*։ Քանի որ մեզ համար բավական են և բավական կլինեն (եթե խոսքը ինչ-որ ծանր չթվա) նրանց ավանդաց ճշմարտաքարոզ վարդապետությունները, որոնք լի և նիթերի հավաքված պահվում են իբրև թանկագին ակնեղենների շարքեր, և նրանք, որոնք քրիստոնեական հավատի հոգեկեցույց հրահանգներն են կամ էլ Աստվածաբանական կոչված գիտության անփոփոխ վախճանները:

\* Մինչ ուրիշներն են տեսնում, ասում է մեր Սարգիս Շնորհալի վարդապետը (Հակոբ մեկն. ճառ. Ը), առօրյա իմաստուններն ու ինքնաձեռնադրելի աստվածաբանները, անկիրթ վարդապետները, ինքնուս ճառասանները, առանց Աստվածաշնչի և այլ աշխատությունների ընթերցման ուսուցիչները, զարմանում են, որ հենց այնպես խոստանում են իմանալ Սուրբ Գրքի իմաստը, ինչպես որ նրանք իսկ չգիտեն, ովքեր Աստծու Հոգու օգնությամբ գրեցին Սուրբ Գիրքը և տվեցին մեզ: Նաև նրանցից ավելի համարձակ կերպով են վարդապետում և չեն վախենում սուտ խոսքերի համար պատժից. այսպիսիներին պարտ էր արտասվել և մեծապես ողբալ ու խրատել: Կամավոր թող ոչ ոք հանցանք չգործի և ընդունի Աստծու մեծ դատաստանը:

Արդ՝ ես պարտավորվեցի ամբողջ ասվածի վերաբերյալ ջանք թափել և մի ազգասերի անդուլ թախանձանքների համաձայն սկսել նախ խմբագրել այս Քրիստոնեական հավատի հրահանգը թե ոչ թե իմ կամ ոմանց կողմից եռանդուն կերպով նորաձևել Քրիստոնեական հավատքի խոսքը, այլ վերցնել հնվնսնրապես հենց նուրն՝ մեր Աստվածազան Հայրերի ողջամիտ վարդապետություններից, որպես անպղտոր ու հստակաբուխ աղբյուրներից: Եվ սա դյուրությամբ մատուցելու և մեր մանուկների կրթության գործը հեշտացնելու նպատակով գրեցի հարց և պատասխան ձևով. ոչ ընդարձակ և ոչ էլ շատ հպամառոտ, այլ ամեն կերպ ըստ հնարավորին պահպանելով չափը, կամ էլ, ըստ շատերի կարծիքի՝ միջին շավիղ ընտրելով: Սակայն պետք է խոստովանել նաև, որ այնտեղ, որտեղ ճշմարիտ խոսքեր էին պետք, շատ հաճախ մեջբերումներկատարեցի ոչ միայն մեր նախնիների վկայություններից, այլ նաև օտարզագի գիտնական սուրբ Հայրերի, որոնց տոնը տոնում է նաև Հայաստանյաց եկեղեցին, ինչպիսիք են Եփրեմը՝ Ասորիների ճրագ անվանվածը, Դիոնիսիոս Արիսպագացին, Աթանասը՝ Ալեքսանդրացիների հայրապետը, Կյուղեղները Երուսաղեմացին և Ալեքսանդրացին, Գրիգոր Սքանչելագործը, Գրիգոր Նյուսացին, Գրիգոր Նազիանզացին՝ նույն ինքը Աստվածաբանը, Հովհանն Ոսկեբերանը՝ մյուսների հետ միասին: Եվ նրանց բոլոր խոսքերը ջանացի ընտրությամբ

<sup>1</sup> 1 Տե՛ս Հայաստանի հյուսիսային կողմերի վարդապետներին գրած թղթում:

քաղել նրանց արժանահավատ մատյաններից, փնտրողները բոլորը մեկտեղ կարող են գտնել գրքիս երկրորդ մասում, համապատասխան համարի տակ:

Հավատքին վերաբերող վկայությունները, որ քաղված են մեր մատենագիրներից և առկա են այն սույն աշխատության մեջ, էլ ավելի մանրամասնորեն կարելի էր ներկայացնել, եթե ձեռքերի տակ ունենայինք ավելի հարուստ գրադարան: Բայց, եթե շատ բան փնտրեինք, միանգամից բոլորից կզրկվեինք: Այդ պատճառով հարմար դեռանք բավարարվել ձեռքի տակ եղածով: Որովհետև այն, ինչ հիշատակվում է այստեղ՝ առաջին մասում եղած քարոզներն ու վկայությունները, չնչին բան չեն կամ էլ քչերին ծանոթ, այլ վաղնջական դարերից հայտնի են բոլորին թե՛ իրենց շնորհարար իմաստությամբ և թե՛ Աստվածային վարքի սրբությամբ, որոնց մեջ իրավամբ բոլորից բարձր է փառավորվում և պիտի փառավորվի հավիտյան իր հաճախապատում վարդապետությամբ ամենաերանելի մեր Լուսավորիչը՝ Գրիգոր Պարթևը, որը արդարև համարվում է Երկրորդ Պողոսը՝ Աստծու խորհուրդների հավատարիմ հազարապետը կամ (ինչպես հրաշաբանում է Բերանը Ոսկի)<sup>2</sup> Երրորդության օթևանը, սրբության տաղավարը, իմաստության ճեմարանը, աղբյուրահոս միտքը, աննիրհելի աչքը, քրիստոնեական օրենքների վարդապետը, նրա ավանդությունների ուսուցիչը, անպատճառելիները տեսնողը, ուղղափառության հիմքը, եկեղեցու ամրությունը, հովվապետերի նկարագիրը, մարտիրոսների պարծանքը, առաքյալներին լրացնողը, երկնային գործերի դասակից, նրքայության բնակիչը, Հայր Աստծու ժառանգորդը, Քրիստոսի ժառանգակիցը:

Նրացից պակաս չպետք է համարել որդուն՝ արիստակեսին, որը Ավետարանների քարոզչության ժիր մշակներից էր, իր հոր նմանակը, ինչպես նաև «հորից էլ առավել (ինչպես որ պատմում է մեծ քառտուղար Ագաթանգեղոսը) բարձր էրցույց տալիս իր վարդապետությունը»<sup>3</sup>: Բայց ավանդ, դրանցից ոչ մի բան մեզ չհաղողդվեց գրավոր:

Այս բանը մեզ՝ Հայաստանյաց եկեղեցու որդիներիս համար պակաս ցավ չէ, սակայն մխիթարությունից իսպառ զուրկ չենք մնում՝ Աստվածապարզև հովվապետին հիշատակելուց հետո նույն՝ Առաքելական աթոռի ժառանգորդներին տեսնելով դեպի մեզ լույսով ծագած իրենց Աստվածախոս մատյաններով ու գրվածքներով: Իսկ ովքե՞ր են նրանք: Նրանք են՝ Մեծ Սահակը իր լծակից Մեսրոպի հետ միասին, Գրոտը, Մանդակունին, Կոմիտասը, Հովհան Օձնեցին, Պետրոսը, որին Գետադարձ ենք կոչում, Գրիգոր Վկայասերը, Ներսես Շնորհալին, և նրանցից հետո Հայրապետական աթոռին նստած Տղա անվանված Գրիգորը: Նրանք իրենց ապրած դարերում, իրենց վիճակներում Աստվածային իմաստով լուսափայլեցին Թորգոմի տանը մեկ-մեկ կամ երկու-երկու ինչպես խավարչտին տեղը իրենց լույսի շողը արծակելով թույլ կամ ուժեղ, պայծառ կամ աղուտ: Հավետ հալածանքներնի ամենավրդով և անդաադր անրյունաթեղության

<sup>2</sup> Ներբողական ճառում է, որ արտասանեց Լուսավորիչի տոնի օրը՝ ի պատիվ նրա, երբ աքսորված էր Հայոց Կոկիստ, Տիրոջ 404թ

<sup>3</sup> Տե՛ս 639 էջ, ըստ նոր տպագրության

վրա հասնելու ժամանակներում, որոնցից Հայաստանյաց եկեղեցին, ինչպես նույն տապանը ջրհեղեղի ջրերի վրա, ծփում էր, ալեկոծվում, տատանվում, բայց չէր ընկղմվում, որովհետև որպես ղեկավար ուներ վերին հզոր Նախախնամությանը: Եվ այդպիսիներից են համարվում՝ քրթողների հայր անվանվող բազմատենչալի Մովսես Խորենացին, Եզնիկը, Մամբրեն, Դավիթ Անհաղթը, Եղիշեն, Անանիա Շիրակացին, Խոսրով Անձևացի եպիսկոպոսը, Գրիգոր նարեկացին, Գրիգոր Մագիստրոսը, Իգնատիոս Մեկնիչը, Սարգիս Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Սկևռացին և նրանց մյուս հետևորդները: Անվայելուչ չէ, եթե մեր հոգեջան աշխատողներին դնենք նրանց հավասար, իսկ Մեծբինի սուրբ հայրապետ Հակոբին՝ ազգակից մեր Լուսատուին, որի մականունն է Ջզոն, որի ճառերի թարգմանությունները ասորերենից ունենք մեր մեր նախնիների ժամանակներից:

Կարելի է առաձին տեղում մանրամասնորեն ցույց տալ մատենագիրներից յուրաքանչյուրի վարքը, գործն ու գրավոր վաստակը, բայց չկամենալով սովորացնել գրքիս ծավալը, բավարարվում եմ այսքանը ներկայացնել մեր մեր հոգևոր ընթերցողների ուշադրությանը: Եթե սրանցում հանդիպում են վկայություններ, սրանք մեր երանելիների հավատի խոսքերն են, իսկ գրքերի կամ ճառերի անունները, որոնցից դրանք քաղեցին, նշված են վերջում: Իսկ առաջին մասում եղած համառոտ պատասխանները՝ ըստ առանձին-առանձին հարցերի, կամ Սուրբ Գրքից վերցված ստույգ վկայություններն են, կամ էլ սուրբ Հայրերի գրվածքներից են, որոնք եղել են մեր ձեռքի տակ: Այնուամենայնիվ, եթե ինձանից անկախ պատճառներով ինչ-որ տեղ վրիպած լինեմ, ցանկանում եմ սիրով ներեղություն խնդրել ընթերցողներից՝ անշուշտ իմանալով, որ ես էլ եմ մահկանացու մարդ և մահկանացուի սխալական ծնունդ<sup>4</sup>:

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

հավատո հանգանակի մասին

Որովհետև հավատի կամ հավատալիքի գլխավոր մասերը համառոտ կերպով բովանդակում են հանգանակի մեջ, որը ուրիշները կոչում են դաշն կամ նշանակ հավատո, կարևոր եմ համարում գրքիս նախաբանում տալ որոշ տեղեկություններ այդ մասին:

Առաքելական անվանված հանգանակից բացի, որը հռոմեական եկեղեցուն ևս գործածվում է ժամասացության առանձին կամ ծածուկ աղոթքներում, գտնվում են նաև քրիստոնեական եկեղեցուն վերաբերող եռյակ այլ հանգանակներ՝ ա) հանգանակ Նիկիայի ժողովի, բ)

---

<sup>4</sup> Չկա որեւէ մարդ, որ իր մտքի փոքր գիտությամբ խոսի Աստծու մասին եւ չսխալվի, թեպետեւ գիտությամբ կատարյալ լինի եւ տիրապետի բոլոր գիտություններին (Ս. Շնորհալի, Մեկն. Հակ. Ճառ. Ը.):

Կոստանդնուպոլիսի ժողովի և գ) մեր եկեղեցու: Բեցի Աթանասին վերագրվող հանգանակից<sup>5</sup>, որը չի գործածվում:

Հայաստանյաց եկեղեցու հանգանակը հենց նույն Նիկիականն է, բայց հաստատված կարևորագույն բացատրություններով. սուրբ Գրիգոր Լուսավորչի և նրա հաջորդների և մեր առաջին հայրապետների կողմից, որոնք եղել են Եփեսոսի ժողովից առաջ՝ ամբողջովին հերքելու նրանց ժամանակ ծագած և տածրածված Աստվածընդդեմ մոլորությունները, այն է՝ Արիոսի, Մակեդոնի, Եվնոմյանների, Ապողինարյանների և ուրիշների: Եվ որովհետև բոլոր բացատրությունները ըստ բառերի կամ ըստ իմաստների, մեծ մասամբ վերցված են Կոստանդնուպոլիսի ժողովի հանգանակից, որոնք մինչև օրս գործածում են հունական բոլոր եկեղեցիները, ես կամեցա կանոնավոր ու մտածված ստորև միմյանց հանդեպ դնել նախ հիշյալ ժողովների առաջին երկու հանգանակները և ապա՝ առաժին մերը՝ տարընթերցվածների ու տարբերությունների հավելվածով:

Աններելի մեղք է գործում նա, ով ճշմարտությանը հասնելուց հետո դարձյալ պարսավելի վարքով մնում է օտարոտի կարծիքի մեջ և մեր անբիծ եկեղեցու վրա որևէ բիծ է դնում, որպես թե մեր հանգանակում կան ինքնագյուտ կամ նորաձայն վարդապետությունների հավելվածներ՝ ընդդեմ Եփեսոսի ժողովի կանոնական հրամանների մի նոր հավատ սահմանելը՝ Նիկիայի ժողովում սուրբ Հայրերի սահմանածից տարբեր<sup>6</sup>: Քանի որ ոչ թե տարբեր, այլ իսկապես միևնույն հավատն է, որ ընդունեցին և սահմանեցին հաջորդաբար գումարված երեք սուրբ ժողովները հարյուր վեց տարվա ընթացքում<sup>7</sup>, և ինչպես որ պատմություններից հայտնի՝ երկրորդն առաջինն ընդունեց և հաստատեց սահմանադրությունը, իսկ երրորդը՝ երկրորդինը առաջինի հետ միասին<sup>8</sup>: Դրա համար էլ Հայաստանյաց եկեղեցին Նիկիական հանգանակը ընդունելուց հետո (որը բերեց սուրբ Արիստոկեսը, և այն հաստատվեց նրա հոր՝ սուրբ Լուսավորչի կողմից) հոգ տարավ՝ բոլոր ժամանակներում այն հաստատ ու անփոփոխ պահելու, և այն այնպիսի գերագույն հարգանքով,

<sup>5</sup> Այս հանգանակի օրինակը կա հույն պատմագիր Սոկրատի գրքում (գլ. խթ), որից էլ վերցրել է Հակոբ Պատրիարքը (Մեկ. Նարեկ., էջ 267):

<sup>6</sup> Սա հնյունի է նաև Կյուրեղ Ալեքսանդրացու խոսքերով, որը Մելտենի Ակակիոս եպիսկոպոսին գրած թղթում. «Սուրբ և տիեզերական ժողովը, որ գումարվեց Եփեսացիների քաղաքում, անհրաժեշտաբար սահմանեց Աստծու եկեղեցիներին պարտք չմնալ, այլ հավատամքը ներմուծել այքան, որքան կար, որ մեր երիցս երանելի Հայրերը սահմանեցին (Նիկիայում)՝ ասված Սուրբ Հոգով» (Պարապ. գրքում, էջ 429):

<sup>7</sup> Նիկիայի ժողովը գումարվեց ընդդեմ Արիոսի՝ երեք հարյուր տասնութ հայրապետների կողմից (որոնցից մեկն էլ մեր Արիստակեսն էր), 325թ., կոստանդնուպոլիսինը՝ ընդդեմ Մակեդոնի՝ հարյուր հիսուն հայրապետների կողմից (որոնցից մեկն էլ մեր Ներսես Մեծն էր) 381թ., Եփեսոսինը՝ ընդդեմ Նեստորի՝ երեք հարյուր հայրապետների կողմից, 431թ. (Տե՛ս Խորենացի «Պատմ.» գիրք բ., գլ. ձթ, գիրք գ., գլ. 1գ., կա): Այս վերջին սուրբ ժողովին հրավիրված էր նաև մեր Սահակ Պարթևը, բայց նա չկարողացավ անձամբ ներկայանալ՝ Պարսկաստան գնալու պատճառով. նա միայն գրավոր ըթնդունեց այն, ինչպես որ տեղեկացնում է Գրիգոր Տղա կաթողիկոսը, Հայոց հյուսիսային կողմերի վարդապետներին գրած թղթում (Տե՛ս Վարք սրբոց, հատ. դ., էջ 433):

<sup>8</sup> Տե՛ս Չամչյան «Պատմ. Հայ.» հատ. ա., էջ 459:

որ մինչև անգամ կոստանդնուպոլսի հանգանակի հաստատումից և հանգանակից հետո, որն ավելի ընդարձակ է, բաց չթողեց ո՛չ այս, ո՛չ այն, այլ ինչ-որ մեկում պակասում էր, մյուսով լրացրեց՝ երկուսը միասին պահպանելով: Եվ այսպիսի ամենամաքուր ստույգ խոստովանությամբ, որը միասնական Երրորդության Քրիստոսի տնօրինության և նրա եկեղեցու համար է, բոլոր դարերում միշտ ներկայացավ որպես ուղղափառ, անարատ և ամեն տեսակի հերետիկոսական մոլորություններից զերծ եկեղեցի, որպես բացահայտ ցույց են տալիս այն, ինչ հռոմեացիներից է, և այն, ինչ գրված է հռոմեացիների կողմից մերայիների վերաբերյալ<sup>9</sup>:

#### Հանգանակ Նիկիայի ժողովի<sup>10</sup>

Հավատում ենք մեկ Աստծու՝ ամնակալ Հորը բոլոր երևացողների և աներևույթների արարչին: Եվ մի Տեր Հիսուս Քրիստոսին Աստծու Որդուն, ծնված Հորից, Միածին այսինքն՝ Հոր էությունից. Աստված Աստծուց, Լույս՝ լույսից, Ճշմարիտ Աստված՝ Ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ արարած, Հորը համագոյակից: Որով այն ինչ եղավ, որ կա երկնքում և երկրի վրա: Որ մեզ՝ մարդկանց համար և մեր փրկության համար իջավ, ամրմնացավ, մարդացավ, չարչարվեց և հարություն առավ երրորդ օրը, բարձրացավ երկինք և գալու է մյուս անգամ դատելու ողջերին և մեռածներին: Եվ Սուրբ Հոգով: Իսկ ովքեր ասում են՝ կար ժամանակ, երբ չկար, և մինչև ծնվելը՝ չկար, և թե ոչնչից եղավ, կամ այլ ենթակայությունից կամ էությունից է եղել, ասում են, կամ ստեղծված է, կամ փոփոխական, կամ փոփոխելի Աստծու որդին, նրան նզովում է ընդհանրական եկեղեցին:

#### Հանգանակ Կոստանդնուպոլսի<sup>11</sup>

Հավատում ենք մեկ Աստծու՝ ամնակալ Հորը երկնքի և երկրի, բոլոր երևացողների և աներևույթների արարչին: Եվ մի Տեր Հիսուս Քրիստոսին Աստծու միածին Որդուն, Հորից ծնված առաջ, քան բոլոր հայիտյանները: Լույս՝ լույսից, Ճշմարիտ Աստված՝ Ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ արարած, Հորը համագոյակից: Որով այն ինչ եղավ, որ կա երկնքում և երկրի վրա: Որ մեզ՝

<sup>9</sup> Այսպիսիք են՝ ա) Կ. Պոլսի Պրոկղ Պատրիարքի նամակը Հայոց բոլոր եպիսկոպոսներին ու վարդապետներին, 235թ., բ) Փոտինը Ջաքարիա կաթողիկոսին, 862թ., գ) Մանվել կայսրինը, որի հետ նաև՝ դ) Միքայել Պատրիարքինը և Լստասնինը եպիսկոպոսներինը Գրիգորիս կաթողիկոսին Տղային, 1177թ., ե) Լյուսիոս Պապինը Հայոց նույն կաթողիկոսին, 1184թ., զ) Ուրբանոս Ե. Պապինը Հայոց եպիսկոպոսներին և իշխաններին, 1364թ.: Փատրող այս թղթերի օրինակները կարող է գտնել Չամչյանի «Հայոց Պատմ.» մեջ, հատ. ա. էջ 526, հատ. բ. էջ 682, հատ. գ. էջ 115-120, 142-144, 355-356:

<sup>10</sup> Այդ երկու հանվանակներն էլ մեզ է բերում Վարք սրբոցի գրիչը (տպ. Վենետիկում, 1813) հատ. ե., էջ 428-429, ինչպես նաև Հակոբ Պատրիարքը Նարեկի մեկն. մեջ, էջ 268:

<sup>11</sup> Այդ երկու հանվանակներն էլ մեզ է բերում Վարք սրբոցի գրիչը (տպ. Վենետիկում, 1813) հատ. ե., էջ 428-429, ինչպես նաև Հակոբ Պատրիարքը Նարեկի մեկն. մեջ, էջ 268:

մարդկանց համար և մեր փրկության համար իջավ երկնքից, և ամրմնացավ Սուրբ Հոգուց և ընյս Մարիամից և ներմարդացավ. մեզ համար խաչվեց Պոնտացի Պիղատոսի օրոք և չարչարվեց և թաղվեց և հարություն առավ երրորդ օրը՝ ըստ Սուրբ Գրքի, բարձրացավ երկինք, նստեց Հոր աջ կողմում և գալու է մյուս անգամ իր փառքով հանդերձ՝ դատելու ողջերին և մեռածներին. Նրա թագավորության վախճանը չկա: Եվ Սուրբ Հոգով՝ տերը, կենդանարարը, Հորից ելնողը, Հոր և Որդու հատ երկրպագիցն ու փառավորակիցը, որ խոսեց մարգարեների միջոցով:

Մի, սուրբ, կաթողիկե և առաքելական եկեղեցի:

Խոստովանում ենք մի մկրտություն, մեղքերի քավություն: Ակնկալում ենք մեռելների հարությունը, հանդերձյալ կյանքի հավիտենականությունը. ամեն:

Հազանակ Հայաստանյաց եկեղեցու<sup>12</sup>

Հավատում ենք մեկ Աստծու՝ ամնակալ Հորը, երկնքի և երկրի, երևացողների և աներևույթների արարչին<sup>1</sup>:

Եվ մեկ Տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն, ծնված Հայր Աստծուց<sup>2</sup>, Միածին, այսինքն՝ Հոր էությունից<sup>3</sup>. Աստված Աստծուց<sup>4</sup>, Լոյս՝ լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ արարած: Նույն ինքը՝ Հոր բնությունից<sup>5</sup>, որով ամեն այն ինչ եղավ երկնքում և երկրի վրա՝ երևացողներն ու աներևույթները<sup>6</sup>: Որ մեզ՝ մարդկանց համար և մեր փրկության համար իջնալով երկնքից<sup>7</sup>՝ ամրմնացավ, մարդացավ, կատարելապես ծնվեց<sup>8</sup> սուրբ կույս Մարիամից<sup>9</sup>՝ Սուրբ Հոգով<sup>10</sup>: Որով առավ մարմինը, հոգին, միտքը և այն ամենը, որ ունի մարդը՝ ճշմարտապես և ոչ կարծեռք<sup>12</sup>: Չարչարվեց, խաչվեց, թաղվեց<sup>13</sup>, երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում<sup>15</sup>: Գալու է նույն մարմնով<sup>16</sup> և նույն փառքով<sup>17</sup>՝ դատելու ողջերին և մեռածներին, որի թագավորությանը վախճան չունի: հավատում ենք և Սուրբ Հոգուն՝ անստեղծ ու կատարյալ<sup>19</sup>, որ խոսեց օրենքների մարգարեների և ավետարանների մեջ<sup>20</sup>, որ իջավ Հորդանանում, քարոզեց առաքյալներին և բնակվեց սրբերի մեջ<sup>21</sup>:

Հավատում ենք և միակ, ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցուն<sup>22</sup>: Մեկ մկրտությանը, ապաշխարությանը, մեղքերի քավությանն ու թողությանը<sup>23</sup>, մեռելների հարությանը, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանին<sup>24</sup>, երկնային արքայությանը և հավիտենական կյանքին<sup>25</sup>:

-Իսկ ովքեր ասում են՝ կար ժամանակ, որ չկար Որդին, կամ կար ժամանակ, որ չկար Սուրբ Հոգին, կամ թե՛ ոչնչից ստեղծվեցին կամ ասում են, թե Աստծու Որդին և կամ Սուրբ Հոգին եղել են ուրիշ էությունից կամ գոյացությունից, և թե փոփոխելի են կամ փոփոխական, այդպիսիներին նզովում է ընդհանրական և առաքելական եկեղեցին:

<sup>12</sup> Այս հանգանակի օրինակը գտնվում է մեր բոլոր ժամագրքերում, Մաշտոցներում և Խորհրդատետրերում:

-Իսկ մենք փառավորում ենք հավիտենականներից առաջ եղածին՝ երկրպագելով Սուրբ Երրորդությանը և մեկ Աստվածությանկ Հոր և Որդու և Սուրբ Հոգու այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն27:

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Նիկական հանգանակում չկա «երկնքի և երկրի», բայց կա Կոստանդնուպոլսի հանգանակում, որից էլ վերցված է մերը: Եվ դարձյալ մերժվում է Մենանդրի, Կերինթոսի, Բասիլիդեոսի, Ալեքսանդր Սամարացու և առաջին և երկրորդ դարի այլ հերետիկոսների մոլորությունը, որոնք չէին համարում միակ Աստծու ստեղծագործածը, այլ Հոգեղեն էակների ստեղծածը: Սրանց մասին է Կյուրաղ Երուսաղեմցու խոսքը. «Թող պապանձվեն նրանց բերանները, ովքեր ասում են, թե մեր աշխարհը հրեշտակների ստեղծածն է» (Կոչ ընծ. գլ. ԺԱ): Տե՛ս նաև ս. Շնորհալի (Մեկն. Բ Պետ. Ճառ Ե):

2 Կոստանդնուպոլսի հանգանակում գրված է «Ծնվել է Հորից բոլոր հավիտյաններից առաջ»: Իսկ մեր հանգանակը, որը հիսունվեց տարով առաջ է, քան կոստանդնուպոլսի ժողովը, իր վերջին փառավորական խոսքում մեր սուրբ Լուսավորիչն Աստվածային Հոգով ոչ միայն Որդուն, այլև երեք անձերին կամ Սուրբ Երրորդությանը խոստովանելով ասաց. «Ավելի առաջ, քան հավիտյանները» (Տե՛ս ծան<sup>6</sup> 27): Իսկ Որդու ծննդյան մասին առանձին տե՛ս գրքիս երկրորդ մասում, 77 համարը:

3 Կոստանդնուպոլսի հանգանակում չկա «այսինքն՝ Հոր էությունից», բայց կա Նիկիականում, որը կարևոր է Արիոսի մոլորության հերքման համար, որը չէր ընդունում Որդուն Հորը էակից կամ Հոր էությունից, այլ ոչնչից ստեղծված: Տե՛ս գրքիս երկրորդ մասում, 80 համարը:

4 Կոստանդնուպոլսի հանգանակում չկա «Աստված՝ Աստծուց», այլ կա \$ նիկիականում, որից էլ մերն է:

5 «Հորը համագոյակից» բառերի փոխարեն (որոնք ունեեն և՛ նիկիականնը և կոստանդնուպոլսինը) թվում է, որ մեր Լուսավորիչի խորհրդով դրվել է «Նույն ինքը Հոր բնությունից է». նախ՝ այս բառերի իմաստը նվելի ապահով է բոլոր թյուր կարծիքների դեմ, քան «Հմագոյակց» բառը, որը նախապես մերժվել էր Անտիոքի ժողովում 265 կամ 270թ. ՝ այն Պողոս Սամոսատացու կողմից գործածելու համար, ինչպես որ ցույց է տրվում ժողովների պատմության մեջ, և երկրորդ՝ որովհետև այդ նույն բանը նաև Նիկիայի ժողովինն էր, որը ապացուցում է հանգանակի առաջին նախադասությամբ՝ «ծնվել է Հորից՝ Միածին, այսինքն՝ Հոր էությունից»:

6 Կոստանդնուպոլսի հանգանակում պակասում է «երկնքում և երկրի վրա» մասը, բայց այն կա Նիկիականում, իսկ մերը ավելացնում է նաև «երևացողները և աներևույթները»՝ բացահայտ հաստատելու, թե որպես Հայր Աստված «արարիչ է երկնքի և երկրի, երևացողների և աներևույթների (ըստ նախընթաց խոսքի), նույնպես է և Որդին՝ նրան համագոր, որի մասին գրում

է նաև առաքյալը. «Նրանով ստեղծվեց այն ամենը, ինչ որ երկնքում է և ինչ որ՝ երկրի վրա, ինչ որ երևում է՝ ինչ որ չի երևում» (Կողաս. Ա 16):

7 Նիկիականում պակասում է «Երկնքից» բառը, բայց այն կա Կոստանդնուպոլսի հանգանակում, որից էլ մերն է:

8 Նիկիականը դնում է «մարմնացած և մարդացած», իսկ կոստանդնուպոլսինը՝ «մարմնացած և ներմարմնացած»: Մեր եկեղեցու հանգանակը «մարմնացավ և մարդացավ»-ը դնելուց հետո նրանց ճշգրիտ իմաստը բացատրում է այս խոսքերով «ծնվեց կատարելապես», որով էլ լավագույնս հերքվում է Մարկիոնի, Ապետոսի և նրանց հետևորդների մոլորությունը, որոնք ուրանում էին Քրիստոսի ծնունդը մորից և ասում էին, թե երբ նա իջավ այս աշխարհը, նրա մարմինը կերպավորվեց երկնային մասերից կամ աստղերից: Տե՛ս Սարգիս Շնորհալի, (Մեկն. Բ Պետ. Ճառ. Դ և հատոր Զ), ինչպես նաև Ներսես Շնորհալի, Ասորիքի Միջագետքում գտնվող Համայք նահանգի քահանաներին գրված թղթում:

9 Նիկիականում չկա «կույս Մարիամից», բայց կա Կոստանդնուպոլսի հանգանակում, որից էլ մերն է:

10 Նիկիականում չկա «Սուրբ Հոգով»: Կոստանդնուպոլսինը դնում է բացառական հոլովով՝ «Սուրբ Հոգուց»: Իսկ մերում ավելի լավ է «Սուրբ Հոգով» գործիական հոլովով գործածությունը Աստվածային մարմնի գոյացումը կույսի արգանդում ցույց տալու համար: Տե՛ս գրքիս երկրորդ մասում, 125 համարը:

11 Ե՛վ նիկիականում, և՛ Կոստանդնուպոլսի հանգանակներում չկա «Որով առավ մարմինը, հոգին, միտքը և այն ամենը, որ ունի մարդը»: Սա մեր հանգանակում վարդապետական հավելված չէ, այլ միայն նախընթաց բառերի «մարմնացավ, մարդացավ», պարզաբանում, և այն հյուժ կարևոր է Եվնոմյանների և Ապողինարյանների խեղաթյուրված կարծիքը մերժելու համար, որոնք ուսուցանում էին, թե Քրիստոսի մեջ չկա բանական հոգի և միտք, այլ «նրանց տեղը, ասում էին, լրացնում է Աստվածությունը»: Տե՛ս գրքիս երկրորդ մասում, 194 համարը:

12 Նիկիական և Կոստանդնուպոլսի հանգանակներում չկա «Ճշմարտապես և ոչ կարծեռք»: Թվում է, որ այն մեր հանգանակում դրված է ընդդեմ Բասիլիոյանների, Վաղենտինյանների, Մարկիոնյանների և հին այլ աղանդավորների, որոնք ասում էին, թե Բանն Աստծու մարդեղությունը երևութապես է կամ առաջոք և ոչ ևե ճշմարտապես: Տե՛ս Սարգիս Շնորհալի, Մեկն. Բ Պետ. հորդոր. Զ և Ա Հովհ. Ճառ Ա):

13 Նիկիականն ունի միայն «չարչարվեց» բառը, կոստանդնուպոլսինը՝ «մեզ համար խաչվեց Պոնտացի Պիղատոսի օրոք, չարչարվեց և թաղվեց»: Անտեղի է կարծել թե մեր հանգանակից դուրս է հանված «Պոնտացի Պիղատոսի օրոք» մասը: Անտեղի եմ ասում, որովհետև նախ Նիկիականում, որը մեր հանգանակի հիմքն է, այն չկա և ապա՝ հավատի կամ դավանանքի կարևոր մասերից չէ, հակառակ դեպքում հետևյալ բառերով. «Հերովդես Ասկաղոնացու օրոք» կամ «Օգոստոս կայսեր օրոք»: Իսկ ցույց տալու համար, որ Քրիստոսի խաչելությունը (ինչպես մյուս բոլոր մարդեղությունները) մեզ համար եղան, բավական է նախընթաց խոսքը՝ «Որ մեզ՝

մարդկանց համր և մեր փրկության համար իջավ երկնքից և այլն»: Այստեղ մեր (ինչպես նաև Նիկիայի և Կոստանդնուպոլսի) հանգանակներում Քրիստոսի թաղումը հիշելիս ստույգ հայտնի է դառնում և նրա մեռնելը, ըստ որում նախ մահը ստուգվեց և ապա եղավ թաղումը (Տե՛ս Մարկ. ԺԵ 44, Հովհ. ԺԹ 33):

14 Կոստանդնուպոլսինը հավելվածով ունի «հարություն առավ երրորդ օրը՝ ըստ Սուրբ Գրքի», իսկ Նիկիականում չկա «ըստ Սուրբ Գրքի» մասը: Թվում է, որ մեր երանելի հայրերը ավելորդ համարեցին այն կիրառել մեր եկեղեցու հանգանակում, որովհետև ոչ միայն Քրիստոսի հարությունը, այլև չարչարանքը, մահը և թաղումը (ինչպես նաև նրա մյուս մարդեղությունները) կատարվեցին ըստ Սուրբ Գրքի, այսինքն՝ ըստ մարգարեների կանխասացման, որը գրված է Հին կտակարանում: Այս բանը հայտնի է դառնում նաև հետագա խոսքերի միջոցով. «Ով անմիտ և թուլամիտ մարդիկ, որ դժվարանում եք հավատալ այն ամենին, որ ասացին մարգարեները: Չէ՞ որ Քրիստոս պետք է նույն այդ չարչարանքները կրեր և այնպես մտներ իր փառքի մեջ» (Ղուկաս իդ 25-26): «Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար՝ ըստ Գրքերի և թե թաղվեց և թե հարություն առավ երրորդ օրը՝ ըստ Գրքերի» (Ա Կորնթ. ԺԵ 3-4): Տե՛ս նաև գրքիս երկրորդ մասում, 123 համարը:

15 Նիկիականն ունի միայն «Բարձրացավ երկինք», Կոստանդնուպոլսինը՝ «Բարձրացավ երկինք ու նստեց Հոր աջ կողմում», իսկ մեր հանգանակում կան նաև «նույն մարմնով» բառերը, որոնք հիմնովին ջախջախում են Ապեղեոսի և Հերմոգենեսի դատարկահնչյուն վարդապետությունները: Նրանցից առաջինը բարբաջել էր, թե Քրիստոսը երկինք համբառնալիս մարմնից մերկացել էր և միայն հոգով էր բարձրանում, իսկ երկրորդը, թե նա իր մարմինը թողել էր արեգակի կամ լուսնի գնդի վրա: Այսպիսի անմիտ խելահեղմտացությունները հիշում է նաև Ն. Լամբրոնացին Պատարագի մեկն. -ն մեջ:

16 Նիկիականում և Կոստանդնուպոլսինում կա «գալու է մյուս անգամ» նախադասությունը: Բայց «մյուս անգամ»-ը կարելի է հասկանալ լռելյալ կամ զորությամբ, ինչպես որ մեր հանգանակում է: Որովհետև Քրիստոսի առաջին գալուստը աշխարհի պատմվեց նախընթաց խոսքերում, իսկ այստեղ խոսքը երկրորդ գալստյան մասին է, որ դեռ չի եղել: «Նույն մարմնով» բառերի համար, որ այստեղ ևս կրկնում է մեր հանգանակը, տե՛ս նախընթաց՝ 15-րդ ծանոթությունը:

17 Նիկիականում չկա «Հոր փառքով», Կոստանդնուպոլսինում դնում է միայն «(հանդերձ) փառքով» իսկ մերը երկուսն էլ ունի՝ ցույց տալու համար, որ Քրիստոսը աշխարհի վերջին գալու է իր Աստվածային զորությամբ ու փառքով (ըստ Մարկ. ԺԴ 26), և թե՛ փառքը Հոր փառքից տարբեր չէ, այլնույնն է, որի մասին հենց ինքն ասաց. «Մարդու Որդին գալու է իր Հոր փառքով» (Մար. ԺՁ 27): Տե՛ս գրքիս երկրորդ մասում, 65 ԺԴ համարը:

18 Նիկիականում չկա «որի թագավորությանը վախճան չկա» մասը, իսկ Կոստանդնուպոլսինը դնում է՝ «որի թագավորությանը վախճան չի լինի»: Ղա ուղղված է նրանց դեմ, որոնց մասին Կյուրեղն ասում է «Շատերը կան, որոնք ասում են, թե կա Քրիստոսի արքայության վերջը» (Կոչ. ընծ. գլ. Դ):

19 Նիկիական ունի միայն «Սուրբ Հոգին», որի համար Կոստանդնուպոլսի ժողովի հայրերը (Սուրբ Հոգուն՝ ճշմարիտ Աստծուն, դավանելու համար, ընդդեմ Մակեդոնի) ավելացրին նաև հետևյալ բառերը՝ «տերն ու կենդանանարը, Հորից բխողը, Հոր և Որդու հետ երկրպագիցն ու փառավորակիցը»: Իսկ մեր օրինակի «անստեղծ և կատարյալ» բառերը լրացնում են բոլոր ասվածները: Քանի որ Սուրբ Հոգին եթե անստեղծ ու կատարյալ չլիներ, չէր կարող ելնել Հորից անձնավոր էություն և երկրպագելի Հոր և Որդուն հավասարազոր համապատիվ Աստված լինել, այլ ազդում միայն ստեղծված, կրտսեր և արտասովոր՝ ըստ մակեդոնի և նրա հետնորդների հայհոյության: Տե՛ս Ս. Շնորհալի, Մեկն. Բ Պետ. Ճառ Դ:

Եվ եթե մեկը անառաչաբար քննել կամենա, անձամբ կարող է իմանալ և վկայել, որ Սուրբ Հոգու կատարյալ Աստվածությունը հայտնի դարձնելու համար ավելի հզոր և ազդեցիկ միակ բառը «անստեղծ» է քան թե «տերը» կամ «կենդանարարը»: Անեղ ու կատարյալ ենք դավանում, ասում է մեր Լամբրոնացին (Պատարագի մեկն. ն մեջ). անեղ՝ որովհետև անձառելի բխում է Հոր բնությունից, և որ անեղ է, հայտնի է, որովհետև արարել է եղել, որի համար էլ Սուրբ Հոգուն Հորն ու Որդուն արարչակից ենք խոստովանում:

20 Կոստանդնուպոլսի հանգանակում կա միայն «որ խոսեց մարգարեների միջոցով» մասը, իսկ Նիկիականում այն չկա: Իսկ մեր հանգանակում գրված է՝ «որ խոսեց օրենքների, մարգարեների և ավետարանների մեջ ցույց տալու, որ ոչ միայն Հին կտակարանը, այլև Հորը գրկվեց Սուրբ Հոգու ազդեցությամբ, և թե՛ միևնույն Հոգին է երկուսին տվողը և ոչ թե տարբեր: «Սուրբ Հոգին մի մեծ սքանչելի ու անքնին զորություն է, - ասում է սուրբ Կյուրեղ Երուսաղեմցին (Կոչ. ընծ. գլ. ԺԴ), - կենդանի է, բանական, սրբարար նա է, որ մարգարեների և առաքյալների միջոցով խոսեց նոր կտակարանում»: Դարձյալ՝ «Գիտենք, ասում է Սուրբ Հոգին է, որ խոսեց մեր հայրերի, նահապետների հետ և օրենքներում»: Ահա այսպես մեր երանելի Հայրերը, որոնք հոգով Աստվածամերձ են, շատ հոգ տարան այս հանգանակի և, մեկ խոսքով, ինչպես որ դավթյան պարսաքարով խփելն ու փշրելն առաջին դարերում այնտեղ երևացող հերետիկոսների կզակները: Այնպես էլ վերոհիշյալ խոսքերով Մանեի հետևողների չար հերձվածը հերքում են, որին էլ վերաբերվում է նույն Կյուրեղի մյուս խոսքը(տե՛ս նույն գիրքը, նույն գլ.). «Ոմանք մարգարեների համար այլ հոգի են ասում, ոմանք՝ այլ, որ կա Նոր կտակարանում, և նրանք մեծ մոլորության մեջ են ընկնում»: Տե՛ս գրքիս երկրորդ մասում, 337 համարը:

21 Այն խոսքը՝ որ իջավ Հորդանանում, քարոզեց առաքյալներին և բնակվեց սրբերի մեջ» (որը պակասում է և՛ Նիկիականում, և՛ Կոստանդնուպոլսիում), այս տեղում հարմար կերպով ավելացրին մեր հոգեզարդ հայրերը՝ հռչակելու Սուրբ Հոգու Աստվածահրաշ ազդեցությունները կամ զորությունները՝ իրենց ծայնակից ունենալով սուրբ Կյուրեղին, որն ասում է «. Սուրբ հոգին մեծ է, որը մարգարեների մնջոցով վկայեց Քրիստոսի մասին, որ խոսեց և եկավ իջավ և ցույց տվեց նրան, որ Հորդանան գետում էր» (Կոչ. Ընծ. գլ. ԺԴ):

22 Նիկիականում եկեղեցին կոչվում է «կաթողիկե և առաքելական», իսկ Կոստանդնուպոլսի հանգանակում՝ «մի, սուրբ, կաթողիկե և առաքելական», իսկ մերում՝ «միակ, ընդհանրական (որը

հուներեն կաթողիկե բառի թարգմանությունն է) և առաքելական: Իսկ մեր հայրերը եկեղեցական մատյաններում թե ինչպես քարոզեցին եկեղեցու սրբությունը, տե՛ս գրքիս երկրորդ մասում, 202 համարը:

23 Կոստանդնուպոլսի հանգանակում կա միայն «մեղքերի թողության», իսկ Նիկիականում այն ամբողջությամբ բացակայում է: Իսկ մեր հանգանակում ավելացնում է նաև «ապաշխարության, քավության»՝ ցույց տալու, որ ածնական կամ ներգործական մեղքերի թողությունը կամ քավությունը լինում է ապաշխարությամբ որպես և սկզբում մկրտությամբ: Մեր հայրերը ավելորդ չհամարեցին հանգանակում հրապարակով դավանելու այս ճշմարտությունը՝ թերևս նայելով խոսքին՝ «Այնպես պետք է չարչարվեր Քրիստոս, և քարոզվեր նրա անունով ապաշխարություն և մեղքերի թողություն բոլոր ազգերի մեջ» (Ղուկ. ԻԴ 46-47): Եվ սա ուղղված է Մոնտանյանների և Նովատյանների դեմ, որոնք ուսուցանում էին, թե եկեղեցին իշխանություն չունի մկրտությունից հետո արձակելու մեղավորներին, որով և փակում էին ապաշխարության դուռը հանցավորների առջև, ինչպես համառոտ գրում է Ն. Լամբրոնացին (Պատարագի մեկն. -ն մեջ):

24 Նիկիականում չկա «մեռելների հարության համար», իսկ Կոստանդնուպոլսինը դնում է՝ «ակնկալում ենք մեռելների հարությունը»: Երկուսն էլ ունեն միևնույն իմաստը: Մեր հանգանակը մեռելների հարությունը հիշելուց հետո պատշաճ ձևով մեջ է բերում նաև «հավիտենական դատաստանը», որի համար էլ լինելու է հարությունը ըստ հետևյալ խոսքի. «Կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն նրա ձայնը և դուրս կգան. ովքեր բարի գործեր են արել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի հարության համար: (Հովհ. Ե 28-29): Սրանով մերժում է Բռնփոսյանների աղանդը, որոնք ուրանում էին ընդհանուր դատաստանը և այն աշխարհում արդարացի հատուցումը կատարած գործերի համար: Տե՛ս Ս. Շնորհալի, Մեկ. Բ Պետ. Ճառ. Դ):

25 Կոստանդնուպոլսի հանգանակում գրված է (ակնկալում ենք) «Հանդերձյալ հավիտենական կյանքին», իսկ Նիկիականում այն չկա: Իսկ մերը դնում է բացատրության հետ միասին. «երկնային արքայությանը և հավիտենական կյանքին»: Այս արտահայտությունների մեջ իմաստային տարբերություն չկա:

26 Այն բառերը որոնք կան Արիանոսների նզովքում, որոնք Որդու Աստվածությունն էին ժխտուկն, վերցված են Նիկիական հանգանակից (որովհետև Կոստանդնուպոլսի հանգանակում չկան), իսկ ինչ կա Հոգեմարտների նզովքում, անշուշտ դրված են մեր բազմերջանիկ հայրերի կողմից, պարզ է Կոստանդնուպոլսի ժողովից հետո, ուր դատապարտվեց Մակեդոնը՝ Հոգու հայիոյիչը: Տե՛ս գրքիս երկրորդ մասում, 81 համարը:

27 Վերջին այս խոսքը մեր հավատի առաջնորդ սուրբ Գրիգորինն է, խոսք, որը որպես հանգանակի հաստատության կնիք, ունի Քրիստոնաավանդ ճշմարիտ կրոնի անխախտելի հիմունքները՝ դավանելով փառակից Սուրբ Երրորդությունը «որ եղել է ավելի առաջ, քան հավիտյանները»:

Միշտ պիտանի է Ավետանրանի դաստիարակությունը մեզ սովորեցնելու լավության կարգերը, որպեսզի մխիթարվելով Սուրբ Հոգու շնորհներով, ճշմարտությամբ բազմացնենք արդարության գործերը սուրբ սրտով և առ Աստված ունեցած ուղղափառ հավատով (Գ. Լուսավորիչ, Հաճախ. Ճառ. Բ):

Դու ստացիր հավատը ուսմամբ և պատմությամբ, և պահպանիր միայն հավատը, որը վարդապետվել է սուրբ եկեղեցուց և հաստատվել բոլոր Սուրբ Գրքերից (Կյուրեղ, Կոչ. Ընծ. գլ. Ե):

## ՀՐԱՀԱՆԳ

քրիստոնեական հավատի Ըստ Հայաստանյաց եկեղեցու ուղղափառ դավանանքի

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Հարց. -Ո՞վ է քրիստոնեական հավատի հիմքն ու բուն հեղինակը:

Պատասխան. -Մեր Տեր Հիսուս Քրիստոսն է (1):

Հարց. -Նա ինչպե՞ս ավանդեց իր վարդապետությունը:

Պատասխան. -Նախ ինքը ուսուցանեց խոսքով բացատրելով մինչ երկրի վրա էր (2) և ապա՝ առաքյալների միջոցով (3):

Հարց. -Առաքյալներն ինչպե՞ս ավանդեցին:

Պատասխան. -Մերթ բանավոր, այն է՝ քարոզությամբ և մերթ գրավոր՝ գրքերով (4):

Հարց. -Քրիստոնեական հավատը մարդուց ի՞նչ է պահանջում:

Պատասխան. -Աստծուն պաշտել կենդանի հավատով, հաստատուն հույսով և անկեղծ սիրով (5):

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՀԱՎԱՏ

Հարց. -Ի՞նչ է հավատը:

Պատասխան. -Ճանաչել՝ ընդունել և խոստովանել Աստծու հայտնած ամբողջ ճշմարտությունը (6):

Հարց. -Որտեղի՞ց է հնարավոր վերցնել Աստվածային ճշմարտությունների իմացությունը:

Պատասխան. -Աստվածաշունչ Սուրբ Գրքից, այն է Հին և Նոր Կտակարաններից (7):

Հարց. -Այդ Գիրքը ինչո՞ւ է Աստվածաշունչ կոչվում:

Պատասխան. -Որովհետև շնչով, այսինքն Աստծու Հոգու ազդեցությամբ գրվեց և ոչ թե մարդկային ուսուցման (8):

Հարց. -Ովքե՞ր եղան Կտակարանների հեղինակները:

Պատասխան. -Հին Կտակարանը գրողները եղան մարգարեները (9), և Նորը՝ առաքյալները (10):

Հարց. -Քանի՞ գիրք է բովանդակում:

Պատասխան. -Հին Կտակարանը բովանդակում է քառասունհինգ գիրք, իսկ Նորը՝ քսանյոթ (11):

Հարց. -Ե՞րբ է ասվում կենդանիտ հավատ:

Պատասխան. -Երբ լուծորդվում է բարի կամ առաքինի գործերին (12):

Հարց. -Հավատի ուսմունքի քանի՞ գլխավոր մաս ունի:

Պատասխան. -Տասը՝

ա) Աստծու գոյությունը.

բ) Աստվածային կատարելությունները.

գ) Աստվածության Երրորդությունը.

դ) Արարչագործությունը.

ե) Նախախնամությունը.

զ) Աստվածորդու մարդեղությունը (մարդկային մարմին առնելը).

է) Քրիստոսի եկեղեցին և նրա խորհուրդները.

ը) Շնորհաբաշխությունը.

թ) Մեռելների հարությունը.

ժ) Վերջին դատաստանը:

ա) Աստծու գոյությունը

Հարց. -Ինչո՞վ է երևում Աստծու գոյությունը:

Պատասխան. -Վկայությամբ Սուրբ գրքերի (13), որոնք քարոզում են Աստծու գոյությունը, և որ պետք է նրան հավատալ (14):

Հարց. -Էլ ինչո՞վ:

Պատասխան. -Ուշի-ուշով նայելով հրաշակերտած անթիվ արարածներին, որոնք սքանչելի գործեր են՝ հայտնողները նրա գերագույն զորության, մեծության, բարության և իմաստության (15):

Հարց. -Ովքե՞ր մարդկանցից այդ ճանապարհով եկան Աստվածիմացության:

Պատասխան. -Հեթանոսներից քչերը (16):

Հարց. -Ինչո՞ւ ոչ բոլորը:

Պատասխան. -Որովհետև արժանի չեղան ընդունելու Աստծու շնորհների ապավինությունը (17):

Հարց. -Ովքեր մեկ անգամ ճանաչեցին Աստծուն, պաշտեցի՞ն նրան ըստ արժանավույն:

Պատասխան. -Ոչ, որովհետև նրանցից քչերը գտնվեցին ճշմարիտ Աստվածապաշտ, ինչպիսին Հոբն էր, այլ ընդհակառակը՝ նրանցից շատերը մտքի խավարումով ընկան կռապաշտության գիրկը (18):

Հարց. -Ի՞նչ է Աստված:

Պատասխան. -Աստծու ինչ լինելը անգիտենալի ու անհասանելի է ամեն ստեղծված մտքի համար (19):

Հարց. -Ապա ինչո՞ւ է ասվում. «Աստված Հոգի է, Աստված լույս է, սեր է հուր է» (Հովհ. Դ 24, Ա Հովհ. Ա 5, Դ 8, 16, Բ Օրին. Դ 24):

Պատասխան. -Դրանք և այդպիսիք Աստծու մասին ասվումը են այլաբանորեն. նա ամենամաքուր և ամենապարզ նրբության համար կոչվում է Հոգի, անսուտ ճշմարտության համար՝ լույս, մեզ սրբելու համար՝ Սեր, անաչառ արդարության համար՝ Հուր (20):

Հարց. -Աստվար ո՞ւմ կողմից ստեղծվեց:

Պատասխան. -Ոչ ոքից (21), որովհետև բնություն է անստեղծ կամ անստեղծելի (22):

Հարց. -Եղե՞լ է երբևէ, որ Աստված չի եղել:

Պատասխան. -Ո՛չ, որովհետև չկա նրա ժամանակի կամ ստեղծման սկիզբը (23), այլ միշտ կար, կա և կլինի (24):

Հարց. -Աստված ունի անդամներ կամ զգայարաններ, որպիսիք մենք ունենք:

Պատասխան. -Ո՛չ, քանի որ նա մարդ չէ (25):

Հարց. -Ուրեմն ինչպե՞ս պետք է հասկանալ Սուրբ Գրքի խոսքերը, որում ասվում է «Տիրոջ դեմքը, Տիրոջ աչքերը, Տիրոջ ականջները, Տիրոջ աջը, Տիրոջ ձեռքը կամ բազուկը» (Սաղ. Ժ 8, ԻԶ 9, ԼԳ 16, Հ 18, ՁԸ 24, ՂԴ 5):

Պատասխան. -Այդպիսի խոսքերով՝ դեմքով կամ աչքերով նկատի ունի Աստծու ամենատես կարողությունը կամ նախախնամությունը, ականջներով՝ լսողությունը, աջով՝ նմենահաս օգնությունը կամ պահպանությունը, ձեռքով՝ արարչական զորությունը և բազուկով՝ իշխանությունը (26):

Հարց. -Ի՞նչ է Աստծու անունը:

Պատասխան. -Աստված բազում անվանումներով է կոչվում, բայց մեկն է և անանուն (27):

Հարց. -Ինչպե՞ս

Պատասխան. -Ըստ նրա այլևայլ գործերի և կատարելությունների, այլևայլ անուններ են նրան ընծայում, որպես՝ Արարիչ, Տեր, Տեր Աստված, Տեր ամենակալ, Տեր զորությանց, Թագավոր, Պատավոր, Իշխան, Հայր (29) և այլն: Չկա մի անուն, որով հնարավոր լինի արտահայտել նրա բնությունը կամ էությունը (30):

Հարց. -Աստված որևէ մեկին չհայտնե՞ց որևէ բան իր անվան մասին:

Պատասխան. -Միայն Մովսես մարգարեին ասաց այս խոսքը. «Ես եմ Աստված, որ կամ» (Ել. Գ, 14):

Հարց. -Ինչպե՞ս է մեկնվում այս խոսքը:

Պատասխան. -Այսպես. «Ես եմ, որ ինքնաստեղծ եմ, անփոփոխ, միշտ նույնը. ես եմ, որ միշտ անսկիզբ ու անվախճան եմ. ես եմ, որ բոլոր արարածների ստեղծողն եմ» (31):

Հարց. -Մեր լեզվում ո՞ր անունն է հաճախ գործածվում:

Պատասխան. -Աստված անունը, բայց Սուրբ Գրքում կան նաև եբրայական այլ անուններ:

Հարց. -Ինչպե՞ս է ստուգաբանվում Աստված անունը:

Պատասխան. -Ստուգաբանվում է. Աստ ած, Աստեաց կամ Հաստեաց», այսինքն՝ այստեղ բերեց՝ գոյացրեց՝ ստեղծեց արարացներ (32):

Հարց. -Ուրեմն՝ դա Ստեղծողին տվո՞ղ անունն է:

Պատասխան. -Այո՛ (33), բայց տեղ-տեղ ասվում է նաև հրեշտակներին (34), նաև մարդկանցից ոմանց, որոնց տրված է որոշ հաղորդակցություն ունենալ Աստծու սրբությանը կամ գիտությանը

կամ իշխանությանը, որպիսիք են՝ քահանաները, մարգարեները, թագավորները, դատավորները, առաջնորդները, իշխանները (35):

Հարց. -Հեթանոսական սատվածները աստվածներ չե՞ն:

Պատասխան. -Ճշմարիտ չեն, այլ ստությամբ կոչվեցին այդ անունով (36):

Հարց. -Որո՞նք են Աստծու եբրայական անունները:

Պատասխան. -Գլխավորները սրանք են՝ Ադովնայի (այսինքն՝ Տեր), Սադոայի (այն է՝ Ամենաբավական), Ելովե (որ է Աստվար զորությանց), Տեր Սաբավովթ (այսինքն՝ Տեր զորությանց) (37):

Հարց. -Ո՞րն է Աստծու բնակության տեղը:

Պատասխան. -Լինելով բնությամբ անբովանդակելի Աստված բնակության տեղի կարիք չունի (38), ուստի կոչվում է Անուր կամ Անուրեք, Անտեղի, Անպարփակ (39): Բայց զորությամբ ամենուր է և մերձ է բոլորին (40): Եվ ասվում է, որ նա շնորհով է բնակվում սրբերի և արդարների հոգիներում (41):

Հարց. -Այդ դեպքում ինչո՞ւ է ասվում, թե նրա Աթոռը երկնքում է, կամ թե՛ երկինքը Նրա աթոռն է (Սաղ. ԺԱ 4, Եսայի ԿԶ 1):

Պատասխան. -Այն պատճառով, որ առավելապես այնտեղ է երևում նրա մեծության փառքը (42): Եվ այնտեղ, որտեղ մեկ անգամ հայտնվում է Աստծու փառքը կամ զորությունը, ասվում է, որ Աստված այնտեղ է (43):

Հարց. -Որևէ մեկը երբևէ տեսե՞լ է Աստծուն կամ կարո՞ղ է տեսնել:

Պատասխան. -Ո՛չ (44), որովհետև անհնարին է զգայարաններով կամ մարմնական աչքերով տեսնել նրա անմարմին էությունը (45):

Հարց. -Արդյոք կա՞ և այլ ճշմարիտ Աստված:

Պատասխան. -Ո՛չ (46) իրականում միայն մեկն է ճշմարիտ Աստված (47):

բ) Աստվածային կատարելությունները

Հարց. -Ինչպիսի՞ք են Աստվածային կատարելությունները:

Պատասխան. -Աստված ամենակատարյալ բնություն լինելով, ունի միմիայն իրեն պատկանող կատարելություններ, քանի որ նա է Անփոփոխ (48), Անչափ կամ Անսահման (49), Ամենակարող (50), ազատ, Անձնիշխան (51), Ամենագետ կամ Ամենիմաս (52), Ամենապարզ կամ Պարզագույն (53), Մշտենջենավոր կամ Հավիտենական (54), Անմահ (55), Ամենաբարի, Ամենասուրբ (56), Ամենավայր, այսինքն՝ ամեն տեղ եղող (57) և այլն:

գ) Աստվածության Երրորդությունը

Հարց. -Աստվածային անձիք քանի՞սն են:

Պատասխան. -Երեքը (58):

Հարց. -Ուրեմն երե՞ք Աստծու պիտի դավանենք կամ երե՞ք Աստվածության:

Պատասխան. -Ո՛չ երեք Աստծու և ո՛չ էլ երեք Աստվածության, այլ երեք անձի մի աստվածության մեջ և մի Աստվածությունը երեք անձի մեջ (59):

Հարց. -Ասա՛ երեք անձի անունները:

Պատասխան. -Առաջինը Աստված է և կոչվում է Հայր, երկրորդը՝ Որդի կամ Բան, Իսկ երրորդը՝ Սուրբ Հոգի, Հոգի Աստծու կամ Աստվածեղեն (60):

Հարց. -Ինչպե՞ս պետք է գալ Սուրբ Երրորդության խորհրդինի ճանաչողությանը:

Պատասխան. -Միայն հավատալով իրողություններին Սուրբ Գրիքի և հավերժ Նոր կտակարանի լույսով (61):

Հարց. -Մի՞թե Նոր կտակարանում խոսք չկա Սուրբ Երրորդության մասին:

Պատասխան. -Կա՛, բայց աղոտ է տեսողությանը և կարծես քողարկված (62):

Հարց. -Խնդրում եմ ասա՛ որո՞նք են այդ խոսքերը:

Պատասխան. -Նման խոսքեր կան Ծննդոց Գրքում՝ Աստծու կողմից ասված. «Մարդ ստեղծենք մեր պատկերով Ստեղծենք նրան օգնական Եկե՛ք իջնենք և խառնենք նրանց լեզուները» (Ա 25, Բ 18, ԺԱ 7): Դրանցում բայերը գործածվում են հոգնակի թվով՝ ստեղծենք, եկե՛ք, իջնենք, խառնենք, ինչպես նաև մեր դերանունը, որոնք, անշուշտ, ցույց են տալիս Աստվածային անձերի բազմությունը (63):

Հարց. -Այլ մարգարեների գրքերում էլ կա՞ն նման խոսքեր:

Պատասխան. -Այո՛. Դավիթն ասում է «Երկիրը լիքն է Տիրոջ (Հայր) ողորմությամբ, Տիրոջ (Որդի) խոսքով հաստատվեց երկինքը և նրա բերանի հոգով (Հոգի Սուրբ)՝ նրա բոլոր գործությունները (Սաղմ. ԼԳ 5-6): Անգեասն ասում է «Ես ձեզ հետ եմ, ասում է ամենակալ Տերը (Հայրը), Բանը (Որդին), որին ուխտեցի ձեզ հետ, և իմ Հոգին (Սուրբ Հոգին), որ ձեր մեջ է» (բ. 5-6):

Հարց. -Երեք անձերը միմյանցից տարբերվո՞ւմ են:

Պատասխան. -Այո՛, տարբերվում են անձնավորությամբ, քանզի այլ է Հոր անձը, այլ՝ Որդունը, այլ՝ Սուրբ Հոգունը (64):

Հարց. -Բնությամբ, զորությամբ կամ մի այլ բանով տարբերվո՞ւմ են միմյանցից:

Պատասխան. -Ո՛չ, որովհետև համաբնույթ են, համազոր, համակամ և համափառ (65):

Հարց. -Երեք անձանցից ո՞րն է, որ մեծ է մյուսից կամ փոքր:

Պատասխան. -Նրանց մեջ ամենևին չկա մեծ կամ փոքր (66):

Հարց. -Յուրաքաչյուրը ինչպիսի՞ հատկություն ունի:

Պատասխան. -Յուրաքաչյուր անձի հատկությունը ճանաչվում է անունից (67), որովհետև չկան հատկապես չի ասվում Հայրը՝ Որդի կամ Հոգի, և ոչ էլ Որդին՝ Հոգի կամ Հայր, ինչպես նաև Հոգին՝ Հայր կամ Որդի (68):

Հարց. -Էլ ինչպե՞ս:

Պատասխան. -Հայրը չծնված, բայց ծնող է, Որդին ծնունդ է, բայց ոչ ծնող, Սուրբ Հոգին՝ ոչ ծնող է և ոչ ծնունդ, այլ՝ ելող<sup>13</sup> (ՁԲ):

Հարց. -Ումի՞ց են առաջանում Որդին և Սուրբ Հոգին:

Պատասխան. -Որդին ծնունդ է առնում Հորից՝ անմարմնաբար (Հոգեպես) (70), իսկ Սուրբ Հոգու մասին Քրիստոսն ասաց. «Ճշմարտության Հոգին, որ ելնում է Հորից» (Հովհ՞ ԺԵ 26) (71):

Հարց. -Ինչո՞ւ Որդու ծնունդը «սահմանաբար» ասացիր:

Պատասխան. -Որովհետև այն մարդկային ծննդյան նման չէ (72), այլ գերահրաշ կամ անհիմանալի կերպով, որպես խոսքը՝ մտքից, լույսը՝ լույսից (74):

Հարց. -Կա՞ր ժամանակ, երբ չկային Որդին և Սուրբ Հոգին:

Պատասխան. -Ո՛չ (75), որովհետև երկուսն էլ մշտենջենակից են եղել Հայր Աստծուն (76), և այդ պատճառով Որդին ծնված է հավիտենականությունից առաջ (77), իսկ Սուրբ Հոգին անսկիզբ կամ մշտենջենական կերպով բխում է (ՅԴ):

Հարց. -Ովքե՞ր սխալ կարծիք կազմեցին Սուրբ Երրորդության մասին:

Պատասխան. -Սեբեյ, Լիբիացին, Արիոս երեց Ալեքսանդրացին և Կոստանդնուպոլսի պատրիարք Մակեդոնը:

Հարց. -Ո՞րն էր Սաբելի մոլորությունը:

Պատասխան. -Միայն մի անձ էր համարում Աստված և ոչ երեք: Եվ այն երբեմն Հայր էր անվանում, երբեմն՝ Որդի և երբեմն էլ՝ Սուրբ Հոգի (79):

Հարց. -Ի՞նչ է ուսուցանում Արիոսը:

Պատասխան. -Ուսուցանում էր, թե Որդին Հորը համագո (էակից) չէ և ոչ էլ նրա էությունից է, այլ օտար մեկն է արարված կրտսեր և հետագայում ստեղծված (80):

Հարց. -Ի՞նչ է ուսուցանում Մակեդոնը:

Պատասխան. -Թե Սուրբ Հոգին Երրորդությունից չէ և ոչ էլ Հոր և Որդու հետ երկրպագելի, այլ լոկ մի ազդում և սպասավոր, օտար Աստվածային բնությանը (81):

Հարց. -Նրանց վարդապետությունները ընդունեցի՞ն բոլոր քրիստոնյաները:

Պատասխան. -Ո՛չ, որովհետև առաջինի մոլորությունը մերժեց Ալեքսանդրիայի պատրիարք Դիոնիսիոսը, Տիրոջ 263թ. երկրորդինը՝ Նիկիայի ժողովը, 325թ. իսկ երրորդինը՝ Կոստանդնուպոլսի ժողովը, 381թ.<sup>14</sup>:

դ) Արարչավործություն

Հարց. -Ի՞նչ է Արարչագործությունը:

Պատասխան. -Արտաքին ներգործությունն է Եռանձնյա Աստվածության (82), որով անէությունից գոյացան բոլոր արարածները երևելիներն ու աներևույթները (83):

<sup>13</sup> Այս արտահայտությունը մեր սբ. հայր Գրիգոր Լուսավարիչինն է:

<sup>14</sup> Մյուս տիեզերական և մասնավոր ժողովների մասին կարևոր գիտելիքներ փնտրողները կարող են գտնել «Եկեղեցական պատմության» մեջ:

Հարց. -Որո՞նք են երևելիները:

Պատասխան. -Երևելիները նրանք են, որոնց կարելի է տեսնել աչքերով, ինչպիսիք են՝ երկինքը, երկիրը, արեգակը, լուսինը, աստղերը, տարրերը, մարդիք, անասունները, թռչունները, ձկները, ծառերը, բույսերը և այլն:

Հարց. -Որո՞նք են աներևույթները:

Պատասխան. -Արարածներից ասում են անրևույթ նրանց, որոնց հարկավոր չէ տեսնել, ինչպիսիք են՝ հրեշտակները և մարդկանց հոգիները:

ե) Նախախնամություն

Հարց. -Ի՞նչ է նախախնամությունը:

Պատասխան. -Նախախնամություն ասվում է Աստվածային կամքի այն ներգործությունը, որով բոլոր արարածները երկնային կանխորոշմամբ խնամվում և պահպանում են իրենց գոյությունը (85) և կառավարվում և հասնում են իրենց վախճանին (86):

զ) Աստվածորդու մարդեղությունը

Հարց. -Ո՞րն է Աստվածորդու մարդեղությունը:

Պատասխան. -Աստվածորդու մարդ լինելն է՝ Հոր և Սուրբ Հոգու հնձությամբ (87):

Հարց. -Ինչպե՞ս եղավ այդ:

Պատասխան. -Կույս Մարիամի արյունից մարդկային մարմինը բնություն առնելով (88) և իրենում միավորելով Աստվածային աձն ու էությունը՝ դաղձավ կատարյալ մարդ՝ կատարյալ Աստվածությամբ (89):

Հարց. -Ուրեմն երկու բնություն ուներ մարդացյալ Աստվածը:

Պատասխան. -Աստված էր աստվածային և մարդ՝ մարդկային բնությամբ (90):

Հարց. -Նրանում երկու, և անձեր էին:

Պատասխան. -Ո՛չ, այլ միայն մեկը, և այն Աստվածայինն է (91), որուսմ միավորվեցին երկու բնությունները անբաժանարար անշփոթապես (92):

Հարց. -Ի՞նչ ես կամենում ասել. անբաժանարար» բառով:

Պատասխան. -Այն, որ երկու բնությունները այնպես միավորվեցին, որ երբեք միմյանցից չանջատվեցին, այլ միշտ անքակտելիտ ու անբաժան էին ու են (93):

Հարց. -Ի՞նչ ես ուզում ասել «անշփոթապես» բառով:

Պատասխան. -Այն, որ Աստվածայիտն և մարդկային բնությունների միավորումը ոչ թե խառնելով և փոխելով եղավ, այլ առանց խասնվելու, և յուրաքանչյուրը անկորուստ ու անլուծելի կեպով պահեց իր հատկությունները (94):

Հարց. -Ուրեմն հնարավո՞ր է ուղղամտորեն. մաղրմնացած Որդու (Բանի) բնությունը ասել մեկ կամ երկու»:

Պատասխան. -Հնարավոր է, ինչպես որ ասացին սուրբ և ուղղափառ եկեղեցու առաջին վարդապետները (95):

Հարց. -Մարմնացած Որդին (Բանն) ունե՞ր մարդու բոլոր հնտկանիչները:

Պատասխան. -Այո, որովհետև մարդանալիս նա ոչ միայն մաղմին առավ, այլև բանական հոգի և միտք (96):

Հարց. -Նա կրո՞ւմ էր մարդկային ցանկությունները:

Պատասխան. -Կրում էր, բայց առանց հանցանքի (մեղքի) և միայն այն ժամանակ, երբ ինքն էր կամենում, որովհետև նա վերցրեց մեր բոլոր անպախարակելի ցանկությունները, ինչպիսիք են՝ քաղցածանալը, ծարավելը, աշխատելը, տրտմելը, հոգ տանելը, արտասվելը, երկնչելը և այլն (97):

Հարց. -Նրանում կա՞յին Աստվածային և մարդկային կամք, Աստվածային և մարդկային զորություններ:

Պատասխան. -Այո, որովհետև երբ կամենում էր ցույց տալ Աստվածային զորությունը, Աստվածաբար ներգործում էր Աստվածային հատկությունները, իսկ երբ կամենում էր ցույց տնլ մարդկային խոնարհությունները, մարդկային հատկություններով էր ազդում (98):

Հարց. -Այս երկու ներգործությունները չէի՞ն խանգարում միմյանց:

Պատասխան. -Զէին խանգարում, որովհետև Աստվածային կամքին միշտ հետևում է մարդկային կամքը (99):

Հարց. -Ի՞նչ անունով կոչվեցին Բանն Աստված (Աստծու Որդին) մարդկային մարմին ստանալուց հետո:

Պատասխան. -Մարդկային մարմին ստանալուց հետո նրան տվեցին հետևյալ անունները՝ Հիսուս, Քրիստոս, Մեսիա, Էմմանուել (100), որոնցից առաջինը թարգմանվում է Փրկիչ, Երկրորդն ու երրորդը՝ Օծյալ, Իսկ չորրորդը՝ Աստված մեզ հետ (101):

Հարց. -Ո՞ր լեզվից են այդ բառերը:

Պատասխան. -Քրիստոս բառը հունարենից է, իսկ Հիսուս, Մեսիա, Էմանուել բառերը՝ եբրայերենից (102):

Հարց. -Ի՞նչ պատճառով նա Փրկիչ ւոչվեց:

Պատասխան. -Որովհետև Նան եկավ մարդկանց փրկելու մեղքերից, դժոխքի դատապարտությունից կամ սատանայի իշխանությունից (103):

Հարց. -Ինչո՞ւ անվանվեց Օծյալ:

Պատասխան. -Նախ՝ Աստվածային և մարդկային անձնավորության միավորման համար, որը կոչվում է Օծում կամ Օծություն (104), և ապա՝ Սուրբ Հոգու կողմից օծվելու պատճառով (105), որով կարգվեց քահանա կամ քահանայապետ (106), մարգարե (107), և հավիտենական թագավոր (108):

Հարց. -Ե՞րբ և ինչպե՞ս օծեց նրան Սուրբ Հոգին:

Պատասխան. -Նախ՝ սկզբում կույսի արգանդում հղանալիս նրա հետ լինելով Գերագույն լրությանմբ (109), և ապա մկրտության ժամաակ՝ նրա վրա իջնելով մարմնավոր տեսիլքով (110):

Հարց. -Մի՞թե նա քահանայի պաշտոն կատարեց:

Պատասխան. -Այո, որովհետև իր անձը զոհ մատուցեց (111) և մեզ համար բարեխոս և միջնորդ դարձավ՝ Հոր հետ հաշտվելու (112):

Հարց. -Նա ինչպե՞ս կատարեց մարգարեի պաշտոնը:

Պատասխան. -Հայտնապես քնրոզելով իր առաքչի՝ Հայր Աստծու պատվիրանները (113), ուսուցանելով նրա ճանապարհը (114) և հանդերձյալ կյանքի մասին կանխասացությամբ (115):

Հարց. -Նա ինչպես կատարեց թագավորի պաշտոնը:

Պատասխան. -Հաղթելով մեղքերի թագավորությանը (116), վերացնելով մահվան բռնությունը (117), մահվամբ և փառավոր հարությամբ տիրելով ամբողջ մարդկությանը (118) և որպես Տեր ու Աստված ընդունվելով երկնայիններ և երկրայինների կողմից (119):

Հարց. -Մի՞թե մինչև մահ ու հարություն առնելը նրան պակասում էր այդ իշխանությունը:

Պատասխան. -Ո՛չ, որովհետև ըստ Աստվածության՝ Հոր և Սուրբ Հոգու հետ հենց սկզբից անվախճան իշխանություն ուներ բոլոր արարածների վրա (120), իսկ ըստ մարդկության՝ մարդանալիս ընդունեց այդ աույնը՝ Հորից ստացած ժառանգության իրավունքով և ապա մեռնելով մարդկանց համար՝ փրկագնի իրավունքով (121):

Հարց. -Քրիստոսը ինչպե՞ս փրկագործեց մարդկությանը:

Պատասխան. -Լրացնելով Հայրական տնօրինությունները (122):

Հարց. -Ինչե՞րը և որո՞նք են տնօրինությունները:

Պատասխան. -Դրանք նրա մարդեղության զանազան խորհուրդներն են՝ նախապես կանխատեսած մարգարեների կողմից (123), որոնցից նշանավորներն են՝ Հղությունը, Ծնունդը, Մկրտությունը, Քարոզությունները, Հրաշագործությունները, Չարչարանքները, Մահը, Թաղումը, Հարությունը, Համբարձումը և Հոր աջ կողմում նստելը:

Հղությունը

Հարց. -Ումի՞ց և ինչպե՞ս հղացավ Աստծու Որդին:

Պատասխան. -Ո՛չ ամուսնուց կամ այրական հաղորդակցությունից (124), այլ Սուրբ Հոգու գորությամբ (125):

Հարց. -Նա ինչքա՞ն ժամանակ մնաց կույսի արգանդում:

Պատասխան. -Երկու հարյուր յոթանասունհինգ օր, որը կազմում է երեսունօրյա ինը ամիս՝ հավելյալ հինգ օրով (126):

Ծնունդը

Հարց. -Որտե՞ղ և ե՞րբ ծնվեց Հիսուսը:

Պատասխան. -Հրեաստանի Բեթղեհեն քաղաքում (127), վեցերորդ դարում (128), աշխարհի լինելիության 4000-րդ տարում՝ ըստ ժամանակագիրների պարզ հաշվի<sup>15</sup>:

Հարց. -Ո՞ր օրը:

Պատասխան. -Հռոմեական ամսի հունվարի վեցին (129):

Հարց. -Ինչո՞վ է հաստատվում այս բանը:

Պատասխան. -Բոլոր քրիստոնյաների վաղեմի սովորությամբ, որոնք սկզբից մինչև չորրորդ դարի վերջը կամ հինգերորդի սկիզբը Քրիստոսի ծննդյան տոնը մկրտության տոնի հետ միասին կատարում էին նույն օրը (130), ինչպես որ մինչև այժմ կատարում է Հայաստանյաց Եկեղեցին՝ անփոփոխ պահելով մեր նախնիների սովորությունը (131):

Մկրտությունը

Հարց. -Ո՞ւմ կողմից մկրտվեց Քրիստոս և որտե՞ղ:

Պատասխան. -Հովհաննես Մկրտչի կողմից, Հորդանան գետում (132):

Հարց. -Ինչո՞ւ մկրտվեց:

Պատասխան. -Ջուրը մաքրելու (133) և այն տալու հավատացյալներին ավազանում լվացման համար (134):

Հարց. -Մկրտվելիս նա քանի՞ տարեկան էր:

Պատասխան. -Գրեթե երեսուն տարեկան էր:

Հարց. -Ինչպիե՞հ՝ հրաշքներ կատրվեցին այն ժամանակ:

Պատասխան. -Հիսուսի ջրից դուրս գալու ժամանակ նրա առջև բացվեց երկինքը, և Աստծու Հոգին աղավանակերպ իջավ նրավրա (136):

Հարց. -Ինչի՞ համար եղավ այն:

Պատասխան. -Հայտնելու համար նրա աստվածության փառքի մեծությունը (137): Եվ ահա մի ձայն, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որն ունի իմ ամբողջ բարեհաճությունը» (Մատ. Գ 17):

Քարոզությունները

Հարց. -Հիսուսը երբ սկսեց քարոզել:

Պատասխան. -Մկրտվելուց և քառասորյա ծոմապահությունից հետո (138):

Հարց. -Դրանք ինչպիսի՞ քարոզություններ էին:

Պատասխան. -Դրանք էին խրատներ, պատվիրաններ և կարևոր վարդապետություններ՝ հոգու փրկության համար (139), որոնցով բոլորին ուսուցանում էր. «Հեռու մնալ ամեն մի չարիքից, բարին գործել, զղջալ մեր մեղքերը, կատարել Արարչի կամքը, հնազանդվել նրան, երկնչելնրանց, Նրան ապավինել և հուսալ, սիրել ընկերներին, լինել հեզ, խոնարհ, խաղաղարար, ողորմած,

<sup>15</sup> Կան ժամանակագիրներ, որոնք աշխարհի ստեղծումից մինչև Քրիստոսը ինչ-որ տարիներով ավելի կամ պակաս են հաշվում, իսկ Յոթանասնից հաշվելով Քրիստոսի ծնունդը համարվում է աշխարհի լինելիության 5199-րդ տարում, ինչպես նշում են մեր պատմագիրները և այլ ազգերի շատ մատենագիրներ:

ամենքի հանդեպ անհիշաչար, խաչ կրել արդարության համար, վշտերին և նեղություններին դիմանալ, խուսափել կեղծավորություններից, գոռոզությունից, ոխակալությունից, բարկությունից, ավելորդ հառաչանքներից և այլն:

#### Հրաշագործությունները

Հարց. -Ինչպիսի հրաշքներ գործեց Հիսուսը:

Պատասխան. -Ջուրը գինու փոխարկեց (Հովհ. Բ 9):

Մեռելներին հարություն տվեց (Մարկ. Ղուկ. Է 15, Հովհ. ԺԱ 44):

Լույս տվեց կույրերի աչքերին (Մատթ. Թ 30, ԺԲ 22, Ի 34, ԻԱ 14):

Կաղերին առողջացրեց (Մարկ. Բ 12, Ղուկ. Ե 18):

Խուլերի լսողությունը վերականգնեց (Մարկ. Է 35): Դներեին հալածեց (Ղուկ. Դ 41, Մարկ. Ա 34, Մատթ. Ը 16):

Քայլեց ծովի վրայով, ինչպես ցամաքում (Մատթ. ԺԴ 25):

Սաստելով հողմերը՝ դադարեցրեց ծովի ալեկոծությունը (Ղուկ. Ը 24):

Քիչ հարցով հազարավոր մարդկանց ծագեցրեց (Մատթ. ԺԴ 21, Մարկ. Ը 9):

#### Չարչարանքները

Հարց. -Քրիստոսը ինչպիսի՞ չարչարանքներ կրեց և ումի՞ց:

Պատասխան. -Նա բազում չարչարանքներ կրեց չարանախանձ հրեաներից, քանզի՝

Հալածվեց նրանցից (Հովհ. ԺԵ 20, Ե 16):

Հանդիմանվեց (Մատթ. ԻԷ 44, Ղուկ. ԻԴ 35):

Բամբասվեց (Ղուկ. ԺԹ 7):

Կապվեց (Հովհ. ԺԸ 12):

Ապտակվեց (Մատթ. ԻԷ 30):

Ձաղկեց (Մատթ. ԻԷ 31):

Բևեռվեց (Հովհ. ԺԹ 37):

#### Մահը

Հարց. -Ինչպիսի՞ մահով մեռավ Քրիստոսը:

Պատասխան. -Այնպիսի մահով, որով օրենքը պատուհասում էր մահապարտներին, այն է՝ խաչափայտից կախվելով (140):

Հարց. -Մի՞թե հանցավոր մեկն էր նա:

Պատասխան. -Ո՛չ (141), թեև հրեաները նրան մեղավոր էին համարում (142), բայց չկարողացան գտնել նրա մահվան պատճառը և միայն նախանձից Նրան մատնեցին մահվան (143):

Հարց. -Իսկ Քրիստոսը նմանօրինակ նախատական մահը ինչո՞ւ հանձն առավ:

Պատասխան. -Որպեսզի ադամական մեղանչած բնությունը, որով մարմնավորվել էր ինքը (144), իրեն դարձնի (145)՝ իր մարմնով խաչափայտի վրա վերցնելով մեր մեղքը (146) և իր մարմնով դատապարտելով այն (147):

Հարց. -Քրիստոսը իր անմեղ մահով ինչպիսի՞ բարիքներ գործեց:

Պատասխան. -Ձնջելով մեր հակառակության կացն թշնամության կնիքը (148)՝ մեզ հաշտեցրեց Հայր Աստծուն (149), ազատեց անեծքից (150) և հավիտենական դատապարտությունից (151), որին դատապարտված էինք Նախամարդու հանցանքի պատճառով (152):

Հարց. -Քրիստոսը կամավո՞ր ճաշակեց մահը:

Պատասխան. -Այո՛ (153), որովհետև կարող էր ազատվել իրեն բռնողների ձեռքից, ինչպես որ ազատվեց, երբ կամեցավ՝ երկինք համբառնալով (154):

Հարց. -Քրիստոսը աստվածային բնությամբ ընդունեց չարչարանքներն ու մահը:

Պատասխան. -Ո՛չ (155), որովհետև Աստվածային բնությունը անչարչար ու անմահ է (156), այլ նա Աստվածային բնությունը, մեր չարչարելի ու մահկանացու բնությամբ կամ մարմնով չարչարվեց և մեռավ (157)՝ մահվան մեջ էլ կենդանի մնալով իր անմահ Աստվածությամբ (158):

Հարց. -Միթե մահանալիս կամ մահից հետո աստվածային բնությամբ էր:

Պատասխան. -Այո՛, ո՞՞րովհետև երբեք չբաժանվեց նրա մարմնից և հոգուց (159):

Հարց. -Արժանի՞ է՝ Քրիստոսի մեջ «մեկին չարչարված ասել, մյուսին՝ անչարչար, կամ մեկին՝ տկար, իսկ մյուսին՝ զորեղ»:

Պատասխան. -Ո՛չ (160), որովհետև միևնույն անձնավորությունը կամ մի Քրիստոսը, որ Աստված և մարդ, որ Աստծու և Որդի էր մարդու, չարչարվեց ու մեռավ (161). նույն ինքն էր, որ չարչարվում էր և նույն ինքը, որ չի չարչարվում (162), նույնը մեռյալ էր և նույնը՝ անմահ (163). Նույնը՝ տկար (մարդ) և նույնը՝ հզոր (Աստված) (164):

Հարց. -ուրեմն հնարավո՞ր է Աստծուն ճշմարիտ դավանությամբ «խաչված ասել և մեռյալ» կամ Անմահին՝ «մահվան չարչարանքների տակ ընկած»:

Պատասխան. -Այո (165), որովհետև մարմնով ինչպես որ ծնվեց կույսից, Աստվա-ծ էր (166), և ծնողը անվանվում է Աստվածածին կամ Աստծու Մայր (167), նույնպես և ով չարչարվեց և մեռավ մարմնով, Աստված էր (168), իսկ նրան խաչողները կոչվում են Աստվածասպաններ և աստվածաչարչարողներ (169):

Հարց. -Քրիստոսը ինչպե՞ս ավանդեց իր մարդկային հոգին:

Պատասխան. -Բարձր ծայնով աղաղակելով. «Հայր, քո ձեռքն են ավանդում իմ հոգին» (Ղուկ. ԻԳ 46):

Հարց. -Ինչո՞ւ աղաղակելով:

Պատասխան. -Ցույց տալու համար, որ իշխանաբար է մեռնում, և որ ինքը ոչ թե մահվան իշխանության տակ է, այլ մահվան վրա իշխողը (170):

Հարց. -Ի՞նչ արեց հոգին մարմնից բաժանվելուց հետո:

Պատասխան. -Աստվածությամբ և բանական հոգով իջավ դժոխք (171) և խորտակելով սատանայի զորությունը (172)՝ նրա ձեռքից ազատեց արդարների հոգիները (173), որոնք մնում էին այնտեղ փակված նրա գալստյան ակնկալությամբ (174):

Հարց. -Մեղավոր և անհավատ հոգիները չփրկե՞ց:

Պատասխան. -Ո՛չ, որովհետև ովքեր չէին հավատում սպասվող Փրկչին, փրկության արժանի չէին (175):

Թաղումը

Հարց. -Քրիստոսի մահվանից հետո նրա մանրմինը ի՞նչ եղավ:

Պատասխան. -Իջեցվելով խաչից՝ դրվեց գերեզմանի մեջ (176):

Հարց. -Ապականության ենթարկվե՞ց:

Պատասխան. -Ո՛չ (177), որովհետև մարդկային մարմին ուներ, բայց Աստվածությունից անբաժան լինելով (178)՝ միշտ անապական էր և է (179):

Հարությունը

Հարց. -Քրիստոսը ե՞րբ հարություն առավ:

Պատասխան. -Երրորդ օրը, այսինքն մահից և թաղումից երկու օր անցնելուց հետո (180):

Հարց. -Քրիստոսը իր հարությամբ ինչպիսի՞ հոգեշահ բարիքներ կատարեց:

Պատասխան. -Մեզ վերակենդանացրեց հոգեպես կյանքի շնործիների կամ արդարության համար (181)՝ մեր մեջ հաստատելով հույսը հավիտենական փառքի և երանության ժառանգության համար (182):

Նրա համբարձվելը և Հոր աջ կողմում նստելը

Հարց. -Որտեղից համբարձվեց Քրիստոսը:

Պատասխան. -Ձիթենյաց լեռից, որը գտնվում է Բեթանիա գյուղի և Երուսաղեմի մոտ (183):

Հարց. -Ե՞րբ:

Պատասխան. -Հարություն առնելուց հետո քառասուներորդ օրը (184):

Հարց. -Այդքան ժամանակ ինչ արեց երկրի վրա:

Պատասխան. -Բազմիցս երևաց շատերին՝ հավաստիացնելու իր ճշմարիտ հարությունը (185), իր աշակերտներին ավանդեց իր կարևոր վարդապետությունն ու պատվիրանները (186) և խոստացավ առաքել Սուրբ Հոգուն՝ նրանց զորացնելու և մխիթարելու (187):

Հարց. -Ի՞նչ է նշանակում Քրիստոսի Հոր աջ կողմում նստելը:

Պատասխան. -Նշանակում է, որ բոլոր կարգադրություններն անելուց հետո մարդկային այն մարմնով, որն առել էր երկինք համբարձվեց (188), մտավ Աստվածային փառքի մեջ (189), որն ստացել է Հորից ի սկզբանե (190):

Հարց. -Կատարվե՞ց Քրիստոսի առաքյալներին տրված խոստումը:

Պատասխան. -Այո՛, որովհետև (հոգեգալստյան) Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգին հրեղեն լեզուներով իջավ առաքյալների բազմության վրա մինչ նրանք հավաքված էին մեկի տանը, նրանց համակելով Աստվածային հանձարով և լեզվախոսության պարգևներով՝ հրաշարիորեն գորացրեց ավետարանի քարոզությունը (191):

Հարց. -Երբևէ ծագե՞լ է թյուր կարծիք Բանն Աստծու ներմարդկայնության մասին:

Պատասխան. -Այո՛, որովհետև ամբարտավան մարդկանցից ոմանք Բանն Աստծու մարդեղության անճառելի խորհրդի մասին խորհելիս կամ խոսելիս, խոտորվելով դեպի այլևայլ խոտորնակ կարծիքները, մոլորվեցին և մոլորեցրին ուրիշներին:

Հարց. -Ովքե՞ր են նրանցից առավել գլխավորները:

Պատասխան. -Նեստորը, Եվտիքիսը, Ապողինատը, Հուլիանեն<sup>16</sup>:

Հարց. -Ո՞րն է Նեստորի մոլորությունը:

Պատասխան. -Այն էր, որ մի Քրիստոսին երկուսի էր բաժանում, այլ ասելով Մարիամից ծնված որդուն և այլ՝ հավիտենիական Հորից ծնվածին, ուստի Մարիամին մարդածին էր համարում և ոչ թե Աստվածածին:

Հարց. -Ինչո՞ւմն էր Եվտիքիսի մոլորությունը:

Պատասխան. -Նրանում, որ նա պնդում էր, թե Քրիստոսի մեջ Աստվածային և մարդկային բնությունները խառնվելով միմյանց՝ մեկն են դարձել, մեկից մյուսը առաջանալով և որ Բանն Աստված ճշմարտապես մարմին չընդունեց ու իսկական մարդ չդարցավ, այլ կույսի՝ իբրև խողովակի միջով անցնելով, որպես մարդ, երևաց մարդկանց աչքին (193):

Հարց. -Ի՞նչ էր ուսուցանում Ապողինարը:

Պատասխան. -Ուսուցանում էր, թե Քրիստոսը չուներ բանական հոգի և միտք, և որ ոչ թե կույրի արյունից ստացավ մարմինը, այլ երկնքից բերեց (194):

Հարց. -Ի՞նչ էր ուսուցանում Հուլիանեն:

Պատասխան. -Ուսուցանում էր, թե Քրիստոսը չարչարանքներ չկրեց, և թե նրա մեռնելը երևակայական էր և ոչ թե ճշմարտապես (195):

Հարց. -Ո՞ր ազգից և աշխարհից դուրս եկան այդպիսի աղանդապետերը:

Պատասխան. -Չորսն էլ ազգությամբ հույն էին և Հունաստանից (196). Նեստորը Կոստանդնուպոլսի պատրիարքն էր, Եվտիքիսը՝ նույն քաղաքում՝ վանահայր, Ապոլինարը՝ Լավոդիկեի երեցը, իսկ Հուլիանեն՝ Կարիի եպիսկոպոսը<sup>17</sup>:

Հարց. -Ովքե՞ր ընդունեցին նրանց մոլոր վարդապետությունները:

Պատասխան. -Նրանց նմանները, այսինքն դատարկամիտ մարդիկ, իսկ Առաքելական սուրբ եկեղեցին մերժեց և մերժում է նրանց ամեն ժամ (197):

<sup>16</sup> Սրանց, ինչպես և այլ հերետիկոսների կամ աղանդավորների մասին ցանկացողները կգտնեն «Եկեղեցու պատմություն» գրքում:

<sup>17</sup> Տե՛ս «Եկեղեցական պատմության» մեջ:

է) Քրիստոսի եկեղեցին և նրա խորհուրդները

Հարց. -Ի՞նչ է Քրիստոսի եկեղեցին:

Պատասխան. -Քրիստոսի եկեղեցի ասելով՝ պետք է հասկանալ Քրիստոսի ճշմարիտ հավատացյալների ընդհանուր բազմությունը (198):

Հարց. -Քանի՞ մասի է բաժանվում:

Պատասխան. -Երկու՝ զինվորյալ և հաղթական:

Հարց. -Ո՞րն է զինվորյալ եկեղեցին:

Պատասխան. -Կենդանի հավատացյալների խումբն է, որոնք տակավին մարմին ունենալով Քրիստոսի զինվորներ հոգևոր զենքերով մարտնչում են իրենց հոգևոր թշնամու դեմ:

Հարց. -Ո՞րն է հաղթական եկեղեցին:

Պատասխան. -Սուրբ ննջեցյալների ժողովումն է, ովքեր պնտիերագմը լպատերագմելուց հետո հաղթական փառքի հույսով աշխարհից հեռացան (200):

Հարց. -Տաճարները կամ աղոթքի տները ի՞նչ են եկեղեցի անվանում:

Պատասխան. -Այդպես նրանց անվանելը ոչ թե իսկությամբ եղավ, այլ հարանվանաբար, (եկեղեցի, հունարեն նշանակում է ժողովարան: Այստեղ ցանկանում է ասել, որ եկեղեցի բառը ոչ թե Հիսուսի կողմից տրվեց, այլ հարանվանաբար մարդիկ ասցին որպես ժողովարան: խմբ.) քրիստոնյանները հավաքվում են հրապարակավ աղոթելու և պաշտելու Աստծուն (201):

Հարց. -Քանի՞ բնորոշում ունի Քրիստոսի եկեղեցին:

Պատասխան. -Չորս՝ մեկն է, Սուրբ է, Կաթողիկե է և Առաքելական (202):

Հարց. -Ինչո՞ւ է կոչվում «մեկ»:

Պատասխան. -«Մեկ» է կոչվում այն պատճառով, որ նրա անդամները, այսինքն քրիստոնյանները (203) Հավատի, Հույսի և Սիրո հոգևոր և ներքին միությամբ, որպես մեկ մի մարմին (204) միավորված են իրենց մեկ գլխի՝ Քրիստոսի շուրջը (ՔԾՌ):

Հարց. -Ինչո՞ւ է կոչվում «Սուրբ»:

Պատասխան. -Սուրբ կոչվելու պատճառները երկուսն են. նախ՝ զերծ է անմաքուր ու մոլոր ամեն արատից ու սուտ վարդապատություններից (206), և երկրորդ՝ նրա անդամները սրբված են մեղքերի ախտերիցավազանի մկրտությամբ և Քրիստոսի հանդեպ ունեցած հավատով (207):

Հարց. -Ի՞նչ է նշանակում «կաթողիկե» բառը:

Պատասխան. -Այդ բառը հունարենից թարգմանվում է «ընդհանրական» կամ «Տիեզերական» (208):

Հարց. -Ինչի՞ է Քրիստոսի եկեղեցուն այդպիսի մակդիր տվել:

Պատասխան. -Այն պատճառով, որ մարդ ցանկացած ազգից կամ երկրից, եթե կամենա մտնել նրա գիրկը, անխտիր սիրով ընդունում է նրան (209), և ըստ Քրիստոսի խոստման հարատևելու է մինչև աշխարհի վերջը (210)՝ տարածելով աշխարհի ծագերը բոլոր ազգերի մեջ, բոլոր լեզուներով (211):

Հարց. -Ինչո՞ւ է Քրիստոսի եկեղեցին Առաքելական:

Պատասխան. -Որովհետև հաստատվել և մնում է անդրդվելի առաքելաավանդ վարդապետների հիմքի վրա (212):

Հարց. -Ի՞նչ են եկեղեցու խորհուրդները:

Պատասխան. -Զգալի կամ նյութական նշաններ միջոցով (արտահայտվող) սրբարար և խորհրդավոր զանազան գործողություններն են որով արժանապես ընդունողներին պարզակում են Աստծու շնորհները (213):

Հարց. -Այդպիսի խորհուրդները քանի՞սն են:

Պատասխան. -Յոթը՝

ա. Մկրտություն.

բ. Դրոշմ.

գ. Ապաշխարություն.

դ. Հաղորդություն.

ե. Ամուսնություն.

զ. Կարգ.

է. Հիվանդների օծում:

Հարց. -Դրանք ո՞ւմ կողմից սահմանվեցին:

Պատասխան. -Մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի (214):

Հարց. -Ո՞ւմ միջնորդությամբ են կատարվում կամ մատուցվում:

Պատասխան. -Եկեղեցու սրբանվեր պաշտոնյաների միջնորդությամբ (215), որովհետև Կարգը տրվում է միայն եպիսկոպոսի կողմից (216), իսկ մյուսները կատարվում են կամ եպիսկոպոսի, կամ քահանայի կողմից (217):

Հարց. -Այդ բոլոր խորհուրդները հնարավո՞ր են յուրաքանչյուր հավատացյալի:

Պատասխան. -Առաջին չորսը անպայման հարկավոր են բոլոր հավատացյալներին (218), իսկ վերջին երեքը՝ ո՛չ բոլորին, այլ միայն փափագողներին և արժանավորներին (219):

Հարց. -Երբևէ կրկնվո՞ւմ են:

Պատասխան. -Մի մասը կրկնվում են, մի մասը՝ ո՛չ, որովհետև բացի Մկրտության, Դրոշմի և Կարգի խորհուրդներից, մյուսները կարող չեն ընդունել մի քանի անգամ կարևոր և հարմար պահերին (220):

Հարց. -Մկրտությունը ինչո՞ւ է անկրկնելի:

Պատասխան. -Որովհետև Քրիստոսի մահվան խորհրդանիշն է (221), որ մի անգամ մահացավ մեր համար և այլևս չի կրկնելու (122):

Հարց. -Ինչո՞ւ է կրկնվում նաև Դրոշմն ու Կարգը:

Պատասխան. -Որովհետև անզեղջ (այսինքն՝ անդառնալի, անփոխարինելի) են Աստրու շնորհները, որոնք տրվում են նրանց միջոցով, և ընդունողների հոգիտներում անջնջելիորեն տպավորվում են կնիքը (223):

## Մկրտություն

Հարց. -Քրիստոսը ե՞րբ հաստատեց Մկրտության խորհուրդը:

Պատասխան. -Իր մկրտությամբ (224):

Հարց. -Ե՞րբ հրաման տվեց գործածել այն:

Պատասխան. -Իր հարությունից հետո, երբ Առաքյալներին պատվիրեց, գնալ ուսուցանել հեթանոսներին և մկրտել նրանց (225):

Հարց. -Ինչպե՞ս պետք է կատարել մկրտությունը:

Պատասխան. -Երեք անգամ ավազանի ջրի մեջ ընկղմելով՝ հանուն ամենասուրբ Երրորդության (226):

Հարց. -Ի՞նչ է նշանակում եռակի ընկղմումը:

Պատասխան. -Քրիստոսի երեքօրյա թաղումը (227):

Հարց. -Այս խորհուրդները ի՞նչ օգուտ են ստանում:

Պատասխան. -Բոլոր մեղքերի գերությունից ազատվածները (228) և հոգևոր կյանքի համար նոր գնվածները (229) որդեգրվում են երկնավոր Հոր կողմից ժառանգելու նրա արքայությունը (230):

Հարց. -Հնարավո՞ր է առանց ջրի մկրտվել:

Պատասխան. -Այո՛, որովհետև բացի ջրով կատարվող մկրտությունից, կան նաև արյան մկրտություն և սիրո մկրտություն (231):

Հարց. -Դրանք ինչպե՞ս են կատարվում:

Պատասխան. -Մեկը այրամբ մկրտվում է այն ժամանակ, երբ Քրիստոսի նկատմամբ ունեցած հավատի համար նահատակվում է կամ մեռնում է այն ժամանակ, երբ սիրավառ հոգով փափագում է մկրտության, թեև չի կարողանում հասնել (233):

## Դրոշմ

Հարց. -Ե՞րբ է հաստատվել Դրոշմի խորհուրդը:

Պատասխան. -Այբս խորհուրդը, որ նախ ցույց էր տրվել Սուրբ Հոգու՝ Հորդանան գետում Քրիստոսի վրա իջնելու օրինակով (234), և որ խոստացել էր Քրիստոսը հարությունից հետո, հաստատվեց Սուրբ Հոգու առաքյալների մոտ հոգեգալստյան (Պենտեկոստի) օրը գալու ժամանակ (235):

Հարց. -Առաքյալները ինչպե՞ս էին պաշտամունք կատարում:

Պատասխան. -Ձեռքը դնելով և աղոթքներով (236), որովհետև նրանք հավատացյալներին մկրտելուց հետո ձեռքերը դնում էին նրանց վրա, և Սուրբ Հոգին երևելի նշաններով կամ գորությամբ իջնում էր նրանց վրա (237):

Հարց. -Այժմ մենք ինչպե՞ս ենք կատարում:

Պատասխան. -Մկրտվածի ճակատը և այդ անդամները կամ զգայարանները մեռնով օծելով՝ հանուն Սուրբ Երրորդության (238):

Հարց. -Դրոշմը ընդունողը ի՞նչ է ստանում:

Պատասխան. -Իր հոգում ընդունելով Սուրբ Հոգու ներքին օծությունը՝ հաստատուն է դառնում հավատի և Աստվածային պատվիրանների պահպանության մեջ (239), ինչպես նաև մտնում է Քրիստոսի գինվորների շարքը՝ անվանակից լինելով նրան (240):

Ապաշխարություն

Հարց. -Ե՞րբ է հաստատվել Ապաշխարության խորհուրդը:

Պատասխան. -Քրիստոսի կողմից առաքյալների վրա Սուրբ Հոգու փչմամբ և մեղքերի թողության համար նրանց իշխանություն տալով (241):

Հարց. -Ի՞նչ է ստանում մարդ այդ խորհրդից:

Պատասխան. -Մաքրվում է մեղքերից, որոնք կատարած կլինի մկրտության ավագանից ծնվելուց հետո (242) և վերստին կարժանանա արդարության շնորհներին (243):

Հարց. -Ինչպե՞ս պետք է դիմել այդ խորհրդին:

Պատասխան. -Սրտի զղջմամբ (224) քահանայի առաջ խոստովանելով բոլոր մեղքերը (245) և հուսալով ընդունել մեղքերի թողությունը Քրիստոսի չարչարանքների շնուրհիվ (246):

Հարց. -Ապաշխարությամբ բոլոր մեղքերը՞ քավվո՞ւմ են:

Պատասխան. -Այո՛ (247), քանի որ Աստված խոստացել է (248), կամենում է (249) և կարող է (250) մաքրել մեզ մեղքերից, երբ ինքներս խոստովանենք (251):

Հաղորդություն

Քրիստոսը երբ սահմանեց հաղորդության խորհուրդը:

Պատասխան. -Իրեն մատնելու գիշերը, այսինքն Բաղարջակերաց տոնի առաջին երեկոյան, երբ անձամբ կատարեց այդ խորհուրդը և իր աշակերտներին պատվիրեց հետո էլ նույնը կատարել ի հիշատակ այն մահվան, որով ինքը մեռնելու էր (252):

Հարց. -Ինչպիսի՞ նյութով է արժանի կատարել խորհուրդը:

Պատասխան. -անխմոր (այսինքն բաղարջ) հացով (253) և անապակ (այսինքն անջուր) գինով (254), ըստ կարգի Հայաստանյաց եկեղեցու (255)՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրինակով (ՔՌՁ):

Հարց. -Գինին ի՞նչ գույնի պետք է լինի:

Պատասխան. -Ի՞նչ գույնի գինի որ գտնվի (257):

Հարց. -Ո՞րն է այդ խորհրդի իմաստը:

Պատասխան. -Այն, որ հացի խորհրդի՝ այսինքն նմանակից լինելու մեջ, ճշմարտապես բաշխվում է Քրիստոսի մարմինը, և գինու խորհրդի մեջ՝ Քրիստոսի արյունը (258):

Հարց. -Ի՞նչ են ստանում նրանք, ովքեր արժանավորապես հաղորդվում են Աստվածային խորհրդին:

Պատասխան. -Ընդունում են ներելի մեղքերի թողությունը (259) հոգով միանում են Քրիստոսին (260) և արժանանում հավիտենական կյանքը ժառանգելու (261):

Հարց. -Ինչպիսի պատրաստություններ են պահանջվում արժանավորապես ընդունելու խորհուրդը:

Պատասխան. -Պահանջվում են անձի անձի մաքրության ամեն մի ծանր ու մահացու մեղքից, որ լինում է ապաշխարությամբ (262), մարմնական անկարգ ցանկություններից իսպառ հրաժարում, եռանդուն պապագ իր անձը նվիրելու Աստծուն և մնալու նրա պատվիրապահության մեջ (263):

Ամուսնություն

Հարց. -Ե՞րբ հաստատվեց ամուսնության խորհուրդը:

Պատասխան. -Երբ Քրիստոս վճռեց, որ Արարչի հրամանով զուգավորվածները, այսինքն այր ու կին, պետք է լինեն անբաժանելի (264):

Հարց. -Մի՞թե դրանից առաջ ամուսնություն չկար:

Պատասխան. -Կար, բայց դա համարվում էր լոկ մարդկային միաբանություն, իսկ Քրիստոսը այն կարգեց որպես սրբազան խորհուրդ (265):

Հարց. -Մենք ինչպե՞ս ենք կատարում այդ խորհուրդը:

Պատասխան. -Քահանայի աղոթքներով և օրհնությամբ, որը հավատացյալ այր ու կնոջ՝ ըստ նրանց հաճության, միավորումն է Քրիստոսի եկեղեցուն, հոգվոր միավորման օրհնակով (266):

Հարց. -Ինչո՞ւ ասացիր «ըստ նրանց հաճության»:

Պատասխան. -Որովհետև պսակը անվավեր է համարվում, եթե կայանում է առանց փեսայի և հաղսի հաճության (267):

Հարց. -Ինչու է սահմանվել ամուսնությունը:

Պատասխան. -Ավելացնելու բնական ծնունդների թիվը և ընդունողին հեռու պահելու անառակության վտանգից (268):

Հարց. -Օրհնակւան կարգով քանի՞ անգամ կարելի է ամուսնանալ:

Պատասխան. -Եթե մեկը կամենա, օրհնական կարգով ամուսնանալ երկրորդ կամ երրորդ անգամ իր կողակցի մահից հետո (269):

Հարց. -Չորրորդ, հինգերորդ կամ դրանցից ավելի ամուսնությունները օրհնական չե՞ն համարվում:

Պատասխան. -Աստվածային և առաքելական օրենքներում այդ հարցի վերաբերյալ ոչինչ չի սահմանված, բայց եկեղեցական կանոնները, անարժան համարելով դրանք, արգելում են (270):

Կարգ

Հարց. -Քրիստոսը ե՞րբ հաստատեց Կարգի խորհուրդը:

Պատասխան. -Իր համբարձման օրը, երբ աշակերտներին բարձրացրեց Ձիթենյաց լեռան գագաթը և բարձրացնելով իր ձեռքը՝ օրհնեց նրանց (271):

Հարց. -Ովքեր վերցնում են Կարգը, ինչպիսի՞ իշխանություն են ընդունում:

Պատասխան. -Ընդունում են հոգևոր կարողությունը՝ մոտենալու եկեղեցու պաշտամունքին, հովվելու ժողովրդին, նրանց տալու սրբազան խորհուրդներ (272):

Հարց. -Կարգը քանի՞ աստիճան ունի:

Պատասխան. -Յոթը (273)

ա) Դռնապանություն.

բ) Դպրություն կամ ընթերցողություն.

գ) Երդմնեցուցչություն.

դ) Ջահընկալություն.

ե) Կիսասարկավագություն.

զ) Սարկավագություն.

է) Քահանայություն<sup>18</sup>:

Հարց. -Եպիսկոպոսությունը կամ կաթողիկոսությունը աստիճաններ չե՞ն:

Պատասխան. -Ոմանց կարծիքով եպիսկոպոսությունը ութերորդ աստիճան է համարվում այս յոթից առավելև որպես նրանք իր մեջ պարունակող (274), իսկ Կաթողիկոսությունը եպիսկոպոսությունից տարբերվում է պաշտամունքի գերազանցությամբ և ծայրագույն իշխանությամբ: Ուստի կոչվում է նաև Եպիսկոպոսապետ (275):

Հարց. -Եպիսկոպոսը ինչպե՞ս է տալիս Կարգը կամ Կարգի աստիճանները:

Պատասխան. -Աղոթելով և ձեռքը դնելով ընծայվողի վրա (276), նաև օծմամբ, եթե ընծայվողը ընդունելու լինի Քահանայության կամ Եպիսկոպոսության աստիճան (277):

Հարց. -Ո՞ւմ է արժանի տալ Կարգ կամ աստիճան:

Պատասխան. -Միայն նրանց, որոնք ունենալով ուրիշներին (278) և որոնք իրենց բարքի ու սուրբ կրոնի համար ընդունված են ժողովրդից (279):

Հարց. -Ովքե՞ր են անարժան համարվում կարգ ընդունելու:

Պատասխան. -Տգետ և անուս այրերը (280), նաև նրանք, ովքեր մարմնով կամ նրա անդամներով արատավոր կամ պակասավոր են:

Հիվանդների օծումը

Հարց. -Հիվանդների օծման խորհուրդը Քրիստոս ե՞րբ ավանդեց:

Պատասխան. -Երբ նա աառքյալներին զորություն և իշխանություն տվեց՝ հիվանդներին բժշկելու (283):

Հարց. -Ի՞նչ նպատակով:

<sup>18</sup> Ն. Լամբրոնացին «Քննութիւն կարգաց եկեղեցւոյ» գրքում այլ կերպ է ներկայացնում աստիճանների կարգը, որը տանելով հեռացնում է մինչև խնդիրը՝ միտասին վերցնելով Պատրիարքությունը, Մետրոպոլիտությունը և այլն: Սուրբ Դիոնեսիոսը (եկեղեցական քահանա) Կարգը բաժանում է երեք մասի, այն է մաքրողական, լուսավորական և կատարողական: Այս մասին խոսք կլինի մյուս գրքում:

Պատասխան. -Հիանդներին հույսով զորացնելու, որպեսզի նրանք գտնեն մարմնի ախտերի բժշկության և թեթև մեղքերի թողության (284):

Հարց. -Առաքյալները սովորաբար ի՞նչ ձևով էին կատարում խորհուրդը:

Պատասխան. -Մերթ միայն ձեռքերը դնելով հիվանդների վրա ու աղոթելով (285), մերթ էլ նրանց մարմինը օծելով յուղով Տիրոջ անունով (286):

Հարց. -Ուրեմն հնարավո՞ր է առանց յուղով օծելու կատարել այդ խորհուրդը:

Պատասխան. -Այո՛, ինչպես որ ընդունված է Հայաստանյաց եկեղեցու կողմից (287):

Ը. Շնորհաբաշխություն

Հարց. -Ի՞նչ է շնորհաբաշխությունը:

Պատասխան. -Աստծու անձնահատույց բարեխոսությունից մարդկանց պես-պես շնորհների և պարգևների բաշխումն է (288):

Հարց. -Ի՞նչ են շնորհները:

Պատասխան. -Շնորհներ կոչվում են այն բոլոր աստվածազդեցիկ ներգործությունները, որոնք ընդունողն միտքն ու կամքը շարժում են դեպ բարին կամ գործակից են դառնում նրան՝ բարիք կատարելու (289):

Հարց. -Քանի՞սն են Աստծու պարգևները:

Պատասխան. -Կան պարգևների տարբեր տեսակներ, որոնք Աստված տալիս է իր ընտրյալներին, իսկ նրանք, որոնք մասնավորապես թվարկում է առաքյալը, հետևյալներն են՝

ա. Իմաստություն.

բ. Գիտություն.

դ. Մարգարեություն.

ե. Թարգմանություն.

զ. Լեզվախոսություն.

է. Սքանչելագործություն.

ը. Հոգու ընտրություն (290):

Հարց. -Բոլորին միատեսակ կամ հավասար շնորհնե՞ր են բաշխվում:

Պատասխան. -Ո՛չ, այլ ում ինչպես և որքան կկամենա Պարգևողը (291):

Հարց. -Սուրբ Երրորդությունից ո՞ր անձն է բաշխում պարգևները:

Պատասխան. -Երեք անձիք էլ հավասարապես բոլոր պարգևների պատճառ և աղբյուր են (292), բայց դրանց շնորհումը մասնավորապես Հոգուն է ընծայվում (293):

Հարց. -Ի՞նչ նպատակով են տրվում շնորհները:

Պատասխան. -Ընդունողների միտքը լուսավորելու (294), նրանց մեղքերից մաքրելու կամ արդարացնելու (295), նրանց կամքը դեպի բարին ուղղելու (296), այս աշխարհի բարի գործերի մեջ նրանց զորացնելու (297) և հավիտենական երանությամբ հանդերձյալ աշխարհում փառավորվելու (298):

Հարց. -Մարդ Աստծուց ինչպե՞ս կարող է ընդունել շնորհները:

Պատասխան. -Եկեղեցու խորհուրդների միջնորդությամբ (299), ճշմարիտ խոնարհությամբ (300)՝ գերազանցելով աստվածապաշտության մեջ և Աստծուց աղոթքներով խնդրելով (301):

Թ. Մեռյալների հարությունը:

Հարց. -Ի՞նչ է մեռյալների հարությունը:

Պատասխան. -Աստվածային կարողության ներգործությունն է, որով ննջեցյալների մարմինները վերջին օրը հարություն են առնում և միավորվում իրենց հոգիներին (302):

Հարց. -Ովքե՞ր էին ուրանում այդ ճշմարտությունը:

Պատասխան. -Սաղուկեցիները, Էպիկուրյանները, ստոյիկյանները, Հիմենոսը, Փղիտոսը (303) և ուրիշներ:

Հարց. -Արդարների մարմինները հարության նո՞ւյն վիճակն են ունենալու, ինչ-որ ունեին աշխարհում:

Պատասխան. -Ո՛չ, այլ նրանք կամ ստանում են նորանոր աստվածապարզ և շնորհներ կամ սքանչելի կատարելություններ և լինելու են ավելի պայծառ, փառավոր ու գեղեցիկ, քան այս կյանքում (304), (դառնում են) արագաշարժ, նուրբ, թեթև (305) անցավակիր կամ անապանկան (306) և անմահ (307):

Ժ. Վերջին դատաստանը

Հարց. -Ի՞նչ է վերջին դատաստանը:

Պատասխան. -Հիսուս Քրիստոս անաչառ դատաստանն է աշխարհի վերջին նրա երկրորդ գալստյան ժամանակ (308):

Հարց. -Ո՞ւմ է դատելու նա:

Պատասխան. -Բոլոր մարդկանց՝ ողջերին ու մեռածներին (309)՝ յուրաքաչյուրին հատուցելով ըստ իր գործերի (310):

Հարց. -Ինչպիսի՞ հատուցում պետք է լինի արդարներին և մեղավորներին:

Պատասխան. -Արդարները ժառանգելու են երկնային արքայությունը (311), իսկ մեղավորները ենթարկվելու են հավիտենական դատապարտության (312):

Հարց. -Ի՞նչ է երկնային արքայությունը:

Պատասխան. -Աստծու կողմից պատրաստված հանգստի երանավետ և մշտենջենավոր վիճակ է (313):

Հարց. -Այնտեղ արդարների համար ինչպիսի՞ վայելչություններ են լինելու:

Պատասխան. -Անսահման զմայլություն Աստվածայինների դեմ հանդիման տեսություն (314), Քրիստոսի, իրեշտակների և բոլոր սրբերի հետ հավերժական բնակակցություն (315):

Հարց. -Ի՞նչ է հավիտենական դատապարտությունը:

Պատասխան. -Հավիտենական կորստյան ամենաթշվառ վիճակն է՝ մարմնի և հոգու զարհուրելի տանջանքներով լի (316):

Հարց. -Այդ վիճակում մեղավորների ինչպիսի՞ պատիժներ են լինում:

Պատասխան. -Աստծու երանական տեսությունից իսպառ զրկվելը, խղճի տազնապը, զարհուրելի դևերերից, հուսաբեկ լքումը և այլն /ԽՕՅ):

Հարց. -Ղատաստանը միայն պետք է կատարի Աստծու Որդին, իսկ Հայր Աստվածը և Սուրբ Հոգին չեն դատո՞ւմ որևէ մեկին:

Պատասխան. -Երեք անձերն էլ հավասարապես կարող են դատել արարածներին (318), բայց դատելու իրավունքը հենց սկզբից, Հորից՝ նրա հավիտենական ծննդից սկսած, տրված է Որդուն (319), և նա միայն կարող է մեր նման մարմնավոր երևալ (320) դատողի կամ վերջին օրվա դատավոր մարդու կերպարանքով (321):

Հարց. -Աշխարհի վերջը ե՞րբ է լինելու:

Պատասխան. -Այդ մասին մենք չգիտենք, այլ միայն Աստված:

Երկրորդ գլուխ

Հույս

Հարց. -Հույսն ի՞նչ է:

Պատասխան. -Աստծու կողմից մեզ խոստացած բարիքների ակնկալությունն է հանդերձյալ աշխարհում (323):

Հարց. -Որո՞նք են խոստացած բարիքները:

Պատասխան. -Հավիտյանս խոստացած կյանք, հանգիստ և երանություն (324):

Հարց. -Այդ մասնը Աստված ինչպե՞ս խոստացավ:

Պատասխան. -Մարգարեների վկայությամբ, ինչպես նաև բացահայտ՝ իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով (325):

Հարց. -Այդ խոստումները Քրիստոս ե՞րբ հայտնեց:

Պատասխան. -Իր քարոզության ժամանակ, քանի դեռ երկրում էր և մանավանդ՝ երանիների մասին վարդապետելիս (326):

Երրորդ գլուխ

Սեր

Հարց. -Ի՞նչ է Աստծու Սերը կամ Սերը առ Աստված:

Պատասխան. -Այնպիսի զգացում է կամ հոգու հոժարություն, որով սիրում ենք Աստծուն, որը մեր բուն բարությունն է կամ վերջին վախճանը (327):

Հարց. -Մեզանից Աստծու Սերը ի՞նչ է պահանջում:

Պատասխան. -Կատարել նրա օրենքները կամ պատվիրանները (328):

Հարց. -Ի՞նչ են Աստվածային օրենքները:

Պատասխան. -Աստվածադիր կանոններ են, որոնք պատվիրում են ոչ միայն չարիք չգործել, այլև բարիք գործել (329):

Հարց. -Քանի՞ տեսակի են բաժանվում նրանք:

Պատասխան. -Երկու, որոնցից մեկը կոչվում է բնական կամ բնության օրենք, իսկ մյուսը՝ գրավոր կամ դրական:

### Բնական օրենք

Հարց. -Ո՞րն է բնական օրենքը:

Պատասխան. -Մտքի ճանաչողական գործունեությունն է կամ մարդուն ի վերուստ տրված խիղճը, որով նա տարբերակում է բարին չարից, ճիշտը՝ սխալից, իրավը՝ անիրավից, վայելուչը՝ անվայելուչից (330):

Հարց. -Ամեն մարդ ունի՞ այդ:

Պատասխան. -Այո՛, որովհետև ամենաբարի Արարիչը հենց սկզբից, ստեղծման օրից, նրանց պարզել է այդ բնական լույսը (331), որպեսզի լուսավորվածները առաջնորդվեն դրանով և իմանան, թե ինչին պետք է հետևել և ինչից խուսափել (332):

Հարց. -Խղճի զգացողությունը բոլորի մոտի միատեսա՞կ է կամ բոլորը կարո՞ղ են ընտրություն կատարել բարու և չարի միջև:

Պատասխան. -Ո՛չ, որովհետև ում խիղճը մոլորված է, տկար, անկատար կամ նրանում արմատացած վատ սովորությունների պատճառով, նրա համեմատությունն ու դատողությունն էլ սխալ է, թերի, անստույգ, և նա լավը վատ է համարում, արդարը՝ անիրավ կամ ընդհակառակը (332):

Հարց. -Ի՞նչ են թելադրում մտքի խիղճը և բնության օրենքները:

Պատասխան. -Թելադրում են՝

ա. Պաշտել մեր գոյության սկզբնապատճառը (հանդիսացող) ամենաբարի Աստծուն, սիրել նրան և մեր ամբողջ միտքն ու կամքը գործադրել նրան հաճելի լինելու

բ. Պատվել ծնողներին և հնազանդվել նրանց:

գ. Հոգ տանել որդիներին կամ զավակներին և ծառաներին, խնամել անասուններին և այլն:

դ. Հավատարիմ ու անկեղծ լինել ոչ միայն գործերում, այլև խոսքերի, խոստումների, դաշինքի մեջ. չխաբել, չստել և այլն:

ե. Աշխատանքով և գործունեությամբ կարողության չափով օգտակար լինել հասարակությանը և հայրենիքին:

զ. Դանտել անաչառ իրենը:

է. Ամեն մեկին տալ իրենը:

ը. Ուրիշի հետ վարվել այնպես, ինչպես կամենում ենք, որ մեզ հետ վարվեն, և ուրիշներին չանել այն, ինչ չենք կամենում մեզ:

թ. Հանիրավի վնաս չտալ ուրիշին, այն է՝ անմեղ մարդուն չսպանել, չգողանալ, չհափշտակել ուրիշի ունեցվածքը և այլն:

ժ. Երախտապարտ լինել բարերարների նկատմամբ, աշխատել բարերարությանը հատուցել և այլն:

Հարց. -Բնական օրենքներից էլ ի՞նչ օրենքներ առաջացան:

Պատասխան. -Քաղաքական կամ դատաստանական բոլոր օրենքները կամ կանոնները և առաջնորդների հաստատված վիճակները (334):

Հարց. -Մենք պարտավո՞ր ենք և նրանց հնազանդվել:

Այո՛, որպես Աստծու հօրամանի, երբ Աստվածայիտններին հակառակ չեն կամ հոգուն վնասակար (335):

Հարց. -Ինչո՞ւ:

Պատասխան. -Նախ՝ Աստծու պատկերի նմանությամբ ստեղծված բնական ծնունդներն են՝ օրինավոր թագավորները, իշխանները, դատավորները՝ ամենքի թագավոր Աստծու սպասավորները (336):

Գրավոր կամ Դրական օրենք

Հարց. -Որո՞նք են Գրավոր կամ Դրական անվանված օրենքները:

Պատասխան. -Այդ անունով կոչվում են բոլոր այն աստվածատուր օրենքներն ու հրամանները, որոնք դրոշմվեցին Սուրբ Գրքում և բաժանված են Հնի և Նորի:

Հարց. -Ո՞րն է Հին Կտակարանը և ո՞րը նորը:

Պատասխան. -Հին<sup>19</sup> կոչվում են միայն հրեա ժողովրդի օրենքները՝ ավնդված Մովսեսի կամ այլ մարգարեների միջոցով (338), իսկ Նորը<sup>20</sup> ինչ որ մեզ ներկայացվեց ավետարանական քարոզչությամբ առաքյալների միջոցով (339):

Հարց. -Գրավոր օրենքները ինչի՞ ալվելացան ավելացան այն ժամանակ, երբ արդեն կար Բնականը:

<sup>19</sup> Կոչվում է նաև «Մովսեսական, Մովսեսյան կամ Մովսեսադիր օրենք»:

<sup>20</sup> Ասվում է նաև «Ավետարանի կամ Ավետարանական օրենք, Հավատի օրենք, Շնորհների կամ Շնորհալի օրենք»:

Պատասխան. -Գրավոր օրենքները տրվեցին Բնականին օժանդակելու, որպեսզի բնատուր լույսի հետզհետե աղոտանալու պատճառով ախտերի պաշարման հետևանքով, նա անկարող չդառնա անվրեպ տարբերակելու բոլոր մեղքերի տեսակները և լիակատար առանձնացնի Աստվածապաշտ կյանքի և բարոյական ուղղության կանոնները (340):

Հարց. -Քանի՞ դասի են բաժանվում Հին օրենքները:

Պատասխան. -Երեք՝ այն է՝ Բարոյականի, Արարողականի<sup>21</sup> և Դատաստանականի:

Հարց. -Որո՞նք են Բարոյականները:

Պատասխան. -Հենց նույն բնական օրենքներն են, նույն սկզբունքները, որոնք սկզբից ևեթ անգիր կերպով դրոշվել են բոլոր մարդկանց սրտերում (341):

Հարց. -Մրո՞նք են կոչվում արարողական:

Պատասխան. -Նրանք, որոնք սահմանում են կրոնական պաշտամունքի արտաքին կարգերը՝ լվացման, օծման, տոն օրերի, պատարագների, ինչպես ինաև հանդերձանքի ընտրություն կատարելը, կերակուրները միմյանցից առանձնացնելը և այլն:

Հարց. -Որո՞նք են Դատաստանականները:

Պատասխան. -Նրանք, որոնք ուղղված են իրավունքների և ամբարտավանությունների քննությանը, հանցավորներին պատժելու:

Հարց. -Այժմ մեզ համար կարևո՞ր է Հին օրենքների պահպանությունը:

Պատասխան. -Բարոյական օրենքների պահպանությունը կարևոր է ամեն ինչով (342), որովհետև դրանք վերստին հաստատվեցին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի լրացուցիչ կարևորագույն բացատրություններով (343), իսկ ուրիշներինը՝ ո՛չ:

Հարց. -Այդպիսով՝ մենք Հին Կտակարանի Արարողական և Դատաստանական օրենքների իշխանության տակ չե՞նք:

Պատասխան. -Ո՛չ (344), որովհետև նրանք, Նոր օրենքի խորհուրդների լոկ նախապատկեր օրինակները կամ ստվերները լինելով (345), ճշմարտության (Քրիստոսի) աշխարհ գալու ժամանակ և նրանից լրումն առնելով, դաադրեցրին կամ ավելի լավ է ասել՝ մեռան նրա մահվամբ (346):

Հարց. -Քրիստոսը ինչպե՞ս լրացրեց Արարողական օրենքները:

Պատասխան. -Նախ՝ ինքը լցվելով կամ կատարելով դրանք երկրի վրա եղած ժամանակ. թլփատելով, տաճարներին ընծայվելով, շաբաթ օրերը պաս պահելով և ոչ թե կեղծավորությամբ, այլ Օրենքների ճիշտ հրամանի համաձայն (347), երկրորդ՝ ստվերը լույս դարձնելով, այն է՝ թլփատությունը փոխարկելով մկրտության, անասունների գոհումը՝ իր մարմնի Պատարագի, արտաքին լվացումն ու օծումը՝ եկեղեցու այլևայլ խորհուրդների (348):

Հարց. -Իսկ Դատապարտություններն ինչպե՞ս են:

<sup>21</sup> Կոչվում է նաև «Ծիսական կամ Խրատական կամ Ստվերական»:

Պատասխան. -Նրանց հավելյով վարձեր կամ մշտենջենական պատիժներ՝ փոխանակ ժամանակավորների (349):

Հարց. -Որտե՞ղ են ամփոփված Բարոյական օրենքները:

Պատասխան. -Տասնաբանյա պատգամներում կամ պատվիրաններում, որոնք են՝  
ա. Բացի ինձանից ուրիշ աստվածներ չունենաս:

բ. Քեզ համար կուռք չշինես:

գ. Քո Աստծու անունը զուր տեղը մի՛ հիշիր:

դ. Հիշի՛ր շաբաթ օրը սուրբ պահել:

ե. Պատվի՛ր քո հորը և մորը:

զ. Սպանություն մի՛ կատարիր:

է. Շնություն մի՛ անիր:

ը. Գողություն մի՛ անիր:

թ. Սուտ վկայություն մի՛ անիր:

ժ. Մի՛ ցանկանա տիրել քո ընկերոջ տանը, նրա դաշտերին, կնոջը, ծառայիտն, անասուններին և այն ամենին, ինչ նրանն է (տե՛ս Ելից, Հ 3-17, Բ. Օրինաց Ե 7-21):

Հարց. -Ի՞նչ հրաման է տալիս առաջին պատվիրանով:

Պատասխան. -Հրամայում է երկրպագել միմիայն մեկ Աստծուն և նրան ճանաչել ու դավանել որպես ճշմարիտ Աստված (350):

Հարց. -Ովքե՞ր են մեղք գործում այդ պատվիրանի դեմ:

Պատասխան. -Անաստվածները, բազմաստվածները, սուտ աստվածները, երկրպագուները, Աստծուն ատողներն ու ուրացողները, կրոն չունեցողներն ու անհավատները:

Հարց. -Ի՞նչ է հրամայվում երկրորդ պատվիրանով:

Պատասխան. -Հրամայվում է չերկրպագել կուռքերին, դրոշմված աստվածներին, որ մարդկանց ձեռքի գործերն են, արձաններին կամ պատկերներին՝ ծուլված, քեանդակած կամ նկարած, ինչպես նաև երկնքում և երկրի վրա ստեղծված էակներին (351):

Հարց. -Ովքե՞ր մեղանչեցին այդ պատվիրանի դեմ:

Պատասխան. -Ովքեր մեկ անգամ պաշտեցին կամ պաշտում են ուրիշին, բացի արարիչ Աստծուց, այն է՝ կռապաշտները կամ դիցապաշտները, արևապաշտները, լուսապաշտները, անասնապաշտները, դիվապաշտները, ինչպես նաև գաղտնի կռապաշտները, որոնք իրենց ախտավոր կիրքերը աստվածացնելով, պաշտում են նրանց, ինչպիսիք են՝ ազահները, որկրամուլները, հեշտասերները, աշխարհասերները (352):

Հարց. -Սրբազան պատկերը մեր հարգելը ինչո՞վ է տարբերվում հեթանոսների պատկերներին երկրպագելուց:

Պատասխան. -Նրանով, որ երբ մենք հարգում ենք պատկերները, ոչ թե աստվածային ենք համարում նրանց, ինչպես հեթանոսներն են վերաբերվում կուռքերի պատկերներին և ոչ էլ նրանց նման, ովքեր անմահ Աստծու փառքը վերագրում են մահկանացու արարածներին և պաշտում, այլ

միայն գիտենք պատվել Աստվածահաճո սրբերին, որոնց պատկերներում նիստատիպերին ենք տեսնում ու նրանց միջոցով նույն Արարչին ենք մատուցում երկրպագություն (353):

Հարց. -Ի՞նչ է հրամայում երկրորդ պատվիրանը:

Պատասխան. -Հրամայում է երբեք չհիշել Աստծու ահավոր ամենասուրբ անունը անպատշաճ խոսքերում և տեղերում:

Հարց. -Ովքե՞ր են հանցանք գործում այդ պատվիրանի դեմ:

Պատասխան. -Նրանք, ովքեր, որտեղ էլ գտնվեն, սովոր են անհմաստ խոսքերի մեջ դատարկ բաների համար դնել անմենամեծ Աստծուն և երդվել նրա անունով (354), և նրանք, ովքեր չեն քաշվում անարգել Աստծուն՝ հայիոյելով նրա անունը և հայիոյիչներին ընկեր դառնալով (355):

Հարց. -Ե՞րբ է արժանի երդվել:

Պատասխան. -Երբ խիստ կարիքն ու անհրաժեշտությունը պետք են կա՛մ ի փառս Աստծու, կա՛մ ի նպաստ մարդու, կա՛մ ընկերոջ և այդ բոլորը՝ ճշմարտությամբ, երկյուղով, արդարացի ու բարեպատեհ տեղում (356): Իսկ հակառակ դեպքում մարդուն ավելի լավ է ըստ Քրիստոսի խոսքի, այնպես ու այնչափ հավատարիմ լինել իր ասածներին, որ երբեք հարկ չլինի այն հաստատել երդումով (357):

Հարց. -Ի՞նչ է հրամայում չորրորդ պատվիրանը:

Հրամայում է անարատ, այսինքն սրբությամբ պահպանել հանգստյան օրերը (մա՛կ կիրակիները (358) և հանդիսավոր տոները)՝ զբաղվելով աղոթքներով, հոգեշահ գրքերի ընթերցանությամբ և հոգևոր ու առաքինի այլ գործերով կամ անմեղ զբոսանքներով:

Հարց. -Ովքե՞ր են մեղք գործում այս պատվիրանի դեմ:

Պատասխան. -Նրանք, ովքեր աշխատում են կատարել իրենց մեղսասեր կամքը կամ հաճույքները, կամ էլ ամբողջ օրը անցկացնում են անգործությամբ՝ պաշտելով պարապությունը, որը ծնում է շատ չարիքներ և ատելի է հենց իրեն Աստծուն (359):

Հարց. -Ի՞նչ է հրամայում հինգերորդ պատվիրանով:

Պատասխան. -Հրամայվում է արժանապես սիրել և մեծարել հորն ու մորը, որոնց միջոցով կարելի է ճանաչել ոչ միայն իսկական ծնողներին, այլև թագավորներին, առաջնորդներին, իշխաններին, ուսուցիչներին կամ վարժապետներին և մյուս բոլոր խնամակալներին ու բարերարներին (360):

Հարց. -Ովքե՞ր են այդ պատվիրանի դեմ:

Պատասխան. -Որդիները կամ զավակըները, երբ հանդգնում են չանսալ իրենց բարի հոր խրատներին (361), ժողովուրդները, երբ ապստամբում են իրենց օրինավոր թագավորների, իշխանի կամ առաջնորդի դեմ (362), ծառաներն ու պաշտոնյանները, երբ ստակությամբ և անհավատարմությամբ են վերաբերվում իրենց տերերին (363), աշակերտներին, երբ անշնորհքություն են ցուցաբերում ուսուցիչների նկատմամբ (364), երախտիք ստացողները, երբ ամփոփորեն վշտացնում են բարեգործներին (365):

Հարց. -Ի՞նչ է հրամայվում վեցերորդ պատվիրանով:

Պատասխան. -Հրամայվում է՝ անհրավ սպանությամբ մարդու արյուն չթափել (366):

Հարց. -Ո՞ր սպանությունն է համարվում իրավացի և ո՞րը անհրավ:

Պատասխան. -Իրավացի է համարվում օրինավոր և արդար պատերազմում թշնամու գինվորին սպանելը (367) և դահիճի կողմից մահապարտի սպանությունը, երբ նա (դատապարտվել է) տերության կամ դատավորի արդարադատ վճռով (368): Իսկ անհրավ է այն սպանությունը, երբ մեկը առանձին և ինքնակամ կատարում է այն բռնի կերպով կամ դավով (369):

Հարց. -Էլ ովքե՞ր են մեղանջում պատվիրանի դեմ:

Պատասխան. -Ովքեր կամակից կամ գոյակից են դառնում մեկ անմեղ սպանությանը կամ մահվանը (370), ովքեր ուրիշներին իբրև մահացու թույն են խմեցնում մեղքերի պես-պես հրապուրանքները և նրանց հոգու և մարմնի կորստյան պատճառ դառնում (371), ովքեր չարաչար գայթակղեցնում են անմեղներին և իրենց խորխորատը գզում (372), ովքեր թշնամաբար ստում են իրենց եղբայներին կամ ընկերիներին և արատավորում նրանց բարի համբավը՝ նրանց չարախոսելով (373):

Հարց. -Այդ պատվիրանը արգելում է ինքնասպանությունը:

Պատասխան. -Այո՛, որովհետև այն ևս անհրավ սպանություն է, սոսկալի մեղք, քանի որ մեր անձերի տերը ոչ թե մենք ենք, այլ նա՛, որով գոյություն ունենք և ապրում ենք (374):

Հարց. -Ո՞ր մեղքերից է հեռու պահում յոթերորդ պատվիրանը:

Պատասխան. -Շնությունից (375) և նման այլ արատներից, ինչպես նաև այն բոլոր պիղծ կամ անպարկեշտ խոսքերից ու մտադրություններից, որոնք դեպի այն են առաջնորդում (376):

Հարց. -Այդ պատվիրանի դեմովքե՞ր են մեղանջում:

Պատասխան. -Ովքեր նույն կամ նման մեղքեր են գործում:

Հարց. -Ութերորդ պատվիրանով ինչպիսի՞ մեղքեր են արգելվում:

Պատասխան. -Գողությունը, հափշտակությունը, զրկանքը, կողոպուտը (377):

Հարց. -Էլ ի՞նչ մեղքեր կան դրանց նման:

Պատասխան. -Խաբեությունը գնի և վառելիքի մեջ, խարդախությունը չափի և կշռի մեջ, ինչ ձևով որ ուզում է լինի (378), պարտքը կամ ավանդը ժխտելը և այլն:

Հարց. -Ո՞ր մեղքերից է հեռու պահում մեզ իններորդ պատվիրանը:

Պատասխան. -Ընկերոջ մասին սուտ վկայելուց և նրան զրպարտելուց:

Հարց. -Ո՞ր մեղքերից է հեռու պահում մեզ տասներորդը:

Պատասխան. -Որիշի ունեցվածքը, այսինքն՝ այն ամենը, ինչ մերը չէ, ցանկանալուց:

Հարց. -Նոր օրենքի պատվիրանները ինչպիսի՞ն են:

Պատասխան. -Նոր օրենքի պատվիրանները ավելի կատարյալ են, քան Հնինը (379). առաջին՝ մեզ բոլոր մեղքերից կամ մոլորություններից հեռու պահելուց զատ, հրամայում են նաև գործել Աստվածահաճո գերազանց առաքինություններ, և երկրորդ՝ պատվիրում են ոչ միայն արտաքուստ պահպանել օրենքների կատարումը, այլև ներքուստ՝ ցույց տալով, որ իրենց սրտում եթե կրում են չար խորհուրդներ, և անգամ մեղանջել ցանկանալը իսկական մեղք է (380):

Հարց. -Մեղքերի տեսակները քանի՞սն են:

Պատասխան. -Երկու՝ սկզբնական և ներգործական:

Հարց. -Ո՞րն է սկզբնականը:

Պատասխան. -Սկզբնական առաջին մեղքն է առաջին մարդու՝ Ադամի, նա մեղք գործեց Ամենակալ Արարչի դեմ:

Հարց. -Ո՞րն է նրա մեղքը:

Պատասխան. -Հպարտության ծնունդ, անհնազանդությունը (381), չինազանդեց Աստծու պատվիրանին՝ կերավ նրա կողմից արգելված գիտության ծառի պտուղը:

Հարց. -Այդ մեղքից ի՞նչ պտղաբերվեց:

Պատասխան. -Նրա բոլոր սերունդների դատապարտության հոգով և մարմնով՝ թե՛ այս և թե՛ այն կյանքում (382):

Հարց. -Մի՞թե միայն այդ հանցանքով դատապատվեցի՞ն բոլոր մարդիկ:

Պատասխան. -Այո՛ (383), որովհետև Ադամի ամբողջ բնությունը կրելով իր մեջ, որպես սերմի կամ արմատի մեջ, նրա մեղք գործելու և դատապարտվելու ժամանակ իրավմամբ նրան մեղսակից և դատապարտակից գտնվեց (384): Ուստիև ոչ ոք<sup>22</sup> նրա մեղքերից անշաղախ (մաքուր) չի ծնվել, և ոչ ոք էլ չի ծնվի (385):

Հարց. -Ո՞րն է դատապարտությունը այս աշխարհում:

Պատասխան. -Նախ՝ մեզանում ապականության արմատը (386), որի պատճառով զրկվեցինք երկնային պարգևներից և անախտական կյանքի շնորհներից, որոնք պետք է վայելենք եթե մեղք չգործեր Ադամը (387) և երկրորդ՝ զգայարանների խզումը մտքից, մարմինը՝ հոգուց, որոնց հետևանքով մեզանում շատացան պախարակելի կրքերը՝ մեղք գործելու անկարգ ցանկությունները, ցավերը, մոլորությունները, կերակրի, հագուստի, բնակարանի կարիքները և այլն (388), ինչպես նաև մարմնի մահը (389):

Հարց. -Ո՞րն է դատապարտությունը այն կյանքում:

Պատասխան. -Աստվածային երանավետ տեսությունից և երկնային բոլոր վայելքներից զրկվելն է, ինչպես նաև հոգու տառապանքը, հուսալքությունը, անմխիթար սուգը և այլն (390):

Հարց. -Հավիտենական կորստից ովքե՞ր են փրկվում:

Պատասխան. -Միայն նրանք, ովքեր հավատում են Աստծու հրածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին (391) և հնազանդվում են նրան՝ ընդունելով նրա սահմանած սուրբ ավազանի մկրտությունը (392):

---

<sup>22</sup> Բացի նրանցից, որոնց Աստված կամեցավ հատուկ շնորհով պահել, ինչպես որ Աստվածածնի մասին քարոզում է Հայաստանյաց եկեղեցին շարականներում՝ Բանական երկրի տիրուհի և մեղքերի փշից մաքուր անդաստան: Անթառամ ծաղիկ, Հեսուի արմատից կրկին բուսած անդատապարտ շառավիղ: Եվ նարեկացին ասում է «Երանելի ես դու ընտիր շրթունքների անբիծ լեզուների վրա, դա, Հեսուի ծաղիկդ, մեր կյանքի պտուղդ, որ չորս տարրերի խառնուրդներից հետո էլ անկցորդ մնացիր հասարակ հողածինների կրքերին և չդարձար բնական համաստեղծ կրքերի ծանրության բերողը (Աստվածածնի ներբողից):

Հարց. -Առանց դրան որևէ մեկը չի կարող անդատապարտելի մնալ կամ ժառանգել հավիտենական կյանք:

Պատասխան. -Ո՛չ (393), որովհետև Աստծու բարկությունը կա և մնում է նրա վրա (394):

Հարց. -Որո՞նք են գործելի մեղքերը:

Պատասխան. -Նրանք, որոնք մենք ինքներս ենք գործում մեր կյանքի ընթացքում:

Հարց. -Քանի ձևով են կատարվում մեղքերը:

Պատասխան. -Չորս՝

ա. Միայն խորհրդով, ինչպիսիք են՝ հուսահատությունը, ատելությունը, նախանձը, թերահավատությունը և այլն:

բ. Խորհրդով և խոսքով, ինչպես օրինակ՝ բամբասանքը, հայիոյանքը, գրպարտությունը, քսությունը, ստախոսությունը և այլն:

գ. Խորհրդով և գործով, ինչպիսիք են գողությունը հավիտակությունը, շնությունը, սպանությունը և այլն:

դ. Չանցառությամբ, այսպես, օրինակ՝ բարին իմանալը և չկատարելը, շնորհները և քանքարը թաքցնելը, կարողանալ, բայց ուրիշների համար բարիք չկատարելը և այլն:

Հարց. -Քանի տեսակի են բաժանվում:

Պատասխան. -Երկու՝ մահաչափ<sup>23</sup> և թեթև<sup>24</sup> (395):

Հարց. -Որո՞նք են հահաչափ մեղքերը և քանի՞սն են:

Պատասխան. -Մահաչափ են մարդու կամքով գործվող մեղքերը, որոնցից գլխավորները յոթն են՝

ա. Հպարտությունը.

բ. Նախանձը.

գ. Ծուլությունը.

ե. Ազահությունը կամ արծաթասիրությունը.

զ. Որկրամոլությունը.

է. Բղջախոհությունը (տռփասիրությունը):

Հարց. -Ինչո՞ւ են կոչվում մահաչափ:

Պատասխան. -Որովհետև հոգու մահացուցիչ ախտեր են, որոնք գործողին դատապարտում են հավիտենական պատժի՝ նրան զրկելով երանելի կյանքից (396):

Հարց. -Ի՞նչ դեղերով է հարկավոր բուժել այդ ախտերը:

Պատասխան. -Նրանց հակառակ առաքինություններով (397). այն է՝ հպարտության ախտը՝ խոնարհությամբ, նախանձը՝ մարդասիրությամբ, սարկությունը՝ հեզությամբ, ծուլությունը՝

<sup>23</sup> Կոչվում է նաև «Մահացու»:

<sup>24</sup> Կոչվում է նաև «Ներելի և փոշետեսակ»:

աշխատասիրությամբ, ազահությունը՝ ողորմածությամբ կամ առատաձեռնությամբ, որկրամոլությունը՝ ժուժկալությամբ, բղջախոհությունը՝ ողջախոհությամբ կամ պարկեշտությամբ:

Հարց. -Ո՞ր մեղքերն են կոչվում թեթև:

Պատասխան. -Նրանք, որոնք կատարվում են գործողի տկարության, անգիտության պատճառով կամ առանց նրա կամքի. նման մեղքերը ծանր մեղք չեն համարվում:

Հարց. -Բոլոր մեղքերը Աստծուն հակառակ են:

Պատասխան. -Այո՛, որովհետև Աստված (իմա՛ եռանձնյա Աստվածությունը) ատում է բոլոր տեսակի անիրավությունները (398), բայց առանձնակի դիտարկելով՝ պետք է ասել հետևյալը՝ տկարության պատճառով կատարվող մեղքերը հզոր Հայր Աստծու դեմ են, անգիտությամբ գործող մեղքերը դեմ են Որդուն՝ Հոր իմաստությանը, իսկ որոնք կատարվում են սրտի չարության պատճառով և Աստծու պատվիրանները արհամարելով, Սուրբ Հոգու դեմ են:

Հարց. -Դրանցից որո՞նք են առավել ծանրագույն մեղքերը:

Պատասխան. -Սուրբ Հոգուն հակառակ՝ աններելի կոչվող մեղքերը (399).

Դրանք են՝

ա. Աստծուց իսպառ հույսը կտրելը (400).

բ. Հանդգնաբար Աստծու վրա հույս դնելը (401).

գ. Հայտնի ճշմարտության դեմ մաքառելը (402).

դ. Եղբոր հաջողությանը նախաձեռնելը (403).

ե. Անկարեկից խստասրտությունը (404).

զ. Համառորեն մեղքերը չզղջալը (405):

Հարց. -Մարդ կարող է բոլորովին ազատ լինել ամեն տեսակի մեղքերի ներգործությունից:

Պատասխան. -Ո՛չ, բայց Աստծու օժանդակությամբ կարող է զգուշանալ հոժարակամ մեղանչելուց (406):

Հարց. -Ինչո՞վ ենք արժանանում Աստծու օժանդակությանը:

Պատասխան. -Աղոթքներով (407):

Հարց. -Ի՞նչ է աղոթքը:

Պատասխան. -Բարու հայցումը Աստծուց (408):

Հարց. -Քանի՞ տեսակի են բաժանվում:

Պատասխան. -Երկու՝ հրապարակական<sup>25</sup> և առանձնական:

Հարց. -Ո՞րն է հրապարակականը և ո. ըր առանձնականը:

Պատասխան. -Հրապարակականը այն է, որ կատարվում է բազմաթիվ աղոթողների համատեղ ձայնակցությամբ (409): Իսկ առանձնականը, երբ մարդ աղոթում է առանձին բարձրաձայն կամ անմռունչ (410):

Հարց. -Անշուշտ հարկավո՞ր են աղոթքների այդ երկու տեսակն էլ:

<sup>25</sup> Կոչվում է նաև «Հասարակաց»:

Պատասխան. -Այո՛, որովհետև ամեն ոք, բացի առանձին աղոթելուց (411)-պարտավոր է մասնակցել նաև հասարակական աղոթքներին՝ հասարակայնության հետ միասին դավանելով Աստծուն՝ բոլոր բարիքները պարզևողին (412):

Հարց. -Որտե՞ղ է արժանի կատարել աղոթքը:

Պատասխան. -Հրապարակական աղոթքը արժան է Աստծուն մատուցել նրա տաճարում, այսինքն եկեղեցում (413), իսկ անհատական աղոթքը կարող է կատարել ցանկացած պատշաճավոր տեղում (414), այսինքն՝ կամ իր սենյակում՝ մարդկանցից մեկուսացված (415), կամ էլ բազմության մեջ՝ միայն թե մտքով առանձնացած (416):

Հարց. -Ե՞րբ է աղոթելու ժամանակը:

Պատասխան. -Ինչպիսի ժամ կամ ժամանակ լինի, կարելի է աղոթել, որովհետև Աստված բոլոր ժամերին պատրաստ է լսգելու իր ծառաների աղաչանքը (417): Բայց ընդունված կարգի համաձայն պատշաճ է աղոթել կամ առավոտյան, կամ երեկոյան, կամ էլ գիշերը (418):

Հարց. -Ի՞նչ է պետք խնդրենք Աստծուց մեր աղոթքներում:

Պատասխան. -Այն բոլոր պարագաները, որ կարևոր են մեր հոգուն և մարմնին, կամ էլ մեր ժամանակավոր և հավիտենական կյանքին (419):

Հարց. -Ինչ որ խնդրում ենք, Աստված տալի՞ս է:

Պատասխան. -Այո՛, տալիս է, եթե ինչ որ խնդրում ենք, մեզ օգտակար է՝ իր բարերար կամքի համաձայն (420), կամ էլ եթե մեր խնդրանքը լինի հանուն Հիսուս Քրիստոսի (421) և չհանգեցնի չար վախճանի (422):

Հարց. -Բոլոր աղոթքները հաճելի՞ են Աստծուն:

Պատասխան. -Ո՛չ, որովհետև անաժանությամբ մատուցած աղոթքները պիղծ են սրբերից սրբի առջև (423) և դառնում են ետ աղոթք անողին որպես մեղքեր (424):

Հարց. -Այսպիսով ինչպիսի՞ զգուշություն է հարկավոր աղոթելիս:

Պատասխան. -Աղոթելիս պարտավոր ենք զգուշանալ, որպեսզի մեր աղոթքները մարդկանց առջև չլինեն ցուցադրական կամ կեղծավոր (425), այլ լինեն ճշմարիտ (426), չաղոթենք միայն շրթունքներով (427), այլ հոգով և ուշադրությամբ (428), ոչ թե ծանծրանալով (429), այլ զվարթությամբ (430), ոչ թե երկմտությամբ կամ տարակրուսանքով (431), այլ կատարյալ հավատով (432), ոչ թե հանդգնությամբ (433), այլ խոնարհությամբ՝ զղջալով և Աստծու երկյուղով (434), ոչ թե հիշազածությամբ, այլ ներելով նրանց, ովքեր հանցանք գործեցին (435):

Հարց. -Արժանավորապես աղոթելիս մենք ի՞նչ ենք ստանում:

Պատասխան. -Տիրոջից ստանում ենք ամեն այն հոգեկան և մարմնական բարիքները (436), հաղթահարում ենք մեղքերը (437), վանում ենք վշտերը (438), մխիթարվում ենք հոգիով (439), սպառազինվում ենք զանազան փորձությունների և դևերի դեմ (440), ստանում ենք հավիտենական փրկություն (441):

Հարց. -Աղոթքների գլխավորը ո՞րն է:

Պատասխան. -Հայր մերը՝ ավանդվար մեր Տեր Քրիստոսի կողմից, որում համառոտակի, բայց ամբողջությամբ նշվում են մեր հոգու և մարմնի բոլոր կարիքները:

Հարց. -Քանի՞ խնդրանք կա այդ աղոթքում:

Պատասխան. -Յոթը, քանի որ մեր երկնավոր Հորից խնդրում ենք՝

ա. Արժանացնել մեզ՝ սրբացնելու, այսինքն՝ փառավորելու նրա սուրբ անունը՝ որդիաբար ծառայելով իրեն: Ուստի ասում ենք՝ «Հայր մեր, որ երկնքումն ես, սուրբ թող լինի քո անունը»:

բ. Շնորհներով թագավորել մեր սրտերում, որպեսզի մեղքերին ծառա չդառնանք «Քո թագավորությունը թող գա»:

գ. Ջորացնել մեզ կատարելու նրա կամքը երկրի վրա կատարյալ հնազանդությամբ՝ երկնային հրեշտակների օրինակով («Քո կամքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»):

դ. Մեզ տալ այս կյանքում անհրաժեշտը («Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր»):

ե. Ներել մեր մեղքերը («Ներիր մեզ մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ հանցանք են գործում մեր դեմ»):

զ. Հեռու պահել մեզ ամեն տեսակի փորձություններից («Մի տար մեզ փորձության»):

է. Մեզ ազատել ամեն տեսակի չար կամ մեղանչական գործերից, ինչպես նաև մեր աներևույթ թշնամու՝ սատանայի որոգայթներից («Այլ փրկիր մեզ չարից, որովհետև քոն է թագավորությունը և զորությունը և փառքը հավիտյանս. ամեն»):

Հավատի հաստատությունը դրվեց ոչ թե ինչպես մարդկանց հաճելի էր, այլ բոլոր գրքերից ազդեցիկ խոսքեր հավաքելով և մի հաստատուն վարդապետությամբ ավարտելով: (Կյուրեղ Երուսաղեմ, Կոչ. ընծ. գլ. Ե)

Բարվոք պահենք այն ավանդը, որ Հայրերից ստացանք, երկրպագելով Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, Որդու միջոցով ձանաչելով Հորը, Հոգով՝ Որդուն, որոնցով մկրտվեցինք, որոնցով հավատացինք, դեպի որոնք եկանք:

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Վկայություններ Աստվածաշնչից

և սուրբ վարդապետներից՝ վերոգրյալ

խոսքերը հաստատելու համար<sup>26</sup>

1 Քրիստոնեական հավատիքի հիմքը և բուն

հեղինակը կամ վարդապետը մեր Տեր Հիսուս

Քրիստոսն է:

ա. Որովհետև ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրված այն հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է (Ա. Կորնթ. Գ 11):

բ. Մեր ամբողջ հավատի հաստատումն ու ճշմարիտ հիմքը նույն ինքը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, և այս վեմի վրա հաստատվել է հավատը, իսկ հավատի վրա՝ շենքը մինչև իր ավարտը: Բայց հիմքը նա ինքն է ամբողջ շենքի հենց սկզբից (Հակոբ Մծբնացի, ճառ Ա, Հավատի մասին):

գ. Բայց դուք որևէ մեկին ուսուցիչ մի կոչեք, որովհետև ձեր ուսուցիչը մեկն է, Եվ ուսուցիչներ չկոչեք, որովհետև Քրիստոս է ձեր ուսուցիչը: (Մատթ. ԻԳ 8, 10):

դ. Դուք ինձ վարդապետ և Տեր եք կոչում. և լավ եք անում, քանի որ իսկապես եմ (Հովհ. ԺԳ 13):

ե. (Քրիստոսը) կատարեց ամբողջ արդարությունը մեր մարդկության փառքի ու պարծանքի համար և ելավ բոլոր արարածների վարդապետը (Գ. Լուսավորիչ, Հաճախապատում, ճառ, ԺԳ):

\*\* Այս և Նոր կտակարանի մյուս բոլոր համարները վերցված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1992թ. լույս ընծայած թարգմանությունից. խմբ.:

2, 3 Հավատի վարդապետությունը նախ Քրիստոսն ավանդեց

իր իսկ խոսքերով և ապա՝ առաքյալների միջոցով:

ա. Եվ Հիսուս շրջում էր Քալիլիայի բոլոր կողմերը, ուսուցանում էր նրանց ժողովարաններում, քարոզում էր արքայության Ավետարանը (Մատթ. Դ 23):

բ. (Քրիստոսը) լուսավոր վարդապետությամբ ստուգեց ճշմարիտ հավատը ամենասուրբ Երրորդության միջոցով (Գ. Լուսավորչ, Հաճախապատում ճառ, Ժգ.):

գ. Գնիացեք ուրեմն աշակերտ դարձեք բոլոր ազգերիսն, Ուսուցանեցեք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի (Մատթ. իը, 19, 20):

---

<sup>26</sup> Երկրորդ մասում բերված վկայությունները հաստատում են առաջին մասում ասվածը համապատասխան համարի տակ

դ. (Առաքյալները) ընթացան ամբողջ տիեզերքում մինչև երկրի ծագերը լրացնելու կենաց խոսքի քարոզությունը (Գ. Լուսավորիչ, Ագաթանգեղոսի երկուն 629):

ե. Որ տիեզերքին կոչեցիր քո ընտրյալ առաքյալների ճշմարիտ հավատով (Շարակ.):

զ. Որ աշխարհում ծագեցրիր քո հրամանի լույսը քո ընտրյալ առաքյալների միջոցով (նույն տեղը):

է. (Տե՛ր) հաճեցիր մարմնանալ մեզ համար և սովորեցրիր մեզ քո սուրբ առաքյալների միջոցով անբիծ հավատը, որն է Սուրբ Երրորդությունը (Մեծն Մաշտոց):

4 Առաքյալները հավատի ուսումնքը քարոզեցին

մերթ կենդանի խոսքով կամ քարոզությամբ, և մերթ`

գրով:

ա. Ուրեմն, եղբայնե՛ր, հաստատ մնացե՛ք և պինդ պահեցե՛ք այն ավանդությունները, որ սովորեցիք թե՛ խոսքով և թե՛ մեր թղթով. (Բ Թեսաղ. Բ 14):

բ. Սիրելիներ, ամեն ջանք հանձն էի առնում գրելու ձեզ մեր հասարակաց փրկության մասին, հարկ համարեցի գրել ձեզ և աղաչել, որ պայքարեք հավատի համար, այն հավատի, որ մի անգամ ընդմիջտ ավանդվեց սրբերին (Հուդա 3):

\* Այս և հաջորդ հատվածները վերցված են Ագաթանգեղոսի «Հայոց պատմության 1983թ. հրատարակությունից. խմբ.:

5 Ճշմարիտ աստվածպաշտության համար կարևոր

են՝ հավատը, սերը, հույսը:

ա. Արդ, մնում են հավատ, հույս, սեր՝ սրանք երեքը (Ա Կորն. ժգ. 13):

բ. Արարածները ճշմարիտ սիրով են մերձենում Աստծուն՝ հավատով, հույսով և պատվիրանապահությամբ (Ուստի և մենք) ամեն ինչում գոհանալով նրա խնամքի բարերարությամբ՝ ճշմարտությունը խոստովանող և դավանող լինենք (Գ. Լուսավորիչ, Հաճախապատում ճառ, Բ):

գ. Տե՛ր մեր մեջ ավելացրո՛ւ հավատը, հույսը, սերը և առաքինի բոլոր գործերը, որպեսզի ըստ քո բարեսեր կամքի միշտ, զօրուգիշեր կրոնավորելով բարեպաշտությամբ՝ արժանի լինենք մեր՝ անձերի և հոգևոր կյանքի փրկության համար աղաչել քեզ (Ժամագիրք):

դ. Բոլոր առաքինի գործերը բխում են հավատից, հույսից և սիրուց: Եթե արժանանք ամեն առաքինությանը և կլինենք Աստծու կամքը կատարողներ (Խոսրով, Մեկն. Ժամակարգ):

6 Հավատ նշանակում է ոչ միայն ճանաչել և ընդունել, այլև խոստովանել Աստծու հայտնած ամեն ճշմարտությունները:

ա. «Մոտ է խոսքը քեզ, քո բերանում և քո սրտում»: Այսինքն՝ հավատի խոսքը, որը քարոզում ենք. որովհետև, եթե քո բերանով Հիսուսին Տեր խուստովանես և քո սրտում հավատաս, թե Աստված նծրան հարություն տվեց մեռելներից կփրկվես. բանի որ արդարանալու համար սրտով ենք հավատում և փրկության համար խոստովանում բերանով (Հռոմ. Ժ 8-10):

բ. Հավատի անունը մեկն է, բայց կրկնակի զորություն ունի: Առաջինը դավանության հավատն է, այն է՝ Սուրբ Երրորդության խոստովանությունը, որ յուրաքանչյուր ոք ավագանից ստացավ: Երկրորդն այն հավատն է, որ Սուրբ Գրքում գրված լխոսքերը, որոնք Սուրբ Հոգին խոսեց մարգարեների, առաքյալների և եկեղեցու վարդապետների բերանով, սուտ ու առասպել չի համարում, այլ հավատում է, որ ճշմարիտ և ուղիղ են այնպես, որպես թե իր աչքերով է տեսնում այն բոլորը (Ն. Շնորհալի, Թուղթ ընդհ.):

7 Աստվածային ճշմարտությունների իմացությունը պետք է վերցնել Աստվածաշունչ Սուրբ Գրքից:

ա. Քննեցե՛ք Գրքերը, այդ Գրքերն իսկ վկայում են իմ մասին (Հովհ. Ե 39):

բ. Բայց դու հաստատ մնա այն բանի մեջ, որ սովորեցիր և որին հավատարիմ եղար. գիտես, թե ումից ես սովորել, որովհետև մանկուց գիտես Սուրբ Գրքերը, (Բ Տիմոթ. գ 14-15):

գ. (Պետք է) կշռել, խորհել և անել այն, ինչ Սուրբ Գրքի վկայությամբ ավածոհվում է ի հաճույս Աստծու, և չպետք է ընկնել բազմախույզ որոնումների մեջ, որոնք շեղում են սուրբ հավատից (Գ. Լուսավորիչ, Հաճախապատում ճառ, Դ):

դ. Ամեն մի փոքր բան էլ պետք է և պատշաճ ցույց տալ Սուրբ Գրքի վկայությամբ Արդ, այս բանը, որ ես ասում եմ քեզ, դու ինձ մի՛ հավատա պատահաբար, եթե պատմության փորձը Սուրբ Գրքի հայտնությամբ ցույց չտամ: Որովհետև մեր այս հավատի վկայությունը ոչ թե բանավոր խոսքերից է, այլ Սուրբ Գրքի քննությունից (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Դ):

ե. Երեք հավատի (նոր) վարդապետություն չստեղծեցինք և ոչ էլ հանձն առանք ոմանց նորաձևությանը: Մեզ բավական են աստվածաշունչ գիրքը և սուրբ հայրերի դավանանքը (Կյուրեղ Երուսաղեմցի, Թուղթ Մելտենի Ակակիոս եպիսկոպոսին «Պարապ.» գրքում, էջ 428):

8 Սուրբ Գիրքը գրվեց ոչ թե մարդկային ուսուցման,

այլ Աստծու Հոգու ազդեցությամբ:

ա. Քանի որ մարգարեությունները ոչ թե ըստ մարդկանց կամքի տրվեց երբևէ, այլ Սուրբ Հոգուց մղված է, որ խոսեցին Աստծու սուրբ մարդիկ (Բ Պետր. Ա 21):

բ. Ահա թե ինչու մենք շարունակ գոհություն ենք տալիս Աստծուն նրա համար, որ մեզանից Աստծու խոսքի լուրն առնելով, այն ընդունեցինք ոչ որպես մարդկանց խոսք, այլ՝ ճշմարտապես, որպես Աստծու խոսք (Ա Թեսաղ. Բ 13):

գ. Ուրեմն մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ՝ այն Հոգին, որ Աստուծուց է, Եվ ինչ որ հայտնում ենք, ոչ թե ճարտար խոսքերի մարդկային ուսուցումով է, այլ՝ Հոգու վարդապետությամբ. հոգևոր բաները հոգևոր խոսքերով ենք բացատրում. (Ա Կորնթ. Բ 12-13):

դ. Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն, անստեղծ և կատարյալ, որ խոսեց Օրենքի, Մարգարեների և Ավետարանների մեջ (Հանգանակ):

ե. Մարգարեների բերանները չէին՝ այլ Սուրբ Հոգու ազդեցությունը, ինչպես որ եղեզը, որը ոչ թե չի կամենում գրել, այլ գրում է այն, ինչ ձեռքն է հրամայում: Այդպես էլ մարգարեների լեզուն, որը ոչ թե ինչ որ չէր կամենում, խոսում էր, այլ ասում էր այն Սուրբ Հոգու իշխանությունն էր հրամայում (Սեբերիանոս, ճառ, Թ):

9, 10 Հին Կտակարանը գրեցզին մարգարեները, իսկ Նորը՝ առաքյալները:

ա. Աստված բազմապիսի ձևերով և այլազան օրինակներով նախապես խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով (Եբր. Ա 1):

բ. ձեր մաքուր մտքերն են արթնացնում հիշեցման համար. հիշեցե՛ք սուրբ մարգարեների կողմից նախապես ասված պատգամները, ինչպես նաև ձեր առաքյալների կողմից ասված Տիրոջ և Փրկչի պատվիրանները (Բ Պետ. Գ 1-2):

11 Հին Կտակարանը բովանդակում է քառասունհինգ, իսկ Նորը՝ քսանյոթ գիրք: Հին Կտակարանի մեջ են՝ 5 Գիրք Մովսեսից, այն է Ծնունդը, Ելքը, Ղևտականքը, Թիվքը, Երկրորդ օրինացը:

1 Հեսուի:

1 Ղատավորաց:

1 Հռութի:

4 Թագավորությանց:

2 Մնացորդաց:

2 Եզրի:

1 Տովբիթի:

1 Հուդիթի:

1 Եսթերի:

3 Մակաբեյացվոց:

1 Հոբի:

1 Սաղմոսաց Ղավթի:

4 Սմէողոմոնի, այսինքն՝ Առակք, Ժողովող, Երգ երգոց, Իմաստություն:

1 Սիրաքի:

4 Մեծ մարգարեների՝ Եսայի, Երեմիայի՝ Բարուքի թղթի հետ միասին, Եզեկիելի, Ղանիելի:

12 Փոքր մարզարեւների՝ Ովսեի, Հովելի, Անովսի, Աբդիայի, Հովնանի, Միքիայի, Նաումի, Ամբակումի, Սովոնիայի, Անդեի, Ջաքարիայի, Մաղաքիայի:

Նոր Կտակարանի մեջ են

4 Ավետարաններ՝ Մաթտեոսի, Մարկոսի, Ղուկասի, Հովհաննեսի

1 Գործք առաքելոց՝ գրել է Ղուկաս առաքյալը

14 Պողոս առաքյալի թղթերը գրված հռոմեացիներին, կորնթացիներին (2), գաղատացիներին, եփեսացիներին, փիլիպեցիներին, կողսացիներին, թեսաղոնիկեցիներին, Տիմոթեոսին (2), Տիտոսին, Փիլիմոնին, եբրայեցիներին:

7 Ընդհանրական թղթերը գրված Հակոբոս, Պետրոս (2), Հովհաննես (3), Հուդա առաքյալների կողմից

1 Հովհաննես առաքյալի հայտնությունը կամ տեսիլքը: Սրանք նշված են Պարտավի ժողովի քսանչորսերորդ կանոնում. ժողովը գումարվել է Սինո կաթողիկոսի օրոք, Տիրոջ 768թ: (Տե՛ս «Պատմություն հայոց», հ. Բ էջ 412):

Գրքերի մասին ծանոթացնում է Ս. Շնորհալին՝ ասելով, թե Սուրբ Գրքի քննությունը առավելապես կատարեցիտն (սուրբ հայրերը)՝ պարզելով, թե որո՞նք են բացահայտ ընդունելիները, որո՞նք են ոչ ընդունելիները, և որո՞նք են երբայելի: Եվ դա կատարեցին ոչ թե հենց այնպես, այլ Հոգու տեսությամբ, այնպես որ գողը եկեղեցուց ներս չմտնի ճշմարտության կերպարանք ընդունած և պարզամիտներին չխաբի: Նրանց կողմից բացահայտորեն ընդունված գրքերը հետևյալներն են՝ նախամարգարե Մովսեսի հինգ գրքերը՝ Արարածք, Ելք, Թիվք, Ղևտանք և Երկրորդ օրենք: Դրանց են միացնում նաև Հեսուն, Դատավորները, Հռութը, Թագավորությունների չորս գլուխները, Դավթի Սաղմոսների գիրքը, Սողոմոնի Առակների երեք գրքերը, Հոբը, Եսային, Եզեկիելը, Դանիելը, Մնացորդաց Բ. -ն, Եսթերը, Հուդիթը և Մակաբայեցիները:

Սրանց համեմատ երկբաելի են հետևյալները՝ Սիրաքի, Հեսուն, ինչպես նաև ևս յոթանասուներկու գիրք, որոնք հայտնի չեն:

Իսկ Նոր Կտակարանում ընդունելի գրքերն են՝ չորս Ավետարանները, առաքյալների գործերը (պրակք), Պողոսի տասնչորս թղթերը, ընդհանրական թղթերը, այսինքն՝ Հակոբի թուղթը, Պետրոսի առաջին թուղթը և Հովհաննեսի առաջին թուղթը:

Երկբայելի գրքերն են՝ Պետրոսի երկրորդ թուղթը, Հովհաննեսի երկու թուղթը՝ երկրորդը, այն թուղթը, որ վերագրում են Հուդային ու Հակոբին և Հովհաննես ավետարանիչի հայտնությունը:

Իսկ այն գրքերը, որոնք բոլորովին խոտելի են, որովհետև հոգու մոլորությունից ծնվեցին, Մարիամի տոն անվանված Թումային վերագրվող ավետարանն ու Քրիստոսի մակությանը վերաբերվող և նման այլ գրքեր, որոնք ճշմարտության կերպարանքով կամեցան ներս մտնել, բայց աստծու եկեղեցին չնդունեց, որովհետև դրանք չար որոն ու վնասակար խոտ էին, քանի որ նրանցում աստված չտեսավ ճշմարտություն, այլ ամբողջությամբ լի էր ստությամբ:

Իսկ այն գրքերը, որոնք երկբայելի էին քննության ենթարկվեցին, համեմատվեցին ստության և ճշմարտության հետ, և երբ նրանցում ստություն չգտնվեց, այդպիսիք ճշմարիտների հետ միասին պաշտվեցին սուրբ եկեղեցում: Դրանքինչպես նրանց, այդպես էլ մեզ համար ընդունելի եղան. այսպես, օրինակ երկբայելի է Պողոսի թուղթը՝ ուղղված եբրայեցիներին: Ոմանք ասում են, թե դա Կղեմենտոսինն է, իսկ ոմանք էլ վերագրում են Ղուկաս ավետարանիչին: Բայց այդ թուղթը դրանցից ոչ մեկինն էլ չէ, այլ միայն Պողոսինը: Այդ թուղթը այնպիսի բարձր մտքերով է լեցուն, որ այն համեմատելի չէ առաքյալների այլ թղթերի հետ: նմանապես և Պետրոսի թուղթը, որը լեցուն է գերագույն իմաստությամբ (Մեկն. Բ Պետ. առաջաբ.):

12 Հավատը կենդանի է ասվում այն ժամանակ, երբ լծորդվում է բարի գործերին

ա. Եղբայներ իմ, օգուտ ի՞նչ է, եթե մեկն ասի, թե հավատ ունի, սակայն հավատն արտահայտող գործեր չունենա: Միթե հավատը նրան կկարողանա՞ փրկել: Նույնպես և հավատը. եթե նա գործեր չունի, առանձին մեռած է հավատը դատարկ բան է առանց գործերի: Ինչպես որ մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավատը առանց գործերի (Հակ. Բ 14, 17, 20, 26):

13 Աստծու գոյությունը ցույց է տրվում Սուրբ Գրքով

ա. Մոլովածներ ոչ գրքերն են հասկանում և ոչ էլ Աստծու գոյությունը (Մատ. իբ. 29):

բ. Հավատի ճշմարտությունը մտքի աչքերի լույսն է, որ առաջնորդող միտքն է լուսանվորում և Սուրբ գրքով ներկայացնում է աներևույթները (Գ. Լուսավորիչ, Հաճախապատում, ճառ, Գ):

գ. Աստծու գոյությունը Գրքի գիտությամբ է ճանաչվում, և իրեն՝ Աստծուն ոչ ոք չի կարող իմանալ կամ պաշտել, ինչպես որ հարկ է, առանց Գրքի գիտության (Ս. Շնորհալի, մեկն. Բ Պետ. հորդորակ Զ):

14 Սուրբ Գիրքը քարոզում է Աստծու գոյությունը և որ պետք է հավատալ նրան

ա. Կա ամենակալ Աստված երկնքում, այո՛, ամենագոր Տերը կենդանի է (Բ Մակար. ԺԵ 3):

բ. Կա Աստված երկնքում Մեր Աստված երկնքում է (Ղան. Բ 28, Գ 17):

գ. Նա, ով մոտենում է Աստծուն, պետք է հավատա, որ Աստված կա (Եբր. ԺԱ 6):

15 Աստծուն պետք է ճանաչել արածրածներով:

ա. Արարածների մեծության և գեղեցկության համեմատությամբ էլ երևում է նրանց Արարչագործությունը (Իմաստ. ԺԴ 5):

բ. արդարն ի սկզբանե աշխարհի Աստծու աներևույթ հատկությունները, այն է՝ Նրա մշտենջենավորությունը և գոյությունը և աստվածությունը, իմանալի կերպով տեսանելի են Նրա ստեղծածների մեջ (Հռոմ. Ա 20):

գ. Աստված աշխարհին հաստատեց որպես դպրոց, որպեսզի արարածները սովորեն Արարչի հոգածությունը (գործ) անելիս ու կատարելիս (Գ. Լուսավորիչ, Հաճախապատում, Ճառ, Է):

դ. Արարածների միջոցով ծանուցեց, որ անբավ է ստեղծողը նրանց (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

ե. Մեծ ու ընդարձակ է երկինքը, լայն ու անեզր է ծովը, սփռված է երկիրը, գեղեցիկ է արեգակը, ցանկալի է մարդը, սիրահարուստ է մարդու տեսակը և ձգող վայելույթ է ոսկին Սրանցում տեսնում Արարչին՝ Անեղին համեմատելով եղածների հետ, Արարողին՝ ստեղծվածների հետ, Կառավարին՝ բերվածների հետ, սեր բխեցողներին՝ սիրով լցվածների հետ: Դրանց միջոցով ճանապարհի բաց արա դեպի նրա գեղեցկությունը, զորությունն ու քաղցրությունը և եղի՛ր երկնային՝ երկնային խոկմամբ (Ն. լամբրոնացի, Մեկն. Իմաստ. ժգ.): Տես նաև 42. Ա, Բ:

16 Հեթանոսներից քչերը ճանաչեցին Աստծուն:

ա. Ինչ որ կարելի է իմանալ Աստծու մասին հայտնված է նրանց (հեթանոսներին) (Հռոմ. Ա 19):

բ. Հեթանոսներից քչերը լուսավորվեցին և արարածների միջոցով Արարչին ճանաչեցին (Եփրեմը Վարդանին, Մեկն. ծննդ. Ա, 31):

17 Բոլոր հեթանոսները չհասան ճշմարիտ Աստվածաճանաչողության:

ա. Բոլոր մարդիկ բնությամբ ընդունայն էին, այսինքն՝ զուրկ էին Աստծու շնորհից ու անտեղյակ Աստծու գիտությունից: Երանելի (տեսանելի) բարություններից նրանք չկարողացան իմանալ, ինչ գոյություն ուներ և ոչ էլ գործեցին նայելով՝ ճարտարապետին (Ստեղծողին) ճանաչեցին (Իմաստ. ժգ. 1):

18 Հեթանոսները թեև ճանաչեցին Աստծուն, բայց ճշմարիտ Աստվածապաշտներ չեղան:

ա. Որովհետև ճանաչեցին Աստծուն, բայց իբրև Աստված չփառավորեցին կամ գոհություն չմետուցեցին նրան, այլ իրենց մտածումների մեջ մանրացան, և իրենց սրտերը անմտությամբ խավարեցին: Իրենք իրենց իմաստունների տեղ էին դնում և հիմարացան: Եվ անեղծն Աստծու փառքը փոխեցին՝ նմանեցնելով այն մարդուն եղծելի պատկերի և թռչունների և չորքոտանիների և սողունների (Հռոմ. Ա 21-23):

19 Աստծու ինչ լինելը անիմանալի է:

ա. Ոչ ոք չի կարող անհաս էության մասին ճառել և ինչպես որ նա է, ոչ ոք չի կարող պատմել, որովհետև անհաս, անբավ, անպարփակ ու անքնին է, անմատույց ու անիմանալի է բոլոր արարածների համար:

բ. Ոչ արարածները կարող են քննել Արարչին և ոչ էլ խմորը գիտի իրեն պատրաստողին (Նույն, անդ 359):

գ. Որ իմանալի ես էությանդ մեջ (Շարակ.):

դ. Որովհետև եթե կա, պետք է հավատանք,

Բայց թե ինչ է, չպետք է իմանանք (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

ե. Որևէ մեկը միանգամից որքան էլ ասի նրա մասին, միևնույն է, Է-ին (Աստծուն) չի սահմանի (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. Ա 2):

զ. Շատերս գիտենք Աստծուն, բայց թե ինչպիսին է կամ ինչ է նրա բնությունը, ոչ ոք չգիտե, բայցի նրանից, որ նրա էությունից է ծնվել (Ոսկեբ. Մեկն. Հովհ. ճառ ԺԴ): Տե՛ս նաև 28. Բ հ. ե:

20 Աստված այլաբանաորեն կոչվում է Հոգի, Հուր, Լույս և այլն:

ա. Մարդն անկարող է տեսնել Աստծուն իր էության մեջ Բայց երբ իր ինքնական ցանկությամբ և բարերաժրությամբ ինքնիրեն ցույց տվեց (Աստված) Երբեմն որպես լույս, երբեմն որպես հուր Իսկ եթե ասենք թե նա հուր է, ապա ասում ենք այն ինչ տեսնում ենք, եթե ասում ենք լույս է՝ աներևույթին ցույց ենք տալիս որպես երևացող մեր անկարողության պատճառով (Գ. Լուսավորիչ, Ազաթանգեղոսի երկում 356, 357, 358):

բ. Հոգի անունը անմարմին բնություն է նշանակում՝ Տիրոջ ասելով հավետ անմարմին լինելու պատճառով, թե Հոգի է Աստված (Ն. Շնորհալի, այն թղթում, որը գրեց Գրիգորիս կաթողիկոսի հրամանով Ասորիքի Միջագետքում գտնվող համայք նահանգի քահանաներին):

գ. Սովորություն է մաքրության համար Աստծուն հուր անվանել, և պարզության համար՝ լույս: Նրան բազում նման անուններ ենք տալիս, սակայն սրանցից որևէ մեկը ոչ թե նրա էությունն է քննում, որն անհասանելի է, այլ միայն նրա կամքի ներգործությունն է մեզ հայտնի դարձնում (Ն. Լամբ. Ատենաբ.):

21 Աստված որևէ մեկից չի եղել:

ա. Ամենասուրբ Երրորդության բնությունն ու գոյությունը մեկն է, և իրենն է ինքնությունը (Աստվածությունը) ու իր գոյությունից է (Գ. Լուսավորիչ, Հաճախապատում, ճառ, Ա):

բ. Մի բնություն և մի Աստվածություն ոչ թե ուրիշից ստեղծված և ոչ հետո սկսված (Ն. Շնորհալի, Թուղթ ընդհ.):

գ. Ամեն ինչի սկիզբը Աստված է, և ինքը ոչ մի սկզբից չի եղել (Սեբերիանոս, Ճառ Ա Հավատի մասին):

դ. Աստված ստեղծված չէ, և նրանցից առաջ ոչ ոք չի եղել (Ոսկեբերան, Մեկն Հովհ. ճառ Գ): Տե՛ս նաև 31. Ա:

22 Աստված բնություն է անստեղծ կամ անստեղծելի:

ա. Անստեղծ Աստված և ստեղծվածներս էակ (Շարակ.):

բ. Անստեղծ Աստված, Հայր ամենակալ (Ժամագիրք):

գ. Անստեղծ բնություն, մեղա քեզ իմ մտքով և այլն (անդ.): Տե՛ս նաև 23. Ա և 60. Դ, Զ:

23 Չկա Աստծու ժամանակի կամ ստեղծման սկիզբը:

ա. Աստված անստեղծ ու անժամանակ է (Շարակ.):

բ. Մի Երրորդություն՝ անսկիզբ և անժամանակ (Գ. Նարեկացի ՄՈ, քան խդ.):

գ. Ո՛չ սկսվել է, ո՛չ դադարել,

Եվ սկսվածների պատճառն է եղել (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

դ. Աստված մեկն է ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վախճան (Կյուրեղ Երուսաղեմ. Կոչ. ընծ. գլ. Դ):

ե. Ժամանակով սկիզբ չի առնում ժամանակների Տերը (Գ. Աստվածաբան, Առ որս. ճառ, Բ հավատի համար):

զ. Բոլոր ժամանակները ստորև են, քան Աստված, և Աստված ավելի վեր է, քան ժամերը, ժամանակներն ու հավիտյանները (Ոսկեբերան, Մեկն. Հովհ. ճառ, Գ):

24 Աստված միշտ կար, կա և կլինի:

ա. Ես առաջին տերն եմ և նույնը կլինեմ ապագայում: Ես ի սկզբանե տեր Աստված եմ և կլինեմ այսուրեւ: Ես կամ, և մինչդեռ դուք շատ կծերանաք, բայց ես կլինեմ (Եսայի, ԽԱ 4, ԽԳ 13, խգ. 4):

բ. Բարերար ու արարիչ Աստված կար և կա. իր փառքի մեջ անսկիզբ էր, ճշմարտություն էր և է, իր էության մեջ անփոփոխ (Գ. Լուսավորիչ, Հաճախապատում, ճառ. Զ):

գ. Նա բոլոր հավիտյաններից առաջ էր, այժմ է և կլինի անվախճան հավիտյանների մեջ (Ն. Շնորհ. Թուղթ ընդհ.):

դ. Միշտ կար և այժմ էլ կա

Եվ կլինի անբավ դարերից (Նույն, Հավատի խոսք):

25

Աստված մարդ չէ և չունի մարմնի անդամներ

ու զգայարաններ, որպիսիք ունենք մենք:

ա. Ես Աստված եմ և չ'մարդ (Ովս. ԺԱ 9):

բ. Աստված ձեռք ու աջ չունի, որովհետև այդպիսի անդամները անմարմին բնությանը պետք չեն՝ ո՛չ աստծուն, ո՛չ հրեշտակներին: Բայց թե այս աստվածավայելույնները որտեղից են, չենք կարծող իմանալ կամ ասել, ապա ուրեմն օրինակները մեզանից ենք վերցնում (Խոսրով, Մեկն. Ժամ.):

գ. Աստծուն վերագրել կամ կարծել, թե ունի ձեռք, ոտք կամ այլ զգայարաններ՝ մեծ անմտություն է: Թեպետև գրքերից լսում ենք այդպիսի խոսքեր, բայց դրանք մենք պատկերացնում ենք մեր տկարության հետևանքով և սովոր ենք կրկնել, որովհետև հայտնի օրինակներով կարող ենք իմանալ որպես այն, երբ ասում ենք. «Տե՛ր, խոնարհեցրո՛ւ քո ականջը և լսի՛ր, բաց արա՛ քո աչքերը և տե՛ս, զարթնի՛ր, ինչո՞ւ ես քնում» և այլն (Նույն տեղը):

դ. Աստվածային գիրքը սովորություն ունի մարմնի անդամները վերագրել նաև անտեսանելի և անհիմանալի Աստծուն, ասելով, որ Աստված ունի աչքեր, ականջներ, ձեռքեր, ոտքեր, որոնք սակայն Աստված չունի, որովհետև նման տեսանելի զգայարաններից և նրանցից, ինչ որ մենք ունենք, Աստվածությունը չունի (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. ճառ, է):

26 Մարմնի անդամների և զգայարանների անունները Աստծուն տրվում են միայն այլաբանորեն:

ա. Եթե նրանք (հրեշտակները), որ արարվածներ են, հնարավոր չէ ասել, (Թե ունեն) մարմնի ձև կամ զգայարաններ՝ անմարմին լինելու պատճառով, ապա ինչպե՞ս կարելի է համարձակվել Աստվածային բնությանը՝ հավետ անմարմին ու անփոփոխ էությանը, վերագրել այդպիսի հատկանիշներ այն բնությունից, որի մասին առաքյալն ասում է, թե մարդկանցից ոչ ոք չտեսավ և չի էլ կարող տեսնել, ինչպե՞ս կարելի է պատմել, եթե ոչ նյութական ձևով, որ մենք գիտենք, և որը հաստատում է (գիրքը)՝ (Աստծուն), թեպետև այլաբանորեն, վերագրելով աչքեր, ականջներ և այլ զգայարաններ (Ն. Շնորհալի, այն թղթում, որը գրեց Գրիգորիս Կաթողիկոսի հրամանով Ասորիքի Միջագետքում գտնվող համայք նահանգի քահանաներին):

բ. Այն որ գիրքը նրան տալիս է մարմնի անդամների անուններ, դրանով ոչ թե պետք է իմանալ նրան մարդու ձևով, այլ բոլորովին այլ, ավելի բարձր իմաստով, քան մարդկային ձևն ու նմանությունն են: Որովհետև այն փառքը, որ Աստված պատրաստեց իր սիրելիների համար, առաքյալը ասաց, թե աչքերով տեսանելի չէ, ականջներով լսելի չէ, մարդկային մտքով քննելի չէ, ուրեմն Աստծու բնությունը, որն այն փառքի արարողն ու տվողն է, ինչպե՞ս կարող է մեկը հանդգնել իջեցնելու և հասցնելու հողեղեն ձևին ու գերապատրանքին (Նույն տեղը):

27 Աստված բազմանուն և անանուն է:

ա. Անանունը (Աստված) անունով է գալիս, բայց սկզբում ոչ ոք չկար, որ Աստծուն անուն տար (Գ. Լուսավորիչ, Հաճախապատում, ճառ, Բ):

բ. Նրա անունը ոչ ոք գիտի, քանզի դեռ ոչ ոք չկար այնտեղ, բացի նրանից, որ այնտեղ անուն տար (Նույն, Ագաթ. ի երկում 358):

գ. Աստված անհիմանալի է և անանուն (Դիոնեսիոս, Աստվածային անուններ գիրք): Տե՛ս նաև 28. Բ 29 և 30):

28 Աստծուն զանազան անուններ են ընծայում՝ ըստ նրա այլևայլ գործերի:

ա. Զորության ուժից հայտնի է դառնում Տիրոջ անունը (Առակ. ԺԸ 10):

բ. Աստծու բնությունը արարածներիցս ոչ ոք երբեք չկարողացավ ճանաչել, ո՛չ նրա բնությունը և ո՛չ էլ իսկական անունը, այդ նրան անվանում ենք բազմապատիկ անուններով՝ ըստ նրա կամքի ներգործության (Ն. Լամբ. մեկն. Պետ.): Տե՛ս նաև 29 և 32 Բ Գ:

29 Աստված կոչվում է Արարիչ, Տեր Աստված, Տեր ամենակալ, Տեր գորությունների թագավոր, Դատավոր, Իշխան, Հայր:

ա. Քո արարածները քեզ՝ Արարչիդ են ծառայում (Իմաստ. ԺԶ 24):

բ. Ով արարեց երկիրը և ստեղծեց դրան, նրա անունը Տեր է (Երեմ. ԼԳ 3): Թող իմանան, որ քո անունը Տեր է (Սաղ. ձբ. 19):

գ. - Ե՛ս Տեր Աստված, - այս է իմ անունը (Եսայի, իբ. 8):

դ. Նրա անունը Տեր ամենակալ է (Երեմ. ծա. 57):

ե. - Ես հաղթող թագավոր եմ, - ասում է ամենակըլալ Տերը (Մաղաք. Ա 14):

զ. Տեր Հայր մեր, Տեր Դատավոր մեր, Տեր Իշխան մեր (Եսայի, ԼԴ 22): Տե՛ս նաև 30. Դ:

30 Աստծու բնությունը կամ էությունը արտահայտող անուն չկա:

ա. Ո՞վ տիրեց երկրի բոլոր ծայրերին. (ո՞վ գիտե)՝ ի՞նչ է նրա անունը (Առակ Լ 4):

բ. (Աստված) իր անունը միայն ինքը գիտե (Գ. Լուսավորիչ Հաճախապատում, ճառ. Բ):

գ. Աստծուն անուն ո՞վ կարող է դնել (Եղիշե, Մեկն. տերունական աղոթքի):

դ. Աստծու բնության անունը չգիտենք, իսկ դրված անունները անվերջ են՝ Տեր և Աստված, Արարիչ, Թագավոր, Լույս (Խոսրով, Մեկն. Ժամ.):

ե. Աստված արարչության և նախախնամության անուն է, այլ ոչ թե բնության, քանի որ անգիտենալի է նա և ամեն մի մտքից ու դիտավորությունից վեր (Ն. Լամբրոնացի, Մեկն. Պատ.):

զ. Ո՛չ անվամբ ես չափվում և ո՛չ մականվամբ նշանակվում (Գ. Նարեկացի, բան, ԼԲ):

է. Նույն ինքը՝ Աստվածային բնությունը անձառելի և անձայնելի կմնա՝ գերազանցելով ձայնի բոլոր դրսևորումներին (Գ. Աստվածաբան, Առ. որս. Ե):

31 Էն անունը ցույց է տալիս, որ անստեղծն ու անսկիզբը միայն Աստված է:

ա. Էն (այսինքն է տառը) էապես է մեզ քարոզում,

Որ Յնը, սովորելով Մովսեսից,

Աստված էր հենց սկզբից

Եվ ոչ զեղած որևէ մեկից (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

32 Աստված անունը ստուգաբանվում է՝ «Աստ ած»:

ա. Աստված անունը արարչական է և մեզանում ստուգաբանվում է՝ «Աստ էած զմեզ» (Մեզ այստեղ բերեց) (Խոսրով, մեկն. Ժամ.):

բ. Աստված անունը ստեղծագործական և գոյացնելու անուն է (Բարսեղ Ճոն, Մեկն. Ճառ իա):

գ. Արարածների ստեղծող գիտենք միայն նրան, այդ պատճառով էլ ստեղծվածների արարչին կոչում ենք Աստված, այսինքն՝ ոչնչությունից դեպի էության ու գոյության, այն է՝ երկնավորներին ու երկրավորներին այստեղ բերող (աստ ածող) (Ն. Լամբրոնացի, Մեկն. Պատ.):

33 Աստված անուրը ստեղծողին տրվող անունն է:

ա. Աստված բնութամբ մի Աստվածություն է, իսկ արարածներից մյուսները, որոնք բնություն չունեն, չեն կարող իսկական անուն ունենալ ո՛չ երկնքում և ո՛չ էլ երկրի վրա, որի համար էլ որևէ մարդ եթե Աստվածության մասերից որևէ մեկին անուն է դնում, անաստվածապաշտ է, որպես առաջին հեթանոսները, որոնք ամբարիշտը համարվեցին Աստծու կողմից: Որովհետև այս անունը (Աստված) նրան է հատուկ ու վայելուչ, որը վեր է քան բոլոր անունները, որովհետև Աստված արարչության անուն է (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Գրիգորիս կաթողիկոսի հրամանով Ասորիքի, որ միջազգետքում է Համայքի նահանգի քահանաներին):

33, 34 Աստված կոչվեցին և հրեշտակները, նաև մարդկանցից ոմանք, այսինքն՝ քահանաները, մարգարեները, թագավորները, առաջնորդները, իշխանները:

ա. Նրան (Աբրահամին) երևաց Աստված (հրեշտակը) Մամբրեի կաղնիների մոտ (Ծննդ. ԺԸ 1):

բ. Քո ժողովրդի աստվածներին մի՛ բամբասիր (Ել. ԻԲ 28):

գ. Աստված կանգնեց աստվածների ժողովրդի մեջ ես ասացի, թե դուք աստվածներ եք (Սաղ. ձբ. 1, 6):

դ. Իսկ եթե աստվածներ է կոչում նրանց, որոնց ուղղված էր Աստծու խոսքը (Հովհ. Ժ 35):

ե. Մովսես՝ Փարավոնի Աստված, բայց Աստծու ծառա (Գ. Աստվածաբան, Առ որս. ճառ Ը):

ը. Կրելով գործուն, սովերող ձեռքեր ճարտար շառավիղներով աստված կոչվեցիր (Գ. Նարեկացի ՄՈ, բան խզ.):

թ. Աստվածաբանությունը աստվածներ է կոչում երկնայիններին և մեզանից ավելի բարձր էությունները, իսկ մեզանից էլ՝ Աստվածասերներին և սրբազան այրերին (Դիոնեսիոս, երկնային քահանայապետությունների գրքում, գլ. Ժբ.):

36 Հեթանոսներների աստվածները կամ կուռքերը ստությամբ կոչվեցին Աստված:

ա. Եթե մարդիկ ստանան աստվածների կերպարանք, նրանք աստվածներ չեն լինի (Երեմ. ԺԶ 20):

բ. Թեպետև այսպես կոչված արարածներ կան թե երկնքում և թե երկրի վրա. արդարև, կան բազում աստվածներ և բազում տերեր: Բայց մեզ համար միայն մեկ Աստված կա, Հայր, (Ա Կորնթ. Ը 5-6):

գ. Հեթանոս աստվածների մասին, որ ասում ես, թե աստվածներ են, դրանք իրականում ստեղծված են, որովհետև մարդկանց կողմից են պատրաստված:

37 Աստծու եբրայական անունները:

ա. Կենդանի եմ ես, - ասում է Ադովնայի Տերը (Եզեկ. Ե 11):

բ. Քերովբեների թևերի ձայնը լսվում էր որպես Սադդա Աստծու ձայն (Եզեկ. Ժ 5):

գ. Լիոները շարժվեցին Սինայի Ելովա Տիրոջ երեսից (Ղաա. Ե 5):

դ. Տեր Սաբավովթ է նրա անունը (Եսայի, ԽԸ 2):

38 Աստված անբովանդակելի բնություն է:

ա. Երկինքը և երկնից երկինքը քեզ չեն բավականացնում (գ. Թագ. Ը 27):

բ. Այսպես է ասում Տերը. «Երկինքը իմ աթոռն է, իսկ երկիրը՝ իս ոտքերի պատվանդանը. ինչպիսի՞ տուն եք շինում իմ հանգստի համար»: (Եսայի, ԿԶ 1):

գ. Երկինքն ամբողջովին, աշխարհն ամենայնև տիեզերքը ամբողջովին բավական չեն Ինքն ամեն ինչ պարփակում է, ամեն ինչի մեջ է, ամեն ինչի վրա է, ամեն ինչից դուրս է, ամեն ինչ նրանով է, ամեն ինչ նրանում է (Գ. Լուսավորիչ, Ագաթ. -ի երկում 355):

դ. Աստծու երևալը մարդու նմանությամբ տեսողների տկարության պատճառով էր և ոչ ևե այն, որ Աստծու անչափելի բնությունը սահմանափակ և կողմնափակ է (Նույն տեղը 330):

ե. Որ արարածներից անբովանդակելի ես (Շարակ.):

զ. Ոչ թե ինչ-որ տեղանքներով է սահմանափակված, այլ տեղանքների արարիչն ինքն է, ինքն ամեն ինչում է, բայց ինքը ոչ մեկից չի սահմանափակվում (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Ե):

ը. աստված անսկիզբ է, անպատմելի և անհասանելի, որ ինչ-որ տեղում չի սահմանափակվում և ոչ էլ ինչ-որ վայրերում բովանդակվում է (Սեբերիանոս, Ճառ Ա, հավատի մասին): Տե՛ս նաև 39:

39 Աստված կոչվում է ամենուր, ամենուրեք, անտեղի, անպարփակ

ա. Որովհետև (Աստված) անվերջ ու անսահման է,

Անժամանակ, անուր ու անվախճան է (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

բ. Անպարագիր ու անվայրափակ տեղ բոլորի համար,

Ամբողջ իսկությամբ ամենքին մոտիկ.

Դու չես պարփակվում տարածության մեջ,

Սակայն առանց քեզ սահմաններ չկան (Գ. Նարեկացի, բան ԻԳ):

գ. Անվաղորափակ Աստվածություն եմ խոստովանում (Աթանաս, Ճառ Ը):

դ. (Նա) ամեն ինչում է և ամեն տեղ է (Ոսկեբերան, Մեկն. Հովի, Ա 14): Տե՛ս նաև 38. Գ, Է, Ը:

40 Աստված զորությամբ ամեն տեղ է և մերձ ամենքին:

ա. Նրա արքայությունը տիրում է ամենքին, նրա տերությունը ամեն տեղում է (Սաղմ. ՃԳ 19, 22):

բ. - Մի՞թե ես մոտիկից եմ Աստված, - ասում է Տերը և հեռվից Աստված չեմ. եթե մեարդը թաքնվի թաքստոցում, մի՞թե ես չեմ կարող տեսնել նրան, - ասում է Տերը (Երեմ. ԻԳ 23-24):

գ. ամենքին մոտ ու մերձավոր

Եվ ոչ մեկից չէ հեռավոր (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

դ. Ինքն ամենքին մերձ է, բայց ոչ բոլորն են նրան մեծ (Դիոնեսիոս, Աստվածային անունների գրքում):

ե. Նրա ուղքերի պատվանդանը երկիրն է, բայց նրա զորությունը հասնում է մինչև սանդարամետի անդունդները (Կյուրեղ երուսաղեմցի, Կոչ. ընծ, գլ. Ե): Տե՛ս նաև 39. Բ Դ, 57. Ջ, Է:

41 Աստված շնորհներով է բնակվում սրբերի կամ արդարների հոգիներում:

ա. Ես որտե՞ղ մնացին, եթե ոչ հնազանդների, խորհուրդների և նրանց մեջ, ովքեր դողում են իմ խոսքերից (Եսայի, ԿՁ 2):

բ. Եթե մեկը սիրում է ինի՞ծ, իմ խոսքը կպահի, և իմ հայրը նրան կսիրի, և մենք նրա մոտ կգանք ու նրա մոտ կօթևանենք (Հովի ԺԴ 23):

գ. Նա, ով խոստովանի, թե Հիսուսն է Աստծու Որդին, աստված բնակվում է նրա մեջ, աստված սեր է և ով սիրո մեջ է ապրում, բնակվում է Աստծու մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ (Ա Հովի. Դ 15-16):

42 Աստծու կփառքը առավելապես երևում է երկնքում:

ա. Երկինքը պատմում է Աստծու փառքը, իսկ նրա զորությունը պատմում է նրա արարածների մասին (Սաղմ. ԺԸ 2):

բ. Երկինքը Աստծու փառքին պատմաբան է լինում (Գ. Նարեկ. Ներբող Աստվածածնի): Տե՛ս նաև 15. Ե:

43 Աստված այնտեղ է լինում, որտեղ հայտնվում են նրա զորությունները:

ա. Ասվում է Աստված այնտեղ է, ուր հայտնվում են նրա զորները, և ուր դրանք ավելանում է: Հատկապես, որ մերձ է և երևում է հրեշտակների երկրորդ դասին և առավել մոտիկ է երկնքի զորքին (Եվագր. Հարյուրավորները, Ա):

բ. (Աստված) ոչ միայն բարձունքներում է, այլև ամենուրեք: Եվ որովհետև նրանք, ովքեր այստեղ են, նրա կամքը կատարողներն են, դրա համար էլ ասում ենք, որ նա այնտեղ է (Խոսրով, Մեկն. Պատ.):

44

Աստծուն իր գոյությամբ կամ իսկությամբ մարդկանցից ոչ ոք չտեսավ և չի էլ կարող տեսնել այս աշխարհում:

ա. Դու իմ երեսը չես կարող տեսնել, որովհետև մարդ չի կարող իմ երեսը տեսնել և ապրել (Ել. ԼԳ 20):

բ. Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել (Հովի. Ա 18):

գ. Աստծուն ոչ ոք երբեք չի տեսել (Ա Հովի. Գ 12):

դ. (Աստծուն) մարդկանցից ոչ ոք չի տեսել և ոչ էլ կարող է տեսնել (Ա Տիմոթ. Ջ 16):

ե. Ոչ ոք նրան չի տեսել երբեք, և ոչ էլ հոգեղեններից ու հրեղեն հրեշտակներից որևէ մեկը (Գ. Լուսավորիչ Ագաթ. -ի երկուն 254):

զ. Աստծուն իր էությանը չի տեսել ոչ ոք, ո՛չ հրեշտակները, ո՛չ հրեշտակապետերը, ո՛չ սերովբեները, ո՛չ քերովբեները և ո՛չ էլ երկնավոր զվարթությունների բյուրավոր բանակը (Նույն տեղը 382): Տե՛ս նաև 45. Գ, Դ:

45 Անհնար է մարմնական աչքով տեսնել Աստծուն, որպես է իր էությանը:

ա. Հավիտենության թագավորիտն, որ անեղծ ու աներևույթ է, միակ Աստծուն փառք (Ա Տիմոթ. Ա 17):

բ. Արարիչը ամենայնի անտեսանելի է մարմնավոր աչքերի համար (Եղիշե, Ը):

գ. Մարմնավոր աչքերով անհնար է տեսնել Աստվածային էությունը (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Թ):

դ. Աստվածությունը ըստ ինքնյան աներևույթ է (Գ. Աստվածաբան, ճառ, Թ Կողոզոնիս): Տե՛ս նաև 44. Ե, Ջ:

46 Չկա այլ աստված, բացի մեկից:

ա. Ուրիշ Աստված չկա, բացի քեզանից (Իմաստ. ԺԲ 13):

բ. Ես եմ Աստված, և ոչ ոք չկա բացի ինձանից (Եսայի, ԽԳ 11, խե. 21-22):

գ. Տեր Աստված միակն է իր էությանը և ոչ մեկը չի եղել նրանից առաջ: Չկա այլ Արարիչ այն ամեն ինչի (Գ. Լուսավորիչ, Ագաթ. -ի երկուն 259): Տե՛ս նաև 47:

47 Իրականում միայն մեկն է ճշմարիտ Աստված:

ա. Տեր, Տեր Աստված միակ Տերն է (բ. Օրին. Ջ 4):

բ. Չկա ուրիշ Աստված, բացի մակ Աստծուց: Մեզ համար միայն մեկ Աստված կա, Աստված մեկ է (Ա Կորնթ. Ը 4, 6, Ա Տիմոթ. Բ 5, Փաղատ. Գ 20):

գ. Հավատում ենք մեկ Աստծու (Հանգանակ):

48 Աստված անփոփոխ է կամ անփոփոխելի:

ա. Ես Տեր Աստված եմ և չեմ փոխվում (Մաղաք. Գ 6):

բ. Ամեն բարի շնորհ և ամեն կատարյալ պարզև վերից է՝ իջած լույսի Հորից, որի մեջ չկա փոփոխում կամ էլ փոփոխման ստվեր (Հակ. Ա 17):

գ. Աստված կենդանի հոգի է, անփոփոխ է (Գ. Լուսավորիչ, Ագաթ. ի երկուն 355):

դ. Աստված անփոփոխելի է (Նույն, հաճախ. ճառ. իբ.):

ե. Աստվածային իսկությունը վեր է ամեն մի փոփոխությունից (Ոսկեբերան, Մեկն. Հովհ. ճառ Ժ.):

գ. Իսկ նրանք, ովքեր ասում են, թե կար ժամանակ, որ Որդին չկար, կամ կար ժամանակ, որ Սուրբ Հոգին չկար և կամ փոփոխելի են կամ այլայլելի, այնպիսիներին նզովում է ընդհանրական և Առաքելական եկեղեցին (Հանգանակ):

է. Իր էության բնության և բարձրության մեջ, որում գտնվում էր և է, մշտենջենապես կա և կմնա անփոխարինելի Որովհետև ինչպես Հայրը, նույնպես էլ նրանից Որդին և Հոգին անփոփոխելի են նույն բնության մեջ: Որովհետև Հայրը ծնեց Որդուն և ծնվելիս բնությունը չփոխեց ու Աստվածությունը չկորցրեց: Նմանապես և Սուրբ Հոգին, որը ելնում է Հորից բայց չի տարբերվում իր բնությամբ կամ Աստվածությամբ (Ս. Շնորհալի, Մեկն. Հաճ. ճառ Դ): Տե՛ս նաև 24. Բ:

49 Աստված է անչափ կամ անսահման:

ա. Նրա մեծությանը չափ չկա (Սաղ. ՃԽԴ 4):

բ. Անչափո Աստված, մեզ համար չափավորության եկար (Ժամագնիրք):

գ. Անսահմանը էությամբ սահմանելիներիս ստեղծողն է (Շարակ.):

դ. Վեր է, քան իմանալիները իր անսահմանության և անբավության մեջ (Գ. Լուսավորիչ, Հաճախ. ճառ Ա):

ե. Տերություն անսահմանելի, մեծություն անչափելի (Գ. Նարեկ. բան իը.):

զ. Չգիտենք նրա գերագույն և անիմանալի և անպատմելի անսահմանությունը (Դիոնեսիոս, Երկն. քահանաների համար գրքում): Տե՛ս նաև 38. Զ:

50 Աստված է ամենակարող:

ա. Աստծու համար անկարելի բան չկա (Ղուկ. Ա 37):

բ. Ամենակալ, ամենակարող (Շարակ):

գ. Ամեն ինչ, որ ասում է, կարող է կատարել, և նրա համար անկարելի բան չկա (Գ. Լուս. Ազաթ. -ի երկում):

51 Աստված է ազատ, անձնիշխան:

ա. Համայն գոյերի տեր ամենակալ ինքնիշխանություն (Գ. Նարեկ. բան ծէ.):

բ. Աստված իշխան է ամենայն եղածների և ինչ որ կամենում է իր արարածների վրա, և եղածներից ոչ ոք չի ընդդիմանում նրան (Ն. Շնորհ. Թուղթ գրված Գրիգորիս կաթողիկոսի հրամանով Ասորիքի, որ միջազետքում է, Համյնք նահանգի քահանաներին):

գ. Աստված մեկն է, միակ անձնիշխան (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Դ):

52 Աստված է ամենազետ կամ ամենախմաստ:

ա. Նրա իմաստությանը սահման չկա (Սաղ. Ճխգ. 5):

բ. (Աստված) անսկիզբ է և անիմանալի (Գ. Լուս. Հաճախ. ճառ Ժբ.):

գ. Ամենախմաստուն Հայր բոլորի (Շարակ.):

դ. Խոստովանում ենք՝ քո ամենիմաստ Էությանը է, որ ծաղկում են մեր մեջ ու բարգավաճում պարզևներն համայն (Գ. Նարեկ. բան ԼԴ):

ե. Թեպետև նա ամենագետ է, դու մի՛ հապաղիր նրան խոստովանել քո մեղքերը (Եփեմ, ճառ պասի մասին):

զ. (Աստված) որքան ամեն ինչից մեծ է, այնքան էլ բոլորից իմաստուն է (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Զ):

53 Աստված ամենապարզ կամ պարզագույն:

ա. Իսկական աստվածությունը հայտնի է որպես անեղծ, անստեղծ, աննյութական մշտենջենապես նույնը, պարզ և միանգամայն անշարժ:

բ. Պարզականները (հրեշտակները) պարզագույն Աստծուց են (Ն. Շնորհալի, Գովեստ հրեշտակ.):

գ. Աստված պարզ է առանց բաղադրիչների և առանց ձևերի (Ոսկեբերան, ճառ Դ, Անհասանելու համար): Տե՛ս նաև 20. Գ:

54 Աստվանձ է մշտենջենավոր կամ հավիտենական:

ա. Դու նույնն եմ, և քո տարիները չեն անցնում (Սաղ. ճբ. 28):

բ. Անսահման մշտենջենավորություն (Գ. Լուս. Հաճախ. ճառ Ա):

գ. Աստված մշտենջենավոր, Աստված հավիտենական (Ժամագիրք):

դ. Կրողդ միակ ինքնագո անանց

Մշտենջենական ճշմարիտ փառքի,

Օրինյալ, փառավոր երիցս հավիտյան

Եվ իմանալի հավիտենության

Սահմաններից էլ դեռ ածն կողմ:

ե. Աստված մշտենջենավոր և անճառ արարչագործ (Մեծն Մաշտոց, Պսակի երկրորդ կանոնում): Տե՛ս նաև 71. Բ 76. Զ, 78. Ա, Գ, Ե:

55 Աստված է անմահ:

ա. Նա, որ միայն ինքն ունի անմահություն (Ա Տիմոթ. Զ 16):

բ. Անմահությունը Անեզրին (Աստծուն) է հատուկ, որովհետև հրեշտակները թեև անմահ են կոչվում, սակայն ստեղծված են: Եվ նրանց շեղվելը Աստծու շնորհներից մահ է կոչվում (Խոսրով Մեկն. Ժամ.):

գ. Բարիքների շնորհատու ամեննայնի առատ անմահ Տեր (Ժամագիրք):

դ. Տեր Աստված Հայր անսկիզբ, անեղ և անմահ բնություն (Մեծն Մաշտոց, Խաղողի օրհնության կանոնում): Տե՛ս նաև 15. Բ 24. Գ, 71. Բ:

56 Աստված է ամնաբարի, ամենասուրբ:

ա. Ոչ ոք բարի չէ, այլ միայն Աստված (Ղուկ. ԺԸ 19):

բ. Տեր, պարգևատու, ինքնաբան բարի (Գ. Նարեկ. բան Գ):

գ. Տիրոջ նման սուրբ չկա, և այլ սուրբ չկա, բացի քեզանից (Ա Թագ. Բ 2):

դ. Սուրբ, սուրբ, սուրբ սուրբ ես ճշմարտապես և ամենասուրբ (Խորհրդատետր, Պատարագի աղոթքում):

ե. Աստված ավելին է քան սրբությունը, Աստված սուրբ է ոչ այնպես, որպես մեզ է ընկալելի, այլ որպես միայն իրեն է հայտնի (Խոսքով, Մեկն. Ժամ):

զ. Սուրբ է Հայրը, սուրբ է Որդին և սուրբ է Սուրբ Հոգին: Ջանազան սրբություն չեն ասում, այլ ծնվել է Որդին սուրբ, առաջ է եկել Սուրբ Հոգին ըստ սերովբենների վկայության՝ երիցս սուրբ ասելով և մի Տեր (Ս. շնորհ. Մեկն. Ա Պետ. ճառ Ա):

է. Ոչ թե մի կողմից սուրբ է, մյուս կողմից՝ ոչ այնպիսին, այլ անմենկին սուրբ, ամենկին հստակ, բոլորովին ազատ: Բնությամբ և էությամբ սրբություն ունի, և այն ո՛չ ձեռք բերովի է, ո՛չ ստացական: Եվ բոլորի սրբությունը՝ մարդկանց և հրեշտակների, նրանից է (Նույն տեղը, ճառ Դ):

57 Աստված ամն տեղ է, այսինքն ամնուրեք ներկա է:

ա. Եթե բարձրանամ երկինք, դու այնտեղ ես, եթե իջնեմ դժոխք, դու այնտեղին մոտ ես (Սաղ. ԺԼԹ 8):

բ. Մի՞թե երկինքը և երկիրը չեն լցնում, ասում է Տերը (Երեմ. ԻԳ 24):

գ. Օրհնաբանյալ ահավորություն, ամեն տեղ հասնող ձեռնարկություն (Գ. Նարեկ. բան ղգ.):

դ. Այլ նրանով է լցված երկինքը,

Երկիրը և անդնդային խորքերը.

Նաև ամենայնի ներքո

Եվ ստեղծածից դուրս (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

ե. Աստվածային բնությունը անսահման ու անհաղորդ է վերևում՝ երկնքում, ներքևում՝ երկրի վրա, և չկա որևէ տեղ, որ նրանից զուրկ լինի, որովհետև ամենուրեք լցված ու հագեցված է նրանով (Ս. Շնորհ. Մեկն. Ա Պետ, ճառ Ը):

զ. Ասում ենք, թե Աստված ամենուրեք է, բայց չգիտենք, թե ինչպե՞ս է (Նույն, Մեկն. Ա Հովհ. ճառ Ա):

է. Տերը ամեն տեղ է և ոչ ամեն տեղ. ամեն տեղի մերձ է իմաստությամբ, որժի միջոցով արարեց, բայց ոչ բոլոր տեղերում է, որովհետև ստեղծվածներից չէ (Եվագր. Հարյուրավորներին, Ա):

ը. Որ Աստված ամենուրեք է, գիտեմ, բայց թե ինչպիսին, չգիտեմ (Ոսկեբերան, Անհասանելի համար): Տե՛ս նաև 40.:

58 Աստվածային անձերը երեքն են:

ա. Կենդանարար Երրորդության մեջ երեք անձեր են (Ջաքարիա կաթողիկոսի ժամանակ, Տիրոջ 862 Բ Շիրակականում գումարված ժողովի կանոններից):

բ. (Աստվածային) երեք անձերի ենք դավանում, երեքից ո՛չ ավելի կամ պակաս (Ն. Շնորհ. Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

գ. Եռյակ անձամբ է թիվ կատարյալ

Երրորդությունն է ծանուցանում.

Երեքից չի անցել,

Եվ ո՛չ էլ երկուս կամ մեկն է եղել (Ն. Շնորհ. Հավատի խոսք):

59 Սուրբ Երրորդության մեջ երեք Աստված չեն և ոչ էլ երեք

Աստվածություն, այլ երեք անձ՝ մեկ Աստվածության մեջ և մեկ

Աստվածություն երեք անձի մեջ:

ա. Երեք կատարյալ անձիք մի իսկություն, մի էություն, և մի Աստվածություն (Գ. Լուս. Ագաթ. -ի երկում 365):

բ. Երեք անձ և մի բնություն, մի Աստվածություն, քեզ ենք խոստովանում խավեր սուրբ Երրորդություն (ժամագիրք):

գ. Խոստովանում ենք համագո և անեղ ամենասուրբ Երրորդությանը՝ բաժանված երեք անձնավորության և միավորված մի բնությամբ, մի Աստվածության մեջ (Ն. Շնորհ. Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

դ. Հավատում և խոստովանում ենք պաշտելի և երկրպագելի Սուրբ երրորդությանը՝ մի Աստվածություն երեք անձնավորության բաժանված (Գրիգոր Դ. կաթողիկոս, Թուղթ՝ գրված Հռոմ. եկեղեցուն և Միքայել Պատրիտարքին):

ե. Տերը մի է, և մի է Աստված դավանում ենք ոչ թե տերեր կամ աստվածներ, այլ Սուրբ Երրորդությունը Քանի որ մեկ է Հոր և Որդու և Սուրբ Հոգու տերությունը Երեք և մեկ, մեկ և երեք, քանի որ Սուրբ Երրորդության մեկ էությունն ենք դավանում՝ կատարյալ երեք անձերի առկայությանը (Սեբերիանոս, ճառ Ա, Հավատի համար):

զ. Պետք է պահել մի Աստվածություն, և խոստովանել երեք անձի (Գ. Աստվածաբան, Առ որս ճառ Բ Հավատի համար):

է. Միավորության Երրորդությամբ երկրպագված, և Երրորդության մի միավորություն բովանդակված (Նույն տեղը): Տե՛ս նաև 64. Ե, 65. Գ, Ե, Թ, ԺԱ Ժբ. 66. Դ:

60 Սուրբ Երրորդության առաջին անձը կոչվում է Հայր,

Երկրորդը՝ Որդի կամ Բան, երրորդը՝ Սուրբ Հոգի կամ Աստծու Հոգի:

ա. Գնացեք ուրեմն աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցեք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով (Մատթ. իր. 19):

բ. <sup>27</sup> Երեքն են, որ երկնքում վկայում են՝ Հորը և Բանը և Սուրբ Հոգին, և այս երեքը մի են (Ա Հովհ. Ե 7):

գ. Սկզբից էր Բանը, և Բանը Աստծու մոտ էր, և Բանը Աստված էր (Հովհ. Ա 1):

դ. Աստված Բանդ, Հորից անբաժանելիդ (Շար.):

ե. Բանը համագո Հորը և Սուրբ Հոգուն, օրհնեցեք (անդ.):

զ. Հոգիդ Աստծու անեղ էություն Հոր և Որդու հետ միավորված բնությամբ (անդ.):

է. Հավատով մենք հաստատ ճանաչեցինք մեկ Աստված Հայրը, ամենայնի տերն ու արարիչը, միածին Որդին, որը Հորից է, Հոր կողքին, Հոր հետ և Սուրբ Հոգին, որը էությունից է:

ը. Առաջին լույսը Հայր է կըռչվում, իսկ նրանից հետո՝ հաջորդաբար եղածները (Շար.):

թ. (Հերձվածողները) խոստանում են այնպես իմանալ Աստծուն, ինչպես ոչ ինքը իրեն: Մեզ բավական է իմանալ, որ մեկը Հայր է, մյուսը՝ Որդի, երրորդը՝ Սուրբ Հոգի, և երեքն էլ մի բնություն և զորություն և Աստվածություն են (Ս. Շնորհ, Մեկն. Բ Պետ. Ճառ Դ): Տե՛ս նաև 68. Ա 70. Բ:

61 Սուրբ Երրորդության խորհուրդը իմանալով առաջնորդվում ենք Նոր Կտակարանի անմար լույսով:

ա. Ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ՝ միայն Հայրը, և ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ՝ Որդին, և նա, ում որ Որդին ուզենա հայտնել (Մար. ԺԱ 27):

բ. Մեր մասնավոր գիտությունը տրված է Հորից Որդու մասին, և Որդուց՝ Հոր մասին և սրանցից՝ Հոգու մասին, և Հոգուց էլ՝ նրանց մասին (Իգնատիոս, Մեկն. Ղուկ. Ժ 22):

դ. Եթե Սուրբ Գիրքը մեզ չասեր, թե Քրիստոսին Հայրը ծնեց, մենք որտեղի՞ց կարող էինք իմանալ Աստվածության խորհուրդը (Եփրեմ, Որ ունի հարցեր ճառում): Տե՛ս նաև 3. Գ, Է:

62 Հին Կտակարանում Սուրբ Երրորդության մասին խոսքերը աղոտ է և քողածածկ:

ա. Մինչև այսօր նույն քողը ձգված մնում է Հին Կտակարանուի ընթերցվածների վրա և չի վերանում, որովհետև Քրիստոսի միջոցով է վերացվելու (բ. Կորնթ. Գ 14):

բ. Մարգարեքը (Սուրբ Երրորդության խորհուրդը) հայտնում էին և թաքցնում. հայտնում էին խոսքերով, թաքցնում՝ գործերով: Որին և մեծ Դավիթը ծանոթանալով Հոգուց՝ հայտնությամբ ներկայանում է երեք անձի և մի տերմության ու իշխանության, այսպես ասելով. «Տիրոջ ողորմությամբ լցվեց երկիրը» և այլն Եվ եթե որևէ մեկը շատ այլ հավասարի բաներ որոնի, կգտնի մարգարեների խոսքերում՝ ասված առակով ու օրինակով Որդու և Հոգու մասին (Ս. Շնորհ. Մեկն. Ա Պետ. Ճառ Դ):

63 Ծննդոց գրքում խոսքեր կան, որոնք հայտնում են Սուրբ Երրորդության խորհուրդը:

<sup>27</sup> Շատ հին ձեռագրեր, ինչպես նաև Էջմիածնի 1992թ. հրատարակությունը չունեն: Վերրցված է 1896 Թ Կ. պոլսում լույս տեսած Աստվածաշնչից. խմբ.:

ա. Արարիչ Հայրը խորհուրդ արեց արարչակից Որդու և արարչակց Հոգու հետ, առաջին նախաստեղծ մարդու համար եղած նախորդ խորհրդի նման. ինչպես այն ժամանակ ասել էր. «Եկեք մարդ ստեղծենք մեր կերպարանքի պատկերի նման», ապա ստեղծեց Ադամին և չգոյությունից նրանց հաստիատեց կենդանության մեջ: Նույն ձևով և այստեղ Հայրը ասաց Որդուն և Հոգուն. «Եկեք Ադամին նրա նման օգնական ստեղծենք, նրա պատկերի նմանությամբ և իր կերպարանքի նման» (Գ. Լուս. Ագաթ. -ի երկրում 275):

բ. Ասաց Աստված. «Եկեք իջնենք ու պղտորենք նժանց լեզուները» և չասաց, թե «գնացեք իջեք ու պղտորեցեք նրանց լեզուները», ինչպես և հրամանի կարգը պատշաճում էր Աստվածությանը, այլ «Եկեք, ասաց, իջնենք ու պղտորենք»: Նա գործի մեջ հաստատություն դրեց «պղտորենք» ասելով և հիրավի, այս օրինակով, թե ստեղծեց մարդուն, թե՛ բաժանեց լեզուները:

Քանզի աստվածությունը մեր փրկության համար հանձն առավ մարդկային կերպարանքը, նա առաքյալներին սովորեցրեց Երրորդության անձնավորությունների թիվը (Նույն տեղը 622-623):

դ. Որ ասաց «Մարդուն ստեղծենք ըստ մեր պատկերի», բազմաթիվ նշանների միջոցով ծանոթացրեց Սուրբ Երրորդությունը (Գ. Նյուսացի, «Մարդու կազմ.» գրքում):

ե. «Մեր» ասելով՝ անձեր հայտնեց (Վարդան, Մեկն. ծննդ. Ա 26):

զ. «Եկե՛ք, իջնենք և խառնենք նրանց լեզուները» խոսքով դիմում է Որդուն և Հոգուն, որոնց միջոցով (մարդկանց դարձրեց մեկ ազգ, մեկ լեզու (Նույն, անդ, ԺԱ 7):

է. Այն, որ ասաց, թե մեկը կար նրա մոտ, ում նա դիմում էր (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ ընծ. գլ. ԺԱ):

64 Սուրբ Երրորդության երեք անձերը միմյանցից զանազանվում են անձնավորությամբ:

ա. Խոստովանում ենք ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն՝ բաժանված երեք անձնավորության (Ն. Շնորհ. Թուղթ՝ գրված Ալեքսին):

բ. Եվ ոչ դարձյալ հոգեկանին հետևող լիբիացի Սաբելին ձայնակցելով՝ երեք անձնավորությունները ի մի հավաքենք, այլ բաժանենք անբաժանաբար և միավորվենք բաժանելով՝ ըստ ուղղափառ Հայրերի դավանության (նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

գ. Հավատում և խոստովանում ենք պաշտելի և երկրպագելի Սուրբ Երրորդությանը անձնավորությամբ տրոհված:

դ. Հոր անձը Որդու անձը չէ, և ոչ էլ Որդու կամ Սուրբ Հոգու անձը Հոր անձն է, թեպետև ի սկզբանե Որդին և Սուրբ Հոգին Հոր միևնույն էությունից են (Սեբեստիանոս, Ճառ Ա, հավաստի համար):

ե. Երկրպագում ենք Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն. անձնավորությունները բաժանում ենք, բայց Աստվածությունը միավորում: Երեքը ի մի չենք հավաքում, որպեսզի Սաբելի ցավով չհիվանդանանք և ոչ էլ բաժանում ենք երեք օտեար էությունների, որպեսզի Աբիսսի պես չմոլորվենք (Գ. Աստվածաբան, Առ որս, Ճառ Բ Հավաստիի համար): Տե՛ս նաև 65. Ը, ԺԱ 71. ԺԱ:

65 Սուրբ Երրորդությունը համաբուն, համագոր, համակամ և համափառ է:

ա. Ես և իմ Հայրը մի ենք: Չե՞ս հավատում, որ ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ իմ մեջ (Հովհ. Ժ 30, ԺԴ 10):

բ. Ամենասուրբ Երրորդության բնությունն ու գոյությունը մեկն է (Գ. Լուս. Հաճախ. ճառ Ա):

դ. Երեք կատարյալ անձինք, բայց մեկ կատարյալ կամք, Մի իսկություն, մի էություն և մի աստվածություն մի Աստվածային զորություն:

ե. Որ անքնին ես էությամբ, համագո Երրորդություն, երքսրբյան մի տերության, մի բնությամբ Աստվածություն (Նույն տեղը):

զ. Հոգիդ անեղ և համագո, նույն և նման Հոր և Որդուն (Նույն տեղը):

է. Եկեղեցու աստվածաբանները քեզ (Սուրբ Հոգի) քարոզեցին համապատիվ Հորը և Որդուն (նույն տեղը):

ը. Որդին և Հոգին թեպետ անձնավորությամբ բաժանված են Հորից, սակայն Աստվածությամբ չեան բաժանվում և ոչ բնությամբ և ոչ էությամբ (Ս. Շնորհալի, Մեկն. Հակ. ճառ Է):

թ. Եռյակ անձնավորության մեջ մտնում են մի էություն, մի իշխանություն, մի կամք և մի արարչագործ զորություն (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսիսին):

ժ. Ամենասուրբ Երրորդությանը հավատացած՝ ճանաչում ենք մի բնություն, մի տերություն, մի զորություն, մի փառք (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Մանվել ըայսրին):

ժա. Խոստովանում, դավանում, պաշտում և երկրպագում ենք ամենասուրբ Երրորդության գուկգափառ միությունը, միշտ բարի, նույնագո, հավասարապատիվ, անձառ Աստվածությունը (Գ. Նարեկ. բան ԼԴ ԶԿԱ):

ժբ. Ասում է «Անցնե՛ք ամբողջ աշխարհով մեկ և մկրտեցե՛ք նրանց հանուն Հոր և Որդու և Հոգու», և չասաց, թե «Հանուն Հոր և Հանուն Որդու և հանուն Հոգու», որպեսզի հայտնի լինի, որ նրանք մի բնություն են, և որ մի անունով երեք անձիք անվանվեց (Եփեմ, Մեկն. Ավետարանի համաբարբառի, գլ. ԺԹ):

ժգ. Ոչ թե Հոր փառքն այլն է, Որդունը՝ այլ, այլ նույնն է, որովհետև միևնույն Աստվածությունն է Եվ Հորը փառավորելիս նույն փառքով նաև Որդին է փառավորվում, որովհետև Որդու փառքը նաև Հոր փառքն է (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Զ):

ժդ. Որդին Հորից տարբեր կամք չունի (Ոսկեբերան, Մեկն. Մատ. ճառ ԻԳ):

ժե. Հոր և Որդու և Սուրբ Հոգու մի Աստվածություն է, որ երեք անձերի է բաժանվում, և ժողովված է մի բնության, և մի իշխանության և մի կամքի մեջ (նույն, Թուղթ՝ գրված Ասորիքի Միջագետքում գտնվող Համայնք նահանգի քահանաներին): Տե՛ս նաև 59. Բ Գ, 60 Բ 66. Ե:

66 Սուրբ Երրորդության մեջ մեծ և փոքր չկա:

ա. Երրորդության մեջ առաջինը թվարկածը մյուսից մեծ չի լինի, կամ վերջում անվանվածը ավելի հավասար չի լինի առաջինի համեմատ (Գ. Նաարեկ. բան Գ ԶԿԱ):

բ. Ըստ բնության Հայրը մեծ չէ

Նրանցից, որոնց սկիզբն է ու պատճառը.

Եվ ոչ էլ նվաստ են նրանք, որ նրանցից են,

Որովհետև դրանով Հորն էլ նվաստ է դարձնում (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

գ. Երրորդությունը անձնավորվել,

Մի Աստվածության մեջ է հավաքվել

Այնտեղ արարած չկա թվարկվող,

Եվ ոչ էլ կրտսեր ոք ծառայող.

Ոչ ոք բարձրությամբ չի վեր ելել

Ոչ էլ աստիճաններով վար իջել (Նույն, Վիպաս. Նախն.):

դ. Այս է հավատի կատարելությունը՝ Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն ճանաչել երեք անձ, և մի Աստված, նրանցից ոչ մեկին առավել կամ նվազ չհամարել՝ կամ առաջ կամ հետո, այլ հարթ հավասար և ամեն ինչում միանման և նույն բնությամբ (Խոսքով, Մեկն. Պատ.):

ե. Որդին ամեն ինչով՝ և՛ բնությամբ, և՛ էությամբ հավասար է Հորկը՝ ունենալով այն ամենը, ինչ Հորն է (Ս. Շնորհալի, մեկն. Ա Պետ. Ճառ Դ):

67 Սուրբ Երրորդության յուրաքանչյուր անձի հատկությունը ճանաչվում է անահատապես:

ա. Անունները հաստիատում են (յուրաքանչյուր անձի) հատկությունը՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի (Գրիգոր Դ. կաթողիկոս, Թուղթ՝ գրված Հռոմ. եկեղեցուն): Տե՛ս նաև 68:

68 Սուրբ Երրորդությունում մասնավորապես չի ասվում, թե Հայրը Որդի է կամ Հոգի, Որդին՝ Հոգի է կամ Հայր և ոչ էլ Հոգին՝ Հայր կամ Որդի:

ա. Թեպետ Հայր և Որդի բնությամբ մեկն են, սակայն անվամբ ուրիշ են և յուրաբեր: Որդին միշտ Որդի է և ոչ երբեք չի եղել Հայր, որպես Հայրը միշտ Հայր է և երբեք չի եղել Որդի Որդին անհատապես (ասվում է) Որդի, որովհետև Հայր երբեք չեղավ, որպես և Հայրը անհատապես Հայր է ասվում, որովհետև երբեք Որդի չի եղել, այլ միշտ Հայր է, որպես Որդին միշտ Որդի է (Խոսքով, Մեկն. Ժամ.):

բ. Որպես Հայրը միշտ ասվում է Հայր, այսպես էլ Որդին միշտ կոչվում է Որդի (Ն. Շնորհալի, Մեկն. բարձր.):

գ. Աստված հոգի է: Հոգի է Հայրը, հոգի՝ Որդին, հոգի՝ և Սուրբ Հոգին: Եվ այդ, քանի որ այսպես է, և ոչ թե Հայրը Որդի է, Որդին՝ Հայր և ոչ էլ Սուրբ Հոգին՝ Հայր և Որդի (Եղիշե, Ճառ Տիրոջ թաղման և հարության վերաբերյալ):

դ. Ո՛չ Հայրը Որդի է, և ո՛չ Որդին՝ Հայր, և ո՛չ էլ Սուրբ Հոգին՝ երկուսից մեկը (Եփրեմ Մեկն. պատգամի «Ով հարս ունի, փեսան նա է»):

ե. Այն ամենը, ինչ նույն է, նույնը և Որդունն է, բայց միայն թե Հայր չէ, և այն ամենը, ինչ Որդին է, նույնը և Հայրն է, բայց միայն թե Որդի չէ, և այն ամենը, ինչ Հայր է և Որդի, նույնը և Հայրն է, բայց

միայն թե Որդի չէ, և այն ամենը, ինչ Հայր է և Որդի, նույնը և Սուրբ Հոգին է, բայց միայն թե Հայր և Որդին չէ (Սեբերիանոս, ճառ Ա, Հավատի համար):

գ. Ամենայն ինչ որ Հորն է, նույնը և Որդունն է բացի հայրությունից, և ինչ որ Որդունն է, Հորն է և Որդունը, բացի Հոգու անձնավորությունից, և ինչ որ Որդունը և Հոգունն է, Հորն է: Բայց Հայրը ինչ-որ պատճառից չէ, որպես Որդին և Հոգին, այլ ինքն է պատճառ Որդու և Հոգու. մեկին՝ ծնունդով, մյուսին՝ ելնելով (Ս. Ծնորհ. Մեկն. Հակ. ճառ Գ):

69 Հայրը ծնող է և ոչ ծնված, Ոժդին ծնունդ է և ոչ ծնող և Սուրբ Հոգին ո՛չ ծնող է, ո՛չ ծնունդ, այլ ելնող, բխող:

ա. Հայրը ծնող է ասվում և ոչ ծնունդ, և Որդին ծնունդ է ասվում և ոչ ծնող (Խոսարով, Մեկն. Ժամ.):

բ. Հայրը՝ ծնող, Որդին՝ ծնունդ, Հոգին էլ նույն բնությունից (Ն. Ծնորհալի, Հավատի խոսք):

գ. Հայրը անծին ու անսկիզբ է Որդին է ծնված Հոր բնությունից (Նույն, Թուղթ՝ գրված Ալեքսին):

դ. Խոստովանում ենք Հոր անձնավորության հատկությանը՝ անծին ու անսկիզբ, Որդուն՝ անեղ, անժամանակ և անսկիզբ Հորից ծնվել և Հոգունը՝ Հորից անձառաքար ելնելը, բխելը և դուրս առաքվելը (Նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

ե. Այս է հավատի կատարելությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն ճանաչել երեք անձ, և մի Աստված Ծնող՝ Հորը, ծնունդ՝ Որդուն, և Հոգու ելնելը Հորից և ոչ ծնունդը (Խոսարով, Մեկն. Պատ.):

զ. Օրհնության բարձունքում Հորից ելնողին՝ Սուրբ Հոգուն (Շարակ.):

է. Օրհնեցեք Հորից ելնող՝ Որդու էակից Սուրբ Հոգուն (անդ):

ը. (Հայրապետները) դավանեցին Հորից ելնող՝ Որդուն էակից Սուրբ Հոգուն (անդ.):

թ. Խոստովանում ենք Աստված Սուրբ Հոգու բխումը (անդ):

ժ. Անձառելի բխմուսը Հորից Հոգիդ ճշմարիտ (անդ):

ժա. Բխումը անձառ և անքնին Հոգիդ անեղ ու համագո (անդ):

ժբ. Որ համագո ես Հորը և Որդուն՝ անձառաքար բխումդ միշտ էից (անդ):

ժգ. Ծնող չէ, Հայր ունի, և ծնված չէ, եղբայր ունի, ծնողը երբեք Որդի չի եղել, և ոչ էլ ծնվածը երբևէ Հայր է եղել: Միակ Հորից մի միածին Որդին է, և ոչ երկուսն էլ անծին են, և ոչ երկուսն էլ՝ միածին, այլ մի Հայր առանց ծնվելու որևէ մեկից, որովհետև նա Հայր չունեմ և մեկն էր միածին Որդի՝ ծնված մշտենջենական Հորից (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Ա):

ժդ. Կար անծին Հայրը և ծնված Որդին, որը անեղ Աստծուց էր, կյանքը՝ կյանքից (Սեբերիանոս, ճառ Ա, Հավատի համար):

ժե. Նրանք (երեք անձիք) միմյանցից տարբերվում են, և յուրաքանչյուրը ճանաչում է այսպես՝ Հայրը ծնող է, Որդին՝ ծնունդ, իսկ Հոգին՝ ելնող (Հովհ. Իմաստասեր, ճառ ընդդեմ երևույթների):

70 Որդին ծնվել է Հորից անմարմնաբար:

ա. Անմատչելի տաղավար, բարձրացող արարածներիս բարձրացնող, որ ծնեցիր Աստծուն մարմնով՝ Հոր անմարմին ծննդին (Շարակ.):

բ. Բան կոչվեց նրա անունը,

Որովհետև անմարմին է Բանի ծնունդը (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

գ. Ծնվել է Հորից անմարմնապես (Նույն, Մեկն. Բարձր.): Տե՛ս նաև 72. Ա, Բ 74. Ը Ժ.:

71 Սուրբ Հոգին բխում կամ դուրս է ելնում Հորից:

ա. Միաժին Որդուց՝ քո (Հայր) աստվածության ծնունդը. և Սուրբ Հոգին, քեզանից բխելով (Գ. Լուս. Ագաթ. -ի երկում 75):

բ. (Որդին և Սուրբ Հոգին) մշտենջենավորներ են միաբան իսկությամբ Հոր հետ, Հոր մոտ և Հորից սկսվող, որպես բոցը կամ ջերմությունը հրից են, որպես տապը և ճառագայթը՝ արեգակից (Նույն, Հաճախ. Ճառ Զ):

գ. Հայծրական իսկությունից բխած լույսի աղբյուր (Շարակ.):

դ. Հորից բխող՝ փառակից Որդու, Հոգիդ անեղ (անդ.):

ե. Այսօր ճշմարիտ Հոգին դավանեցին սուրբ հայրապետները՝ ծագումը Հորից բխեցնելով շարունակաբար (անդ.):

զ. Որոնք (սուրբ հայրապետները) դավանեցին Հորից բխածի՝ Սուրբ Հոգու անձնավոր էությանը (անդ.):

է. Լույս՝ Հորից բխող՝ բարության աղբյուր՝ Աստծու Սուրբ Հոգի (անդ.):

ը. Հորից բխող Սուրբ Հոգին ոչ թե Որդու ծնունդով եղավ, այլ առաջ եկավ աղբյուրաբար (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

թ. Հավատում ենք Սուրբ Հոգուն, որ բխում է Հորից, անձնավոր՝ հավասար և անեղակից Որդուկն (Գրիգոր Դ. կաթողիկոս, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

ժ. Ասել, թե Քրիստոս Հոգով եղավ ճիշտ չէ, որովհետև պատճառը միայն Հայրն է, ինչպես Որդու, նմանապես և Հոգու. մեկին ծնունդով, մյուսին՝ բխեցնելով, ըստ անսուտ խոսքի, «Նա ասում է ճշմարտության Հոգին, որ Հորից է բխում» (Ն. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. Ճառ Բ):

ժա. Մեկը ծնունդ է Հորից, որպես որդին և մյուսը բխում է Հոր բնությունից, ոչ որպես որդի, այլ որպես հոգի: Եվ երկուսն էլ նույն Հորն են, անձնավորությամբ նրանից բաժանված և ոչ բնությամբ գատված, որպես նույն արեգակինն են ջերմությունն ու ճառագայթը, նրանից չանջատված, թեպետ տարբեր են (նույն, Մեկն. Հակ. Ճառ Դ):

ժբ. Չենք ասում, թե Հոգին Քրիստոսից առաջ է սկիզբ առած և բխած, այլ հավասար է նրան համափառ բխում է Հորից... Ասում ենք, Քրիստոսի Հոգին տնօրինաբար Հորից է սկիզբ առել և ոչ թե նրանից բխել (Ն. Լամբ. Մեկն. Պատ.):

ժգ. Դավանում ենք նրան անեղ և կատարյալ Սուրբ Հոգուն. անեղ՝ քանի որ Հոր բնությունից բխում է անձառելի անձնավորությամբ բաժանված ոչ իբրև ծնունդ, որովհետև Որդու ծնունդը առաձին է, սակայն անեղ է՝ իբրև Որդի Հոր բնությունից (Նույն տեղը):

ժդ. Ոչ թե երկու անձին և կամ էլ երկու ծնունդ ենք խոստովանում, այլ միաձին և մի ծնունդ, և մի ճշմարտության Հոգի, որ Հորից է ելնում (Սեբերիանոս, Ճառ Ա Հավատի մասին):

ժե. Իմացիր որ Հոգին առաջ է եկել Հորից, ինչպեսը՝ մի՛ հարցնիր (Գ. Աստվածաբան, Առ Որս, Ճառ Բ Հավատի համար):

ժզ. Գիտեմ, որ Որդին ծնվեց (Հորից), բայց թե ինչպես՝ չգիտեմ: Գիտեմ, որ Հոգին Հորից է, բայց թե ինչպես է, որ նրանից է, չգիտեմ (Ոսկեբ. Անհասանելու մասին): Տե՛ս նաև 48. Է 68. Զ, 78. Դ:

72 Որդու ծնունդը Հորից մարմնավոր ծննդյան նման չէ:

ա. Ո՛չ մարմնավոր ծննդյան նման,

Որովհետև պարզ ու աննյութ է (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

բ. Երբ լսում ես ծննդի մասին, մարմնական մի՛ կարծիր, քանի որ խոսքը անմարմնականի մասին է (Սեբաստիանոս, Ճառ Ա Հավատի մասին): Տե՛ս նաև 70. և 74. Ե, Ը Թ:

73 Որդու ծնունդը Հորից գերահրաշ է կամ անիմանալի օրինակ:

ա. Ծագումը Հորից անձառ ծննդյամբ (Շարակ.):

բ. Լույս՝ լույսից ծագած, արեգակ արդար, Հոր անձառ ծնունդ՝ Որդի (անդ):

գ. Ասում ենք, Հայրը Որդի ծնեց՝ Իրեն հավասարակարգ, ծննդյան պայմանը չգիտենք (Ս. Շնորհ. Մեկն. Ա Հովհ. Ճառ Ա):

դ. Որ Աստված Որդի ունի, հավատա՛, որպիսին է մի՛ քննիր, որովհետև եթե քննես, ոչինչ չես հասկանա: Քեզ բարձրունքներ մի՛ հանիր, որպեսզի չընկնես կործանվես: Որչափ հրամայվեց, այնչափ մտածիր (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. ԺԱ):

ե. Սուրբ Հոգին Հոր և Որդու ծննդյան մասին Սուրբ Գրքում չխոսեց: Ուրեմն ինչո՞ւ ես քննում այն, որը Սուրբ Հոգին չգրեց Սուրբ Գրքում: Իսկ եթե գրվածները չգիտես, ինչո՞ւ ես չգրվածները քննում Մեզ համար բավական է, եթե գիտենանք, որ Աստված միայն մի Որդի ծնեց: Ամոթ մի՛ համարիր խոստովանել քո անգիտությունը, քանի որ հրեշտակների նման դո՛ւ էլ չգիտես (Նույն տեղը):

զ. Իմացար ծնունդը, որպիսին լինելը մի՛ քննիր (Գ. Աստվածաբան, Առ որս. Ճառ Բ Հավատի համար):

է. Մարդոց ավելի որքան Աստծոն չանանչելի է դժվար, նույնքան էլ նրա ծնունդը մարդու ծննդից: Աստծու ծնունդը լրջությամբ պետք է պատվել: Բավական է իմանաս, որ ծնվեց, բայց թե ինչպես, դա հրեշտակներին էլ տրված չէ իմանալ, ուր մնաց թե քեզ (Նույն տեղը, Ճառ Դ, Որդու համար):

ը. Ո՛չ երկինքն է ձանաչում անապատում ծնունդը, քանի որ մոտ ցէր, ո՛չ երկիրը, քանի որ դեռ չէր հաստատված և ո՛չ էլ ծովը, որովհետև չէր սահմանազատված (Սեբերիանոս, Ճառ Ա, Հավատի համար): Տե՛ս նաև 71<sup>o</sup> ԺԶ և 74. Զ:

74 Որդու ծնունդը Հոծրից համարվում է որպես խոսքը՝ մտքից, որպես լույսը՝ լույսից:

ա. (Հավատում ենք) մեկ տեր Հիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն, Հայր Աստծուց Միածին, այսինքն՝ Հոր էությունից. Աստված՝ Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց. ծնունդ և ո՛չ արարած (Հանգանակ):

բ. Որ էակից ես Հոր՝ Որդի, լույս՝ լույսից, անպատմելի ծագմամբ (Շարակ):

գ. Էակից Հոր՝ լույսից լույս ծագած (Նույն տեղը):

դ. Լույս՝ լույսից, ծնունդ և ծագում (Նույն տեղը):

Որդի՝ գնված Հոր բնությունից ո՛չ ըստ մարդկանց ախտավոր ու անցավոր ծննդյան, այլ որպես լույս՝ լույսից և հուրը՝ հրից (Ն. Շնորհալիտ, Թուղթ ընդհ.):

զ. Որդու աննման ծննդյան օրինակը ոչ այլ ինչ է, քայց որ մեր մտքի ծնունդ, թեպետև օրինակը ամենևին չի համեմատվում ճշմարտության հետ (Նույն տեղը):

է. (Ործդին) ասվում է նաև Բան, քանի որ անախտավոր է ծնունդը՝ ըստ մեր խոսքի օրինակի, որ ծնվում է մեր մտքից (Նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

ը. Որդին ծնվում է Հորից անմարմնաբար, որպես խոսքը մտքից (Նույն, անդ):

թ. Որպես խոսքը ծնունդ է սրտի,

Նույնպես և Հոր ծնունդն է Որդի.

Լույս՝ լույսից առաջ եկող

Եվ ոչ նման մեր ծննդյան (նույն, Հավատի խոսք):

ժ. Անճառ ծնունդ վերին գոյի

Հոր ծոցում ծածկված

Աներևույթ անտեսական,

Լույս՝ լույսից անմարմնական (նույն տեղը):

ժա. Ոչ թե (Որդին) սկզբում ուրիշ էր և հետո էլ տարբեր ծնվեց, այլ Որդին սկզբից էր ծնվել, Հոր Որդին՝ նման իր ծնողին, կյանքը կյանքից ծնված, լույսը՝ լույսից (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ, գլ. Դ): Տե՛ս նաև 60. Բ Գ, Դ, Ե, և 73. Բ:

76 Որդին և Սուրբ Հոգին անսկզբնակից և մշտենջենակից են Հորը:

ա. Այսօր երևաց մարդկային ազգին սկզբնակից Բանը էակից Հոր (Շարակ.):

բ. Անսկիզբն էարկից Բանդ Հոր, որ հավիտենյաններից առաջ էիր:

գ. Քեզ ենք աղաչում, անսկզբնակից Հոր Որդի (անդ.):

ե. Սուրբ Հոգին միշտ կար, կա և կլինի, ո՛չ սկսվել է, և ոչ էլ դադարել, այլ միշտ Հոր հետ և Որդու հետ կարգվել և թվարկվել (անդ):

զ. Հայրը ավելի առաջ չէ, քան Որդին և կամ Որդին, քան՝ Հոգին, այլ որպես Հայրը կա միշտ հավիտյան, և համագո իր էության (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

է. Առաջին ծնունդը եղել էր Հորից նախքան անսահման ժամանակները, մի մշտենջենական և հավիտենականի ծնունդ, մշտենջենական և հավիտենական Հորից, նախքան ամեն ինչ (Գ. Լուս. Ագաթ. -ի երկում 382):

ը. Ոչ թե նախ Հայրն է և ապա՝ Որդին, այլ որպես հավիտենական է Հայրը, հավիտենական է Որդին հավիտենական Հոր հետ և մշտենջենակից է նրան սկզբում և վերջում՝ նմանվելով ծագած արեգակի ճառագայթներին: Որպես նախ արեգակը չի լինում և հետո՝ լույսը, այլ երկուսն էլ միաժամանակ են երևում, այդպես էլ լույս Որդին լույս Որդին լույս Հորից է ծագել և նրա հետ էլ մշտենջենակից (Ն. Շնորհալի, Թույթ՝ գրված Մանվել կայսրին):

թ. Մշտենջենավոր էր Հայրը և մշտենջենավորությամբ և անձառ խոսքերով էլ ծնեց Որդուն (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. ԺԱ): Տե՛ս նաև 71. Բ և 78. Ե:

77 Հորից Որդու ծնունդը առաջ է, քան հավիտենականները:

ա. (Որդին) ամեն ինչից առաջ հավիտենական ծնվել էր Հորից (Գ. Լուս. Ագաթ. ի երկում 391):

բ. Անսկիզբ Որդին ավելի առաջ է, քան հավիտյանները (Շարակ.):

գ. Անձառելի Հորից ծնված Բանդ Աստված, հավիտյաններից առաջ անժամանակ ծնվեցիր (Նույն տեղը):

դ. Հորից անմարմնաբար ծնված Որդի նախքան հավիտյանները (Նույն տեղը):

ե. Նա առաջ էր, քան հավիտյանները կար Հոր հետ՝ Աստված՝ Աստծուց (Եփրեմ, ճառ այլակերպ.):

զ. Հավիտյաններից առաջ է ծնողը, հավիտյաններից առաջ է ծնունդը (Սեբերիանոս, ճառ Ա, Հավատի մասին): Տե՛ս նաև 76. Է:

78 Սուրբ Հոգու բխումը մշտենջենավոր է և անսկիզբ:

ա. Հավատում ենք աստվածեղեն Սուրբ Հոգուն, Սուրբ Հոգուն, կատարյալ Աստծուն, որն անստեղծ է և մշտենջենապես բխում է Հորից (Գ. Լուս. Ագաթ. -ի երկում 17):

բ. Որ անիմանալի ես էության և անապատում Հոգիդ ճշմարիտ, անսկզբնաբար բխում Հորից (Շարակ.):

գ. Քեզ բարեբանում են ամենայն ազգերը մշտենջենաբուխ անսպառ աղբյուր Սուրբ Հոգիդ ճշմարտության (նույն տեղը):

դ. Խոստովանում ենք և Սուրբ Հոգին ճշմարտապես Հոգին Աստծու առաջ եկած անսկզբնական Հորից անսկզբնաբար (Ն. Շնորհալի, Թույթ՝ գրված Մանվել կայսրին):

ե. Երբ ասում ենք Սուրբ Հոգին մշտենջենակից և էակից, խոստովանում ենք միշտ Հոր մոտ և Հոր հետ լինելը, որպես Հայրը էր և է և միշտ է ժամանակ, որ չկար, նույնպես և Սուրբ Հոգին միշտ Հոր հետ և Որդու հետ էր և է (Խոսրով, Մեկն. Պատ.): Տե՛ս նաև 76. Ե:

79 Սաբելը Սուրբ Երրորդությունը միայն մի անձ էր համարում՝ խառնելով դեմքերը:

ա. Ամոթ թող լինի Սաբելին և նրա համախոհներին, որոնք չեն խոստովանում երեք անձնավորություններ՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու (Խոսրով, Մեկն. ժամ.):

բ. Եվ ո՛չ անձամբ խառն ասելով,

Երեքին ի մի ժողովելով,

Այսպես թված այս Սաբելին՝

Հրեականին հետևողին (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

գ. Սաբելին չենք հնազանդվում, Որ չարաչար է ժողովուրդ (Նույն, Վիպաս. նախն.):

դ. Երրորդությունը չենք բաժանում, որպես ոմանք, և ոչ խառնում ենք, ինչպես վարվում են սաբելականները (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. ժգ.): Տե՛ս նաև 64° Բ Ե և 81. Դ:

80 Արիոսն ուսուցանում է, թե Որդին Հորը համագո չէ, այլ արարած:

ա. Ուսուցում էր (Արիոսը) թե Որդին Հորը հավասար չէ և ոչ էլ Հոր բնությունից և էությունից է և չի ծնված Հորից նախքան որևէ ժամանակ, այլ օտար ոմն է, և արարած և կրտսեր և ժամանակի ընթացքում գոյացած (<sup>28</sup> Մ. Խորենացի, Պատմ. հատ. Բ գլ. ձթ.):

բ. Թող ամաչեն Արիոսը և նրա նմանները, որոնք չեն խոստովանում Որդուն Հորը հավասար, փառակից և պատվակից, այլ նվաստ ասելով՝ չեն զարհուրում (Խոսրով, Մեկն. ժամ.):

գ. Որդին է ասվում, քանի որ Հոր բնությունից է, նրանից օտար չէ կամ արարած՝ ըստ Արիոսի հայհոյության (Ն. Շնորհալի, Թուղթ ընդ.):

դ. Չեն բաժանվել էությունից

Բանը և Հոգին Հորից.

Մեկը ստեղծիչ չէ, մյուսը՝ արարած,

Եվ մյուսը՝ օտար պաշտոնատար,

Որպես կարծիքն է Արիոսի՝

Հեթանոսների համախոհի,

Որ աստիճանի ելևեջներով

Ներմուծեց բնությանը հավասարի (Նույն, Հավատի խոսք):

ե. Արիոսին չենք հետևել,

Որ մի բնությունը երեքի բաժանեց (Նույն, Վիպաս. նախն.):

81 Մակեդոնը ուրանում է Սուրբ Հոգու Աստվածությունը:

ա. (Մակեդոնը) Սուրբ Հոգուն չէր դավանում իբրև տիրոջ, և ոչ էլ երկրպագելի ու փառաբանելի էր համարում Հոր և Որդու հետ, այլ Աստծու բնությունից օտար, ստացական,

---

<sup>28</sup> Այս և հաջորդ հատվածները վերցված են Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1968թ. հրատարակությունից. խմբ.:

ծառա, պաշտոնյա, ոչ թե մի անձնավորություն, այլ մի տպավորություն (Մ. Խորենացի, Պատմ. հատ. Գ, գլ. ԼԳ):

բ. Թող զմռսվեն Մակեդոնն ու ամենայն հոգեմարտերը, որոնք ուրանում են Հոգու տերությունը և չեն դողում (Խոսրով, Մեկն. Ժամ):

գ. (Սատանան) Մակեդոնին Հոգու պատկերների թշնամի էր դարձնում և Նրա Սուրբ Հոգու Աստվածության ժխտուկն էր խրատում (Ն. Լամբ. Ատենաբ.):

դ. Մակեդոնը՝ չար արմատից առաջացած ամբարիշտ ու դառնապատուղ շառավիղը, ժանտաբուխ բերանով հայիոյեց Սուրբ Հոգուն՝ համարելով և՛ սպասավոր, և՛ արարած: Սուրբ Հայրերը, իրենց համախոհներով հավաքվելով Կոնստանդնուպոլսում նզովեցին նրան կյանքում ու մահվան մեջ և դավանեցին Սուրբ Հոգուն ճշմարիտ Աստված ճշմարիտ Աստծուց, որպեսզի պահպանի անձնավորությունների հատկությունը՝ ընդդեմ լիբիացի Սաբելի խառնադիմության, և դավանվի համաբնության հավասարությանը՝ ընդդեմ Արիոսի ու Մակեդոնի չարաչար ու անհավասար բաժանումների (Նույն, Մեկն. Պատ.):

82 Աշխարհի արարչագործությունը եռանձնյա Աստվածության ներգործությունն է:

ա. Տիրոջ ողորմությամբ լցվեց երկիրը, Տիրոջ խոսքով երկնքն ստեղծվեց, և նրա բերանի Հոգով՝ նրանց բոլոր գործությունները (Սաղ. ԼԳ 5-6):

բ. Արարչագործությունը հավասարապես Երրորդությունն է (Խոսրով, Մեկն. Պատարագի):

գ. Մի բնությունն Աստվածային,

Մի տերությանդ և միշտ էին,

Գերակատար եռյակ անձերիդ

Արարածների ստեղծողին

Փա՛ռք և պատիվ և գորություն (Ն. Շնորհալի, Ողբերգ):

դ. Պաշտել արարիչ (Հայր) Աստծուն, հաստիչ Որդուն և կազմիչ Հոգուն (Գ. Լուս. Ազաթ. -ի երկում):

ե. Ամենասուրբ Երրորդությունդ են երկրպագում երկնային զորքերը և անարատ ձեռքերիդ ստեղծվածները (Շարական):

զ. Օրհնում ենք քեզ, անսկիզբ Հայր, ստեղծիչ ամենայն եղածների (Նույն տեղը):

է. Անեղը՝ Հորից ծնված Որդին, անէից գոյացրեց եղածները՝ երկնային և երկրային էություններին (Նույն տեղը):

ը. Որ ջրերի վրա էր գոյացրեց արարածներին՝ չանջատված Հորից և Որդուց իշխանակից Սուրբ Հոգին (Նույն տեղը):

83 Աստված անէից կամ ոչնչից գոյացրեց ամենայն տեսանելի և անտեսանելի արարածներին:

ա. Որ քո խոսքով ստեղծեցիր ամեն ինչ (Իմաստ. Թ 1):

բ. Նրանով ստեղծվեց այն ամենը, ինչ-որ երկնքում է և ինչ-որ երկրի վրա, ինչ-որ երևում է և ինչ-որ չի երևում (Կողոս Ա 16):

գ. Հավատում ենք միայն մեկ Աստծու, ամենակալ Հորը երկնքի և երկրի երևացողների և աներևույթների արարչին (Հանգ.):

դ. Տեր Աստված սէմնէիակն է իր էությանը և ոչ մեկը չի եղել նրանից առաջ: Չկա այլ Արարիչ այն ամեն ինչի, որը երևելի և աներևույթ է:

ե. Որ անէությունից խոսքով գոյացրեց ամենայն աշխարհը (Շարակ.):

զ. Արարչագործ Աստված, որ ոչնչից գոյացրիր երկնինքն ու երկիրը (Նույն տեղը):

է. Որ Արարիչն ես հավիտյանների և ստեղծեցիր արարածներին ամենայն ոչնչից:

ը. Որ անէությունից ամեն ինչ հայտնի դարձնելով՝ ստեղծեցիր (Պատարագում):

թ. Ամենակարող անէից իշխանաբար ստեղծեցիր բոլոր էակների բովանդակ բնությունը (Գ. Նարեկ. բան Դ):

84 Աստված խնամում է արարածներին

ա. Ամենափոքրերին ու մեծերին ինքն ստեղծեց և հավասարապես խնամք է տանում բոլորի համար (Իմաստ. Ջ 8):

բ. Որ քերովբեական ու անապատում կերպով բազմում ես աթոռին և միշտ այցելում ես քո արարածներին (Շարակ.):

գ. Անսկիզբ Հայր, որ խնամում ես քո արարածներին (Շարակ.):

դ. Խնամող արարածների, քո խաչի նշանաով պահիր իմ հոգին ու մարմինը (Ժամագիրք):

ե. Հոգիդ ճշմարիտ հոգածությամբ խնամում ես քո արարածներին:

զ. Դու ես կյանք տալիս բանականներին,

Արածրածների փոփոխման կարգը նախախնամում (Գ. Նարեկ. բան ծդ):

85 Արարածները Աստծու խնամքով են գոյատևում:

ա. Նա է տալիս ամեն բանի կյանք և շունչ և ամեն ինչ: Քանի որ նրանով ապրում ենք և շարժվում ենք և կանք (Գործք ժէ 25-28):

բ. Ամեն անձի սկիզբն ու վերջը Աստված է, որ բոլորին կյանք է տհալիս և բարի գոյություն է շնորհում (Խոսքով, Մեկն ժամ.):

86 Աստծու խնամքով արարածները կառավարվում են և, յուրաքանչյուրը ուղղվում է դեպի իր վախճանը:

ա. Ուրիշ Աստված չկա, բացի քեզանից, որ խնամք է տանում ամենքի համար Արդար ես և արդարությամբ էլ վարում ես ամեն ինչ: Հայր, քո նախախնամությունն է գործում: Ամեն մի արարած վերստին նորոգվում է իր կարգի մեջ՝ ծառայելով քո հրամաններին (Իմաստ<sup>»,</sup> ԺԲ 13, 15 ԺԴ 3, ԺԹ 6):

բ. Հենց նա է և՛ իմաստության առաջնորդը, և իմաստունների ուղղիչը, որովհետև նրա ձեռքումն ենք և՛ մենք, և՛ մեր խոսքերը, և՛ բոլոր մտքերը, և՛ խելամիտ գործերը (անդ է 15-16):

գ. Նա է երկնավորներին և երկրավորներին ուղղություն տվողն ու հաջողեցնողը (այսինքն՝ ուղղիչը) (Գ. Լուս. Հաճախ. ճառ ԺԱ):

դ. Բոլոր արարածները նրա հրամանով են շարժվում, յուրաքանչյուրն ըստ կարգադրության և դասավորման (նույն, Ագաթ. -ի երկում 377):

ե. Ամեն մի կարգում ունես քո արարածները՝ ուղիղ հրամանով բաշխելով (Ժամագիրք):

զ. Որ անշարժին որպես շարժվող ես առաջնորդում (Գ. Նարեկ. բան կդ.):

է. Աստված էր, և կառավարող ամենայն արարածներին (Աթանաս, ճառ Քրիստոսի համբարձմանը):

87 Աստծու Բանի մարդեղությունը եղավ հաճությամբ Հոր և Սուրբ Հոգու:

ա. Հոր կամքով (Բանն Աստված) մտավ կույսի արգանդը և չգարշեց, որովհետև ինքն է ամեն ինչ սրբացնողը (Գ. Լուս. -Ագաթ. -ի երկում 380):

բ. Փառքի Հայրը ջանում էր ջնջել

Մեր հանցանքների պատարագը,

Որով գրած Որդին հագավ

Վեց դարի մեղքերի մարմինը (Ժամագիրք):

գ. Տեր Աստված գորությունների, Քրիստոս փրկիչ աշխարհի, որ խոստովանեցիր Հոր կամքով ու Սուրբ Հոգու հաճությամբ և մարմին առատ անարատ ու միշտ կույսից (Մեկ՝ Մաշտոց):

դ. (Որդին) Հոր կամքով և Հոգու հաճախությամբ մարմին առավ, որով չարչարվեց (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. ճառ Բ):

ե. Գթալով մեր մարմինն ընդունեց Հոր կամքով և Սուրբ Հոգու հաճախությամբ (Խոսքով, Մեկն. Ժամ.):

զ. Հոր կամքով և Սուրբ Հոգու հաճությամբ Որդին ստացավ մարմնացյալ կերպարանքը (Նույն տեղը):

է. Բանը՝ Հոր Միածին Որդին, Երրորդությունից մեկը՝ Հոր և Հոգու կամքով իջավ որովայնը կույս Մարիամի (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

ը. Նույն համագործակցության (այսինքն՝ Հոր և Հոգու) կամքով ու հաճությամբ (Որդին) ճշմարտապես մարդ եղավ (Գրիգոր Սկևռացի, ճառ հարության):

88 Բանն Աստված մարդկային բնության կամ մարմին առավ կույս Մարիամի արյունից:

ա. Հոր կողմից առաքվեցիր մեզ համար և մարմնացար Սուրբ կույսից (Շարակ.):

բ. Մարմին առար սուրբ կույսից մարդկային ազգի փրկության համար (Շարակ.):

գ. (Բանն Հոր տանելով իր արյունից ամենամաքուր կույսի Միացրեցիր Աստվածությունը (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

դ. Կույսի արյունից մարմին ձգելով՝ ստեղծվեց կենդանի և Աստծու մարմին (Նույն, Մեկն. Բարձր): Տե՛ս նաև 87. Ա, Գ, 89. Ա, Բ Դ, Զ, Է Ը 92. Զ, 125. Գ, Դ, 126. Ա:

89 Բանն Աստված, մարդկային բնությունը կամ մարմինը միավորվելով իր Աստվածային անձի և բնության հետ, եղավ կատարյալ մարդ՝ կատարյալ Աստվածությամբ:

ա. Սուրբ Որդի Աստվածը առաքվեց Աստծու կողմից, կույսից մարմին առավ (որպես) կատարյալ մարդ՝ կատարյալ Աստվածությամբ:

բ. Նա մեզ՝ մարդկանց համար և մեր փրկության համար երկնքից իջնելով մարմնացավ, մարդացավ, Սուրբ Հոգով կատարելապես ծնվեց Սուրբ Կույս մարմիամից: (հանգ):

գ. Հավիտյաններից առաջ Որդին նախահավիտյան այսօր երկրի վրա երևաց որպես Աստված և կատարյալ մարդ (Շարակ):

դ. Երեք անձնավորություններից մեկը երջանկափառ համազոր զորությամբ ի վերուստ իջնելով ներքև, պարզորեն մտավ կույսի արգանդը, մարմին առավ և այնտեղից դուրս եկավ իսկապես անբաժանելի կերպով, անթերի մարդկությամբ ու անպակաս Աստվածությամբ (Գ. Նարեկ. բան Դ):

ե. Կատարյալ Աստվածությունն առավ կատարյալ մարդկային բնություն (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

զ. Բանն Աստված կույսից առավ մեր բնությունը կատարելապես (Նույն տեղը):

է. Խառնվելով միացրեց կույսի արգանդում մեր ստեղծված բնությունը իր անեղ բնությամբ (Նույն, Թուղթ՝ գրված Ասորիքի Միջագետքում գտնվող Համայք նահանգի քահանաներին):

ը. Մարմինը, որն առավ կույսից, միավորեց իր Աստվածոմությանը (Եփրեմ, Ճառ Քրիստոսի ծննդյան առթիվ):

թ. Նա միացել է մարմնին բնությամբ և խառնել էր մարմինը իր Աստվածությունը (Գ. Լուս. Ազաթ. -ի երկուն 369):

ժ. Խառնեց-միացրեց-ընկղմեց մարմին իր Աստվածության մեջ (Նույն<sup>29</sup> տեղը, 378): ՏՀե՛ս նաև 90. Ե, Զ, 91. Ա, Գ, 92. Գ, Է:

90 Քրիստոսի մեջ երկու բնություն էր:

ա. Բանը թանձրանում է մարմնում, անմարմինը մարմնանում է՝ բնությամբ միավորվելով երկուսից (Շարակ.):

բ. (Ո՛վ տեր սուրբ Գրիգոր) մեզ սովորեցրի մարդացածի փրկարար մարդեղությունը՝ երկուսից սքանչելի մի նոր խառնումը (Նույն տեղը):

---

<sup>29</sup> Խառնել բառը մեր երանելի Հայրերը օգտագործում էին ցույց տալու համար բնության հավետ անբաժան միավորությունը Քրիստոսի մեջ՝ միակերպ հեռու լինելով, նեստորի բաժանումից և Եվտիմեոսի խառնումից: Տե՛ս Շարակնոց, Վենետիկ, 1814, էջ 308-309:

գ. Ըստ Գրիգոր Աստվածաբանի՝ կարող ենք ասել, թե չկա երկու բնություն, թե բնությունները երկուսն են, քանի որ կա Աստված և մարդ (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

դ. Կրկնակլ էր, ոչ տարբեր անձեր այլ՝ նույ ինքը միաժամանակ Աստված և մարդ (Հովհաննես Վ. Սարկավագ, Հանգանակի բացատր.):

ե. Որովհետև որպես ճշմարիտ մարդ և ճշմարիտ Աստծու Որդի խոստովանեց (հարյուրապետը Քրիստոսին) ուղիղ մտքով՝ ըստ ավետարանիչների, հաստատեցե, որ Քրիստոսը կատարյալ Աստված է և կատարյալ մարդ, երկու բնություն մի անձ, մի դեմք, մի որդի Հայր Աստծու և կույս մոր (Բարսեղ Վ. Ճոն. Մեկն. Մարկ. ճառ լը.):

զ. Ունի կատարյալ կրկնակի բնություն, որպեսզի չկորցնի երկուսին էլ երկրի վրա կես Աստված չերևաց և ո՛չ երկինք բարձրացավ որպես կես մարդ, Աստծուց՝ Աստված և կույսից՝ Քրիստոս (Եփրեմ, Մարգարիտ):

է. Քրիստոսը թե մարդ էր, որպես երևում էր, թե Աստված էր, որ չէր երևում (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ ընծ. գլ. Դ):

ը. Կրկնակի էր, ըստ որում աշխատեց և՛ վախեցավ, և՛ արտասվեց, և՛ քաղցեց և՛ ծարավեց մարմնի օրենքներով (Գ. Աստվածաբան, ճառ Աստվածհայտն և Ծննդ.): Տե՛ս նաև 91. Գ, 92. Գ, Դ, ԺԱ 93. Զ, 95. Ա, Բ Է Թ, ԺԱ:

91 Քրիստոսը մեկ անձ էր կամ մեկ դեմք:

ա. Եղավ կատարյալ Աստված, կատարյալ մարդ հոգով և մտքով և մարմնով, մի անձ, մի դեմք (Ժամագիրք):

բ. Միացավ մեկ պատկերի մեջ առանց բաժանվելու (Եփրեմ, ճառ Այլակերպ):

գ. Բանն Աստծու մարդ եղավ՝ կատարյալ լինելով Աստվածությամբ և կատարյալ մարդկությամբ, երկու բնություն մի անձում միավորված (Շիրակավանի ժողովի Սահմ. «Պատմ. Հայ.», հատ Բ էջ 686):

դ. Քրիստոսը չառավ մարդկային անձը, այլ բնությունը, և նա երկուսի չի բաժանվում՝ ըստ Նեստորի (Նույն): Տե՛ս նաև 90. Ե, 92. Գ, Դ:

92 Աստվածային և մարդկային բնությունները Բան Աստծու անձում միավորվեցին անբաժանաբար և անշփոթապես:

ա. Հորն էակից Որդին քո հողավոր մարմինը խառնեց իր անբաժանելի Աստվածային բնությանը (Գ. Նարեկ. Ներբող Աստվածածնին):

բ. Բանն Աստված մերը բնությունը միավորեց անքակտելիորեն (Հովհնան իմաստասեր, ճառ ընդդեմ երևութարկանների):

գ. Երկու կատարյալ բնության Աստվածայինից և մարդկայինից (Եղավ) մի անձնավորություն կատարյալ անփոփոխ և անբաժանելի բնությամբ (Ն. Շնորհալի, Թուղթ գրված Ալեքսին):

դ. Նոր խառնում եղավ երկու անբաժանելի բնության՝ Աստծու և մարդու, միավորված մի անձում (Նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

ե. Աստծու Որդին՝ Բանն Աստված անշփոթ և անբաժանելի միավորվեց մարդկային մարմնում և մնաց նույնինքը անժամանակ Աստված և ճշմարիտ մարդ (Շիրակավանի ժողովի Սահմ. «Պատ. Հայ.», հատ. Բ էջ 686):

զ. Ստուգատես և առանց երևկայության մարդ եղավ՝ անխառն միավորությամբ մարմնանանալով Աստվածածնից և սուրբ կույս Մարիամից (Խորհրդատետր Պատ):

է. Եղավ ճշմարիտ մարդ և կատարյալ Աստված՝ անխառն միությամբ: (Մեծն Մաշտոց):

ը. Եռամյա էությունից խառնվելով (Աստվածությամբ, բանական հոգով և սմարմնով)՝ միավորվեց (Գ. Նարեկացի, Ներբող Աստվածածնին):

ը. Բանն Աստվածային բնությունը անխառն կերպով խառնվեց մեր բնությանը (Շարակ.):

ժ. Այն, որ հավետ անմարմնական

Եվ եղածների արարչական,

Խառնվում է մեզ անշփոթաբար

Եվ միանում անճառաբար ՀՆ. Շնորհալի, Հավատի խոսք):

ժա. Նոր Ադամը հին Ադամին որդիացավ,

Կույսից Աստված և մարդ նոր առաջացավ,

Երկակին անճառապես հույժ միացավ (Նույն, «Միրշտ Էիդ» սկզբնատողով տաղից):

ժբ. (Բանն Աստված) առավ մեր բնությունը և միացրեց իր Աստվածային բնությանը անխառն ու անբաժանելի միավորությամբ (Նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին): Տե՛ս նաև 93. Զ, 97. Զ:

93 Աստվածային և մարդկային բնությունները Բան Աստծու անձում միավորված էին և են միշտ անքակտելի ու անբաժան:

ա. Սակայն թեպետև մարմին հագնվեց և իջավ մեր նմանությանը, այնուհանդերձ մնում էր իր Աստվածային հայրենի բնության փառքում, ինչպես և էր իսկապես և է և կա հավիտյան իր հոր բարձրունքներում, ի՞ծ բնության մեջ, մեր մարմնով (Գ. Լուս. Ագաթ. ի երկուն 381):

բ. Որպես նրա Աստվածությանը սկիզբ չկա, այնպես էլ նրա մարկությանը՝ վախճան, որովհետև Հիսուս Քրիստոսը երեկ և այսօր նույն է և հավիտյան (Ժամ.):

գ. Մեկ ամբողջական բնության չբաժանվեց, Էն (Քրիստոսը խմբ.) երկուսից է, միությանը չբաժանվեց (Ն. Շնորհալի «Միրշտ Էիդ» տաղից):

դ. Իսկ էությունն Աստվածական,

Առնելով մեր բնությունը նյութական,

Անքակտելի է ու միակը

Որովայնից մինչև հավիտյան (նույն, Հավատի խոսք):

ե. Օ՛, նոր զարմանք, որ եղավ սուրբ խաչին:

Ջինվորները նրա (Քրիստոսի) պատմուճանը չպատռեցին, իսկ հերետիկոսները ցանկանում են պատռել Աստծու Որդուն և երկու մասի բաժանել այն, որն անքննելի է ու անբաժանելի (Դիոնեսիոս եպիսկոպոս Ալեքսանդրացի, մեծ ուծրբաթ օրը):

գ. Այս երկու անունները (այսինքն՝ Հիսուս, Քրիստոս անունները) մեզ նկարագրում են բնությունը՝ Աստվածայինը և մարդկայինը՝ միմյանց միացված անխառն և անանջատելի (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Հովհ. ճառ Ը): Տե՛ս նաև 91. Բ 92. Ա, Բ Գ, Դ, Ե:

94 Աստվածային և մարդկային բնությունները Բանն Աստծու անձի մեջ միավորվելիս անկորուստ ու անփոփոխ մնացին յուրաքանչյուրի հատկությունները:

ա. Մարմնով կույսից ծնվեց և մարդացավ և մարմնացավ մեզ նման Իր Աստվածությունը փոփոխում չկրեց, այլ նույնն է, ինչպես որ էր, է և կա ու կմնա հավիտյան Հոր և Սուրբ Հոգու հետ (Գ. Լուս. Ազաթ. երկում 80):

բ. Անհեղապես մարմնացար կույսից Հոր էակից Բանդ (Նույն տեղը):

դ. Որ անմարմին բնությամբ քո Աստվածության Տե՛ր, միացար մարմնով կույսի արգանդում մնալով անփոփոխ (Նույն տեղը):

ե. Քրիստոսը սոսկ մարդկության անուն չէ, այլ ասվում է Աստված և մարդ, այսինքն՝ երկուսը միացած անխառն ու անպատմելի, ոչ որպես ջուրն է գինու հետ խառնվում, երկուսին էլ զրկելով իրենց բնությունից, որովհետև ո՛չ ջուր է, ո՛չ գինի, այլ Աստվածային բնությունը մարմնին միավորվելիս երկուսի հատկությունն էլ անխառն պահեց, որպես մարդու հոգին մարմնում, թեպետև հատուկ ապացույց չկա, քանի որ Բանն աստծու մարմին լինելը ավելի բարձր է, քան մարդկային մտքի կարողությունը (Խոսրով, Մեկն. ժամ.):

զ. Մարմինը չունի ինչ որ բնություն, իսկ Բանը՝ բնության նյութականությունը, որովհետև երկուսն էլ ոչ մարդկային են, ո՛չ աստվածայիտն ըստ Բնության նույնությամբ մեկ այլ բնություն չկա, որովհետև եթե ասենք, թե մի բնություն է Բանի մեջ մարմնացած կլինի ոչ խելահեղ ու կցկտուր մտհածողությամբ, որպես թե մեկը վերցրել է մյուսից և կամ չեզոքացրել են միմյանց, որպես ներծծվող բնությունները, որոնցից չի առաջանում ոչ մի բնություն: Այլ ինչ-որ էր (Աստվածային բնությունը խմբ.) չկորցնելով եղավ այն, ինչը չէր (նկատի ունի մարդեղությունը խմբ.) (Հովհան հիմաստասեր, ճառ ընդդեմ երևութականների):

է. Խոստովանում ենք, որ Աստծու Որդին Բանն Աստված է կատարելապես առնելով իր բնությունը՝ հոգին և մոարմինը և միտքը, մարմինը չփոխեց անմարմնությամբ և ոչ Բանն Աստված փմխեց իր անփոփոխ բնությունից, այլ մարմնավորեց մարմնում անխառն ու անբաժան (Տայքի Սահակ եպիսկոպոս՝ Մռվան անունով, Թուղթ՝ գրված ի պատասխան Փոսի թղթի):

ը. Բանն անմարմին ըստ էության

ճշմարտությամբ եղավ մարմին՝

Իրենը պահելով անփոփոխ

Եվ մերն առնելով ստույգապես:

Նոր է այս սքանչելի խառնումը.

Աստված մածրդու հետ բնությամբ է խառնվում,

Բայց էությունը չի փոխում,

Եվ ոչ էլ ձևով է նմանվում

Որպես ասաց ծանր Եվտիքեսը,

Թե իսկապես մարմին չառավ,

Այլ մտքով անցավ կույսի միջով`

Խողովակի նմանվելով (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

թ. Չփոխելով մարդկային թանձր ու նյութական բնությունը անմարմին ու աննյութական Աստծու բնությամբիբերը կորցնելով և պարզ անմարմնական Աստծու բնությունը չխառնելով մարդու բնությանը հավետ շեղվեց իր պարզությունից, թեև ասվում է անմարմինը մարմնացավ և Բանը թանձրացավ` անքակտելի միավորման համար (Նույն, Թուղթ` գրված Ալեքսին):

ժ. Աստծու Որդին մարդու Որդին եղավ և կոչվեց, չփոխվեց Աստվածային բնությունից և ոչ տարբեր մարդկային գոյացությունից, այլ Աստվածության ու մարդկության անճառելի միությունը մնաց անփոփոխելի (Նույն, Թուղթ` գրված Մանվել կայսրին):

ժա. Էությունների հատկությունը միևնույն է: Չփոփոխվեցին բնությունները, որովհետև միացան Միության մեջ են երևում հատկությունները, իսկ հատկությունների մեջ` միությունը (Ն. Լամբրոնացի, Մեկն. Հովհաննեսի հանգստյան, որի սկիզբն է «Եղբայրների հետ էր»):

ժբ. Էն Աստված եղավ, այն ինչ որ չէր (այսինքն մարդ խմբ.) և մարդ եղավ` գրկվելով Աստվածությունից ու չխաթարվելով բնությունից. եղավ մարդ և մնաց Աստված (Գ. Սքանչ. Ծննդյան ճառը):

ժգ. Բանը մարմին եղավ: Ոչ թե մարմնի փոխվեց` կորցնելով անմարմին բնությունը, քա՛վ լիցի, այլ մարմնի մեջ բարձրացավ և իր անմարմին բնությունից չանջատվեց (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Հովհ. ճառ Ա):

ժդ. Մարդ եղավ, բայց մարմնի չփոխվեց` չկրելով խառնում և խառնակություն կամ մեկ այլ բան (Կյուրեղ Ալեքսանդրացի, Թուղթ` ընդդեմ Նեստորի, «Պարապ գրքում, էջ 303):

ժե. Իսկ որտեղի՞ց ելավ, ո՞ր դժոխքը ժայթեց. Պետք է ասել, որ Աստվածության Բանիտ մարմինը Մարիամից է, կամ էլ` Բանը դարձավ մարմին, ոսկորներ ու մազ, բայց չփոխեց իր բնությունը (Աթանաս, Թուղթ` գրված Եպիսկոպոսին: Կյուրեղ Ալեքսիս. «Պարապ.» գրքում, էջ 492):

ժզ. Բանը մարմին եղավ և ոչ թե իջնելով փոխվեց մարմնի, այլստացավ և իրենն ընդունեց` մնալով անեղծ, անարատ էությանը (Ոսկեբ. Մեկն. Հովհ. Պատ.):

ժը. Միացավ մարմնում անխառն, որովհետև ո՛չ փոխվեց և ո՛չ էլ վերացրեց Աստվածային կամ մարդկային բնությունները, այլ միացրեց` մնալով նույն Աստվածը և նույն մարդը: >Ինչպես որ Բանն Աստված մարմին եղավ, այդպես էլ կույսից մարմնացավ` մնալով Աստված, և նույն իտնքը` Աստված և մարդ: Եվ Մարիամը, որ ծնեց Բանն Աստծուն, եղավ Աստվածածին և կըույս (նույն տեղը):

Ժթ. (Սուրբ Հայրերը) խոստովանեցին մի տեր Հիսուս Քրիստոս որպես անխառն, անփոփոխելիանձուլելի և իր բնության ու էության մեջ մնացած (Ս<sup>0</sup> Շնորհալի, Մեկն. Բ Պետ, առաջաբանում):

95 Ըստ առաջին Հայրերի ուղղափառ դավանանքի՝ մարմնացած Բանի բնությունը ուղղամտորեն կարելի է ասել և՛ մեկ, և՛ երկուս:

ա. Պայծառ Սուրբ Հայրերը առանց երկնչելու (համարձակորեն ցույց տալով) ասում էին, Քրիստոսը երկու բնություն ունի՝ Աստվածային և մարդկային: «Երկու բնություն առնելով՝ հասկանում էին Աստված և մարդ նաև ասում էին, թե՛ Քրիստոսը ունի հավաստի երկու բնություն»: Երկու ասելով ոչ թե հրաժարվում էին մեկը ասելուց, կամ թե դրան հակառակ մեկն ասելով՝ հրաժարվում էին երկուսը խոստովանելուց, այլի համարձակորեն այս փառավորության ջանքերով փայլելով պայծառանում էին Քրիստոս քարոզելով ըստ բնության՝ երկու և ըստ միավորության՝ մեկ (Հովհ. Իմաստասեր, ճառ ընդդեմ երևութականների):

բ. Առաջնորդ ունենալով նրանց (այսինքն՝ ուղղափառ վարդապետներին) ճշմարտության ճանապարհին, որը տանում է առ Աստված, ուղիղ և ազատ կերպով գալիս ենք կրկին քննության, ասելով մեկ բնություն մարմնացած Բանի՝ ըստ սուրբ Կյուրեղի<sup>30</sup>՝ անպատմելի միավորության համար և երկուս՝ ըստ Գրիգոր Աստվածաբանի<sup>31</sup>՝ Աստվածային և մարդկային բնությունների անկորուստ ու անփոփոխ լինելու համար (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

գ. Մեկն է մեր տեր և փրկիչ Հիսուս Քրիստոսը՝ մի բնությամբ եղած կույսից ո՛չ ուրանում են բնությունը և ո՛չ էլ բաժանում միավորությունը (Աթանաս, Գովեստ կույսին):

դ. Չխառնենք և չանջրպետենք, քանի որ խոստովանում են միությունը և ոչ թե այս բնության քայքայումը կամ լուծարումը այն բնությանը կամ ընդհակառակը, այլ ասում են միացած և մեկ դարձած<sup>32</sup> (Ոսկեբ. Մեկն. Պողոսի թղթ. Փիլիպ. -ին):

ե. Բանի բնությունը չփոխարկվեց մարմնի բնության (ըստ հունականի՝ բնությունը փոխվեց) և ոչ էլ մարմնինը՝ նրան, այլ հատկության մեջ, ըստ յուրաքանչյուրի բնության, երկուսից էլ մնաց ու ճանաչվեց՝ ըստ մեզ ավանդված այն խոսքի, թե Որդու բնությունը մեզ ցույց տվեց անպատմելի ու անասելի միավորումը<sup>33</sup> (Կյուրեղ Ալեքս. Երկրորդ թուղթ՝ գրված Սուկեստոսին կամ Սեկանդոսին, «Պարապ.» գրքում, էջ 418):

<sup>30</sup> Սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացու խոսքը այս է. «Միավորվելուց հետո բնությունները միմյանցից չենք անջատում և ոչ էլ երկու որդու ենք բաժանում մեկին ու անբաժանելիին, այլ ասում ենք մեկ Որդի, և ինչպիսես Հայրերն ասացին՝ մարմնացած Բանն Աստված մի բնություն ունի (Սգեկունդոսին գրած թղթում):

<sup>31</sup> Գրիգոր Աստվածաբանի խոսքը, որ բերեցինք այստեղ և վերևում, 90. գ., այս է. «Բնություններն երկուսն են, քանի որ Աստված է և մարդ» (Առ որս, գլ. Թ Կղեդոնիոսին գրած թղթում):

<sup>32</sup> Այս վկայությունը բերում է նաև Հովհան Իմաստասերը իր «Ընդդեմ երևութականաց» ճառում, էջ 26, ըստ Վենետիկի 1816թ. տպագրության:

<sup>33</sup> Հովհան Իմաստասերը այս վկայությունը բերում է իր «Ընդդեմ երևութականաց» ճառում:

գ. Խոստովանում եմ նրան Աստծու Որդի. Աստված՝ ըստ հոգու և Մարդու Որդի՝ ըստ մարմնի և ոչ երկու բնությունները մեկ Որդի, մեկը երկրպագել, մյուսը աներկրպագելի, այլ մարմնացած Բանն Աստծու մեկ բնություն (Աթանասի խոսքն է, որի վկայությունն է դիմում Կյուրեղ Ալեքս. Թեոդոսի Արկադիա և Մարինա քույրերին գրված թղթում: Տե՛ս «Պարապ.» գրքում, էջ 208):

է. Ասում ենք, որ միավորվել է երկու բնություններից, իսկ միավորվելուց հետո հավատում ենք Որդու մեկ բնության գոյությանը, սակայն որպես մարմնացածի և մարդացածի (Կյուրեղ Ալեքս. Թուղթ՝ գրված Ակակիոսին):

ը. Խոստովանելի է Բանի մեկ բնությունը, և գիտենք, որ մարմնացավ, մարդացավ Արդ՝ երբ միավորության եղանակն է քննվում, մարդկային միտտքը տեսնում է անպատմելի ու անխառն կերպով ամեն ինչում իմնյանց միացած երկու բնության, սակայն միավորված և բնավ չի զատում, այլ երկուսից մեկն է ընդունում (Նույն տեղը):

թ. Մի՛ բնության ձևը, որ մենք ասում ենք, թող ոչ ոք այլ կերպ չկարծի, այլմիայն երկու բնությունից անբաժանելի կերպով միավորված բնություն (Ն. Շնորհալի, Թուղթ Մանվել կայսրին):

ժ. Եվ այսպիսով մենք բնություն ենք ասում,

Ըստ անձառելի խառնվելու,

Ինչպես որ մեր հոգին ու մարմինը

Մեկ բնության մեջ են հավաքվում (Նույն, Հավատի խոսք):

ժա. Դարձյալ երկու բնություն ասել՝

Երկուսից միավորված լինելու համար.

Սա օտար ճշմարտություն չէ,

Եթե մեկը երկուսի չբաժանեն (Նույն տեղը):

Տե՛ս նաև 90. Ա, Բ Գ, Դ, Ե, Զ:

96 Բանն Աստված մարդանալու ժամանակ ոչ միայն մարմինն առավ, այլև բանական հոգին ու միտք

ա. Որով առավ մարմինը, հոգին և միտքը և այն ամենը, որ ունի մարդը ճշմարտապես և ոչ կարծեոք: (Հանգ.):

բ. Աստծու Որդուն խոստովանում ենք Բանն Աստված կատարելապես ստացած մեր բնությունը՝ հոգին, և մարմինը և միտքը (Տայքի Սահակ եպիսկոպոս՝ Մռվյան անվանյալ, Հունաց Փոտ պատրիարքին գրված թղթում):

գ. Բայց մենք այսպես ենք խոստովանում,

Աստվածայիններին ենք հետևում,

Թե հոգին մարմինը և միտքը,

Որոնցով մեղք գործեց մարդկային ցեղը,

Մեզանից առավ Բանն Աստված

Եվ բնությամբ միացրեց իր մեջ (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

դ. Կատարյալ Աստվածությունը առավ մարդկային կատարյալ բնությունը՝ հոգին և միտքը և մարմինը (Նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

ե. Միայն մարմին չստացավ առանց բանական հոգու, այլ ճշմարտապես ծնվեց կնոջից և երևաց որպես մարդ՝ կենդանին ու Աստվածը, Հոր մշտենջենակից Բանն Աստիված. ստացավ ծառայի կերպածրանքը (Կյուրեղ Ալեքս. Թուղթ՝ գրված Թեոդոսին, «Պարապ.» գրքում էջ 249):

զ. Բանն Աստված անքակտելի իր հետ միացրեց մեր բնությունը: Երբ ինքն էր կամենում, այն ժամանակ ակնարկում էր իր մարմնին՝ նախ ընդունել բանականները՝ ճշգրտելու համար մաքողջը՝ մարդկային հոգին և մարմինը իր հետ միավորելը (Հովհ. Իմաստ. ճառ ընդդեմ երևութակ.): Տե՛ս նաև 170. Բ Գ:

97 Բանն Աստված իր մարդեղությամբ հանձն առավ մեր բնության բոլոր անպախարակելի հատկանիշները, բայց դրանք կրում էր առանցհանցանքի կամ մեղքի և միայն այն ժամանակ, երբ ինքն էր կըամենում:

ա. Աստծու Որդին կամավոր մարմնացավ և հանձն առավ մեր մարդկային բնության բոլոր հատկությունները (Գ. Լուս. Հաճախ. ճառ):

բ. Կրեց մարմնի և հոգու բոլոր հատկությունները, բացի մեղքերից (Նույն գրքում, ճառ ԺԴ):

գ. Անըմբռնելին մարմին առավ և մարմնի բոլոր հանգամանքներով հանձն առավ իր կամքով, Ոչ որևէ մեկի բռնադատությամբ, այ իր սեփական և ինքնիշխան կամքով կրեց այն (Նույն, Ագաթ. - ի երկում 379):

դ. Ճանապարհորդեց այս աշխարհի մարդկային բոլոր նեղությունների հետ առանց մեղքի (Խորհուրդ Պատ.):

ե. Անցավ մարդկային բոլոր նեղությունների, բացի մեղքից (Խոսրով, Մեկն. Ժամ):

զ. Աստծու Որդուն համարում ենք Բանն Աստված կատարելապես ստացած մեր բնությունը մարմինը չփոխելով անմարմնությամբ, և ոչ էլ Բանն Աստված փոփոխվեց իր անփոփոխելի բնությունից, այլ միավորվեց մարմնի մեջ անխառն և անբաժան՝ կամավոր կերպով կրելով մարդկային բոլոր նեղությունները, բացի մեղքից (Տայքի Սահակ եպիսկոպոս՝ Մովան անվանյալ, Թուղթ՝ գրված Հունաց Փոտ պատրիարքին: Այս թղթի օրինակը տե՛ս «Բացատր. շարականի» մեջ, էջ 305):

է. Առնելով մեր բնությունը՝ վարժեցրեց իր հրաշափառ ներգործություններին՝ անձամբ կրելով մեր անպախարակելի թերությունները, մեղքերից բացի, որը մեզ համար անպատելի անհիմանալի է (Ս. Շնորհ. Մեկն. Բ Պետ. առաջաբան):

ը. Մարմնին թույլ տվեց կրելու ամեն ինչ, բացի մեղքերիտն հետևելուց, այն է՝ քաղցը, հոգնությունը, տրտմությունը, երկյուղը (Իգնատիոս Վ. Մեկն. Դուկ. ԻԲ 42):

թ. Փրկիչը սրանցով (այսինքն՝ մարդկության բնական պահանջներով, ինչպիսիք են՝ քաղցը, ծարավը, քունը, աշխատությունը և այլն) կենցաղավարեց մարդկանց հետ որտեղ որ կամեցավ,

երբ, որքան և ոչ թե օտար ձևով կամ ինչ-որ ստվերում, այլ ճշմարտությամբ (Հովհ. Իմաստասեր, Ճառ ըննդեմ երևութակ.):

ժ. Ըստ իր մարմնի պահանջի, որ մեզանից ընդունեց, մեր նեղությունները կրեց և ոչ թե ըստ Աստվածության Որովհետև եթեա Քրիստոսը հնարավորություն ունենար ըստ Աստվածության կրելու մարդկայինը, ապա մարմին ընդունած չէր լինի կույսից և մեր բնությունից (Նույն տեղը):

ժա. Դարձյալ (Սուրբ Գիրքը) հայտնում է, որ ինքը կրքին ակամա չէր հետևում, ինչպես մենք, այլ կրքերն էին ծառայում նրա կամքին, և դա ոչ ժուժկալությամբ՝ ըստ առաքինների, այլ իշխանաբար՝ ըստ Աստվածության: Եվ հայտնի է այն քաղցից, որի մասին գրում է ավետարանիչը, թե «քառասունքը լրանալիս քաղցածացավ»<sup>34</sup>: Քանզի այն ժամանակ քաղցածացավ, երբ թույլ տվեց իր բնությանը կրելու իրենը՝ փորձողի համարձակության համար (Ն. Շնորհ. Թուղթ՝ գրված Ասորիքի Հակոբ եպիսկոպոսին Մելիտինեում):

ժբ. Հոգու և մարմնի կարիքները, որոնք մեղքերից դուրս են, հանձն առավ կենարարը: Ըստ մարմնի քաղցեց, ծարավեց, հոգնեց, մնջեց և դրանով ոչ թե Աստվածությանը թշնամի դարձավ, այլ ճշմարտությամբ հայտնի դարձրեց մարմնի բնությունը: Նույնպես և ըստ շնչի (ըստ հոգու) երկնչեց, հոգ տարավ, տրտմեց, և դրանք մեղքի տարրեր չէին, այլ մարմնի բնության ծանուցիչներ (Սեբերիանոս, Ճառ Բ Փրկչի տնօրինությանը):

ժգ. Տերն ինչպես որ հանձն առավ քաղցը, այնպես էլ հաստատուն կերակուրը սպառելու և մարմնի խոնավությունը ծախսելու համար ընդունեց ծարավը, մկանների և ջղերի պրկման ժամանակ ճամփորդելիս հոգնեց՝ ոչ թե Աստվածության վշտերի տակ ընկնելով, այլ ընդունելով մարմնի տառապանքները, որոնք միանգամից հետևեցեին իր բնությանը, այդպես էլ արտասուքները հանձն առավ՝ մարմնին թույլ տալով հանդիպելու բնական տառապանքների (Բարսեղ, Ճառ գոհության):

ժդ. Միածինդ Հորից, Աստվածդ Աստծուց, անարատ առանց ապականության ճանապարհորդեցիր մարդկանց բոլոր կրքերի հետ (Մեկն. Մաշտոց):

ժե. Որ մարդկության կատարյալ բնությունն

Ստացավ Բան Աստված,

Նա Պարտավոր էր իր մեջ կրելու

Մարդեղության երկյուղն ու տրտմությունը (Շարակ.):

ժզ. Սուրբ Գիրքը սովոր է այս կյանքը ճանապարհ կոչելու, որի հետ, ասում է, Քրիստոսը կյանք անցկացրեց և չմեղանչեց՝ կրելով մարմնի բոլոր նեղությունները, այն է՝ ծնվեց, սնվեց, քաղցեց, ծարավեց, աշխատեց, կերավ, խմեց, հագնվեց, հոգ տարավ, տրտմեց, արտասվեց և այն ամենը, ինչ հատուկ է մարմնին, հանձն առավ (Խոսրով, Մեկն. Պատ.): Տե՛ս նաև 98. Դ:

<sup>34</sup> Մատթևոս 4, 2, Ղուկաս 4, 2. խմբ.:

98 Քրիստոսի մեջ կա Աստվածային և մարդկային կամք, ինչպես նաև Աստվածային և մարդկային գորություն:

ա. Նրանում տեսնվում է և (մարդկային) կամքը, որը բնական հոգու շարժումն է, տեսնվում է և մարմնի ներգործությունը, որպեսզի հայտնի լինի մեր փրկությունը աշխատանքով և ոչ թե գորությամբ (Գրիգորիս Դ կաթողիկոս, Թուղթ՝ գրված հռոմ. եկեղեցուն):

բ. Ըստ մեր կամքի օրինակի, որ ասացինք մի անձնիշխան կամքից Աստվածության երկուսի լինելը, առանց իրար հակադրվելու՝ Աստվածայինը և մարդկայինը, հավատում ենք (երկուսի) Աստվածային և մարդկային ներգործությանը՝ այնտեղ միավորված և ոչ թե բարձրագույնը միայն աստվածությանը տալով՝ առանց մարմնի և ոչ էլ խոնարհագույնը՝ մարդկությանն առանձին, առանց Աստվածայինի, այլ մի անձնավորության համար այս երկուսն ենք խոստովանում, երբեմն որպես Աստված՝ Աստվածայինը ներգործելով, երբեմն որպես մարդ՝ մարդկայինը (Ն. Շնորհալի, Թուղթ դավանության՝ ուղարկած Մանվել կայսրին):

գ. Նույն ինքն էր, որ ներգործում էր, Աստվածայինը՝ աստվածաբար, մարդկայինը՝ մարդունման մեր փրկության համար, որովհետև Աստված էր և մարդ (Գրիգ Դ. կաթողիկոս Հռոմի եկեղեցուն գրված թղթից):

դ. Ոչ թե էությունը էության մեջ բնակվեց, այլ Բանն Աստծու մի էություն, որ եղավ մարմինն, երբեմն կրում էր մարդկային հատկանիշները, որպես մարդ, երբ թույլ էր տալիս մարդկայիտն հոգուն կամ մարմնին կրելու յուրաքանչյուրը, այն է՝ քաղցելը, ծարավելը, ննջելը, հոգնելը, արտասվելը, տրտմելը, երկնչելը, չիմանալը և մնացած բոլորը: Եվ երբ կամենում էր, Աստվածայինն էր հայտնվում բազմապատիկ հրաշքների և Աստվածավայել գորությունների միջոցով: Ոչ երբեմն որպես տկար մեկը կրում էր նեղությունները և ոչ էլ երբեմն ավելի հզոր էր երևում, ինչպես որ բաժանում են բաժանողները, արտասվելը և սրա նմանները մարդուն վերագրելով, իսկ Ղազարոսին և այլոց հարություն տալը՝ Բանն Աստծուն, այլ միության մեջ միավորվածը (ըստ տպագիր օրինակի՝ մի բնության մեջ) կրում էր յուրաքանչյուրը, երբ կամենում էր. մարդկայինը՝ որպես մարդ, որովհետև մարդ էր, և Աստվածայինը՝ որպես Աստված, քանզի Աստված էր (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գծրված Ասորիքի Համայնք նահանգի քահանաներին): Տես նաև 99. Ա:

99 Քրիստոսի մեջ Աստվածային և մարդկային կամքը միմյանց չէին հակառակում, այլ միշտ մարդկայինը հետևում է Աստվածայինին:

ա. (Քրիստոսի) Աստվածային և մարդկային կամքը միմյանց հակառակ չենք ասում, որպես թե Աստվածային կամքը մարդկայինին հակառակ, կամ մարդկայինը Աստվածայինին, այլ երկու կամքն էլ մի էությունից են ելնում տարբեր ժամանակների համար, երբեմն Աստվածայինը երբ կամենում էր ցույց տալ Աստվածային գորությունը, և երբեմն մարդկայինը, երբ կամենում էր հայտնի դարձնել մարդկային խոնարհիությունները (Ն. Շնորհալի, Թուղթ դավանության՝ գրված

Մանվել կայսրին): Բ Ոչ թե մարդկային կամքը բռնիադատում էր Աստվածայինը այլ մարդկայինը հետևում էր Աստվածային կամքին (Նույն տեղը):

բ. Ոչ թե մարդկային կամքը բռնադատում էր Աստվածայինը, այլ մարդկայինը հետևում էր Աստվածային կամքին (Նույն տեղը):

գ. Կամենում էր կատարել ըստ աստվածության, որի համար էլ Աստվածության կամքը ենթարկում էր մարմնականին և ասում էր՝ ոչ թե թող քո կամքը լինի (Գրիգոր Դ կաթողիկոս, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին): Տե՛ս 99. Դ:

100 Բանն Աստծու մարդեղությունից հետո Նրան տրվեցին Հիսուս, Քրիստոս, Մեսիա, Էմմանուել անունները:

ա. Նրա անունը Հիսուս դրվեց, ինչպես հրեշտակի կողմից կոչվել էր (Ղուկ. Բ 21):

բ. Որից (այսինքն՝ Մարիամից) ծնվեց Հիսուս, որ անվանվեց Քրիստոս (Մատթ. Ա 16):

գ. Գիտես, որ Մեսիան՝ Քրիստոս կոչվածը, կգա (Հովհ. Դ 25):

դ. Նրան պիտի կոչեն Էմանուել, որ նշանակում է Աստված մեզ հետ (Մատթ. Ա 23):

ե. Նա, ով Հիսուս, որ է՝ Փրկիչ, Քրիստոս, որ է՝ Օծյալ Տեր, առաքյալ (Ն. Լամբ. Մեկն. Առակ. գլ. Լ):

101 Հիսուս թարգմանվում է Փրկիչ, Քրիստոս և Մեսիա՝ Օծյալ, իսկ Էմմանուել՝ Աստված մեզ հետ:

ա. Հիսուս անունը եբրայերենից հայերեն Փրկիչ է թարգմանվում (Խոսրով, Մեկն. Ժամ.):

բ. Հիսուս Քրիստոս ասելիս Փրկիչ և Օծյալ է հասկացվում (Նույն տեղը): Տե՛ս նաև 100. Դ, 104. Գ, Դ:

102 Հիսուսը եբրայերեն բառ է: Տե՛ս 101. Ա:

103 Քրիստոսը Աշխարհ եկավ մարդկային ազգը փրկելու մեղքերից, դժոխքի դատապարտությունից և անցյալի իշխանությունից:

ա. Նա պիտի փրկի իր ժողովրդին՝ իր մեղքերից (Մատթ. Ա 21):

բ. Մարդու Որդին չեկավ ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և իր անձը տալու որպես փրկանք շատերի փոխարեն (Մատթ. Ի 28):

գ. Քրիստոս Հիսուս աշխարհ եկավ՝ փրկելու մեղավորներին (Ա Տիմ. Ա 15):

դ. Փրկություն ունենք Նրա արյամբ և մեղքերի թողություն՝ Նրա մարմնով (Կողոս. Ա 14):

ե. Կատարյալ դառնալով՝ բոլոր իրեն հնազանդվողներին հավիտենական փրկության պատճառ դարձավ (Եբր. Ե 9):

զ. Հայրն ուղարկեց Իր Որդուն՝ աշխարհի Փրկիչ լինելու (Ա Հովհ. Դ 14):

է. Նա փրկեց մեզ խավարի իշխանությունից (Կողոս. Ա 13):

ը. (եկավ) ժողովրդին փրկելու ոչ թե հայտնի պատերազմներից, որ լինում են աշխարհում, այլ մեղքերից ու ապականությունից (Ս. Շնորհալի, Մեկն. Հակ. ճառ Ա):

104. Օծում կամ օծություն է ասվում Աստվածային Բանի մարմնական միավորումը մարդկային մարմնին:

ա. Որ խոնարհվեցիր դեպի մեզ նվիրագործված անուն Աստծու օծյալ, խառնելով օծյալ մարդկային բնություն ստացար (Շարակ.):

բ. Որ անձառ Աստվածությամբ օծեցիր քո ծառայական նկարագիրը, այսօր հաճեցիր մեղավորներից յուղով օծվել (Նույն տեղը):

գ. Քրիստոս անունը օծյալ է կոչվում, այսինքն՝ Աստված և մարդ, որովհետև Բանը մարմին եղավ և Աստվածությամբ օծեց մարմինը (Խոսրով, Մեկն. Ժամ.):

դ. Քրիստոսը սոսկ մարդկության անուն չէ և ոչ լոկ Աստվածության, այլ Օծյալ է թարգմանվում, այսինքն՝ Աստված և մարդ, նրա համար, որ իր Աստվածությամբ օծեց մարդկությանը (Նույն տեղը):

ե. Աստվածությունը՝ միավորված մարդկության հետ, Օծյալ է անվանվում (Ն. Լամբ. Մեկն. Պատարագի):

զ. Նրա Աստվածությունը իր եղությունը դարձրեց Տեր և Օծյալ (Աթառաս, ճառ Ա):

է. Քրիստոս անունը միայն Աստվածությանը չէ հատուկ և ոչ էլ սոսկ մարդկությանը և այդ՝ նրա համար, որ մարդկային մարմինը օծվեց Աստվածությունից, նույն բանի այս վայելչական անունն ընդունեց (Սարգիս Շնորհալի, մեկն. Հակ. ճառ Ա):

105. Քրիստոսն օծվել էր Սուրբ Հոգուց կամ Սուրբ Հոգով:

ա. Տիրոջ Հոգին իմ վրա է, դրա համար իսկ օծեց ինձ (Ղուկ. Դ 18, Եսայի, կա. 1):

բ. Գիտենք Հիսուսին, Նազարեթից էր, որիտն Աստված օծեց Սուրբ Հոգով և զորությամբ (Գործ. Ժ 38):

գ. Նույն ինքը (Սուրբ Հոգին) օծումը մարդացած Աստծու (Գ. Նարեկ. բան հե.): Տե՛ս նաև 110. Դ:

106. Քրիստոս նշանակվեց քահանա կամ քահանայապետ:

ա. Աստծուց անվանվեց հավիտյանների Քահանայապետ, ըստ Մելքիսեդեկի կարգի (Եբր. Ե 10):

բ. Իսկ սա (Հիսուս), հավիտենական լինելու պատճառով, ունի անանց քահանայություն (Եբր. Է 24):

գ. Ուրեմն, ունենք երկինքներով անցած մի մեծ Քահանայապետ՝ Հիսուսին՝ Աստծու Որդուն (Եբր. Դ 14):

դ. Նայեցեք Հիսուս Քրիստոսին, որին Աստված ուղարկեց՝ լինելու Քահանայապետն այն հավատի, որ խոստովանում ենք մենք (Եբր. Գ 1):

ե. Բանդ Աստված, մարմնով երևացիր երկրի ճշմարիտ քահանայապետ (Շարակ.):

զ. Քո անչափ բարության համար, անբովանդակելի Բանդ Հոր, մարդ եղար և մեզ համար քահանայապետ դարձար (Խորհրդ. Պատ.):

107. Քրիստոսը կոչվեց մարգարե:

ա. Սա Հիսուս ամրագրեց է, որ Գալիլիայի Նազարեթ քաղաքից է (Մար. ԻԱ 11):

բ. Եվ նրանք ասացին Հիսուս Նազովրեցու մասին, ով եղավ մարգարե մարդ (Ղուկ. իդ 19):

108. Քրիստոս է հավիտենական թագավորը:

ա. Նրա թագավորությունը վախճան չի ունենա (Ղուկ. Ա 33):

բ. Պիղատոսը նրան ասաց. «Թե որ այդպես է, ուրեմն դու թագավոր՞ ես»: Հիսուս նրան ասաց. «Ղու ես ասում, որ թագավոր եմ» (Հովհ. ԺԸ 37):

գ. Գառը (Քրիստոս) նրանց հաղթելու է, քանի որ նա Տերն է տերերի և Թագավորը՝ թագավորների (Հայտն. ԺԷ 14):

դ. Ժողովուրդներ, Քրիստոս թագավորին և խաղաղության Աստծուն օրհնեցե՛ք (Շարակ.):

ե. Որի թագավորությանը վախճան չկա (Հանգ.):

109. Սուրբ Հոգին ասվում է Քրիստոս Օծող՝ նրա հետ լինելով գերագույն լրությամբ կույսի արգանդում հղանալու սկզբից:

ա. Հրեշտակը պատասխանեց և նրան ասաց. «Սուրբ Հոգին կգա քո վրա» (Ղուկ. Ա 35):

բ. Օծման օրհնության ժամանակ քեզ հետ ամբողջությամբ իսկապես Հոգին էր (Գ. Նարեկ. բան ղդ.):

110. Սուրբ Հոգին Քրիստոսին Օծող է ասվում՝ իջնելով Նրա վրա մկրտության ժամանակ:

ա. Հիսուս ևս մկրտվեց ու երբ աղոթքի կանգնեց, երկինքը բացվեց, և Սուրբ Հոգին մարմնավոր տեսքով, որպես աղավնի իջավ Նրա վրա (Ղուկ. Գ 21-22):

բ. Ղու կենարարդ և Տերդ, երկնքի և երկրի արարիչդ, հենց այն օծումից (այսինքն՝ մկրտությունից) սկսած քարոզեցիր արքայության ավետարանը, ի սկզբանե վկայված Հովհաննեսի կողմից, դու, օծյալդ և Աստծու գառդ, աշխարհի մեղքերը վերացնողդ (Գ. Նարեկ. բան ղդ.):

գ. Հոգին, որ նրա մկրտվելու ժամանակ իջավ նրա վրա, վկայեց, թե նա է հովիվը, որովհետև Հովհաննեսի ձեռքով ընդունեց Քահանայություն, Արքայություն (այստեղ՝ Թագավորություն) և Մարգարեություն (Եփրեմ, Մեկն. Ավետ. համաբարբ. գլ. Դ):

դ. Հոր անսկիզբ Բանդ, օրերի վերջում խոնարհվեցիր և ծառայի կերպարանք առար, դառնալով մարդ, եկար մկրտվելու Հովհաննեսից: Դու Հոգով օծյալդ, Հոր կողմից վկայվեցիր. «Դա է իտմ սիրելի Որդին» (Մեծն Մաշտոց):

ե. Դարձյալ և այս բանը թող ոչ ոք չանգիտանիա, թե նույն ինքը՝ մեր Տերը, Քրիստոս (Օծյալ) անունն ստացավ Հոգու ներգործությամբ, որ իջավ նրա վրա Հորդանանում (Ն. Լամբ. Մեկն. Պատ.):

111. Քրիստոսը իր անձը պատարագ մատուցեց:

ա. Քրիստոս մեկ անգամ առ միշտ կատարեց այդ բանը, քանի որ ինքը իրեն պատարագ մատուցեց (Եբր. Է 27): Ինքն իրեն որպես անարատ պատարագ մատուցեց Աստծուն (Եբր. Թ 14):

բ. (Աստծու Որդին) իջավ ծառայության իր մարմնով լրացնի և կատարի արդարության գործերի կարգերի ամենայն չափերը: Որպեսզի միանգամից վերացնի մեղավոր մարմնի տկարության կարիքը և միանգամից իրնքն իրեն քահանայաբար (մատուցի) իր Հորը և միանգամից իր անձը հաճելի կերպով մատուցի, որպես հաշտության զոհաբերություն իր Հոր հանդեպ և նույն զոհաբերությամբ դրա հետ մատուցի մեր խոստովանության հավատքը (Գ. Լուս. Ագաթ. ի երկում 593):

գ. (Աստծու Որդին) մեզ մարդ եղավ իր կամքով իրեն պատարագ մատուցեց և վերացրեց մեր՝ մարդկության պատկերը (Մեծն. Մաշտոց):

դ. Աստծու գառդ, նախաստեղծ մարդու հանցանքների համար այսօր զոհ մատուցվեցիր, խաչի վրա պատարագվելով հեղեցիք քո արյունը մեր փրկության համար (Շարակ.):

ե. Հիշեցեք մեր Տիրոջ մարդասիրությունը, որ լինելով Աստծու Որդի, սուրբ, անեղ, անարատ, մեղքերից զերծ, մեղավորներիս համար իր մարմնով կրեց խաչի չարչարանքները ինքը՝ քահանայապետ և ինքը պատարագվելով (Խոսրով, Մեկն. Ժամ.):

112. Քրիստոսը Հոր առաջ մեզ համար եղավ բարեխոս և միջնորդ հաշտության:

ա. Նա էր, որ մարմնի մեջ եղած իր օրերում աղոթքներ ու պաղատանքներ էր մատուցում ուժգին զոչումով և արտասուքներով նրան, ով կարող էր փրկել մահվանից (Եբր. Ե 7): Տե՛ս նաև 111. Բ:

113. Քրիստոսը քարոզեց իր առաքչի՝ Հայր Աստծու պատվիրանները

ա. Ես ինքս ինձնից չխոսեցի, այլ Հայրը, որ ինձ ուղարկեց, նա ինձ պատվիրեց, թե ինչ պիտի ասեմ և ինչ պիտի խոսեմ: Արդ, ինչ որ ես եմ խոսում, այնպես եմ խոսում, ինչպես ՏՀայրն ինձ ասաց (Հովհ. ԺԲ 49, 50):

114. Քրիստոսը սովորեցրեց Աստծու ճանապարհը:

ա. Վարդապետ գիտենք, որ ճշմարտախոս գես և Աստծու ճանապարհը ճշմարտությամբ ես ուսուցանում (Մար. ԻԲ 16):

115. Քրիստոս կանխատեսեց գալիքը:

ա. Հենց այժմվանից ասում են ձեզ, քանի դեռ չի եղել, որպեսզի, երբ լինի, հավատաք, որ ես եմ (Հովհ. ԺԳ 19):

116. Քրիստոս հաղթեց մեղքի թագավորությանը:

ա. (Աստված) առաքեց իր Որդուն մեղանչական մարմնի նմանությամբ և մեղքի համար ու մարմնի մեջ դատապարտեց մեղքը (Հռոմ. Ը 3):

բ. Ինչպես որ մեղքը թագավորեց մահվան մեջ, նույնպես և շնորհը պիտի թագավորի արդարությամբ մինչև հավիտենական կյանք մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով (Հռոմ. Ե 21):

գ. Անըմբռնելի Բանդ մարմնով գամվեցիր խաչին և քանդեցիր մեղքի կապանքները, Քրիստոս Փրկիչ մեր (Շարակ.):

դ. Բևեռվեցիր խաչին, քանդեցիր մեր մեղքերի կապանքները (նույն տեղը):

117. Քրիստոս վերացրեց մահվան բռնությունը:

ա. Բարեբանեցե՛ք Քրիստոս թագավորին, որ հանձն առավ խաչի մահը և խափանեց մահվան թագավորությունը (Շարակ.):

բ. Անմահը իր մարմնով մեր փրկության համար մահը ճաշակեց և խափանեց մահվան թագավորությունը (Նույն տեղը):

գ. Խաչին բևեռվեցիր, մահվան իշխանությունը վերացրիր (Հայտ.):

դ. Որ քո մահվամբ մահը մեռցրիր (Նույն տեղը):

ե. Նա, ինքնիշխանությամբ հարություն առնելով, մահվան իշխանությունը վերացրեց (Նույն տեղը):

118. Քրիստոսը իր մահով և հարությամբ տիրեց բոլոր մարդկանց:

ա. Քրիստոս մեռավ ու կենդանացավ, որպեսզի մեռելներին և կենդանիներին հավասարապես տիրի (Հռոմ. ԺԴ 9):

119. Քրիստոսը Տեր և Աստված համարվեց երկնավորների և երկրավորների կողմից:

ա. ԻՆձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա (Մատթ. իը. 18):

բ. Հիսուս Քրիստոսի անունով խոնարհվի ամեն ծունկ՝ լինի թե երկնավորների, թե երկրավորների և թե սանդարամետականների. և ամեն լեզու խոստովանի, թե Հիսուս Քրիստոս Տեր է՝ ի փառս Հայր Աստծու (Փիլիպ. Բ 10-11):

120. Քրիստոս ըստ Աստվածության Հոր և Սուրբ Հոգու հետ ի սկզբանե ուներ իշխանական փառք և անվախճան իշխանություն բոլոր արարածների վրա:

ա. Եվ դու այժմ փառավորիր, Հայր, քո մոտ եղող այն փառքով, որ ունի քո մոտ՝ նախքան աշխարհի լինելը (Հովհ. ԺԷ 5): Տե՛ս նաև 121. Բ Զ, 189. Բ Դ, 190. Ա:

121. Քրիստոսը ըստ մարդկության իտշխանություն ստացավ բոլոր արարածների վրա՝ նախ մարդանալով ժառանգության իրավունքը ստացավ Հորից և ապա՝ մարդկանց համար մեռնելով՝ փրկության իրավունքը գնեց:

ա. Հայր, հասել է ժամը, փառավորիր քո Որդուն ինչպես որ նրան իշխանություն տվեցիր բոլոր մարդկանց վրա Քո անունը հայտնեցիր այն մարդկանց, որոնց զինձ տվեցիր աշխարհից. նրանք քոն էին, և ինձ տվեցիր նրանց (Հովհ. ԺԷ 1, 2, 6):

բ. Հնազանդ լինելով մինչև մահ էլ մահվան՝ խաչի վրա: Դրա համար էլ Աստված նրան առավել բարձրացրեց և նրան շնորհեց մի անուն, որ վեր է, քան ամեն անուն (Փիլիպ. Բ 8-9):

գ. Իսկ Որդու մասին ասում է «Աստված, քո աթոռը հավիտյանս հավիտենից է քո արքայության գավազանը՝ ուղղության գավազան (Եբր. Ա 8):

դ. Արժանի է այդ մորթված Գառը ընդունելու մեծություն, իմաստություն, զորություն, պատիվ և օրհնություն (Հայտն. Ե 12):

ե. Թագավոր խաղաղության Մարգարեի խոսքն առար, որ կանխատեսությամբ պատմելով՝ ասում էր Քրիստոսի անունից. «Ես թագավոր կարգվեցի նրա կողմից սուրբ Սիոն լեռան վրա»: Եվ դարձյալ ասում է «Աստված թագավորեց հեթանոսների վրա» Որովհետև թեպետև Աստվածությամբ Թագավոր էր ամեն ինչի վրա դեռ հավիտագենությունից առաջ, բայց մարմնով թագավորելու մասին է ասում: Եվ որովհետև իր խաչի արյամբ խաղաղություն հաստատեց, դրա համար էլ խաղաղության թագավոր է կոչում (Խոսրով, Մեկն. Ժամ.):

զ. Տերը խաչով իշխանություն առավ երկրի վրա՝ ըստ մարմնի Որովհետև Աստվածությամբ հավիտյաններից առաջ իշխան էր ամեն ինչի վրա, իսկ մարմնով խաչից հետո իշխանություն առավ հավատացյալների վրա (Նույն տեղը):

122. Քրիստոսը լրացրեց Հայրական տնօրինությունները փրկության համար:

ա. Ես քեզ փառավորեցի երկրի վրա. լրացրի այն գործը, որն ինձ տվիր, որ անեմ (Հովհ. ԺԷ 4):

բ. Ես պետք է կատարեմ գործերը նրա, ով ինձ ուղարկեց (Հովհ. Թ 4):

գ. Լրացրիր քո բոլոր հայրական տնօրինությունները (Պատ.):

դ. Որ գալիք խորհուրդը Հոգու միջոցով հայտնեց մարգարեներին և գալով կատարեց Հոր և Հոգու առաքմամբ (Շարակ.):

ե. Որ ըստ մարգարեների կանխատեսության՝ եկար լրացնելու խորհուրդը, որ մարդեղության կարգով կատարեցիր մեր փրկության համար (Նույն տեղը):

գ. Քրիստոսի մարդեղության բոլոր գործերը՝ խոնարհվելը և իջնելը և ծառայից մկրտվելը և հրաշագործությունները և խաչը և չարչարանքը և թաղումը և հարությունը նրա համար եղան, որպեսզի մեզ շնորհիտ կյանք և Աստվածապաշտություն՝ կատարումը բոլոր բարիքների և մայրը ամենայն առաքինությունների (Ս. Շնորհալի, Մեկն. Բ Պետ, ճառ Ա):

123. Աստվածորդու մարդեղության խորհուրդները կամ տնօրինությունները կանխատեսել էին մարգարեները:

ա. Ով անմիտ և թուլասիրտ մարդիկ, որ դժվարաում եք հավատալ այն ամենին, որ ասացին մարգարեները: Չէ՞ որ Քրիստոս պետք է նույն այդ չարչարանքները կրեր և այնպես մտներ իր փառքի մեջ (Ղուկ. Իդ. 25-26):

բ. Որ նախապես քո մարգարեների կողմից գրվածները եկար կատարելու (Շարակ.):

գ. Որ քո տնօրինության խորհուրդը ծանուցեցին կանխատեսները (Նույն տեղը):

դ. Բազում էին Մարգարեների ճառերը, որ կախատեսում էին Քրիստոսի և՛ գալուստը, և՛ խաչի ներգործությունը, և՛ թաղումը, և՛ հարությունը, և՛ համբարձումը: Եվ նրա գալուստյամբ այդ բոլորը կատարվեցին (Ս. Շնորհալի, Մեկն. Բ Պետ. ճառ Դ): Տե՛ս նաև 122. Դ, Ե:

124. Աստծու Որդու հղանալը կույսի արգանդում եղավառանց տղամարդու հաղորդակցության:

ա. Մարիամը հրեշտակին ասաց. «Ինչպե՞ս այդ կպատահի ինձ, քանի որ ես տղամարդ չեմ ճանաչում» (Ղուկ. Ա 34):

բ. Կույսը անհայր (այսինքն՝ առանց այր մարդու հետ հաղորդակցվելու), անապական արգանդում Սուրբ Հոգուց հղացավ Աստծու Որդուն (Գ. Լուս. Ագաթ. -ի երկում 392):

գ. Աստվածածին չհարսնացած, անսկիզբ Բանին հղացար (Ժամագիրք):

դ. Անհասանելի Բանն Աստված

անսերմնաբար կրեցիր քո որովայնում (Շարակ.):

ե. Անսերմնապես տղայացավ (Բանն Աստված) քո որովայնում (Նույն տեղը):

զ. Աստվածածնին սրբուհի, Բանն Աստված անսերմ հղությամբ արգանդում կրեցիր (Նույն տեղը):

125. Աստվածաորդու հղանալը կույսի արգանդում եղավ Սուրբ Հոգու զորությամբ:

ա. Հրեշտակը պատասխանեց և նրան (Մարիամին) ասաց. «Սուրբ Հոգին կգա քո վրա» (Ղուկ. Ա 35):

բ. Ահա Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց նրան և ասաց. «Հովսեփ, Դավթի՛ որդի, մի վախեցիր քեզ մոտ առնելու Մարիամին՝ քո կնոջը, որովհետև նրա մեջ ծնվածը Սուրբ Հոգուց է» (Մատթ. Ա 20):

գ. Մարմնացավ մարդացավ, Սուրբ Հոգով կատարելապես ծնվեց Սուրբ Կույս Մարիամից (Հանգ.):

դ. Մեկը բարձրյալ ահավոր անուն համապատիվ կցորդությունների գործակցությամբ Սուրբ Հոգու խոնարհվեց իջավ երկնքից հաճեց մտնել արգանդը մայրենի Աստվածածին կույսի մաքրության (Գ. Նարեկ. բան հե.):

ե. Այնուհետև շնորհագյուտ կույսը անհայր, անապական արգանդում Սուրբ Հոգուց հղացավ Աստծու Որդուն (մեր մտքերին) անմատչելի ձևով: Եվ ըստ ծննդկանների օրենքի նա իր անդրանիկը ծնավ Դավթի քաղաքում՝ Բեթղեհեմում (Գ. Լուս. Ագաթ. -ի երկուս 392):

Զ. Հղանալով Սուրբ Հոգուց Բանն Աստված մարմնով ծնեցիր (Շարակ.):

126. Աստծու Որդին Կույսի արգանդում մնաց ինը ամիս:

ա. Կույսի արգանդում (Բանն Աստված միավորվեց մարդկային բնությամբ)՝ նրանում բնակվելով իննամսյա ժամանակում և հինգ ավելի օրեր՝ ըստ անդրանիկության կարգի (Ն. Շնորհ. Թուղթ՝ գրված Ալեքսին):

բ. Իննամսյա ժամանակով չափվելով՝ մանուկների ծննդյան կարգով ծնվեց անմահացողը (նույն, Մեկն. Բարձր.):

գ. Իննամսյա հղության ժամանակից հետո երևաց տղա (Հովհ. Իմաստասեր, ճառ ընդդեմ երևութակ.):

դ. Երբ լրացավ իր հղության ինը ամիսը, ճշմարտապես ծնվեց նա, ով ստեղծեց Ադամին (Եփրեմ, ճառ ծննդ. Քրիստոսի):

127. Քրիստոսը ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում:

ա. Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում (Մար. Բ 1):

128 Քրիստոս ծնվեց վեցերորդ դարում<sup>35</sup>:

ա. Իսկ Նոր Ադամը վեցերորդ դարում

Այցելեց կուրուսյալին (Շակակ.):

---

<sup>35</sup> Վեցյակ դարերը պետք է հաշվել՝ ա) աշխարհի ստեղծումից մինչև ջրհեղեղը, բ) Այն ժամանակվանից մինչև Աբրահամին կանչելը, գ) Այն ժամանակվանից մինչև իսրայելցիների դուրս գալը Եգիպտոսից, դ) Այն ժամանակվանից մինչև Սողոմոնի տաճարի կառուցումը, ե) Այն ժամանակվանից մինչև բաբելոնյան գերությունը, զ) այն ժամանակվանից մինչև Քրիստոսի ծնունդը:

Կան մարդիկ էլ, որոնք այլ կերպ են թվարկում հազարամյա ժամանակը հաշվելով մեկ դար, ինչպես որ Քրիստոսի ծնունդը ըստ Յոթանասնի\* հաշվի՝ դրվում է աշխարհի լինելության տարում, 5199, որը կարելի է տեսնել Տոմագրերում և այլ մատյաններում:

բ. Քրիստոսի տնօրինության խորհուրդը հավիտյաններից առաջ ծածկված էր Երրորդությամբ Բայց կատարվեց ժամանակների վերջում վեցերորդ դարում (Ն. Շնորհ. Թուղթ, որ գրեց Գրիգոր կաթողիկոսի հրամանով Ասորիքի Միջագետքում գտնվող Համայն Եկեղեցիի քահանաներին):

129. Քրիստոսի ծնունդը եղավ հունվարի վեցին:

ա. Կա և երկրորդ վկայությունը (այսինքն՝ ծննդյան և մկրտության տոնը մի օրում կատարելը)՝ ըստ նույն ավետանչի պատմության, այն, որ ասում է, թե «Հիսուս երեսուն տարեկան էր՝ սկսած իր ծննդից», և ըստ իմաստունն ուղիղ մտքի՝ պետք է եկած լիներ ամսի նույն օրը, երբ՝ հունվարի վեցին եղավ նախ ծնունդը՝ համընկնելով նաև մկրտության օրվան՝ երեսուն տարի անց, թեպետև ամսվա նույն օրը չէ (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

բ. Մենք ըստ Ղուկասի ավետարանի պատմության երկու տոներից տասներկու օր հետո (որը Ջաքարիան կոչում է պաշտամունքի օր) հղացավ Եղիսաբեթը. դա թշրինի քսաներեքին էր և հոկտեմբերի տասը, որը ըստ այս կարգի՝ լինում է ապրիլի յոթը՝ կույս Մարիամի ավետման օրը, իսկ (Քրիստոսի) ծնունդը հունվարի վեցին է, նույնօրը, երբ ծնվեց՝ ըստ ամսաթվի երեսուն տարի անց եղավ մկրտությունը Հորդանանում: Եվ սա անսխալ է որովհետև եթե նա երեսուն տարեկան էր՝ ոչ ավելի, և ոչ նվազ, ապա ծննդյան օրը պետք է լինի և մկրտության օրը, եթե երեսուն տարին պիտի մնա անթերի և առանց մնացորդի (Ն. Շնորհ. Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

գ. Եւ (այսինքն՝ Քրիստոսը) ծնվեց քաղոց ամսի<sup>36</sup> վեցին՝ ըստ հունական տոմարի (Եփրեմ, Մեկն. համաբարբար. գլ. Ա, էջ 19):

130. Սկզբնական շրջանում բոլոր քրիստոնյանները Քրիստոսի ծննդյան տոնը, ինչպես մենք, կատարում էին մկրտության տոնի հետ միևնույն օրը:

ա. Առաքյալները կարգեցին և հաստատեցին մեր փրկչի հայտնության և ծննդյան տոնը, որը ըստ հունական տոմարի՝ հունվար ամսի վեցն է, և այն տոնում են մեծ ցնծությամբ և ուրախությամբ (Առաքելական կանոններ, գլ. Է):

բ. Այն ենք ասում, որ ծննդյան և մկրտության տոները ոչ թե տարբեր են, այլպետք է, որ մի օրում տոնվար լինեն, թեպետև գործերը տարբեր են, որ միևնույն օրը կատարվեցին (Սուրբ Պողիկարպոս՝ Հովհաննես ավետարանչի աշակերտը, որ նահատակվեց Տիրոջ 166 տարում):

գ. Մկրտության խորհրդի համար մեր Հայրերը ամենից շատ փափագեցին երեք տոն՝ զատկի, հոգեգալստյան, որը մի օրում ենք տոնում (Երուսաղեմի Մակարիոս Պատրիարք, սուրբ Գրիգոր Լուսավորչի որդու՝ Վրթանեսի կաթողիկոսության օրոք):

---

<sup>36</sup> Քաղոցը հայոց հինգերորդ ամիսն է ժամանակի նկատառումով երբ փայլեցին Եփրեմը և մեր թարգմանիչները (այն է՝ չորրորդ դարի կեսից մինչև հինգերորդ կեսը), այն համընկնում է հռոմեացիների հունվար ամսին, որը ցույց է տալիս տոմարական անվրեպ հաշիվը: Ուրեմն՝ քաղոցի վեցը պետք է իմանալ հունվարի վեցերորդ օրը, որովհետև դա հայտնի է դարձնում, ասելով՝ «ըստ հունական տոմարի»:

դ. Ըստ հեղինակի ավետիսի՝ տոնում ենք իննամյա ծնունդը, ութօրյա թլփատությունը, երեսնամյա մկրտությունը: Եվ պատվելով այսպես՝ ծնունդը և մկրտությունը մի օրում ենք տոնում (Միլիտոն կամ Միլիտոս եպիսկոպոս: Տիրոջ 381թ. կայացած Կոնստանդնուպոլսի ժողովի երևելի Հայրերից մեկը. Եվտոփիոնին գրած թղթում):

ե. Ուղղափառ եկեղեցու կանոնները առաքյալներն են հաստատել, կրոնավորներն ու ապաշխարողները պետք է պահք պահեն քառասուն օր, իսկ ամբողջ ժողովուրդը՝ ութ օր, դրա հետ նաև շաբաթ և կիրակի օրերը: Եվ Աստվածհայտնության տոնը՝ ծննդյան և մկրտության տոնի մասին եմ ասում, քանի որ Աստվածային են և փրկագործ, ող օրը կընկնի, թող այդ օրը կատարեն (Նիքտարիոս եպիսկոպոս, օրը պատրիարք նստեց Կոնստանդնուպոլսում Տիրոջ 381-398 թթ.):

զ. Մենք երեք ծնունդ գիտենք. մեկը՝ Սուրբ Հոգու փչմամբ, երկրորդը՝ մարմնանալով և մկրտությամբ, և երրորդը՝ հարությանբ (Գ. Աստվածաբան, Ճառ մկրտության):

է. Եպիսկոպոսը իր եկեղեցու համար հունվարի վեցը կարգում է Տիրոջ ծննդյան և մկրտության օր, իսկ փետրվարի տասնչորսը՝ նրա մուտքը տաճար (Նույն, Կանոններ):

ը. Իսկ ուրիշների չարահամբավ մոլորեցնող փոփոխական խորհուրդը չենք ընդունում: Նրանց մասին Հովաննեսն ասում է, թե մեզանից դուրս եկան, բայց մեզանից չէին, որովհետև հանդգնեցին բացահայտ կերպով ասել սիածնի ճշմարիտ անքնին ծննդի մասին: Եվ ոմանք կամենում են փոփոխել ծննդյան առաքելական կնիքը (վավեացումը), իսկ ոմանք՝ հայտնությունը, չհավանելով առաքելական կանոնները, որոնք գրավոր ավանդել է եկեղեցին, եթե մեր փրկչի ծննդյան և հայտնության օրը՝ հունվարի վեցը, միասին պետք է տոնվի (նույն տեղը):

թ. Տասը տարի չկա, ինչ մեզ հայտնի եղավ այն օրը, (այսինքն՝ ծննդյան օրը դեկտեմբերի 25-ին տոնելը) (Ոսկեբեր. Ճառ. լա. որը արտասանեց Անտիոքում իր քահանայական առաջին տարում, Տիրոջ 386թ.: Տե՛ս նրա աշխատ. հատ. Բ էջ 355):

ժ. Մեր նախնիները շաբաթվա մեջ երկու անգամ էին պահք պահում և սրբերի հիշատակը այդ օրերի նախօրյակին էին անցկացնում, բացի Աստվածորդու տոնից, որը երբ հանդիպես, (պետք է) կատարեին, որովհետև Աստված էր, և ամեն այն ինչ մեկնում է ես ասում եմ ծննդյան և մկրտության տոները մեկ օրում կատարելու մասին (Սեբերիանոս եպիսկոպոս):

Այս մասին զվկայություններ կան հաջորդ դարում ապրած օտարազգի մատենագիծրների գրվածքներում, բայց բավական է մեզ և քչերի հայերեն թարգմանությունը ներկայացնել հետաքրքրասեր ընթերցողների ուշադրությանը:

ժա. Քրիստոսի ծննդյան տոնը սկսեցին տոնել չորրորդ դարից, իսկ հինգերորդ դարում այն ամենուրեք մուտք գործեց, բայց կատարվում էր տարբեր ժամանակներում: Արևելյան (եկեղեցիները) այն կատարում էին հունվարի 5-ին (պետք է ասել 6-ին), իսկ արևելյան (եկեղեցին)՝ դեկտեմբերի 25-ին. Նրանց հետագայում հետևեցին արևելյանները (Ըթոմ տաջմտըրը կվմջսկճբվտըրը թըցբվմցըցլվկ վ գթբց՞ դթկվմկվտկդ, հողված 46, էջ 59-60: Մոսկվա, Տիրոջ 1814թ.):

ժբ. Մյուսը՝ Աստվածահայտնության տոնը, հունվարի 6-ին կատարելը չորրորդ դարից արևելյան եկեղեցում առաջինը միավորվել էր Քրիստոսի ծննդյան տոնի հետ, բայց հետո առանձնացավ (Նույն հոդված 49, էջ 63):

ժգ. Արևելյան եկեղեցում այն (այսինքն՝ Աստվածահայտնությունը) միավորված էր Քրիստոսի ծննդյան տոնին, բայց հետագայում առանձնացվեց (Թջ՝Լմկտ վըզկմկի ց չբստցկ կ Ըմբճբվմցբ, հատոր Դ, էջ 26, Մոսկվա, 1820):

ժդ. Քրիստոսի ծննդյան ամիսն ու օրը գտնելու համար ոմանք անդրադառնում են Կարապետի (Հովհաննես Մկրտչի) հղությանը, որը 15 ամսով նրանից առաջ են համարում, ոմանք ջանում են որոշել՝ թվելու միջոցով, քահանաների ծառայությունը Երուսաղեմի տաճարում, իսկ ոմանք էլ այդ օրը համեմատում են մաքրության տոնին՝ կարծելով, թե այդ օրն է երևացել հիշատակը Չաքարիայի: Բայց այն, որ այս հետազոտության մեջ ակներևորեն ապացուցվում է այս խնդիրը, դա Քրիստոսի միավորվելն էր նրա մկրտության տոնին՝ Աստվածահայտնություն ընդհանուր անունով: Բայց հետագայում ըստ հավատարմագույն ավանդության և Երուսաղեմի Հոբնաղ եպիսկոպոսի օրինակը՝ փոխադրվեց դեկտեմբերի 25-րդ օրը՝ ըստ արևմտյան եկեղեցու սովորության (Լջճբսմջկբ չբստըցը-զկզհբիվտըի կվմըսկկ, էջ 651- 652, Ս. Պետերբուրգ, 1816):

ժե. Քրիստոնեական եկեղեցին սուրբ Աստվածահայտնությունը տոնում էր առաջինը Քրիստոսի ծննդյան տոնի հետ միասին, իսկ Հովհան Ոսկեբերանը առանձին կարգեց Աստվածահայտնության տոնի այս օրը (այսինքն հունվարի 6-ը) (Ցվբըզ>կի թջ՝Լմկտ վցևմըվմկ կ ցբիկճկբ, հատոր Ա, էջ 130, Մոսկվա, 1818):

ժզ. Ասորիքի կողմերում, Երուսաղեմում և այլուր եկեղեցիները ծննդյան և մկրտության երկու տոնն էլ միևնույն օրն էին կատարում, բայց հետագայում փոխվեցին (բաժանվեցին միմյանցից) (Կղեմես Գալանոս, լատինացի կրոնավոր 17-րդ դարի Թեանիտաց եկեղեցուց, «Պատմ.» (հայերեն և լատիներեն), հատ. Ա, էջ 488):

ժլ. Ինչպես որ սահմանվեց զատիկը տոնել կիրակի օրը, որը բաժանվեց հրեական զատիկից, այնպես էլ սահմանվեց ծննդյան տոնը տոնել առանձին. նախ տոնել ծննդյան տոնը դեկտեմբերի 25-ին և ապա՝ մկրտության տոնը՝ հունվարի 6-ին (նույն տեղը):

ժը. Թեպետ ծնունդը և մկրտությունը տոնվում էին առանձին-առանձին՝ սկսած Հուլիոս պապից, բայց եկեղեցիների մի մասն ընդունում էր, իսկ մի մասը՝ ոչ, մինչև Օնորի և Արկադի թագավորների ժամանակները (նույն գրքում, էջ 493):

ժթ. Հուլիոս պապը իր իշխանությունը վարեց Քրիստոսի 337 թվից մինչև 352 թվը: Նա էր, որ բոլորից առաջ սովորեցրեց եկեղեցուն բաժանել ծննդյան և հայտնության տոները (Այդ մասին տե՛ս Շամպերի ընդհանրական բառարանում, Եբիֆանիա (հայտնություն) գլխաբառի տակ: Այս գիրքը լատիներենից թարգմանվել է իտալերեն և տպագրվել Վենետիկում):

131. Հայաստանյաց եկեղեցիսն Քրիստոսի ծննդյան և մկրտության տոնը կատարում է նույն օրը՝ հունվարի 6-ին՝ ըստ առաջին դարերի բոլոր եկեղեցիների սովորության:

ա. Աստվածահայտնության և նրա ծննդյան օրը մեր աշխարհը սովոր է տոնել միասին, հունվարի վեցին (Եվ) այս է նախնական սովորությունը վաղնջական ժամանակներից և մինչև մեզ հասած (Հովհ. Իմաստասեր, Կանոններ, գլ. Ը):

բ. Տիրոջ ծննդյան և մկրտության տոնը կատարում ենք մի օրում և այն ոչ թե հենց այնպես է կատարվում, այլ ունի իր խորհուրդը: Քանզի բոլոր եկեղեցիները սկզբում այդպես էին կատարում և թեպետ որոշ ժամանակ անց այլ եկեղեցիներում մեկ տոնը երկուսի բաժանեցին, բայց մենք սուրբ Գրիգորից մեզ ավանդածը անփոփոխ պահեցինք (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

գ. Բոլոր եկեղեցիները նախապես, առաքյալներից սկսած, այդպես էին տոնում(այսինքն՝ ծնունդը մկրտության հետ միևնույն օրը), բայց հետագայում ոմանք բաժանեցին Բեթլեհեմի և Հորդանանի պատճառով, որովհետև մեկ օրում երկու վանքերում չէին կարողանում կատարել միմյանցից հեռու լինելու պատճառով, և աստիճանաբար տարածվելով այն ընդունեցին և այլ եկեղեցիները: Իսկ հայերը, երբ ընդունեցին սուրբ Գրիգորից, անփոփոխ պահեցին այն (Նույն, Թուղթ՝ գրված Ալեքսին):

դ. Հայերը մինչև օրս ծննդյան տոնը նշում են հայտնության օրը (Տե՛ս Շամպերի Ընդհանրական բառարանում, Եբիֆանիա գլխաբառի տակ):

132. Քրիստոսին մկրտեց Հովհաննես Մկրտիչը Հորդանան գետում:

ա. Այն օրերին Հիսուսը եկավ Գալիլիայի Նազարեթ քաղաքից և Հովանեսից մկրտվեց Հորդանանում (Մարկ. Ա 9):

133, 134. Քրիստոսը մկրտվեց ջուրը մաքրելու համար և այն մկրտության ավազանում հավատացյալներին լվացման համար տալու:

ա. (Հիսուս) ինքը եկավ ջրերի մեջ միանգամայն սրբացնող ու նորոգող դարձրեց ջրերը: մկրտությամբ դալարեցրեց ջրերի ծննդականության արգանդը ջրով սրբեացնելով և նորոգելով հողեղեն նյութի մաշված հնությունը, Ապա անտեսանելի Հոգին կրկին բացեց արգանդը երևելի ջրով, նորածնունդ նորափետուրներին զարդարելով ավազանի ծննդականության համար, հազցնելու համար բոլորին լուսավոր պատմուճանը, որ մյուս անգամ վերստին ծնվեն: Իջավ ինքը ջրերի մեջ և սրբացրեց երկրի ներքին ջրերը, որոնք մարդկանց մեղքով պղծված էին:

Արդ, իր գարշապարով կոխելով ջրերը սրբացրեց և սրբացնող դարձրեց: Եվ ինչպես նախապես Հոգին շրջում էր ջրերի վրա, նույն ձևով էլ կբնակվի ջրերի մեջ և ամենքին կընդունի, որ նրանով ծնվեն: ինքը իջավ ջրերի մեջ, որպեսզի ամենքը ջրերի մեջ Հոգով նորոգված հրեշտականման, և նույն Հոգին մինչև հավիտյան ամենքին ջրերով որդեգրություն բերի (Գ. Լուս. Ազաթ. -ի երկում - 411, 412, 413, 414):

բ. Որ ջուրն իջնելով՝ մաքրեց Հորդանանը (Շարակ.):

գ. Որ իջար Հորդանան՝ մկրտվելու Հովհաննեսից, որ ջրերը մաքրեցիր (Նույն տեղը):

դ. Երկնքի և երկրի արարիչը Աստված և մարդ լինելով և երևալով Հորդանանի հոսանքների մեջ Աստվածախառն մարմնով՝ տիեզերքը մաքրեց մեղքերից (Նույն տեղը):

ե. Տե՛ր, աղաչում ենք քեզ, քո սուրբ Հոգուն ուղարկի՛ր այս ջրերի մոտ և մաքրի՛ր սրան, ինչպես որ մաքրեցիր Հորդանանը, Տե՛ր մեր Հիսուս Քրիստոս, դա՛ ամենասուրբ, քո իջնելով դարձար օրինակը մարդկության վերստին ծննդյան ավազանային մկրտությամբ (Մեծն Մաշտոց):

զ. Մեր փրկության սկզբում

Մկրտվեցիր Հորդանանում,

Որ շնորհեցիր որպես նոր ավազան՝

Հանուն մարդկանց մեղքերի մաքրության (Շարակ.):

է. Հորդանան իջնելով՝ մաքրագործեց ջուրը և այն պարզեց բոլորին որպես սրբարար ու սրբություն որպեսզի նրա մեջ մկրտվածները հրեշտակ դառնան և Աստծու որդիներ լինեն (Ս. Շնորհալի, Մեկն. Ա ճառ Ը):

ը. Եկավ Հորդանան իր Աստվածային փառքը հայտնելով Հոր վկայությամբ Մկրտվեց Հովհաննեսի կողմից, որպեսզի ջրերը մաքրի, հին մեղքերը ընկղմի նրա մեջ և հրով (Ս. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսիս):

թ. Մաքրում է ջուրը և հալիս է մեղրավորներին լվացմամբ մաքրելու (Իգնատոս Վ. Մեկն. Ղուկ. Դ 16):

ժ. Հիսուսը մաքրեց մկրտությունը այնտեղ իր մկրտվելու ժամանակ Հիսուսը մկրտվեց ոչ թե մեղքերին թողություն գտնելու, որովհետև առանց մեղքերի էր. արդ՝ թեպետև առանց մեղքերի էր, մկրտվեց, որպեսզի մեզ՝ մկրտվածներիս, յուրաքանչյուրին իր չափով ապաշխարության շնորհներ տա (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Դ):

ժա. Քրիստոսը եկավ, որպեսզտի մկրտվի և մկրտությամբ մաքրի ջրերը (Նույն, գլ. ժբ.):

135. Քրիստոսը մկրտվեց իր ծննդյան երեսուներորդ տարվա սկզբում:

ա. Եվ ինքը Հիսուս շուրջ երեսուն տարեկան էր (Ղուկ. 21, 23):

136. Քրիստոսի մկրտվելու ժամանակ Սուրբ Հոգին իջավ նրա վրա աղավնու կերպարանքով:

ա. Եվ երբ Հիսուս մկրտվեց, իսկույն ջրից դուրս ելավ. և ահա երկինքը բացվեց նրան, և նա տեսավ Աստծու Հոգին, որն իջնում էր ինչպես աղավնի և գալիս էր իր վրա (Մատթ. 9 16): Տե՛ս նաև 110. Ա:

137. Սուրբ Հոգու իջնելը Հորդանանում Քրիստոսի վրա, եղավ նրա Աստվածության փառքը հայտնելու համար:

ա. Հավատում ենք և Սուրբ Հոգուն անստեղծ և կատարյալ, որ իջավ Հորդանանում, քարոզվեց առաքյալին (Հանգ.):

բ. Հոգին իջավ աղավնու նմանությամբ, որպեսզի հայտնի լինի Որդու գալստյան գործության միաբան խորհուրդը (Գ. Լուս. Ագաթ. -ի երկուն 421):

գ. Իսկ նա նախ հասկացվեց ու ճանաչվեց, որպես Աստծու ճշմարիտ Որդի, իր Հոր ծայնով և Հոգու նրա վրա իջնելով Նույն տեղը, 416):

դ. Սուրբ Հոգին քեզ հայտնեց աղավնակերպ երևալով (Շարակ):

ե. Արարածների շնորհատուն, որ է Հոր ճշմարիտ Հոգին, աղավնակերպ տեսքով քեզ (Հովհաննես) երևաց՝ աշխարհին հայտնելով իր էակցի Աստվածությունը (Նույն տեղը):

զ. Ճշմարիտ Աստված է, սուրբ Հոգին էր, որ իջավ Հորդանան և հայտնեց Քրիստոսի Աստվածությունը (Մեծն Մաշտոց):

է. (Սուրբ Հոգին) վկայեց միածնի Աստվածությունը Հորդանանի հոսանքներում (Գ. Նարեկ. բան հե.):

ը. Աղավնու կերպարանքով երևաց Հորդանանում՝ եկածի փառքի մեծությամբ (Նույն, բան ԼԴ):

թ. Եվ քանի որ շատերը մկրտվեցին այնտեղ (Հորդանանում) այն օրը, Հոգին իջավ և նստեց միակի (Հիսուսի) վրա, որպեսզի բոլորից տարբերվի նշանով, որովհետև տեսքով չէր տարբերվել մյուս մարդկանցից (Եփրեմ, Մեկն. Ավետ. համաբարբ. գլ. Դ):

ժ. Աղավնին այն ժամանակ նրա համար հայտնվեց, որպեսզի մատնացույց անի նրանց, որոնք հանդիպեցին, իսկ Հովհաննեսը ցույց տա Աստծու Որդուն (Ոսկեբ. Մեկն. Մատ. ճառ ժբ):

138. Քրիստոս սկսեց քարոզել մկրտվելուց և քառասնօրյա ծոնապահությունից հետո:

ա. Դրանից հետո Հիսուս սկսեց քարոզել և ասել. «Ապաշխարեցեք, (Մատթ. Դ 17):

բ. Եվ Հիսուս Հոգու գործությամբ վերադարձավ Գալիլիա, ու գավառի բոլոր կողմերում նրա համբավը տարածվեց: Եվ նա ուսուցանում էր նրանց ժողովարաններում՝ փառավորվելով բոլորից (Ղուկ. Դ 14-15):

գ. Հիսուս Աստծու Որդին էր, որը ոչ միայն մկրտությունից առաջ էր ավետարանում (Կյուրեղ, Կոչ. ընծ. գլ. Գ):

139. Քրիստոսի քարոզները խրատներ են, պատվիրաններ և կարևոր վարդապետություններ՝ հոգու փրկության համար:

ա. Այն խոսքը, որ ես քեզ ասացի, հոգի է և կյանք (Հովհ. Զ 64):

բ. Տե՛ր, ո՞ւմ մոտ պիտի գնանք: Դու հավիտենական կյանքի խոսքեր ունես (Հովհ. Զ 69):

140. Քրիստոսը մեռավ նախատական մահով, իբրև մահապարտ, այն է բևեռվելով խաչափայտից:

ա. Եվ նրան խաչը հանեցին: Եվ նրա հետ խաչեցին երկու ավագակներ, մեկը՝ նրա աջուն և մյուսը ձախուն: Եվ կատարվեց Գրվածը, թե անօրենների հետ դատվեց (Մարկ. ԺԵ 24, 27, 28):

բ. Սկզբում խաչ անունը, քանի դեռ Քրիստոսը չէր բևեռվել նրան, նախատինքի անուն էր և չարագործների պատժարան: Ղրա համար էլ անօրեն հրեաները չկամեցան Տիրոջը սպանել այլ մահով, բայց միայն խաչով, որպեսզի բոլորի կողմից նա մահապարտ ու չարագործ համարվի, ինչպես ավագակները, որի համար էլ նրանց հետ խաչեցին (Խոսրով, Մեկն. Ժամակարգ):

գ. Տարածեցին խաչի սեղանի վրա իբրև զոհ, զամեցին, որպես չարագործ, ամրացրին իբրև ավագակ կյանքի սահմանը որոշողին իբրև մահվան արժանավոր, ավետարանի նկարչին՝ իբրև կրոնի հայիոյիչի կրոնի կապանքները քանդողին՝ իբրև նզովված մարդու երկնքի և երկրի գորավարին՝ իբր հավաստի պատժակիր (Գ. Նարեկ. բան հե.):

141. Քրիստոսը հանցավոր չէ:

ա. Նրան (Քրիստոսին), ով մեղքը չէր ճանաչել, Աստված մեզ համար մեղավոր (մեղքերի քավության պատարագ) արեց, որպեսզի մենք նրանով Աստծու արդարները լինենք (Բ Կորնթ. Ե 21):

բ. Ձեզանից ով կհանդիմանի ինձ մեղքի համար (Հովհ. Ը 46):

գ. Եկավ և խաչվեց, բայց ո՛չ իր ինչ-որ հանցանքներիտ համար, այլ որպեսզի մեզ ազատի մեղքերից (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Դ):

դ. Առանց որևէ հպանցանքի կրեց չարչարանքներ ու մահ, որպեսզի Ադամի հանցանքները և մահը իր անապական (առանց մեղքերի պարտքի. խմբ) մահով ու վերքերով առողջացնի ու կենդանացնի (Ս. Շնորհ. Մեկն. Ա Պետ. ճառ Զ):

142. Քրիստոսին հրեաները մեղավոր էին համարում:

ա. Աստծուն փառք տուր. մենք գիտենք, որ այն մարդը (Հիսուսը) մեղավոր է (Հովհ. Թ 24):

143. Հրեաները Քրիստոսի մահվան համար ոչ մի պատճառ չկարողացան գտնել, այլ միայն նախանձից նրան մատնեցին մահվան:

ա. Եվ մահվան արժանի ոչ մի հանցանք չգտնելով՝ Պիղատոսին խնդրեցին սպանել նրան (Գործք. ԺԳ 28):

բ. Նախանձից մատնել էին նրան (Մատթ. ԻԷ 18):

144. Քրիստոս ընդունել էր մեղսագործ Ադամի բնության կերպարանքը կամ մարմինը:

ա. Աստված առաքեց իր Որդուն մեղանչական մարմնի նմանությամբ (Հռոմ. Ը 3):

բ. Աստծու Որդին Ադամի կերպարանքն առավ ծառայի նմանությամբ, ինքը դարձավ մարդկանցից մեկը (Գ. Լուս. Ագաթ. -ի երկում, 591):

գ. Որ ուղարկեցիր Հայրական ծոցից, որպես ծածկված խորհուրդ հավիտյան Հորդ հետ և ստացար նախաստեղծ մարդու մեղուցյալ մարմինը անապական կույսից անձառ միությամբ (Շարակ.):

դ. Ստացած ադամական մարմինը բարձրացավ խաչի քառանկյուն սեղանին (Նույն տեղը):

ե. Որ իջածր երկնքից և ստացար նախաստեղծ Ադամի մարմինը (Նույն տեղը):

145. Քրիստոսը մեղացյալ մարդկային բնությունը իրեն խաչակից դարձրեց:

ա. Մեր միջի հին մարդը (մարդկայինբնությունը՝ մեղավոր Ադամով) խաչվեց նրա (Քրիստոսի) հետ, որպեսզի քայքայվի մեղքի մարմինը (Հռոմ. Զ 6):

բ. Հին մարդուն քեզ խաչակից արեցիր և մեղքի խայթոցը հանգցրիր (Շարակ.):

գ. Մեղուցյալ մարդուն հանցանքով կյանքի փայտին խաչակից անելով՝ պսակեցիր ամենահաղթ սուրբ նշանովդ (նույն տեղը):

146. Քրիստոսն իր մարմնով առավ մեր մեղքերը խաչափայտի վրա:

ա. Մեր մեղքերը իր մարմնով բարձրացրեց խաչափայտի վրա (Ա Պետ. Բ 24):

բ. Մեր դատապարտության կնիքը բևեռեցիր քո խաչի վրա (Ժամագիրք):

գ. Աստված հանձն առար մեզ համար խաչին բարձրանալ և նրա վրա բևեռել մեր հին մեղքերը (Շարակ.):

դ. Մեր մեղքերը բևեռեցիր խաչի վրա (Նույն տեղը):

ե. Սա է մարմնացած Բանն Աստված, որ խաչի վրա մեղքերը արարեց (Նույն տեղը):

զ. Որ մարմնով չարչարվեցիր մեզ համար և մեր մեղքերը առար խաչափայտի վրա (Նույն տեղը):

է. Որ իջար երկնքից մեզ համար, առաջինն առար Ադամի հանցանքները և մեր բնությամբ բարձրացրիր խաչի վրա անարատ ձեռքերով (Նույն տեղը):

ը. Որ բարձրացար սուրբ խաչին,

Առար հանցանքները մարդկային

Եվ մեր բնության թշնամուն

Դու բևեռեցիր փայտին (Ն. Շնորհ. Ողբերգ. գիրք Դ): Տե՛ս նաև 141. Գ, Դ, 147. Բ:

147. Մարդացած Աստծու մարմնով բևեռվելով խաչին՝ եղավ մեր մեղքերի դատապարտությունը:

ա. Աստված առաքեց իր Որդուն մեղանչական մարմնի նմանությամբ և մեղքի համար ու մարմնի մեջ դատապարտեց մեղքը (Հռոմ. Ը 3):

բ. (Միածին Որդուդ) մահվան ուղարկեցիր մեր մեղքերի համար, որպեսզի հանձն առնի մեր հանցանքները խաչի չարչարանքներով իր անձի վրա կրի մեր հանցանքների պատիժը (Գ. Լուս. Ազաթ. -ի երկում 87):

գ. Աստվածային մարմին առավ կույսից Նույն մարմնով մեղքերի հատուցումը տվեց (Նույն տեղը 387):

դ. Որ ծառայի կերպածրանքն առավ և (մեր) մեղքերը դատապարտեց իր մարմնում (Շարակ.):

ե. Քանի որ (Աստծու Որդին) աստվածային դատաստանով, իբրև դատավճռով, մեր մարմինն ուներ, որպես դատապարտություն՝ խաչին և բևեռներին տրված մարմնով, Ադամից ինչ-որ ուներ, խաչին բևեռեց՝ մեր դատապարտությունը հեռացնելով մեզանից, որպեսզի նա, որ դատապարտված մարմնով մեղքեր չգործեց, ամբողջ մարմնին ազատություն շնորհեց (Խոսրով, Մեկն. ժամակարգ.):

գ. Սերովբեներից սոսկալիդ,

Քերովբեներից ահավորդ,

Մարդկանց չարչարելի բնությամբ

խոնարհվեցիր չարչարանքների

Եվ մահվան դատավճիռը վերացրիր (Շարակ.):

148. Քրիստոսը իր մահով ջնջեց մեր հակառակության կամ թշնամության ջանքերը:

ա. Նա ներեց մեզ մեր բոլոր հանցանքները և ոչնչացրեց հրամաններով հաստատված այն պարտամուրհակները, որ մեր դեմ էր, վերացրեց այն մեջտեղից և մեխեց խաչափայտին (Կողոս. Բ 14):

բ. Նա է մեր խաղաղությունը, նա, որ երկուսը մեկ դարձրեց. քանդեց իր մարմնի մեջ միջնորմը՝ թշնամությունը (Եփես. Բ 14):

149. Քրիստոսն իր մարմնով մեզ հաշտեցրեց Հայր Աստծու հետ:

ա. Մինչ թշնամի էիտնք, հաշտվեցինք Աստծու հետ նրա Որդու մահվամբ (Հռոմ. Ե 10):

բ. Խաղաղություն անելով խաչի վրա թափած իր արյամբ հաշտեցրեց մեզ իր իսկ մարմնով և իր մահվամբ (Կողոս. Ա 20, 22):

գ. Քո վրա (ո՛վ սուրբ խաչ) մորթվեց անարատ Գառը (Քրիստոսը) Հոր հետ (մեզ) հաշտեցնելու համար (Շարակ.):

150, 151. Քրիստոսը մեզ ազատեց անեծքից և հավիտենական դատապարտությունից:

ա. Քրիստոս մեզ վերստին գնեց օրենքի անեծքից՝ անեծք դառնալով մեզ համար (որովհետև գրված է, թե՛ «Անիծյալ է այն մարդը, որը կախված է փայտից» (Գաղատ. Գ 13):

բ. Անսկիզբ Բանն Աստված, որ մեզ համար համբերությամբ կրեց սեռը, մեզանից վերացրեց անեծքի դատավճիռը (Շարակ.):

գ. Որ քո պատվական արյամբ այս աշխարհն ազատեցիր անեծքից (Նույն տեղը):

դ. Իջնելով փրկեցիր (այս աշխարհը) Ադամի անեծքից (Նույն տեղը): Ե Քրիստոսը բևեռվեց խաչին և վերացրեց նախաստեղծ Ադամի դատապարտությունը (Նույն տեղը):

զ. Քրիստոս Աստված, որ քո ձեռքերը տարածեցիր խաչի վրա, վերացրիր մեր դատապարտության կնիքը (Նույն տեղը):

է. Քո խաչի հաղթող զորությամբ պահիր մեզ, Քրիստոս Աստված, որ քո ձեռքերը տարածեցիր նրա վրա և վերացրիր մեր հանցանքների դատապարտության կնիքը (Նույն տեղը): Տե՛ս նաև 147. Ե, Զ):

152. Մենք դատապարտված ենք նախամարդու հանցանքների պատճառով:

ա. Ինչպես մեկ մարդու (Ադամի) հանցանքով բոլոր մարդիկ դատապարտության մատնվեցին, նույնպես և մեկի (Քրիստոսի) դատապարտությամբ բոլոր մարդիկ պիտի հասնեն կյանքի արդարության շնորհին (Հռոմ. Ե 18):

բ. Ովքեր Ադամի հանցանքի պատճառով մահվան էին դատապարտված, (Քրիստոսը) իր անմեղության շնորհիվ նրանց վերադարձրեց կյանքի արդարության և երկրին պարգևեց (Ն. Լամբ. Ներքող Սուրբ Հոգու գալստյան): Տե՛ս նաև 383. Ա, Բ:

153. Քրիստոսը իր կամքով հանձն առավ կամ ճաշակեց մահը:

ա. Ես իմ կյանքն եմ տալիս, որպեսզի վերստին այն առնեմ: Այն ինձանից ոչ ոք չի վերացնի, այլ ինքս եմ այն տալիս. իշխանություն ունեմ այն տալու և իշխանություն ունեմ վերստին այն առնելու (Հովհ. Ժ 17, 18):

բ. Բանն Աստված կամավոր հանձն առավ խաչի մահը (Շարակ.):

գ. Կամավոր անշնչացար և քո Սուրբ Հոգին Հորդ ծոցը ավանդեցիր (Նույն Տեղը):

դ. Լուսավորներին (արեգակ, լուսին) խավարեցնելով՝ հայտնի դարձրեց, որ արարածների արարիչն է: Եվ նա կամավոր և ոչ ակամա կրում է այն, ինչ որ կրեց: Եթե նա վեճը ճեղքեց, կարող էր իրեն խաչ հանողներին ոչնչացնել է, եթե գերեզմանից մեռածներին վերակենդանացրեց, կարող էր բևեռները թոթոփել և խաչից իջնել (Խոսրով, Մեկն. Ժամակարգ):

ե. Կամավոր կերպով մոտենալով մահվան խաչին, իբրև անարատ գառ իրեն մահվան մատնեց (Գ. Նարեկ. բան ԼԴ): Տե՛ս նաև 158. Ա, 170. Գ:

154. Քրիստոսը կարող էր ազատվել իրեն բռնողների ձեռքից, ինչպես որ ազատվեց, երբ կամեցավ՝ գնալով երկինք:

ա. (Քրիստոսը) ինքն իր կամքով եկավ չարչարվելու դրա համար եկա, ասում է, այս ժամին: Ահավասիկ կամավոր եկա և ոչ թե հարկադրաբար: Եվ դարձյալ իրեն բռնելիս ասում է «Ո՞ւմ եք փնտրում». ասում են «Նազովրեցի Հիսուսին»: Ասում է «Ես եմ» և կամավոր իր անձը տվեց նրանց ձեռքը: Եթե նա չկամենար, չէին կարող բռնել նրան, որովետև նա վարագույր քաշեց նրանց առաջ (Մ<sup>օ</sup> Շնորհալի, Մեկն. Ա Պետ. ճառ Դ):

բ. Նրան քաղաքից դուրս հանեցին ու տարան մինչև դարավանդը այն լեռան, որի վրա շինված էր իրենց քաղաքը, որպեսզի նրան գահավիժ անեն: Իսկ նա, անցնելով նրանց միջով, գնաց (Ղուկ. Դ 29-30):

գ. Ովքեր նախանձից բորբոքվեցին,

(Նրան) լեռան գլուխը հանեցին.

Այնտեղից նրան գահավիժել կամեցան,

Որ օդով գնում էր հանդիման (Ն. Շնորհ. Հավատի խոսք):

դ. Թույլ տվեց, որպեսզի նրանք ինչպես կամենան, անեն, և չկամեցավ բռնադատել նրանց ազատությունը: Եվ քանի որ նրանք հանդուգն էին, առան, զցեցին նրան: Բայց միա քանի որ Աստված էր, չընկավ, այլ խոնարհեցնելով վերցրեց օդը նրան և բարձրացրած տանում էր, ինչպես ծովի ջրերը, որոնց վրա նա քայլում էր (Իգնատոս, Մեկն. Ղուկ. գլ. Դ):

ե. Նրա ոտքերը, որ կարողացան գնալու ալիքների վրայով, քանի որ ալիքները նրան չընկղմեցին, կարող էին տրորել նաև թշնամիների մկանները, որպեսզի նրան խաչ չհանեն (Եփրեմ, Մեկն. Ավետ. համաբարբառ. գլ. Ի): Տե՛ս նաև 153. Դ:

155. Քրիստոսը չարչարանքն ու մահը չընդունեց Աստվածության բնությամբ:

ա. Որովհետև իր աննման բնությամբ չմահացավ,

Այլ իմ մահկանացու մարմնով մեռավ (Ն. Շնորհալի, «Միշտ էիդ» սկզբնատողով տաղում):

բ. Քրիստոսը չարչարվեց մարմնով և ոչ Աստվածությամբ (Շիրակավանի սահմ. ժողովից. այն գումարվել է Ջաքարիա կաթողիկոսի օրոք, Տիրոջ 862թ. գլ. Թ):

գ. Իր մարմնով և ոչ թե Աստվածային բնությամբ է ընդունում չարչարանքները (Ն. Լամբ. Մեկն. Պատ.):

դ. Միևնույն Քրիստոսը, բնությամբ մարդ լինելով, մահկանացու է, միաժամանակ բնությամբ Աստված լինելով՝ անմահ է մարդկային բնությամբ (կրում էր) չարչարանքներն ու մահը, իսկ Աստվածային բնությամբ՝ անչարչարությունն ու անմահությունը (Ն. Շնորհալի, Ալեքսին գրած դավանական թղթում):

ե. Մահկանացու մարմինը չվնասեց անմահ Աստվածությանը, քանզի անախտ էր (Ալեքսին գրած թղթում Շնորհալին մեջ է բերում Աթանասի այս խոսքերը):

զ. Հավատա՛ Աստծու Որդուն իր անչարչարելի Աստվածությամբ (Գ. Աստվածաբան, մկրտության ճառում):

է. Ճշմարտապես չարչարվեց մարմնով՝ պահելով ամբողջական իր անչաչարելի էությունը (Հովհ. Վ. սարկավագ, ճառ մարդեղ.):

ը. Հնարավոր չէր, որ իր անմահ բնությունը մեռներ որովհետև նրա (աստվածային) բնությունը ավելի բարձր էր, քան մահը. մահը նրան չէր կարող մոտենալ (Եփրեմ. Մեկն. Եբր. գլ. Բ):

թ. Ինչպես որ իրենն էր մարմինը, իրենն էր և չարչարանքը Չարչարանքներն Աստվածությանն էին, բայց ոչ ըստ բնության կրելով, այլ համարելով՝ հավաստիացնելու համար, թե միայն մարդը չչարչարվեց մարդկանց համար և ոչ էլ սոսկ Աստվածությունը, այլ Աստված, որը վերցնելով կրում էր չարչարանքները, բայց անչարչարելի մնում, որպեսզի Աստծու միջոցով լինի մեր փրկությունը, և մարդու վրա հույս չդնենք (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. ճառ Բ):

ժ. Նա որ չարչարվեց անարգությամբ Աստվածային բնությունից դուրս փառավորվեց հարության՝ ըստ Աստվածային բնության (Նույն տեղը): Տե՛ս նաև 156. Ե, Ջ, Է Ը Թ:

156. Աստվածային բնությունը անաչար և անմահ է:

ա. Նա մեր հողեղեն բնությունը հագավ և միաձուլեց անխառն Աստվածությանը, որպեսզի մեզ տա իր անմահությունը, անվշտությունը և անչարչարությունը:

բ. Քրիստոսին հավատացողներին և հանուն Սուրբ Երրորդության մկրտվածներին պարտ և արժան է համագո երեք անձնավորությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, խոստովանել մեկ բնություն, մեկ աստվածություն անեղ ու անմահ էություն (Ն. Շնորհ. Թուղթ ընդհ.):

գ. (Աստծո) անեղ բնությունը գերծ է ախտերի չարչարանքներից, և դրանք այնքան հեռու են նրա բնությունից, որ նա թեև կամենում է չարչարվել և մեռնել, բայց չի կարող, որովհետև ամենակարող է, բայց իր բնությունից, որն անկորչելի ու անմահ է, չի կամենում փոփոխվել (Նույն, Թուղթ Համայք նահանգի քահանաներին):

դ. Աստծու բնությունը անեղ է, և՛ մշտենջենավոր և՛ անախտ և՛ անմահ (Նույն տեղը):

ե. Աստվածությանը չարչարանք և մահ վերագրելը ամբարշտություն է (Նույն տեղթ):

զ. Միակ Աստծու բնությունը անհնարին է չարչարանք ընդունի և մեռնի (Նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

է. Բանը ըստ բնության Աստվածության անչարչարելի է (Ն. Լամբ. Հանգ. բացատ. -ն մեջ):

ը. Աստվածաչարչար չենք (այսինքն՝ Աստվածությանը չարչարանք չենք վերագրում), ինչպես ամբարիշտ Եվտիքեսը (Զաքարիա կաթողիկոս, ճառ Տիրոջ թաղմանը):

թ. Բանն Աստված լինելով՝ անչարչարելի էր բնությամբ (Աթանասի խոսքը, որ մեջ է բերում Շնորհալին իր թղթերում՝ գրված Համայք նահանգի քահանաներին և Ալեքսին):

ժ. Աստված գոյ է, որ չի մեռնում, որի համար էլ մեռյալ չի կարող լինել (Եփրեմ, Մեկն. Ավետ. համաբարբառ. գլ. խ.): Տե՛ս նաև 155. Դ, Ե, Ջ, Է Ը 157. Է Ը Թ, ԺԱ Ժբ. Ժգ. 159. Դ:

157. Ըստ Աստվածության անչարչարելին և անմահը՝ Քրիստոսը, չարչարվեց և մեռավ մեր չարչարելի և մահկանացու բնությամբ կամ մարմնով:

ա. Որ անչարչարելիդ, մարմնով եկար կամավոր չարչարանքի (Շարակը.):

բ. Անըմբռնելի Բանդ, մարմնով խաչին բևեռեցիր (Նույն տեղը):

գ. Անմահը մեր փրկության համար մարմնով մահ ճաշակեց (Նույն տեղը):

դ. Որ էությամբ անմահ է, արարածների փրկության համար մահ ճաշակեց (Նույն տեղը):

ե. Մեր բնությունն ընդունեցիր

Եվ խաչի վրա փայտին բևեռեցիր (Նույն տեղը):

զ. Կամովին չարչարելու եկավ, և անչարչարելին մեր չարչարելի բնությամբ չարչարվեց խաչի վրա, մահվանն անպարտականը մեռավ մեր մահկանացու մարմնով:

է. Անչարչարելին չարչարվեց չարչարանքով և անմահը մեռավ որպես մահկանացու (նույն Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

ը. Ըստ Աստվածային բնության անչարչարելին ու անմահը չարչարվեց ու մեռավ մեր բնությամբ (Նույն տեղը):

թ. անչարչարելին խառնելով իրեն միտացրեց չարչարելի մարմին, որպեսզի անչարչարելին չարչարվի չարչարանքով, և անմահը մեռնի որպես մահկանացու, ոչ Աստվածային բնությամբ, այլ մարդեղության միավորությամբ (Բարսեղ Ճոն, Մեկն. մարկ. ճառ լը.):

ժ. Որ իր բնությամբ անվիշտ էր, իր մարմնով մեռավ (Կյուրեղ Ալեքսանդրացի, «Պարապ.» գրքում, գլ. խե.):

ժա. Անչարչարելին չարչարանքով մտավ չարչարանքի տակ (Սեբեոսիանոս, Ճառ Բ):

ժբ. Բնությամբ անչարչարելին եղավ գթությամբ բազմաչարչարելի (Պրոկղ. ճառն ծննդյան, որն սկսվում է «Կուսական է այս տոնը» տողով):

ժգ. Մեր Տերը մեզ համար չարչարվելու էր, մեռնելու և իր արյունը թափելու: Եվ որովհետև անհնար էր սոսկ Աստվածությամբ այս բոլորը կրել, ընդունում է չարչարելի մարմին, որպեսզի չարչարելի մարմնով չարչարվի, իսկ անչարչարելի Աստվածությամբ բանասարկուի ծառայությունից փրկի վտարանդվածներին (նկատի ունի դրախտից վտարվածներին. խմբ.) և նմանով նմանին մաքրի (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. ճառ. Դ):

158. Քրիստոսը մահանալիս անմահ Աստվածությամբ կենդանի մնաց:

ա. Իշխանիաբոր մեռավ մարդկային մահկանացու բնությամբ և կենդանի մնաց Աստվածային անմահ բնությամբ (Ն. Շնորհ. Թուղթ՝ գրված Ալեքսին):

բ. Նա, որ մարմնով մեռած էր, կենդանի էր Աստվածությամբ (Նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

գ. Եվ այստեղ անմահն է մեռնում

Եվ մեռնելիս կենդանի մնում (Նույն Հավատի խոսք):

դ. Այսպես խոստովանվում են նրանք, ովքեր կամենում են բարեպաշտությամբ միանալ Քրիստոսին, թե քանի որ նա միավորված էր՝ Աստվածը և մարդը, անմահը և մահկանացուն, մեռավ որպես մահկանացու, անմահ մնաց որպես անմահական, և ոչ թե մեկը մեռավ, իսկ մյուսը անմահ մնաց, այլ միևնույն միացյալ միությունը մարդկությամբ մեռավ որպես մարդ, ինչպես ինքը կամեցադ, իսկ Աստվածությամբ անմահ մնաց իբրև անմահական բնություն (Նույն, Թուղթ՝ գրված Համայք նահանգի քահանաներին):

ե. Եվ որովհետև մեռավ ճշմարտապես, իսկ մեռնելիս էլ անմահ մնաց, ստույգ ապացուցում են եղած սքանչելիները, քանի որ խաչի վրա անշնչանալը, փաթաթելն ու գերեզման դնելը մահն են համարում, իսկ իշխանաբար հպոզին Հոր ծեռքը տալը և կրկնակի աղբյուրների հոսելը՝ արյան ու ջրի, իբրև կենդանի ու մեռած մարմնից, նրանից չհեռացած անմահությունն են նշանակում (Նույն տեղը):

գ. Ստույգ մեռավ և մեռնելիս էլ ստույգ կենդանի մնաց (Նույն տեղը):

է. Մեռնելիս նրա կողերից ջուր ելավ, որպեսզի հայտնի դարձնի, թե մեռավ, որովհետև մեռած մարմինը կտրելիս՝ ջուր է բխում և ոչ թե արյուն: Եվ նույն վերքից արյուն ելավ, որպեսզի հայտնի դարձնի, թե կենդանի է իր Աստվածությամբ, քանի որ արյունը բխում է կենդանի մարմնից և ոչ թե մեռածից (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Հովհ. մեկն. Պատ.):

ը. Մեռնելիս կենդանի է և թաղման ժամանակ էլ՝ մահվան կողմից անբռնելի (Ն. Լամբ. Մեկն. Պատ.):

թ. Նրանում մահը և կյանքը միմյանց համահավասար էին ընթանում, որովհետև մարմնով մեռած էր և դրված գերեզմանում, իսկ Աստվածությամբ կենդանի էր և նստած փառքի աթոռին. կենդանության մեջ մահ ունի, իսկ մահվան մեջ՝ կյանք, որը հրաշափառ է (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. Ճառ Բ):

լ. Թեպետ անմահ բնություն է և անչարչարելի անհնար էր, որ Աստված չարչարվեր և մեռներ, այդ պատճառով տիրեց մահկանացու մարմնին, որպեսզի մահկանացուի միջոցով չարչարվի և մեռնի անմահը, իսկ Աստվածության բնությամբ անմահ մնա: Ինչպես որ ըստ հավատի՝ մահկանացուն կենդանությանը միանալով՝ կենդանի և կենդանարար եղավ իբրև նա, որտեղ երկբայելի ոչինչ չկա և, նա իր բնությունից հետո չմնաց, այդպես էլ կենդանությունը միանալով մահկանացուին՝ չարչարվում էր նրա հետ և մեռնում որպես մահկանացու և իր ճշմարիտ կենդանությունից չէր անջատվում (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. Ճառ Ը):

159. Քրիստոսը մեռավ, բայց Աստվածությունը չբաժանվեց ո՛չ նրա հոգուց, ո՛չ մարմնից:

ա. Մահացու վիրավորվեց մեր մարդկային մարմնով Աստվածությունից անբաժանելին (Գ. Նարեկ. բան հե.):

բ. (Քրիստոսը) իր մարդկային հոգին ավանդելով Հորը բաժանվեց մարմնից, բայց Աստվածությունը երկուսից էլ անբաժանելի մնաց, քանի որ միացել էր բանական հոգու հետ, երբ իջավ դժոխքում գտնվող հոգիների մոտ, և անբաժանելի էր գերեզմանում գտնվող մեռած մարմնից, բայց ոչ թե առանձին առանձին, այլ բոլորն էլ երկուսի մոտ (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

գ. (Աստվածությունը) ամբողջական էր և մարմնի մեջ, մինչ հոգին բաժանվեց (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

դ. Անախտ է Աստվածային բնությունը, սակայն իրեն է համարում չարչարանքներն ու մահը, որովհետև մեկ անձնավորությամբ անբաժանելի էր մարմնից (Բարսեղ Ճոն. Մեկն. Մարկ. Ճառ լը.)

ե. Եթե Բանը նրա հետ միացած չլիներ, ի՞նչ զորությամբ հոգին դուրս կգածր դժոխքից, և մարմինը հարություն կառներ գերեզմանից (Նույն տեղը):

զ. (Բանն Աստված) ամբողջությամբ ամփոփված էր կույսի արգանդում և Հոր մոտ: Եվ իջնելով մեզ մոտ՝ երկնային մեր բոլոր նեղուղթյունները կրեց, բայց չզրկվեց իր Աստվածությունից և Աստվածավայելուչ հատկություններից: Նմանապես և՛ չարչարվելիս, և՛ մեռնելիս մարմնի

հատկությունները կրեց, բայց անախտակիր բնությունից չբաժանվեց, չարչարվելիս ու մանհաննալիս ո՛չ մարմնից էր հեռանում, ո՛չ էլ հոգուց բաժանվում, այլ մարդկեղեն հոգին՝ Հորից անբաժանելին, ավանդեց Հորը և մարմինը դրեց գերեզմանի մեջ (Ս. Շնորհալի, Մեկն. Ա, ճառ Ը):

է. (Քրիստոսի հոգին ավանդելու մասին) վճիռը Աստվածությանը չհայտնեց, այլ մարմնի մեռնելը նշանակեց: Աստվածությունից ո՛չ թաղման ժամանակ մեկուսացավ և ո՛չ էլ դժոխք իջնելիս՝ հոգուց (Աթանաս, ճառ Դ): Տե՛ս նաև 171 Ա, ԺԱ 178. Ա, Բ Գ:

160. Արժանի չէ Քրիստոսի մեջ մեկին չարչարելի ասել, մյուսին՝ անչարչարելի կամ մեկին՝ մեռած, մյուսին՝ կենդանի և կամ մեկին՝ տկար, մյուսին՝ զորիեղ:

ա. Մեկը ուժեղ չէր ու զորավոր,

Մյուսը՝ անզոր ու վտանգավոր,

Այլ միևնույն միավորն էր,

Կրում չարչարանքներ կամավոր (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

բ. Մեկն անմահ չէ, մյուսը մեռած,

Որովհետև այս երկուսն են բաժանված,

Այլ, որ անմահ, նույնը և մեռած

Եվ որը մեռած, նույնը և մնացած (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

գ. Մեկը մեռած չէ, մյուսը վերացնող, այլ ինքը մեռած է և ինքը՝ կենդանի և մեռածների կենդանարար (Նույն, դավանական թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

դ. Երկու բնությունից միացած լինելու պատճառով չենք ասում, թե բաժանված էր երկու մասի, որպես թե մեկը չարչարելի ու մեռյալ, մյուսը անչարչարելի ու անմահ, այլ երկու հակադիր երևույթներից միավորվածը և մեկ դարձածը իր մեջ կրում էր յուրաքանչյուրի ընդդիմադիր հատկությունները Որովհետև նիս, որ մեռավ մարմնով, նույնը կենդանի էր Աստվածությանը, և որը չարչարվեց, նույնը նաև անչարչարելի էր (Նույն տեղը):

ե. Նրա մարդեղությունից հետո մենք պետք է խոստովանենք, որ նա ո՛չ առաջ մարդ է՝ մարդու համար, ո՛չ էլ առաջ Աստված՝ Աստվածության համար, այլ Աստված և մարդ: Ո՛չ թե մեկը մարդ, մյուսը՝ Աստված, ըստ Նեստորի, միմյանց կցված, այլ միևնույնը և՛ ճշմարիտ մարդ է, և՛ կատարյալ Աստված, որովհետև Աստված մարդ եղավ, և Բանը՝ մարմին (Նույն, Թուղթ՝ գրված Համայք նահանգի քահանաներին):

զ. Մեկն ավելի տկար չէր, իսկ մյուսը՝ ավելի հզոր, ինչպես որ բաժանվում են բաժանողները՝ արտասվելը և նմանները մարդուն վերագրելով, իսկ Ղազարոսին վերակենդանացնելն ու այլք՝ Աստծու Բանին, այլ միավորվածը մի միության մեջ կրում էր յուրաքանչյուրը. երբ կամենում էր մարդկայինը իբրև մարդ, որովհետև մարդ էր, և Աստվածայինը, իբրև Աստված, քանի որ Աստված էր (Նույն տեղը):

է. Մոլորվում են նրանք, ովքեր ասում են, թե մեկը չարչարվեց, և մյուսը չչարչարվեց: Բայց նա աչ այլ ոք է, քան Բանը, որը չարչարվեց և մարմնով մահ ընդունեց, որովհետև նույն ինքը՝

անչարչարելի և անմարմին անը, հանձն առավ լինել չարչարելի մարմին, որպեսզի չարչարանքով փրկի մարդկանց (Նույն, Թուղթ՝ գրված Ալեքսին):

161. Միևնույն անձնավորությունը կամ Քրիստոսը, որ Աստված էր և մարդ, որ Աստծու Որդի էր և Որդի Մարդու, չարչարվեց և մեռավ:

162. Նույն ինքն էր, որ չարչարվում էր և նույն ինքն էր, որ չէր չարչարվում:

163. Նույնը մեռած է և նույնը անմահ:

164. Նույնը տկար (մարդ) էր և նույնը՝ հզոր (Աստված):

ա. Միևնույն ավանդությունն ու մի Քրիստոսը չարչարում ու մեռնում էր մեր մահկանացու մարմնով և կենդանի էր, անմահ և կենդանարար Աստվածությամբ (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

բ. Նզովում ենք և նրանց, ովքեր մի Քրիստոսին երկու բնության են բաժանում՝ ըստ նեստորի՝ այլ ասելով Աստված և այլ մարդ. մարդուն չարչարելի մու մեռած և Աստծուն՝ անչարչարելի և անմահ, և չեն միավորում երկուսին՝ չարչարելին ու անչարչարը, մահը և անմահությունը (Նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

գ. Խոստովանում ենք, որ Քրիստոսը Աստված է և մարդ. Նա ինքն է չարչարվել և չի չարչարվել, Աստվածային բնությամբ անփոփոխելի ու անչարչարելի է, իսկ մարմնով՝ չարչարված և մահը ճաշակած (նույն, Թուղթ՝ գրված Ալեքսին):

դ. Ինչ մարդկեղեն էր և Բանը մարմինը, չարչարվում էր, նրա հետ Բանը՝ իրենն էր համարում ու իրեն վերագրում Ինքն էր, որ չանրչարվում էր և ինքն էր, որ չէր չարչարվում. չարչարվում էր չարչարելին, քանի որ չարչարվում էր իր մարմինը, և հենց նույնի չարչարելիի մեջ անչարչարելին էր (Աթանաս, Թուղթ՝ գրված կորնթացիների Եպիկտիոն եպիսկոպոսին, «Պարապ.» գրքում, էջ 499):

ե. Խոստովանում են նրան չարչարելի և անչարչար Աստված և մարդ (Եփրեմ, Ճառ Այլակերպ.):

զ. Չարչարվեց, որովհետև չարչարանքի արյունը կրում էր իր թևերի վրա, բայց չչարչարվեց, որովհետև նրա կենդանությունը անհավասիկ քարոզ է գրպարտության դեմ, որ դրված էր նրա թիկնամիջում (Նույն, Մեկն. Ղևտ. գլ. Գ):

է. Սուրբ Աստված, սուրբ և հզոր, սուրբ և անմահ, որ խաչվեցիր մեզ համար, ողորմի՛ր մեզ (Ժամագիրք):

ը. Որից հետո (այսիտնքն՝ «Լսի՛ր մեր ձայները» աղոթքից հետո) և խորհրդաբար կարգված է երեք սրբասացությունների երգը՝ ըստ մարգարեի տեսիլքի և ավետարանչի մեկնության: Որովհետև խաչի փառքը տեսավ Եսային և խոսեց նրա մասին: Նույն բանը հայտնեց նաև

Հայրական ձայնը. «Փջառավորեցիր և էլի կփառավորեցնեմ» Դրա հմար էլ մենք հենց այնպես չենք ասում խաչեցիր-ը սրբաասացության սկզբում: Եվ քանի որ սուրբ է Որդին և հզոր և անմահ, Հոր կամքով և Սուրբ Հոգու հաճությամբ եկավ նա խաչի չարչարանքին, և մենք էլ նրա միջոցով ճանաչեցինք Հորը և Հոգուն: Եվ թող չպախարակեն այլ ձևով խորհողները, որոնք ամոթ են համարում մեր փրկության անոթը: Եվ, ըստ առաքյալների, թող որևէ այլ բանով չպարծենանք, բացի միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով (Հովհ. Իմաստ. Մեկն. Ժամակարգ):

թ. Թեպետ խաչվեց՝ Աստված էր, թեպետ անարգվեց՝ հզոր էր, թեպետ մեռավ՝ անմահ էր: Դրա համար ձայնում ենք նրան և ասում. «Սո՛ւրբ Աստված, սո՛ւրբ և հզոր, սո՛ւրբ և անմահ, որ անարգվեցիր, և՛ խաչվեցիր, և՛ մեռար մեզ համար, ողորմի՛ր մեզ» (Բարսեղ ճոն, Մեկն. Մարկ. Ճառ լը.):

ժ. Բանն Աստված Հիսուս Քրիստոսը սուրբ է, հզոր և անմահ, որ իր մարմնով խաչվեց մեր փրկության համար (Շիրակավնի սահմ. ժողովից, որ գումարվել է Ջաքարիա կաթողիկոսի օրոք, գլ. ժ.):

ժա. Թեպետև նա տկարությամբ խաչ ելավ իր մարդկային բնության պատճառով, բայց նա կենդանի է իր Աստվածության զորությամբ (Եփրեմ, Մեկն. Բ Կորն. գլ. ԺԴ):

ժբ. Նա Աստված է, նույնը և մարդ, որ մեզ երևաց,

Երկրի վրա, մարդկանց մեջ որպես մարդ շրջեց,

Նա Ադամի համար խաչին բևեռվեց:

Մահը ճաշակեց մարմնով, որն ընդունեց:

Աստված էր, մարդ, որ խաչվեց.

Կյանք տվողը կամովին մահվան տրվեց (Ն. Շնորհալի, «Միշտ էիդ» սկզբնատողով տաղից):

ժգ. ԻՆչպես որ Քրիստոս անունը սոսկ մարդկությանը չէ և ոչ էլ՝ միայն Աստվածությանը, այլմիավորությանը, նույնպես և չարչարանքն և մահը: Եվ որովհետև Աստծուն վիճակված էր մարդկանց համար չարչարվել, որովհետև անկարելի էր Աստծուն առանց միջնորդի, միայն Աստվածությամբ չարչարվեր, այդ պատճառով էլ նա առավ չարչարելի մարմին և մահկանացու բնություն: Նախ առաջինը ընդունեց և Աստվածությանը միացրեց այնուհետև նրան տվեց չարչարանքի ու մահվան, որպեսզի մարմնի չարչարանքը և մահը՝ Աստվածությանը համարվեր: Եվ որպես իրենն էր մարմինը, իրենն էին նաև մարմնի բոլոր հատկությունները՝ ապտակը, թուքը, փշե պսակը, քացախը, լեղին, բևեռները, խաչը, տեգի բացումը և այն ամենը, ինչ նախատինք էր համարվում: Որովհետև թե փառքը Բանինն ու մարմնինն էր, թե անարգանքը Բանիննն ու մարմնինը (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. Ճառ Թ):

165. Ուղղափառ դավանանքով Աստծուն հարկ է ասել խաչված և մեռած, իսկ Անմահին՝ մահվան չարչարանքի տակ ընկած:

ա. Քարոզվվում է սքանչելիներից

Աստված մարմնով ինձ համար խաչվեց.

Մեր բնությամբ է մեռնում

Անմահ Աստված է խոստովանում (Շարակ.):

բ. Խաչին բևեռվեցիր Աստված (Նույն տեղը):

գ. Մահը ցանկալի դարձավ մեր Աստծու մահվամբ (Գ. Լուս. Ագաթ. -ի երկուն 516):

դ. Թեպետև անհավատ հրեանները չեն հավատում մեռելների հարությանը, բայց մենք նրանով և հավատացյալներս և փրկվածներս հավատում ենք անմահ ու անբովանդակելի Աստծուն՝ աշխարհի փրկության համար մահվան չարչարանքների ենթարկվածին (Ն. Շնորհալի, Մեկն. Բարձր.):

ե. Քո՛ անմահից մեռնելու միջոցով Կենդանացրո՛ւ մեռյալ հոգիները (Շարակ.):

զ. Սուրբ Աստված, Հոր կամքով խաչվեցիր մեզ համար և մեղքը սպանեցիր, ողորմի՛ր մեզ (Նույն տեղը)

է. Սուրբ Աստված, որ մեզ համար մահը ճաշակեցիր (Նույն տեղը):

ը. Մեռավ Անմահը մահով մեռցնելով մահը (Կյուրեղ Ալեքսանդրացին մեջ է բերում Արտիկոս եպիսկոպոսի խոսքը, տե՛ս «Պարապ.» գրքում, էջ 456):

թ. Ինչպես որ մարմինը անտարակույս Աստծունն էր, նույնպես և՛ արյունը Աստծու, և՛ չարչարանքը Աստծու, և՛ խաչը Աստծու, և՛ մահը Աստծու, և՛ գերեզմանը Աստվածընկալ: Այսպես պարտ և արժանի է հավետ հաստատուն մնալ, սրանց հավատալ, սրանք խոստովանել: Աստիճանաբար չասենք, թե սրանք՝ արյունը և չարչարանքը, և մահը Աստծուն վայել չեն: Որովհետև մենք Աստծու արյամբ եղանք փրկվածներ և ազատվածներ: Որովհետև ո՛չ Պողոսը մեզ համար խաչին բարձրացավ, և ո՛չ մենք հանուն Պողոսի մկրտվեցինք: Որովհետև մարդու արյունը մարդուն չի կարող ապրեցնել (Ն. Շնորհ. Մեկն. Պետ. Ճառ Դ):

ժ. Այդ ժամանակ սքանչելիները շատ են՝ Աստված խաչված է, արեգակը խավարած և դարձյալ լուսավորված, որովհետև պարտ և արժանի էր արարածներին չարչարակից լինել Արարչի հետ (Գ. Աստվածաբան, Ճառ Պասեքի ժամանակ):

ժա. Ոչ թե անմահ Աստծու բնությունը չարչարվեց և մեռավ այլ միևնույն Աստված և մարդ՝ մեռավ ըստ մարդկության և անմահ մնաց ըստ Աստվածության Եվ դրա համար ասվում է Աստված խաչյալ և՛ չարչարանք Աստծու, և՛ արյուն, և՛ մահ (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված համայք նահանգի քահանաներին):

ժբ. Եղավ անտեսանելին՝ ըստ Աստվածության, տեսանելի՝ ըստ մեր մարդկային բնության, և անշոշափելին՝ շոշափելի, և անչարչարելին, և անմահը ըստ Աստվածային բնության, չարչարելի և մեռյալ՝ մեր բնությամբ, և ոչ բաժանմամբ, որպես թե մեկը՝ չարչարելի, մյուսը՝ անչարչարելի, մեկը՝ անմահ, մյուսը՝ մահկանացու, այլ որ չարչարված ու մեռած էր, մարդուց վերցրած բնությամբ, նույնը անչարչարելի և անմահ էր իր Աստվածային բնությամբ: Այդ պատճառով էլ ասվում է, և Աստծու արյուն, և չարչարանք, և մահ, և խաչված Աստված, որովհետև բոլորը տալիս ենք ոչ թե առանձին Աստծու բնությանը, այլ անձառելի միավորությանը (Նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

ժգ. Լինելով Աստված և փառքի տեր՝ Որդուն անարգության և անպատվության մեջ մեջ բևեռված էր խաչին (Աթանաս, Թուղթ՝ գրված կորնթացիների Եպիկտինոն եպիսկոպոսին):

ժդ. Ընդունում և հավատում ենք, որ մարդ չէր, որին ծնեց Մարիամը և որին հրեաները խաչեցին, այլ Աստված (էր) կնոջից ծնվածը և Աստված (էր) հրեաներից խաչվածը<sup>37</sup> (Նույն, Հուլիոսին):

ժե Մարմնով խաչված (Աստված) արեգակի ճառագայթներն ամփոփեց (Թեոփիլոս եպիսկոպոսի խոսքն է, որ մեջ է բերել Կյուրեղ Ալեքսանդրացին Թեոդոս քույրերին գրած թղթում, տե՛ս «Պարապ» գրքում, էջ 213): Տե՛ն նաև 161. Է Ը Թ, Ժ.:

166. Նա, որ կույս Մարիամից մարմնով ծնվեց, Աստված էր:

ա. Նա, որ քեզնից է ծնվելու, սուրբ է և Աստծու Որդի կկոչվի (Ղուկը. Ա 35):

բ. Որ ծնվելու է քեզանից, Իսրայելի առաջնորդն է, և բոլորին կքարովի Աստված, հզոր անմահ Բանը (Շարակ.):

գ. Երկնքում և երկրում չպարփակվողը կուսական արգանդից մեզ կյանք պարգևեց՝ մարդկանց այցելած Աստված (Նույն տեղը):

դ. Ծիծաղիր և ուրախ եղիր, չհարսնացած մայր, քանզի հանուն մեր անծերի փրկության քեզնից ծնվեց մեզ համար Աստված (Նույն տեղը):

ե. Անարատ հղացար և վայելչապես Աստծուն ծնեցիր (Նույն տեղը):

զ. Մարիամից ծնվածը սուրբ կկոչվի, բնությամբ Աստծու Որդի և ճշմարտապես Աստված (Աթանասը գծրում է Կյուրեղ Ալեքսանդրացուն, «Պարապ.» գրքում, էջ 208):

167. Սուրբ կույս Մարիամը Աստվածածին է կրամ Աստծու մարդ:

ա. Անապական կույս Մարիամին սուրբ եկեղեցին Աստվածածին է համարում (Շարակ.):

բ. Քո Որդու եկեղեցին քեզ Աստվածածին է համարում, որ միայն կուսությունների մայր ես (Նույն տեղը):

գ. Աստվածածին, Տիրոջ անարատ մայր (Նույն տեղը):

դ. Քեզ ենք ապավինել, մեր Աստծու Քրիստոսի մայր (Նույն տեղը):

ե. Եթե որևէ մեկը Մարիամին որպես Աստվածածին չի ճանաչում հեռու է Աստվածությունից (Գ. Աստվածաբան, Առ որս, գիրք Թ):

զ. Քեզ խոստովանելով Աստվածածին՝ երկրպագում է ուղղափառ եկեղեցին (Ժամագիրք):

է. Սուրբ կույս Մարիամը ճշմարտապես և իսկապես Աստվածածին է (Շիրակավանի սահ. ժողովից, որը գումարվել է Տիրոջ 862թ.: Տե՛ն Չ. «Պատմ. Հայոց», հատ Բ էջ 686):

168. Աստված էր, որ չարչարվեց և մարմնով մեռավ մեր փրկության համար:

<sup>37</sup> Այս խոսքը մեջ է բերում Գրիգոր կաթողիկոս Տղան Տուտեորդուն տրված պատասխան թղթում:

ա. Եվ Աստված էր, որ մեռավ,

Հայտնում են հրաշքները, որ գործեցին (Ն. Շնորհ. Հավատի խոսք):

բ. Ո՛վ սքանչելի տեսիլք ահավոր. երկնքի ու երկրի Արարչին այսօր տեսանք խաչի վրա (Շարակ.):

գ. Որ հավիտենից Աստված ես և Տեր ամենայն կենդանության, խոնարհվեցիր չարչարանքների համար՝ համբերելով խաչին ու մահվան (Նույն տեղը):

դ. Ինչո՞ւ ես զարմացել, թե ամբողջ աշխարհը փրկվեց, որովհետև ոչ թե չնչին մեկն էր, այլ Աստծու Միածին Որդին, որ եկավ և մեռավ մեր մեղքերի համար (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. ԺԴ):

ե. Ոչ թե ինչ-որ չնչին մարդ էր, որ չարչարվեց, այլ Աստված էր, որ մամին ստացավ և համբերության պսակն առնելով՝ ճգնությամբ մարտնչում էր (Նույն տեղը):

Ո՛չ թե փոքրիկ մեկն էր, որ մեռնում էր մեզ համար, ոչ անխոս ոչխար էր, ո՛չ ինչ-որ չինչին մարդ և ո՛չ լոկ հրեշտակ, այլ Աստված էր՝ մարմին առած (Նույն տեղը):

է. Աստծուն տեսնում ես մարդ եղած, այսչափ խոնարհված և չարչարված քեզ համար և տակավիտն հարցնո՞ւմ ես և երկմտում, թե ինչպե՞ս կարող էր իր ծառայակիցների վնասը թողնել (Ոսկեր. Մեկն. Մատ. գիրք Ա, Ճառ Ժը.):

ը. Փառքի տերը թեպետ Բանին Աստվածություն է ասում, սակայն ոչ մարդկային էությունից զուրկ: Ինչպես որ Բանի Աստվածությունը մարդ և մարդու որդի եղավ և անվանվեց, նույնպես և մարդկությունը, որ առավ, եղավ և խառնեց և միացրեց իր Աստվածությանը՝ և անվանվեց փառաց Տեր Նրան փառաց Տեր է անվանում նաև Պողոսը. «Որովհետև ասում է, եթե ճանաչեին, փառքի Տիրոջը չէին խաչի»: Թող ամաչեն հերձվածողները, Բանը բաժանում են մարմնից չարչարանքների ու խաչի համար: Եթե փառքի Տիրոջը (միասին) Աստվածություն են վերագրում, և նա բաժանվեց խաչի վրա մարմնով, ինչպես ասում են, որպե՞ս ապա նա՝ խաչին բարձրացածը, ինչպե՞ս կարող էր կոչվել փառքի Տեր: Եվ եթե Բանն Աստված մարմնի հետ չչարչարվեր ու չխաչվեր, այլ սոսկ կրեր մարդու չարչարանքն ու մահը, ապա այս աշխարհը ինչպե՞ս էր փրկելու մեղքերից: Իսկ եթե փառքի Տիրոջը մարդ են ասում, մեծապես հանդիմանում են, որովհետև առանց Աստվածության սոսկ մարդը փառքի Տեր չէր կարող լինել (Ս. Շնորհալի, Մեկն. Հակ. Զ):

169. Քրիստոսին խաչողները կոչվում են աստվածասպան և աստվածաչարչար:

ա. Աստվածասպանները երբ քեզ մոլորեցուցիչ էին անվանում, դու չբաժանեցիր նրանց ծնոտների հողերը (Գ. Նարեկացի, բան լգ.):

բ. Ովքեր քո խորհրդին երկնային

Մեղքից մեռյալ հոգով են մոտենում,

Նրանք աստվածասպանների շարքն են դասվում

Կայիափայի և Աննայի շարքը (Ն. Շնորհալի, Ողբերգ. գիրք Գ):

գ. Գործակից էր աստվածասպաններին և նրանց, ովքեր Տիրոջ առաքյալներին կորցրին (Իգնատիոս Աստվածգայաց, ԺԳ Թղթում):

դ. Եթե որևէ մեկը չերկրպագի Խաչվածին, նզովված լինի և դատվի աստվածասպանների շարքը (Գ. Աստվածաբան, Առ որս, Ճառ Թ, Կղողիոսին):

ե. Աստվածաչարչար ազգին (հրեաներին) հանդիմանող է (Կոստանդնուպոլսի Պրոկղ Պատրիարք, Ներբող Ստեփաննոսի):

4. Այժմ այս անունը (հուդա) պարսավանքի անուն եղավ՝ Հուդայի կողմից Որդու կորստյան պատճառով. նա եղավ աստվածավաճառ և աստվածասպան (Սարգիս Շնորհալի, Մեկն. Հուդ. գլ. Ա):

է. (Հրեաները) բարի առաջնորդից զրկվելով՝ հանդգնեցին աստվածասպանություն գործել (Ն. Լամբ. Մեկն Առակ. գլ. ԺԱ):

170. Քրիստոսը իր մարդկային հոգին ավանդելիս բարձր ձայնով աղաղակեց՝ ցույց տալու համար, որ մահվան իշխանության տակ չէ, այլ ինքն է մահվան վրա իշխողը:

ա. (Հիսուսը) մեծ ձայնով գոչեց Այդ, ի՞նչ մարդ, որ հոգու տագնապի ժամանակ, երբ մահվան մոտ է լինում, աղաղակ տա կամ գոչի. նա պետք է բանակապ և անխոս լիներ մեռնելուց առաջ: Սակայն հոգիների արարիչ Քրիստոսը հոժարակամ սիրով գալով մահվան, բարձրաձայն ազդարարեց, ահարկու նշաներով հանդերձ, թե նույնիսկ մահվան ժամանակ Հոր հետ միակամ և միտագործ է (Գ. Լուս. Ագաթ. -ի երկուն 477, 478):

բ. Գլուխը խոնարեցնելով՝ ավանդեց հոգին. ոչ թե քիչ-քիչ զորությունն իրեն լքեց, ինչպես բոլոր մարդկանց մոտ, այլ ուժգին ձայն արձակեց և ասաց. «Հայր, քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին»: Դրանից հետո հպայրապետն ու նրա հետ եղողները, տեսնելով նրա արժանապատվությամբ մեռնելը, հավատացին որ նա իսկապես Աստծու Որդին է (Խոսրով, Մեկն. Ժամակարգ):

գ. Դանրծյալ բարձրաձայն աղաղակեց

Եվ իր կամքով հոգին Հորը ավանդեց

Ոչ թե մեզ նման է հոգին փչում,

Այլ մեզնից տարբեր ձևով է գործում:

Որովհետև մերձիմահ մեր ձեռքն է լռում,

Իսկ նա բարձր ձայնով է գոչում:

Եթե ոչ այլուստ, ապա այստեղից է իմացվում,

Որ նա կամավոր կերպով է մեռնում (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

171, 172, 173. Քրիստոսը մեռնելուց հետո Աստվածությամբ ու բնական հոգով իջավ դժոխք և խորտակելով սատանայի զորությունը՝ նրա ձեռքից խլեց արդարների հոգիները:

ա. Իսկ Աստվածային էությունը,

առնելով նյութական բնությունը,

Որովայնից մինչ հավիտյան

Անբակտելի է ու միական:

Ուստի նրա հոգին մարդկային,

Որ ավանդեց երկնային,

Հանդերձ բնությամբ Աստվածային

Իջավ հոգիների մեջ դրախտային

Գերողից առելով ավարը՝

Այն վերադարձրեց իր Հորը (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

բ. Քերովբեական կառքով իջնելով դժոխք՝ հզորապես կյանք շնորհեց արդարների խմբին (Շարակ.):

գ. Քո հոգին Հոր մոտ ավանդելիս

Սարսեց սանդարամետը:

Դու, որ իջար ներքև, դժոխք,

Խավարի ու մահվան բանտ,

Կապելով մահածին իշխանին՝

Դուրս հանեցիր հոգիները, որ էին բանտում (Նույն տեղը):

դ. Որ մեղավորների փոխարենհանձն առար մեռնել, իջար դժոխքը և գերյալներին փրկեցիր մեղասեր բանտից (Նույն տեղը):

ե. Անմահ Քրիստոս թագավորը դժոխքում փնտրտելով կապեց մեղսասեր իշխանին և Ադամի մեղքով գերվածներին անմահ կյանք շնորհեց (Նույն տեղը):

թ. Քո գերապանձ իշխանությամբ իջնելով դժոխք՝ հզոր գորությամբ հաղթեցիր մահին՝ կյանք շնորհելով նրա կողմից բանտարկվածներին (Նույն տեղը):

է. Ներքև իջնելով՝ ազատություն շնորհեց խավարի մեջ նստածներին (Նույն տեղը):

ը. Տե՛ր, որ քո կենարար մահով վերացրիր մահվան երկունքը, իջնելով դժոխք՝ քեզ հետ միասին արդար մարգարեների հոգիները վերածեցիր անստեղծ լույսի (Նույն տեղը):

թ. Որ մահը գերելով, մահվամբ մահը ոտնատակ տվեցիր՝ մարգարեների խմբեր արծակելով քո անստեղծ երկնային երանության մեջ (Նույն տեղը):

ժ. Իջավ դժոխք և այնտեղից դուրս հանեց դժոխքում արգելվածներին (Գ. Լուս. Ագաթ. -ի երկուն 368):

ժա. Այն անձը (այսինքն՝ Սողոմոնը) բարությամբ կհիշվի, իբրև հույսի հիմք՝ տերունի ճանապարհը դիմողներին, երբ նա հոգով իջավ (Դժոխք)՝ անբաժանելի Աստվածությամբ այցելության կյանք շնորհելու այնտեղի մարտիրոսներին (Գ. Նարեկ. բան խը.):

ժբ. Իջնելով խավար դժոխքը՝ իր ստեղծածներին ազատեց իրենց բաժանողի կապանքներից (Նույն, բան հե.):

ժգ. Եկավ, իջավ դժոխքի անդունդը, որպեսզի այնտեղից փրկի արդարներին (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Դ):

ժդ. Մահը զարմացել, մնացել էր ապշած և ինչ-որ նոր տեսիլք էր տեսնում, որ նա իջավ դժոխք, բայց իր կապանքներով չչղթայվեց Ազատվում էին բոլոր արդարները, որոնց կլանել էր մահը: Որովհետև անհրաժեշտ և պատշաճ էր նրանց, ովքեր նրան քարոզեցին իրենց գեղեցիկ քարոզներում (այսինքն՝ մարգարեներին) լինել փրկիչ (Կյուրեղ Երուսաղ. Կոչ. ընծ. գլ. ԺԴ): Տե՛ս նաև 174. Դ:

174. Արդարների ոգիները փակված մնում էին դժոխքում՝ Քրիստոսի գալստյան ակնկալությամբ:

ա. Մեղսասեր բանտում արգելվածները հույսով սպասում էին երկնային ազատարար Աստվածորդու գալստյանը (Շարակ.):

բ. Սանդարամետում մահվան կապանքների մեջ էին դրվում նախքան Քրիստոսի գալուստը և սպասում էին նրա փրկարար գալստյանը նրանք, որոնց համար փակված էր դրախտի ճանապարհը Ադամի հանցանքի պատճառով (Սևեռիանոս, «Մեկն. Պատ.» ժող.):

գ. ԻՆչպես որ ես երեխա եղա, մտորը դրվեցի և ուրախացրի ծնողներիս, այդպես էլ ես պետք է իջնեմ դժոխք՝ մեռածներին մխիթարելու, և այն արդարների մոտ, որ հավիտյան սպասում էին և ինձ տեսնելու ակնկալիք ունեին (Եփրեմ, Մեկն. Ավետ. համաբարբառ. գլ. ԺԴ):

դ. (Մարդկային) մարմնական հոգին, Աստվածային անձառ միությանը դուրս գալով, ըստ հրամանի Հոր մոտ էր գնում Իջավ մահվան ստորոտները, արդեարների կապված հոգիների մոտ, քարոզելով բոլորին ծանոթացրեց Հոր Աստվածությանն ու իր շնորհներին և բոլորին ազատելով սատանայի իշխանությունից՝ հզորապես տապալեց դժոխքի նիգերը (Ն. Լամբ. Մեկն. Պատ.):

175. Իջնելով դժոխք՝ Քրիստոսը մեղավորներին ու անհավատների հոգիներին փրկություն տվեց:

ա. Բոլորի թագավորը, հաղթելով բռնավորին, տիրելով մահին և բոլոր նրանց, ովքեր երկրի վրա էին ու դժոխքում, ցույց տվեց հավիտենական փրկության ճանապարհը՝ հավատալու Հայր Աստծուն ու Որդուն, որն իջավ նրանց մոտ ու հարմություն առավ, և Սուրբ Հոգուն՝ իրեն հմագո ու համապատիվ: Եվ իրեն հավատացողներին նա իր հետ վեր բարձրացրեց, իսկ ներքևում, իրենց նախկին բնակության վայրում, թևողեց անհավատներին: Եվ մեղքին քավություն շնորհեց ոչ բոլոր բանտարկվածներին, այլ նրանց, ովքեր ճանաչեցին ու հավատացին նրան (Սևեռիանոս, «Մեկն. Պատ. ժող.):

176. Քրիստոսի մահվանից հետո Նրա մարմինը դրվեց գերեզմանում:

ա. Եվ երբ կատարեցին այգն ամենը, ինչ նրա մասին գրված էր, խաչափայտից իջեցնելով նրան՝ գերեզման դրեցին (Գործք. ԺԳ 29):

177. Պերեգմանում դրված Քրիստոսի մարմինը ապականության չենթարկվեց:

ա. Հիսուս, որին Աստված հարություն տվեց, ապականություն չտեսավ (Գործք. ԺԳ 37):

բ. Հորը և Հոգուն էակից Բանդ Աստված, գերեզման իջար, բայց մնացիր անապական (Շարակ.):

գ. Աստված կամովին եկար չարչարանքների, խաչվեցիր մարդկային ազգի համար և անապական մնալով իջար գերեզման (Նույն տեղը):

դ. Փրկի՛չ, անապականաբար դժրվեցիր գերեզման (Նույն տեղը):

ե. Գովեցեք Քրիստոսին՝ անապական մարմնով գերեզմանից հարություն առածին (Նույն տեղը):

զ. Իր մարմնով սիրով իջավ գերեզման, և սրա համար նրան չտիրեց ապականություն (Եփրեմ, Մեկն. Բ ԿԸորն. էջ 122): Տե՛ս նաև 179. Ը):

178. Քրիստոսի մարմինը նաև գերեզմանում էր անբաժան Աստվածությունից:

ա. Դրվեց շիրիմի մեջ Աստվածությունից անբաժանելի (Գ. Նարեկ. բան ԼԴ):

բ. Գերեզման իջավ մեռած մարմնով և կենդանի Աստվածությամբ (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

գ. (Հովսեփը) աստվածացեալ անապական մարմինը պատեց մաքուր կտակով և դրեց գերեզմանի մեջ (Շարակ.):

դ. Մարմինը Աստվածությունից չբաժանվեց (Եփրեմ, «Մարգարիտ.» գրքում, էջ 352): Տե՛ս նաև 159. Ա, Բ Գ, Դ, Ե, Զ, Է:

179. Քրիստոսի մարմինը միշտ անապական էր և է (այսինքն գերծ է քայքայվելուց, մեղքերից և պախարակելի կրքերից):

ա. Ապականացու մարմինը խառնեց Աստվածության անապականությանը:

բ. (Բանդ Աստված) անապական մարմնով ծնվեցիր սուրբ կույսից (Շարակ.):

գ. Քո միածին առաքեցիր մարմնանալու սուրբ կույսից և անարատ կերպով ծնվելու անապական որովայնից (նույն տեղը):

դ. Կիրակի վաղ առավոտյան կանխեցին կանայք խնկելու անապական մարմինը (Նույն տեղը):

ե. Քրիստոս Աստված, անապական մարմնով նորափոր վեմի մեջ դրեցիր (նույն տեղը):

զ. Չարչարվեց քառաթև խաչի վրա և վեր բարձրացավ թաղված տեղից անապական մնալով (նույն տեղը):

է. Անխմոր բաղարջ հացի հետ

Իր երկնավոր,

Կուսածին, անսերմնավոր,

Անապական ու հոգևոր

Մարմինը տվեց (Նույն տեղը):

ը. (Բանն Աստված) մեղքերի ծնունդ ապական նղորից անապականության փոխեց կույսի որովայնում, ինչպես վկայում է սուրբ Աթանաս Ալեքսանդրացին, թե «որովհետև Քրիստոսի մարմինը առանց անուսնանալու էր և մեղքերից զերծ, նրանում ապականություն չկար»: Եվ ասվում է, եթե վերացրեց աշխարհի մեղքերը, որոնք ապականության մայն են, ուրեմն էլ ինչո՞ւ են մոլորվածներին ասում, թե ապականացու էր Քրիստոսի մարմինը:

Այս նույն իմաստով է ասում նաև Գրիգոր Սքանչելագործը. «Ով Քրիստոսին չի խոստովանում հոգով անփոփոխ և մարմնով անապական, նա թող նզովյալ լինի» (Ն. Շնորհալի, Թուղթ գրված սամոստացիներին):

թ. (Քրիստոսի) մարմինը եթե մեկը ապականացու համարի կրքերի՝ քաղցի, ծարավի, արտասվելու, խաչի վրա արյուն թափելու պատճառով, որով մենք կենդանացանք, խոստովանում ենք և մենք այս բանը, իսկ եթե մեկը ականա ու պախարակելի կրքերի պատճառով ապականացու ասի նրան դրան մենք մասնակից չենք դառնա: Քանզի ապականությունը մեղքերի ծնունդ է, իսկ ով մեղք չի գործել, նրան չի տիրում և ապականությանը (Նույն, Թուղթ՝ գրված Ալեքսին):

ժ. Քրիստոսի հոգին փառավորվել էր կույսի արգանդում: Նա ուներ չարչարելի մարմին, բայց անապական էր գերեզմանի և՛ մեղքերի, և՛ կրքերի տեսակետից, այսինքն՝ հողում չքայքայվող էր, անմեղանչական, կրքերի կողմից՝ անբացատրելի, որովհետև ինչ որ կրեց, կամավոր կրեց և ճշմարտապես (Շիրակավանի սահմ. ժողովից, որը գումարվել է Տիրոջ 862թ.: Տե՛ս Չամչյան, «Պատմ. Հայոց», հատ. Բ էջ 686):

180. Քրիստոս հարություն առավ մահվանից հետո երրորդ օրը:

ա. Երրորդ օրը Աստված նրան (Քրիստոսին) հարություն տվեց (Գործք. Ժ 40): Տե՛ս նաև 185. Ա:

181. Քրիստոսը իր հարությամբ մեզ հոգևոր հարություն շնորհեց առաքինի կամ արդար կյանքի համար:

ա. Հարություն առավ, որ մեզ արդարացնի (Հռոմ. Դ 25):

բ. Իր հարությամբ մեզ հարություն պարգևեց (Շարակ.):

գ. Իր հարությամբ մեզ կենդանություն շնորհեց (Նույն տեղը):

դ. (Տե՛ր) քո հարությամբ մեզանում հարություն տվիր արդարությանը (Նույն տեղը):

ե. Քո լուսափայլ հարությամբ վերստին կյանք շնորհեցիր մարդկային ազգին (նույն տեղը):

զ. Քո հրաշափառ հարությամբ վերաստեղծեցիր մեր մահկանացու բնությանը (Նույն տեղը):

182. Քրիստոսը իր հարությամբ հաստատեց մեր հույսը հավիտենական փառքի և երանության ժառանգության:

ա. (Աստված) վերստին ծնեց կենդանի հույսի համար՝ մեռելներից Հիսուս Քրիստոսի հարությանը (Ա. Պետր. Ա 3):

բ. Որ հարություն առար մեռելներից և մեր բնությունը լցրեցիր հույսով (Շարակ.):

գ. Քեզ հետ վերակենդանացրիր մեր մահկանացութունը անմահության հույսով (նույն տեղը):

դ. Քո կենդանարար հարությամբ մահացածներիս հրավիրեցիր անմահության հարությանը (Նույն տեղը):

ե. Նա, հավերժ կենդանության առհավատչյան Աստվածային մարմնի հարությունը պարզեց մարդկանց (Նույն տեղը):

զ. Եղավ անդրանիկ ծնունդը բոլոր ննջեցյալների և բոլոր մարդկանց տվեց կենդանության վերստին նորոգման հաստատ հույսը (Ժամագիրք):

183. Քրիստոսը համբարձվեց Ձիթենյաց լեռից, որը գտնվում էր Բեթանիային և Երուսաղեմին մոտիկ:

ա. Ապա (Քրիստոս) նրանց (իր աշակերտներին) տարավ հանեց մինչև Բեթանիա և, բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց (Ղուկ. ԻԴ 50):

բ. Ապա (այսինքն՝ Քրիստոսի համբառնալուց հետո) Երուսաղեմ վերադարձան (աշակերտները) Ձիթենյաց կոչվող լեռնից, որ Երուսաղեմին մոտ է (Գործք. Ա 12):

184. Քրիստոսն համբարձվեց հարություն առնելուց հետո քառասուներոդ օրը:

ա. Հիսուս սկսեց անել և ուսուցանել սկզբից մինչև այն օրը, երբ Սուրբ Հոգու միջոցով պատվեր տվեց առաքյալներին, որոնց ինքն ընտրել էր, և երկինք վերացավ: Նա իր չարչարանքները հետո իրեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ շատ ապացույցներով՝ քառասուն օրերի ընթացքում երևալով նրանց և խոսելով Աստծու արքայության մասին (Գործք. Ա 1-3): Տե՛ս նաև 188. Դ:

185. Քրիստոսը երկինք համբառնալուց առաջ շատերին բազում անգամ երևաց՝ հավատացնելու իր ճշմարիտ հարությանը:

ա. Ես ձեզ ավանդեցի նախ այն, ինչ ես ինքս ընդունեցի. թե՛ Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար՝ ըստ Գրքերի և թե՛ թաղվեց և թե՛ հարություն առավ երրորդ օրը՝ ըստ Գրքերի և երևաց Կեփասին և ապա Տասներկուսին. ապա երևաց միանգամից ավելի քան հինգ հարյուր եղբայների, որոնցից շատերը կան մինչև այժմ. ոմանք էլ ննջեցյալ եղան (Ա Կորնթ. ԺԵ 3-6):

186. Քրիստոս իր հարությունից հետո, քառասուն օրվա ընթացքում իր աշակերտներին ավանդեց կարևոր վարդապետություններն ու պատվերները:

ա. Եվ քառասուն օրվա ընթացքում

Ինքը երևաց բոլորին.

Ածրթուն հոգիների խոսքն էր պատմում

Եվ արքայությունն էր հայտնի դարձնում (Ն. Շնորհալի, Հավատի խոսք): Տե՛ս նաև 184. Ա):

187. Քրիստոսը խոստացավ առաքյալներին Սուրբ Հոգուն ուղարկել նրանց մոտ՝ նրանց զորացնելու և մխիթարելու:

ա. Ես ուղարկում եմ ձեզ իմ Հոր խոստումը, իսկ դուք նստեցեք Երուսաղեմ քաղաքում, մինչև որ երկնքից զորությամբ զգեստավորվեք (Ղուկ. ԻԴ 49):

բ. Երբ Սուրբ Հոգին իջնի ձեր վրա, զորություն պիտի առնեք (Գործք. Ա 8):

Հարություն առնելուց հետո, սուրբ զատկին,

Երբ լրացավ քառասուներորդ օրը,

Իր ընտրած տասնմեկ աշակերտներին

Հանեց Ձիթենյաց լեռան գագաթը:

Եվ խոստանում էր պարգևել նրանց

Հոր ավետիսը՝ Հոգուն (Ն. Շնորհ. Ողբերգ. գիրք Դ):

188. Քրիստոսը երկինք բարձրացավ հենց այն մարմնով, ° որն ընդունել էր:

ա. Նույն մարմնով բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում (Հանգ.):

բ. Երբ լիովին լրացավ մարդեղեն մեծ խորհուրդը, մեզնից ստացած մարմնով փառքով առ Հայրը վեր համբարձվեց (Շարակ.):

գ. Ավարտելով մարդեղության փրկարար խորհուրդը՝ Աստվածապես համբարձվեց և բարձրանալով երկնքի ամենաբարձր տեղը՝ փառավորապես նստեց աթոռին իր սկզբնաժառանգ Հորը հավասար չկորցնելով մեզնից ստացածը (Շ. Նարեկ. բան ԼԴ):

դ. Քառասուն օրից հետո նույն մարմնով, առաքյալների աչքի առաջ, բարձրացավ երկինք, Հոր մոտ և նստեց բարձրունքում Հոր մեծության հավասար (Ն. շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

189. Քրիստոս համբառնալով երկինք՝ մտավ իր Աստվածային փառքի մեջ:

ա. Չէ՞ որ Քրիստոս պետք է նույն չարչարանքները կրեր և այնպես մտներ իր փառքի մեջ (Ղուկ. ԻԴ 26):

բ. Արարչական փառավորությամբ նստեց առաջին, անխառն ու բարձր գահին (Գ. Նարեկ. բան հե.):

գ. Սուրբ, որ նսում ես Հոր աջ կողմում: Հոր աջ կողմում ասելով՝ հայտնի է դարձնում Որդիական պատիվը Որովհետև նստելը հայտնի է դարձնում հայրենի փառքի թագավորությունն ու մշտենջենավորությունը (Կյուրեղ, Մեկն. ժամակարգ):

190. Քրիստոսը ի սկզբանե Հորից ստացել էր Աստվածային այն փառքը, որի մեջ նա մտավ իր համբարձումից հետո:

ա. Մի՛ անսա այն խոսքերին, որոնք ամենաչարի շարքն են դասվում, թե խաչից իջնելուց և հարություն առնելուց հետո Որդին Հոր աջ կողմում: Որովհետև ոչ թե աջը լինելու հետևանքով բռնեց աթոռը, այլ ինչպես ասված էր ի սկզբանե, մշտենջենապես աթոռակից էր Հորը: Եվ այդ աթոռը Փրկչից առաջ տեսնում էր Եսայի մարգարեն. «Տեսնում էի, ասում է, տիրոջը վերևի աթոռների վրա ուրիշների հետ միասին» (Կյուրեեղ Երուսաղ. Կոչ. ընծ. գլ. ԺԴ):

բ. Ըստ որում Բանն Աստված հավիտյանների մշտենջենավոր արարիչն էր, նստած Աստծու աջ կողմում (Որովհետև պատիվը սա է՝ Հոր աջ կողմում նստելը): Նույն պատվին արժանանալով՝ նա բարձրացրեց մարդկությանը, որը բնությունն ստացավ և նստեց Հոր աջ կողմում փառքի աթոռին (Ս. Շնորհալի, Մեկ. Ա Պետ. Ճառ. Ը): Տե՛ս նաև 120. Ա, 189. Բ Գ:

191. Երբ Սուրբ Հոգին հրեղեն լեզուներով իջավ առաքյալների վրա, զարդարեց նրանց լեզվախոսության պարզևո՞վ Ավետարանի քարոզության համար:

ա. Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ, միատեղ էին: Եվ հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման. և լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված լեզուներ, նման բոցեղեն լեզուների, որոնք և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս (Գործք Բ 1-4):

բ. (Առաքյալները) առել էին Սուրբ Հոգու զորությունը, ստացան նաև ամենայն ազգերի լեզուների բաժանման գիտակցությունը, որպեսզի ի վիճակի լինեն բոլոր երկրների մարդկանց, ամբողջ տիեզերքում, ուսուցանելու Աստվածային հրամանները (Գ. Լուս. Ազաթ. - երկում 663):

գ. Ամենքը լցվեցին Սուրբ Հոգու զորության հոսանքով, ելան տիեզերքի մեջ, որպեսզի հաղորդեն Աստվածային հրաշքների գիտությունը բազում ազգերի լեզուներին, մատնանշեն այն նշանները, որ տվել էր վերը՝ երկնքում և ներքևը՝ երկրում (Նույն տեղը 674):

ե. Որ Տիրոջ հոգին իջավ և Իսրայելի տասներկու ցեղերին առաջնորդեց անապատում, այդպես էլ այսօր տասներկու առաքյալներին առաջնորդում է դեպ ավետարանը (Նույն տեղը):

192. Նեստորի մոլորությունը:

ա. Չար Նեստորը հայիոյեց ամենասուրբ կույսին (ասելով թե) նա մարդածին է և ոչ թե Աստվածածին: Որովհետև, (ասում էր նա) ծնվածը նրանից սկիզբ առավ. ուրիշ էր Մարիամից շնորհով ծնված որդին և ուրիշ էր հորից հավիտենական ժամանակներից առաջ ծնված որդին. այնպես որ լինում են երկու որդի և երրորդությունը դառնում է չորրորդություն (Մ. Խորենացի, «Պատ. Հայոց.», հատոր Գ, գլ. կա.):

բ. Ամոթ թող լինի Նեստորին ու նրա նմաններին, որոնք մի անգամ Մարիամին մարդածին ասացիտն և ոչ Աստվածածին (Ն. Շնորհալի, Մեկն. Բարձր.):

գ. Նեստորի նման չենք սխալվում

Որ Կույսին մարդածին է ասում (Նույն, Վիպաս. Նախն.):

դ. Նեստորը և նղա համախոհները մեկ Քրիստոսին երկու որդու և երկու բնության բաժանեցին. մարմինը Աստծու Բանի տաճարը համարեցին, ինչպես որ հոգեկիր մարդկանցից մեկը և նույն բաժանված չարչարանքով ու մահով. խաչը և մահը, որոնց միջոցով փրկություն եղավ, Աստծուն չվերագրեցին, այլ լոկ մարդուն (Նույն, Թուղթ՝ գրված Համայք նահանգի քահանաներին): Տե՛ս նաև 197. Ա, Բ Գ, Դ, Ե:

193. Եվտիքեսի մոլորությունը:

ա. Թող պապանձվեն Եվտիքեսը, Ապողինարը և նրանց համախոհները, որոնք ասում են, թե Քրիստոսը չի առել բնական հոգի կամ մարդկային միտք, կամ էլ ասում են, թե Քրիստոսը երևացել է մարդկանց աչքին (Խոսրով, Մեկն ժամակարգ):

բ. Անմարմին Բանն ըստ էության

Եղավ մարմին ճշմարտության,

Իրենը պահելով անփոփոխ՝

Իմն առավ ստուգապես:

Այս նոր խառնումը սքանչելի.

Աստված և մարդ բնությամբ են խառնվում,

Բայց էությունը չի փոխվում,

Եվ ոչ էլ ձևով կերպարանքի,

Ինչպես ժանտ Եվտիքեսն է ասում,

Թե իսկապես մարմին չառավ,

Այլ երևակայությամբ անցավ կույսի միջով

Խողովակի նմանությամբ (Ն. Շնորհալի, Հավատի խոսք):

Գ. Եվտիքեսը հակառակ նրան (Նեստորին) մի բնություն ասաց, և այն ոչ միավորությամբ, այլ խառնվելով ու փոփոխվելով, այսինքն թե՛ Բանն Աստված միայն ձև ու նմանություն առավ սուրբ կույսից և չեղավ ճշմարտապես մարդ (Նույն, Թուղթ՝ գրված Համայք նահանգի քահանաներին):

դ. (Եվտիքեսը) հիմարաբար բարբառելով՝ ասում է «Խոստովանում են, որ Բանն Աստված կույսի արգանդում է կերպավորվել, ձևավորվել մարդու պատկերով ու ձևով մարդ եղել, այլ ոչ թե արարված բնությունից ինչ-որ բան խառնել իրեն, քանզի Աստվածությունը անխառն է ու պարզ»<sup>38</sup> (Հովհ. Դմաստասեր, Ճառ ընդդեմ Երևութակ.):

ե. (Չարափառների խմբերը), Քրիստոսի բնությանը մեկն ասելով, ուրանում էին նրա ճշմարիտ մարդեղության խորհուրդը: (Ասում են վերջինը Եվտիքեսն էր, որ հայիոյումգ էր կույսից ծնված

<sup>38</sup> Այս միտքը մեջ է բերում նաև Գրիգոր Դ կաթողիկոսը՝ Տղա անվանվածը, այն թղթում, որ գրված է Գրիգոր վարդապետ Տուտեորդուն:

Քրիստոսի մարմինը և բնությունը. առաջինը Եվտիքեսն էր, որ ասում էր Քրիստոսի մարմինը երկնքից է և անստացական, և մի բնություն ունի: Տե՛ս նաև 197. Ա, Գ, Է:

194. Ապողիճնարի մոլորությունը:

ա. Դարձյալ մարդեղության և խաչի մասին է ճառում: Որ առավ մերը աշխարհից, այսինքն՝ մեր բովանդակ բնությունը, մարմինը, հոգին և միտքը: Եվ այս Ապողիճնարի համար ասվեց, որովհետև ասում էր, Քրիստոսը չի առել մարդկային հոգի, այլ միայն մարմին, իսկ հոգու փոխարեն ասում էր ուներ Աստվածությունը (Խոսրով, Մեկն. Ժամակարգ):

բ. Այն հիմարամիտ Ապողիճնարը մարդկայինն անջատելով՝ Քրիստոսի մարմնից հանեց բանական հոգին՝ առնելով. «Աստվածայինը հոգիացել է հոգևորությամբ» (Հովհան Իմաստ. Ճառ ընդդեմ Երևութակ.):

Գ. Ապողիճնարը թող ամաչի այն բանի համար, որ չի խոստովանում Տիրոջ մարդկային հոգի ու միտք առնելը (Ն. Շնորհալի, Մեկն. Բարձր.):

դ. Եվ ո՛չ մարմին անմտաբար,

Որպես ասաց Ապողիճնար,

Թե անհոգի իբր բազինում

Բանն Աստված բնակվեց մարմնում (Նույն, Հավատի խոսք):

195. Հուլիանոսի մոլորությունը:

ա. (Ապողիճնարը, Սոփրոնիոսը և Հուլիանոսը) ասացին, որ Բանը Կույսց առավ մեր բնությունը կիսակատար և ոչ թե կատարյալ (Հովհան Իմաստ. Ճառ ընդդեմ Երևութակ.): Տե՛ս նաև 197. Զ:

196. Նեստորը, Եվտիքեսը, ինչպես նաև այլ աղանդապետեր ազգությամբ հույն էին և Հունաստանից:

ա. Մենք որտեղի՞ց ճանաչեցինք Նեստորին և նրա չար աղանդը: Սանահնո՞ւմ խոսեց (նա), թե Հաղպատում հրատարակեց, թե՞ մեր մարյաքաղաք Անիում առաջնորդ կարգվեց և այնտեղ խոսորվեց: Նրանցը (այսինքն՝ հույներինն) էր, նրանցից ելավ, նրանցից խոսորվեց և թող նզովվի մինչև վախճանը (Գրիգոր Դ. Կաթողիկոս՝ Տղա կոչեցյալ, Թուղթ՝ գրված հյուսիսային կողմերի վարդապետներին):

197. Հայաստանյաց առաքելական եկեղեցին մերժեց և մերժում է Նեստորին, Եվտիքեսին, Ապողիճնարին, Հուլիանոսին և նրանց համախոհների մոլորությունները:

ա. Ո՛չ Նեստորի նման մեկ Քրիստոսին բաժանում ենք երկու բնության կամ երկու անձի և ոչ էլ Եվտիքեսի և նրա համախոհների նման միավորում ենք մեկ բնության մեջ խառնակությամբ ու փոփոխությամբ (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

բ. Եվ ոչ երկուսի միությունը

Բեժեաեց երկու բնության.

Եվ կամ մի որդուն բաժանեց երկուսի,

Ըստ չարաբաստիկ Նեստորի,

Ո՛չ զատեց՝ ո՛չ բաժանեց,

Ինչպես որ Նեստորը երկուսի վերածեց (Նույն, Հավատի խոսք):

գ. Մեկ Քրիստոս, որին մենք Աստվածություն անունն ենք տալիս, հույները բնությունը վրան ավելացնելով՝ նրա հարուստ էությունն են հայտնում: Իսկ որին մենք մարդկություն ենք վերագրում, նրանք դարյալ ավելացնելով բնության անունը մարդու էությունն են ստուգում և նրանց հետ միությանը մեզ հավասար են համարում Որովհետև միևնույնն է Քրիստոսին Աստված և մարդ ասելը, և երկու բնություն Ուրեմն հայտնի է, որ ով Աստված և մարդ դավանեց, այլևայլ բնությունները մեկ անձի վրա ստուգեց: Իսկ այս չարը ստույգ տեսությանը և անձնավորությանը բաժանեց, որից բոլորովին հեռու ենք մենք և մյուսները, որովհետև այս չարափառությունը Նեստորինը լինելով, նզովվել է եկեղեցու կողմից:

«Նրանք (հույները) դարձյալ հակաճառում են մեր դեմ առավել խստորեն, սակայն սնոտի կարծիքի մեջ մոլորվելով, իբր թե միությունը խոստովանելով Փրկչի՝ Քրիստոսի համար, դրանով իսկ մենք խառնում ենք Աստվածային հատկությունները և մարդկային բնությունը (ըստ Եվտիմիոսի): Եվ միավորությունից հետո ընդունելով, թե մենք նրան Աստված և մարդ չենք խոստովանում, այլ ասում ենք Աստծու հատուկ բնությունը փոխել է մարդկայինի: Աստծու շնորհով այդ չար ախտից հեռու մնացին Հայաստանյաց եկեղեցիները ի սկզբանե մինչև այսօր (Ն. Լամբ. Ատենաբ.):

դ. Թող ամաչի պիղծ Նեստորը, որ եկեղեցիների եղծիչն է, և հրեաներին գործակից, և մահմեդականներին հավասար խորհրդակից (Գ. Նարեկ. Մեկն. Երգ. Ե 15):

ե. (Հերձվածողները) չկարողացան Սուրբ Գրքի իմաստը միավորել և Քրիստոսի մարդեղությունը երկու բնության բաժանեցին ու Սուրբ Գրքի խոսքերը այլևայլ մտքերով հասկացան, ինչպես Արիոսը, Մակեդոնը, աշխարհի կործանիչ ու եղծիչ Նեստորը և բյուրավոր այլ հերձվածողներ (Նույն տեղը է 1):

զ. Հասկացանք և այն, որը ոմանց խոսքերով ծանոթացրեց մեզ, ինչ ասված է ձեր առջև, թե հայերը ճշմարիտ դավանությունը վերցրել են Հուլիանոս Աղիկառնացուց, որը Քրիստոսի մահը երևակայաբար ասաց և ոչ թե ճշմարտությամբ: Ընդհանրական եկեղեցին նզովում է այդպես ասողներին ու ընդունողներին, ինչպես նաև մեզ անիրավացիորեն զրպարտողներին (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ասորիքի Միխայել պարիարքին):

է. Նզովում ենք նաև ամբարիշտ Եվտիմիոսին, որ Աստվածության և մարմնի միությանը խառնակությամբ էր դավանում և ոչ թե բնությունների հատկությունների հայեցողությամբ: Ընդունում և ձայնակցում ենք սուրբ ու Աստվածազգեաց Հայրերին, որոնք մահաչափ ճգնելով հակառակվեցին այս հերձվածողներին և ուղղափառ հավատը Աստվածաշունչ վարդապետությամբ իրենց գրքերով մեզ փոխանցեցին, որն ընդունելով և միշտ ընթացելով

ջանում ենք չմոլորվել, գտնվել նրանց աշակերտության ներքո (Գրիգոր Դ<sup>o</sup> կաթողիկոս, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին): Տե՛ս նաև 194. Ա, Բ Գ, Դ, 80. Բ Գ, Դ, Ե:

198. Եկեղեցի է կոչվում Քրիստոսի ճշմարիտ հավատացյալների ընդհանուր բազմությունը:

ա. Մեծ երկյուղ ընկավ բոլոր եկեղեցիների վրա Հաճելի թվաց առաքյալներին և բոլոր եկեղեցիների քահանանիերին (Գործք. Ե 11, Ը 3):

բ. Աստծու եկեղեցին և ուղղափառների ժողովները (Շարակ.):

գ. Քրիստոսի հավատացյալները իսկապես խոստովանում են մայր եկեղեցուն (Սահակ կաթողիկոս, Կանոնագիրք):

դ. Բոլոր ազգերի ու լեզուների համար, որոնք աշակերտեցին ավետարանին և վեմին (Քրիստոս) հավատալով մերձեցան, բոլորի համար կառուցեց մի հոգևոր տաճար և մի եկեղեցի (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. ճառ. դ):

ե. ՓԲոլոր քրիստոնյաներս անվանում ենք Քրիստոսի մեկ եկեղեցի (Ն. Լամբ. Մեկն. Պատ.):

199. Զինվորյալ եկեղեցին կենդանի հավատացյալների խումբն է, որ մարտնչում է իր հոգևոր թշնամու դեմ:

ա. Թեպետև մարմնի մեջ ենք ապրում, բայց մարդկային նկատումներից մղված չէ, որ պայքարում ենք (քանի որ պայքարելու մեր զենքը մարմնավոր չէ, այլ՝ Աստծու կողմից տրված զորավոր զենք է՝ քակելու համար ամրությունները (Բ Կորնթ. Ժ 3-4):

բ. Նրանցով դու մղես բարի պատերազմը (Ա Տիմ. Ա 18):

գ. Զորացրեց Տիրոջով և նրա զորության կարողությամբ. և Աստծու սպառազինությունը հագեք, որպեսզիտ կարողանանք ընդդիմանալ Սատանայի հնարքներին. որովհետև մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ՝ իշխանությունների հետ, պետությունների հետ, այս խավար աշխարհի տիրակալների հետև և երկնքի տակ եղող չար ոգիների հետ: Ուստի առեք Աստծու սպառազինությունը, որպեսզի կարողանաք չար օրում դեմ կանգնել չարին. և երբ ամեն ինչ կատարեք, հաստատուն կացեք՝ տեղում պինդ կանգնած, ձեր մեղքերը գոտեպնդած ճշմարտությամբ, և հագած արդարության զրահը՝ ձեր ոտքերը ամրացրեք խաղաղության ավետարանի պատրաստությամբ: Եվ այս բոլորի վրա, առեք հավատի վահանը, որով պիտի կարողանանք հանգցնել չարի բոլոր մխացող նետերը: Եվ առեք փրկության սաղավարտն ու Հոգու սուսերը, որ է Աստծու խոսքը (Եփես. Զ 10-17):

դ. Հեռու մնանք մարմնիավոր ցանկություններից, որոնք պայքարում են հոգու դեմ (Ա. Պետ. Բ 11):

ե. Վանատների աշակերտությունները Տիրոջ զինվորները (Գ. Նարեկ. բան ՀԲ):

200. Հաղթական եկեղեցին այս սուրբ ննջեցյալների ժողովն է, ովքեր պատերազմը պատերազմելուց հետո հաղթական փառքի հույսով աշխարհից հեռացան:

ա. Դուք մոտեցել եք Սիոն լեռանը և կենդանի Աստծու քաղաքին, երկնային Երուսաղեմին, հրեշտակների բյուրավոր բանակներին, երկնքում գրված անդրանիկների հանդիսավոր ժողովին, բոլորի դատավոր Աստծուն, կատարելության հասած արդարների հոգիներին (Եբր. ԺԲ 22-23):

բ. Պատերազմեցի բարի պատերազմը, ավարտեցի ընթացքս, պահեցի հավատը: Եվ հիմա ինձ է սպասում արդարության պսակը (բ. Տիմ. Գ 7, 8):

գ. (Ո՛վ սուրբ վկաներ) հաղթական համբերությամբ կատարեցիք ձեր ընթացքը և երկրայիններից փոխվեցիք երկնայինների, և Քրիստոսից ընդունեցիք անապական պսակը (Շարակ.):

դ. Քո սուրբ անվանը հուսացողները պատերազմելով հաղթեցին թշնամուն Որոնք իրենց կամքով անցան հրի և սրի վրայով և դասվեցին հրեշտակների շարքը (Նույն տեղը):

201. Տաճարներն ու աղոթատները եկեղեցի են անվանվում ո՛չ ըստ իսկության, այլ ըստ հարմարության:

ա. Եվ որովհետև միշտ այնտեղ (աղոթարանում) ենք հավաքվում և սովորություն ունենք այն եկեղեցի անվանել հարանունաբար ևլ ոչ թե իսկապես (Սահակ կաթողիկոս, Եկեղեցու ճառում, Տե՛ս «Կանոնագրքում»):

բ. Եկեղեցի է կոչվել անվանումով, որովհետև բոլորը կոչված են և հավաքված մի տեղում (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Ժը.):

202. Քրիստոսի եկեղեցին միակն է, սուրբ, կաթողիկե և առաքելական:

ա. Հավատում ենք նաև միակ, ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցուն (Հանգ.):

բ. Միակ, սուրբ, ընդհանրական և առաքելական եկեղեցու համար (Ժամագիրք):

գ. Քո սուրբ եկեղեցուն խաղաղություն պարզևհի՛ր և կաթողիկե եկեղեցին հաստատի՛ր մի հավատով (Նույն տեղը):

դ. Ուրաք եղիր, սուրբ եկեղեցի, Սուրբ Կույս (Շարակ.):

ե. Ցնձա՛՜ այսօր և զվարճացի՛ր, սուրբ կաթողիկե եկեղեցի (Նույն տեղը):

զ. Անպարտելի կաթողիկե եկեղեցու ժիր մշակներ (Նույն տեղը): Տե՛ս նաև 212. Ե:

203. Քրիստոնյանները եկեղեցու անդամներ են:

ա. Անդամներ ենք նրա (Քրիստոսի) մարմնի (եկեղեցու) (Եփես. Ե 30):

204. Քրիստոնյանները ներքին և հոգևոր խավարի, հույսի ու սիրո միությամբ մի մածրմին են:

ա. Մենք թվով շատ ենք Քրիստոսով (Հռոմ. ԺԲ 5):

բ. Աղաչում եմ ձեզ համբերությամբ հանդուրժեք միմյանց սիրով, ջանացեք պահել Հոգու միությունը խաղաղության կապով. մեկ մարմին և մեկ հոգի, ինչպես որ մեկ է ձեր հույսը, որին Աստված կոչեց մեզ: Մեկ Տեր կա, մեկ հավատ (Եփես. Դ 1-5): Տե՛ս նաև 212. Ե:

205. Քրիստոսը եկեղեցու գլուխն է:

ա. Նա (Քրիստոս) է գլուխը մարմնի, որ եկեղեցին է (Կող. Ա 18):

բ. Եվ նրան (Քրիստոսին) հաստատեց (հավիտենական Հայրը) իբրև գլուխ եկեղեցու, բոլոր բաների վրա, եկեղեցի, որ նրա մարմինն է (Եփես. Ա 22, 23):

206. Քրիստոսի եկեղեցին ազատ է ամեն այն արատից, անմաքուր, մոլոր և սուտ վարդապետություններից:

ա. Սրբացրու նրանց քո ճշմարտությամբ, որովհետև քո խոսքը ճշմարտություն է: Եվ ես ինձ սրբացնում եմ նրանց համար, որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ (Հովհ. ԺԷ 17, 19):

բ. Փրկեց մեզ և կոչեց սուրբ կոչումով (Բ. Տիմոթ. Ա 9):

207. Քրիստոսի եկեղեցու անդամները (այն է՝ քրիստոնյանները) մաքրված են մեղքի աղտից՝ ավազանի մկրտությամբ և առ Քրիստոս ուկնեցած հավատով:

ա. Քրիստոս սիրեց եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար, որ սրբացնի ավազանի մաքրությամբ խոսքով, որպեսզի նա իր առաջ փառավոր կերպով կանգնեցնի եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտեղություն կամ նման բաներից ոչինչ չունենա, այլ լինի սուրբ և անարատ (Եփես. Ե 25-27):

բ. Եվ նրանց (հեթանոսների) ու (հրեանների) միջև ոչ մի խտրություն չդրեց (Աստված) հավատով մաքրելով նրանց սրտերը (Գործք. ԺԵ 9):

208. Կաթողիկեն թարգմանվում է տիեզերական:

ա. Ի՞նչ է կաթողիկեն՝ տիեզերական (Խոսրով, Մեկն. Ժամակարգ):

209. Քրիստոսի եկեղեցին բոլորին, որ աշխարհից կամ ազգից էլ լինի, սիրով և առանց խտրության ընդունում է իր գիրկը:

ա. Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք. ուրեմն խտրություն չկա ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ազատի, ո՛չ արուի և էգի. որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Քրիստոս Հիսուս (Գաղատ. Դ 27-28):

բ. Հագեք և որը, ° այն, որ նորոգված է գիտությամբ, ըստ իր Արարչի պատկերի. այլևս չկա հրեա, ոչ էլ հեթանոս, թլփատություն, բարբարոս, սկյութացի, ծառա, ազատ, այլ՝ Քրիստոս, որ ամեն ինչ է ամեն բանի մեջ (Կողոս. Գ 10-11):

գ. Ուղղափառների բոլոր եկեղեցիները, որ կան աշխարհում, մեկն են, որովհետև երկրի մի ծայրից մինչև մյուսը ծայրը, ուր էլ, որ գնա ճշմարիտ հավատացյալը ուղղափառ եկեղեցին իր եկեղեցին է: Եվ նրան չի տարբերում ո՛չ պետությունը, ո՛չ էլ լեզուն օտար, այլ որպես մայր, նրան ընդունում է իր գիրկը (Խոսրով, Մեկն. Ժամակարգ):

210. Քրիստոսի եկեղեցին գոյություն կունենա մինչև աշխարհի վերջը:

ա. Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչև աշխարհի վերջը (Մար. իր. 20):

211. Քրիստոսի եկեղեցին տարածվել է և կտարածվի աշխարհի բոլոր ծագերը, բոլոր ազգերի մեջ, բոլոր լեզուներով:

ա. Գնացեք ամբողջ աշխարհով մեկ և քարոզեցեք Ավետարանը բոլոր մարդկանց (Մարկ. ԺԶ 15):

բ. Եվ արքայմության այս Ավետարաիր պիտի քարոզվի ամբողջ աշխարհում՝ ի վկայություն բոլոր հեթանոսների (Մատթ. ԻԴ 14):

գ. Եվ կգան մարդիկ արևելքից և արևմուտքից, հյուսիսից և հարավից ու կբազմեն Աստծու արքայության մեջ (Ղուկ. ԺԳ 29):

դ. (Եկեղեցին) կաթողիկե է անվանվում, որովհետև տարածված է ամբողջ աշխարհում, երկրի մի ծագից մինչև մյուս ծագը (Կյուրեղ երուսաղեմցի, Կոչ. ընծ. գլ. Ժը.):

212. Քրիստոսի եկեղեցին հաստատված է առաքյալավանդ վարդապետությունների հիմքի վրա:

ա. Ապա ուրեմն օտար և պանդուխտ չենք, այլ՝ համաքաղաքացի սրբերին և ընտանի՝ Աստծուն, կառուցված առաքյալների և մարգարեների հիմքի վրա (Եփես. Բ 19-20):

բ. Որ խոսքով հաստատեցիր քո եկեղեցին Քրիստոս, առաքելական վեմի վրա (Շարակ.):

գ. Քո սուրբ եկեղեցին շինեցիր առաքյալների և մարգարեների հավատի վեմի վրա (Նույն տեղը):

դ. (Եկեղեցին) Շինվեց Պետրոսի հավատի վրա ոչ միայն Հռոմում, այլև բոլոր քաղաքներում ու գյուղերում, մեծից մինչև փոքրերը: Ամենուր նույն հավատն է, և նույն հիմքը, և նույն հաստատությունը, քանզի մեկն է Տերը, և մեկը՝ մկրտությունը Եվ որպես Պետրոսը Հռոմում հաստատեց եկեղեցին, նույնպես էլ առաքյալներից յուրաքանչյուրը՝ աշխարհի իրեն վիճակված մասում (Եղիշե, Տիրոջ թաղմանը նվիրված ճառը):

ե. Ողորմություն ենք հայցում բոլոր եկեղեցիտների համար, որոնք շինված են ամբողջ աշխարհում՝ ըստ առաքյալների քարոզչության, որի համար էլ Առաքելական ենք կոչում: Իսկ որոնք շեղվել են առաքյալների դավանությունից, դրանք այլևս առաքելական չեն կոչվում: Թեպետև Առաքելական եկեղեցիները բազմաթիվ տեղերում կան, բայց մեկն են ասվում միասնական հավատի համար (խոսքով, Մեկն. Պատ.):

213. Եկեղեցու խորհուրդները կատարում են տեսանելի կամ նյութական նշանների միջոցով:

ա. ԱՆվայելուչ և ոչ սրբազան չէ (Եկեղեցու խորհուրդները) կատարել տեսանելի պատկերներով, այլ՝ Աստվածաարժան է խորհուրդները ներկայացնել բնական և մարդկային վայելուկ պատկերներով (Դիոնեսիոս, «Եկեղ. քահանայապետ.» գրքում):

բ. Աստված չի կամենում կատարման պատճառով անարգել խորհուրդների ավանդը, որպեսզի չասես, թե «որովհետև մտքով ի վիճակի եմ հասու լինելու, էլ ինչո՞ւ է մկրտությունը ջրում»: Դրա վրա ուշադրություն դարձնելով՝ կարող ենք ցույց տալ, որ Աստված կարող է և առանց ջրի տալ շնորհների պարգևները, բայց մենք չենք կարող առանց ջրի ընդունել շնորհները. նա կարող է և առանց ջրի լուսավորել, բայց մենք անկարող ենք առանց ջրի լուսավորությունն ընդունելու (Սեբերիանոս, ճառ Դ, «Կրոնի և մկրտութ.» մասին):

214. Քրիստոսը սահմանեց եկեղեցու խորհուրդները: Տե՛ս 224. Ա, Բ, Գ, Դ, 225. Ա, 235, 241, 252, 271, 283:

215. Եկեղեցու խորհուրդները կատարում են սրբանվեր սպասավորների միջոցով:

ա. Չկա որևէ շնորհ, որ Աստված տա առանց առաջնորդների (այստեղ՝ առանց եպիսկոպոսների և քահանաների), այլ վերստին Հոգաց ծննդյան, Տիրոջ կենարար մարմնի և արյան բաշխման, զոջացողների մեղքերի թողության, ապաշխարության խոստովանության և ամուսնությամբ միանալու և նման այլ Աստվածարար պարգևների միջնորդները լինում են եկեղեցու առաջնորդները (Խոսրով, Մեկն. ժամակարգ):

բ. Սուրբ Հոգին զորացնում է քահանայապետերի ձեռքերը՝ շնորհաբաշխության, քահանաներինը՝ նվիրագործության, սարկավագներինը՝ սուրբ եկեղեցու սպասավորության համար (Ն. Լամբ. ներքող Հոբու գալստյան): Տե՛ս նաև 299. Բ:

216. Կարգը տրվում է եպիսկոպոսի կողմից: Տե՛ս 271. Բ 273. Ա:

217. Եկեղեցու խորհուրդները, բացի կարգից կատարվում են նաև քահանաների ձեռքով: Տե՛ս 215:

218. Մկրտությունը, դրոշմը, ապաշխարությունը, հաղորդությունը հարկավոր են բոլոր հավատացյալներին:

ա. Եթե մեկը ջրից ու հոգուկց չձնվի, չի կարող Աստծու արքայությունը մտնել (Հովհ. Գ 5): Տե՛ս նաև 228. Ա:

Դրոշմի մասին տե՛ս 240. Ա, Դ:

բ. Եթե չապաշխարենք, ամենքդ էլ նույնպես պիտի կորչենք (Ղուկ. ԺԳ 3): Տե՛ս նաև 245, 246, 247, 262:

Հաղորդության մասին տե՛ս 261. Է 262. Դ:

219. Կարգը պետք է տալփափագողներին կամ արժանավոր դատողներին:

Նույնպես և ամուսնությունը և հիվանդների օժուճը:

ա. Ձեռքդ շտապով որևէ մեկի վրա մի՛ դիր (Ա Տիմ. Ե 22): Տե՛ս նաև 278, 279. Ա, Բ:

Ամուսնության մասին տե՛ս 268. Բ:

Հիվանդների օժան մասին տե՛ս 287. Ա:

220. Մկրտությունը Քրիստոսի մահվան պատկերն է և անկրկնելի է:

ա. Որ մկրտվեցինք Հիսուս Քրիստոսով, նրա մահով է, որ մկրտվեցինք (Հռոմ. Զ 3):

բ. Մեկ Տեր կա, մեկ հավատ, մեկ մկրտություն (Եփես. Դ 5):

գ. Մեկ անգամ մկրտվածների համար եթե սայթաքեն, անհնար է երկրորդ անգամ ապաշխարությամբ նորոգվել, որովհետև նրանք վերստին խաչն են հանում Աստծու Որդուն և դարձյալ խաղք ու խայտառակ դարձնում (Եբր. գ 4, 6):

դ. Այնտեղ (եկեղեցում) կատարված լվացումը Քրիստոսի մահով չպետք է լինի, որպեսզի անգիտակցաբար չանարգվի Աստվածությունը (Գ. Նարեկ. բան ՀԵ):

ե. Խաչը մկրտություն է ասվում և մկրտությունը՝ խաչ: Ուրեմն՝ ով երկրորդ անգամ է մկրտվում, նշանակում է, թե Քրիստոսը երկրորդ անգամ խաչվեց, որը անհնար չէ (Բարսեղ ճոն, Մեկն. Մարկ. Թ 49):

զ. Ովքեր երկու մկրտություն են ընդունում, Աստծու Որդու խաչելությունն ու նրա խայտառականություն են փնտրում: Խաչելությունը մեկ անգամ եղավ և այլևս չի լինի, իսկ մկրտությունը որպես արդարացուցիչ տրվեց, որը դարձյալ երկրորդ անգամ մեղավորին չի տրվի (Եփրեմ, Մեկն. Եբր, գլ. Զ, էջ 208):

է. Հավատում ենք մի մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության և թողության (Հանգ.): Տե՛ս նաև 227. Գ:

222. Քրիստոսն այլևս չի մեռնի:

ա. Գիտենք, թե Քրիստոս մեռելներից հարություն առած լինելով՝ այսուհետև չի մեռնի, և մահը այլևս նրան չի տիրի (Հռոմ. Զ 9):

223. Աստծու շնորհները անշեղջ ու անդառնալի են պարզևս և կոչը անդառնալի են:

ա. Աստծու պարզևս և կոչը անդառնալի են (Հռոմ. ԺԱ 29):

224. Քրիստոսը մկրտության խորհուրդը հաստատեց իր մկրտվելով:

ա. Աստծու Որդին այն բանի համար եկավ-մկրտվեց, որպեսզի հաստատի բոլորի մկրտությունը, ովքեր մկրտվելու են և որ այդ ավանդելով՝ ամենքի համար փրկություն հայտնի և հասկացվի ու ճանաչվի (Գ. Լուս. Ագաթ. -ի երկուս 420):

բ. Նախ ինքը (Քրիստոսը) սկզբնավորեց վերստին հոգով ծնվելը Աստվածային բնությամբ ու մարմնով մկրտվելով Հորդանանում Հովհաննեսի կողմից: Այդ ժամանակ երկինքը բացվեց, Հոգին իջավ և Հայրական ձայնը նրան որդի դավանեց (Ս. Շնորհ. Մեկն. Ա Պետ. Ճառ Բ):

գ. (Հիսուսը Հովհաննեսից մկրտվեց որպեսզի իր մկրտությամբ սահմանի այդ խորհուրդը (Եփրեմ, Մեկն. Ավետ. համաբարբառ. գլ. Դ):

դ. (Հիսուսն) իր մկրտությամբ լռեցնում էր հրեական մկրտությունը և մերի սկիզբը դնելով՝ առաջ մղում: Եվ այն դեպքերը, որ զատկին կատարվեցին, նույնը նաև մկրտության ժամանակ, քանի որ երկուսից անցնելով՝ մեկը դադարեցրեց և մյուսի սկիզբը դրեց: Նույնպես և հրեական մկրտությունը մտքերից հանեց և եկեղեցական մկրտության դուռը բացեց: Եվ ինչպես որ այն ժամանակ միևնույն սեղանի վրա մեկը կատարեց և մյուսի սկիզբը դրեց, նույնպես էլ այստեղ մի գետում մեկը ավարտեց և մյուսիս սկիզբը դրեց: Քանի որ ստվերը մերժեց և ճշմարտությունը հաստատեց (Ոսկեբեր. Մեկն. Մար. գիրք Ա, Ճառ Ժբ.):

225. Քրիստոսը հարությունից հետո մկրտության խորհուրդը կատարելու հրաման տվեց:

ա. Գնացեք ուրեմն աշակերտ դարձեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցեք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով (Մատթ. իր. 19):

226. Մկրտելիս պետք է երեխային երեք անգամ ընկղմել ավազանի ջրի մեջ:

ա. (Քահանան) երեխային իջեցնում է ջրի մեջ և ասում. «Աստծու ծառա (անունը), երեխայությունից գալով մկրտության, մկրտվում է հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու»: Եվ այս բանը մեկ անգամ ասելով՝ երեք անգամ ընկղմում է ջրի մեջ, Քրիստոսի երեքօրյա թաղման օրինակով (Մեծն Մաշտոց):

բ. Քահանայապետը նրան (երեխային) մկրտում է՝ երեք անգամ ընկղմելով (Դիոնեսիոս, «Եկեղ. քահանայապետ.» գրքում, Բ մաս, գլ. Բ):

227. Մկրտության ժամանակ երեք անգամ ընկղմելը նշանակում է Քրիստոսի երեքօրյա թաղումը:

ա. Մկրտությամբ թաղվեցինք նրա (Քրիստոսի) հետ մահվան մեջ (Հռոմ. Ձ 4):

բ. Նրանց, որոնք ավազանի մկրտությամբ Քեզ հետ թաղված են մահվամբ Հատուցանի՜ր քեզ հետ քո փառքով (Ժամագիրք):

գ. Ավազանի մկրտությունը Քրիստոսի մահվան օրինակի նկարագրությունն է: Երեք անգամ ջրի մեջ ընկղմելը նշանակում է Հիսուսի երեքօրյա թաղումը, իսկ ավազանի մեջ իջնելն ու դուրս գալը Տիրոջ հարությունն է խորհրդանշում (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. Ճառ Բ):

դ. Սրբազնաբար մկրտվելը, երեք անգամ ջրի մեջ ընկղմելով, կենսատու Հիսուսի Աստվածապետական մահվան և երեքօրյա թաղման նմանությունն է (Դիոնեսիոս, «Եկեղց. Քահանայապետ.» գրքում, Բ մաս, գլ. Բ):

ե. Ինչպես որ Հիսուսը եկավ, աշխարհական մեղքերը հանձն առավ ու մեռավ, որպեսզի մահը սպանի և հարությունը հաստատի իր հարությամբ, այդպես էլ դու իջնելով ջրի մեջ և ջրում թաղվածի նման մնալով, որպես նա վեմի մեջ, մյուս անգամ հարություն կառնես՝ նորոգվելով և կենդանության մեջ ձեռնելով (Կյուրեղ Երուսաղեմ. Կոչ. ընդ. գլ. Դ): Տե՛ս նաև 226. Ա:

228, 229, 230. Ովքեր մկրտվում են, նրանք ազատվում են մեղքի ծառայությունից և, նորից ծնվելով հոգևոր կյանքի համար, որդեգրության են կոչվում երկնավոր Հորը՝ նրա արքայության ժառանգը լինելու:

ա. Ձեզանից յուրաքանչյուրը թող մկրտվի Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար (Գործք. Բ 38):

բ. Ինչպես որ Քրիստոս մեռելներից հարություն առավ Հոր փառքով, նույնպես և մենք (մկրտությամբ) քայլենք նոր կյանքով (Հռոմ. Ջ 4):

գ. Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտվեցիք, Քրիստոսով զգեստավորվեցիք Ուստի, ծառա չես, այլ՝ որդի, և եթե որդի ես, ապա և՛ ժառանգ աստծու (Գաղատ. Գ 27, Դ 7):

դ. Մենք՝ սուրբ ավազանի մկրտությամբ նորից ծնվածներս, այսօր ուրախությամբ տոնում ենք խաչի նշանով (Շարակ.):

ե. (Սուրբ Հոգի), որ արարչակից ես Հորը և Որդուն, կենդանաձնյալ արարածներիս, այսօր Աստծու որդիներ ես ծնում ջրից (Նույն տեղը):

զ. Որպես հավատայինք, թե նա բնությամբ Աստծու Որդի էր, բայց եկավ և շնորհիվ մարդու Որդի եղավ՝ ծնվելով կույսից, նմանապես հավատում ենք նույն չափով բնությամբ, թեև մենք՝ որ բնությամբ Ադամի որդիներ ենք, ծնվելով կույս ավազանից, շնորհով լինում ենք Աստծու որդիներ (Ս. Շնորհ. Մեկն. Հակ. ճառ Գ):

է. Նրանով (այսինքն՝ Սուրբ Հոգով) ավազանը մեզ վերստին ծնում է՝ որդիանալու Աստծուն, ազատվելով մեղքերից և կենդանությունպարգևելով անմահական կյանքում (Խոսրով, Մեկն. Պատ.): Տե՛ս նաև 391. Բ:

231. Բացի այն մկրտությունից, որ լինում է ջրով, կա նաև արյան մկրտություն և սիրո մկրտություն:

ա. Այն բաժակը, որ խմելու են, կխմեք, և այն մկրտությունը, որով ես մկրտվելու են, նրանով կմկրտվեք (Մարկ. Ժ 39):

բ. Մկրտությունը չարչարանքների է կոչում առ այն ով մկրտվեց իր արյամբ Որովհետև ինչպես որ մկրտությունն է մեղքերի մաքրիչ, այդպես էլ արյամբ նահատակությունը մաքրում է ամեն տեսակի մեղքերից և Աստծու որդի դարձնում (Ն. Շնորհ. Մեկն. Բարձր.):

գ. Եթե որևէ մեկը չընդունի մկրտությունը, նրան փրկություն չկա, բացի նահատակներից, որոնք նաև առանց ջրի են ստանում քավություն: Ժամանակին, երբ մեր Տերը եկավ իր խաչով աշխարհը փրկելու, կողից խոցվեց և այնտեղից արյուն ու ջուր եկավ, որպեսզի մարդիկ

հավածանքների մեջ լինեն, իրենց ածրյամբ մկրտվեն: Որովհետև ինքը՝ մարտիրոսությունն էլ գիտի մկրտություն անվանել (Կյուրեղ Երուսաղեմցի, Կոչ ընծ. գլ. Դ):

դ. Ավետարաններում մկրտության երկու երկու զորություն ունի. նախ, որ կնիքն են առնում՝ ջրից նրանց շնորհած, և երկրորդ՝ սուրբ մարտիրոսներին տրվում է նրանց արյամբ: Եվ այս է նշանակում փրկության համար նրա կողից արյուն և ջուր հոսելը (Նույն տեղը, գլ. ԺԴ):

ե. Հոգին երբ ջրում իջնում է մարդու վրա, մկրտում է նրան, թեպետև նա ջրում մկրտված չլինի (Սեբերիանոս, ճառ Դ, Կրոնի և Մկրտ. համար):

զ. Սուրբ եղջյուրի յուղով օծում էին առաջին թագավորները, և քահանաներն ու մարգարեները: Իսկ սուրբ Հոգին, որ իջավ և նստեց կենսատուի վրա օրինակի և ոչ թե կարիքի համար, առանց յուղի երևաց: ՀՊետո շատերին առանց ջրի լուսավորեց և շատերին առանց յուղի օծեց: Եվ լավ մտածիր, աղաչում են, երբ Սուրբ Հոգին կամենում է արդյունք ցույց տալ, և՛ առանց յուղի է օծում, և՛ առանց ջրի է մկրտում (նույն տեղը):

է. Մովսեսը մկրտեց այլ ջրով, նախքան (Քրիստոսի մկրտությունը. խմբ.) ամպի մեջ և ծովում մկրտելու օրինակով Մկրտեց և Հովհաննեսը, բայց ոչ հրեաբար, որովհետև ոչ միայն ջրով, այլև ապաշխարությամբ, բայց այն էլ չէր ամբողջը Մկրտում է և Հիսուսը, բայց հոգով. սա է կատարելագույնը Կա նաև չորրորդ մկրտությունը՝ վկայությամբ և արյամբ, որոնցով ինքը՝ Քրիստոսը, մկրտվեց, և այն բոլորից ավելի է պատկառելի Կա նաև հինգերորդը, որը արտասուքով է, բայց տաժանելի, քանի որ ամեն գիշեր արտասուքով լվանում էր իր մարմինն ու մահիճը (Գրիգոր Աստվածաբան, ճառ Տիրոջ մկրտութ. ժամանակ):

232. Մեկը արյամբ մկրտվում է այն ժամանակ, երբ Քրիստոսի հավատի համար է նահատակվում կամ մարտիրոսական մահով է մահանում:

ա. Պանծալի նահատակներ մկրտվեցեք Քրիստոսի հետ ձեր արյամբ խաչի վրա մահն ընդունելով (Ժամագիրք):

բ. Ոմանք մահվան բաժակը քեզ հետ խմեցին և արյան մկրտությամբ քեզ հետ մկրտվեցին (Շարակ.):

գ. Մկրտվեցիր քո սուրբ արյամբ, Քրիստոսի առաջին վկա, սուրբ Ստեփաննոսի մեծ նախասարկավագդ (նույն տեղը): Տե՛ս նաև 231. Է:

233. Մեկը սիրով մկրտվում է այն ժամանակ, երբ սիրավառ հոգով փափագում է մկրտության, թեև չկարողանա հասնել: Տե՛ս 231° Ե:

234. Դրոշմի խորհուրդը ցույց տվեց Սուրբ Հոգու Հորդանանում Քրիստոսի վրա իջնելով:  
ա. Ինչպես որ Սուրբ Հոգին իջավ Հորդանանի մեջ իր փառակցի վրա, նույնպես կիջնի ամեն ուղղափառ հավատով մկրտվողի վրա և նրան շնորհով որդեգրություն կվեակոչի Հայր Աստծուն (Ն. Շնորհ. Թուղթ ընդի. քահանաներին):

բ. Աղավնին այն ժամանակ (այսինքն՝ Քրիստոսի մկրտվելու ժամանակ) նրա համար հայտնվեց որպեսզի իմանաս որ քո մկրտվելու ժամանակ Հոգին նույնպես իջնում է (Ոսկեք. Մեկն. Մար. ճառ Ժբ.):

235. Դրոշմի խորհուրդը խոստացավ հարություն առնելուց հետո և այն հաստատեց առաքյալների վրա Սուրբ Հոգու գալով, Հոգեգալստյան օրը: Տե՛ս 287. Ա, Բ Գ, 191. Ա, Բ Գ, Դ, Ե:

236. Դրոշմի խորհուրդը առաքյալների օրոք ձեռքերի միջոցով էր կատարվում:

ա. Երբ Երուսաղեմում գտնվողը առաքյալները լսեցին, թե Սամարիայում էլ ընդունել են Աստծու խոսքը, նրանց մոտ ուղարկեցին Պետրոսին և Հովհաննեսին, որոնք իջնելով, աղոթում էին նրանց համար, որպեսզի ստանան Սուրբ Հոգին. Քանի որ մինչև այն ժամանակ նրանցից ոչ մեկի վրա Սուրբ Հոգին դեռ չէր իջել, այլմիայն մկրտվել էին Տեր Հիսուսի անունով: Այն ժամանակ ձեռքերը դրեցին նրանց վրա և նրանք Սուրբ Հոգին ստացան (Գործք Ը 14-17):

բ. Եվ երբ լսեցին (Եփեսացիք), մկրտվեցին Տեր Հիսուսի անունով: Եվ երբ Պողոսը նրանց վրա ձեռք դրեց, Սուրբ Հոգին իջավ նրանց վրա. լեզուներ էին խոսուս և մարգարեանում (Գործք ԺԹ 5-6):

237. Առաքյալների ձեռնադրությամբ կատարվող դրոշմի խորհուրդի վերջում Սուրբ Հոգին տեսանելի նշաններով կամ զորությամբ իջնում էր օծյալների վրա:

ա. Ապա եթե չտեսնես (այժմ զգալի նշան), չլինի թե չհավատաս: Քանի որ սկզբում չքնաղ ու հոգևոր իրերի դեմքերն ու նշանները միշտ բացահայտորեն են երևում: Որովհետև հետո նման նշանները միշտ բացահայտորեն են երևում: Որովհետև հետո նման բան չի լինում այն պատճառով, որ մեկ անգամ հայտնվեց սկզբում, հետևաբար մյուսները պետք է ընդունես հավատով Եվ այնուհետև մեզ պետք չեն կերպարանքներն ու դեմքերը, քանի որ դեմքերի փոխարեն մեզ բավարարում է հավատով ընդունելը (Ոսկեք. Մեկն. Մար. ճառ Ժբ.):

238. Դրոշմի խորհուրդը մեզանում կատարվում է մկրտվողի ճակատի և այլ անդամների կամ զգայարանների մեռնով օծմամբ:

ա. Քահանան սուրբ յուղը լցնում է իր ափի մեջ և սուրբ յուղով կնքում (մկրտվողի) ճակատը աչքերը ականջները քիթը բերանը ձեռքերը սիրտը մեջքը ոտքերը (Մեծն Մաշտոց):

բ. Սուրբ մեռնով դրոշմեցե՛ք (մկրտվողի) ճակատն ու զգայարանները, ասելով՝ հանում Հոր և Որդու և Սուրբ Հոգու (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված ասմոսատացիներին):

գ. Երբ բոլոր մարդիկ ու (Տրդաթ) թագավորը իջնում էին այնտեղ՝ Եփրատ գետի ջրերի մեջ մկրտվելու, Աստծուց սքանչելի հրաշք երևաց, քանզի գետի ջրերը կընգնելով ետ դարձան: Օծության յուղը, որ Գրիգորը մարդկանց վրա էր թափում, գետի մեջ շրջան կատարելով մարդկանց շուրջն էր պտտվում (Ագաթ. 833):

դ. (Դրոշմի) սրբազան աստվածածնելիության կատարման պարզևն ու շնորհը Աստվածային յուղի միջոցով են կատարվում (Դիոնեսիոս, «Եկեղ. քահան.» գրքում, մաս Դ, գլ. Դ):

239. Դրոշմի խորհուրդն ստացողը իր հոգու մեջ ընդունելով Սուրբ Հոգու ներքին օծությունն, նրանով հաստատում է հավատի և Աստվածային պատվիրանների պահպանությունը:

ա. Դուք օծում ունեք Սրբից և ամեն բան գիտեք: Իսկ այն օծումը, որը դուք ընդունեցիք նրանից, թող բնակվի ձեր մեջ, և կարիք չկա, որ մեկը ձեզ ուսուցանի: Այլ եղեք այնպես, ինչպես որ նրա օծման ուսուցանում է ձեզ ամեն ինչի մասին, որ ճշմարիտ է և ոչ սուտ. և ինչպես նա ուսուցանեց ձեզ. մնացեք նրա մեջ:

բ. Եվ նա, որ հաստատեց մեզ ի Քրիստոս ձեզ հետ միասին և օծեց մեզ. Աստված է, որ մեզ կնքեց էլ և Հոգու առհավատյան դրեց մեր սրտերի մեջ (բ. Կորնթ. Ա 21-22):

գ. (Սուրբ Գրիգորիսը) բազմացրեց եկեղեցիները, քահանաներ կարգեց և քրիստոսյան դրոշմով ամենքին առհասարակ պատվիրում էր, որպեսզի բոլորը Սուրբ Հոգով լինեն (Ագաթ. 841):

դ. Ինչպես սուրբ ավագանի լուսարանի մեջ իջնելով մարմնի լվացմամբ հավատում ենք, որ մեր անձերի վրա ենք առնում սրբությունը, նույն էլ յուղի օծմամբ հարստահանալով հույսով՝ սրանով և ստանում համարում ենք աներկմտելի կերպով ունենալ Հոգու զոծությունը (Գ. Նարեկ. բան դդ.):

ե. Ինձ անախտ ծնեցիր վերստին,

Նորից ստեղծեցիր ավագանում.

Օծեցիր յուղով երկնային՝

Որդեգրության համար Հորդ վերին (Ն. Շնորհալի, «Ողբերգ.» գրքում, գիրք Ա):

զ. Ըստ Հովհաննեսի (Սուրբ Հոգին) օծում է մեր միտքը և դարձնում է քրիստոնյաններ ու քրիստոսաընկալներ: Եվ այս օծությամբ զորանում ենք գիտենալու ամեն բան (Ն. Լամբ. Ներբող Սուրբ Հոգու գալստյան):

240. Դրոշմով Քրիստոսին անվանակից ենք լինում:

ա. Հնարավոր չէ առանց դրոշմի քրիստոսյան գրվել (Գ. Նարեկ. բան դդ.):

բ. Դրոշմով Քրիստոս եղաք (Կյուրեղ Երուսաղեմցի, «Խորհրդած. մեռոնի», գլ. ժգ.):

գ. Սուրբ մեռոնին արժանանալով՝ քրիստոնյա կոչվեցինք՝ վերստին ծննդյամբ ճշմարտության անուններ ստանալով, որովհետև քանի դեռ ձեզ չէր պարզևած այս շնորհը, այդ անվանը իսկապես արժանի չէիք (Նույն տեղը): Տե՛ս նաև 239. Զ:

241. Ապաշխարության խորհուրդը հաստատվեց Քրծիստոսի առաքյալների վրա Սուրբ Հոգու փչմամբ և երբ նրանց մեղքերի թողության իշխանություն տվեց:

ա. Նրանց վրա փչեց և ասաց. «Առեք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք նրան, ներված կլինի» (Հովհ. Ի 22-23):

242, 243. Ապաշխարողը մաքրվում է մեղքերից, որոնք գործած կլինի ավազանում ծնվելուց հետո և վերստին կարժանանա արդարության շնորհներին:

ա. Տրտմությունը, ըստ Աստծու ուզածի, ապաշխարուկայուն է առաջ բերում փրկության համար (բ. Կորնթ. է 10):

244. Ապաշխարությունը պետք է լինի սրտով զղջալով:

ա. Այս լսելով՝ ներկաները զղջացին իրենց սրտերում և ասացին Պետրոսին և մյուս առաքյալներին. «Ինչ պիտի անեք, եղբայներ»: Պետրոսը նրանց ասաց. «Ապաշխարեցեք» (Գործք. Բ 37. 38):

245. Ջղջացած մեղավորը պարտավոր է իր մեղքերը խոստովանել քահանայի առջև:

ա. Եվ հավատացյալներից շատերը գալիս խոստովանում էին ու պատմում իրենց արաքները (Գործք ժԹ 18):

բ. Դու նախ պատմիր քո անօրինությունները, որպեսզի արդարանաս (Եսայի, ԽԳ 26):

գ. (Պետք է) խոստովանել հանցանքները և զղջալ (Գ. Լուս. Հաճախ. գլ. Զ):

դ. Մկրտությունից հետո եթե հարկ լինի մեղանչել, դարձյալ խոստովանիր առանձին առաքինի մարդու, որովհետև ամեն ինչ չէ, որ քահանային պետք է խոստովանել (Բարսեղ ճոն. Մեկն. Մարկ. ճառ խբ.):

ե. Առանց խոստովանության հնարավոր չէ քավություն գտնել: Դրա համար պետք է շտապել խոշորության. քահանային խոստովանել մեկ անգամ, իսկ Աստծուն՝ անընդհատ (Խոսրով, Մեկն. Ժամակարգ.):

246. Ով խոստովանում և ապաշխարում է, ազատվում է մեղքերից՝ Քրիստոսի չարչարանքների շնորհիվ:

ա. Դրա համար էլ Հիսուս, որպեսզի իր արյամբ մաքրի ժողովրդին, չարչարվեց դժնից դուրս (Եբր. ԺԳ 12):

բ. Դարձրու (Անսկիզբ Հայր) մեզ մեղքերից՝ քո Որդու չարչարանքներով (Շարակ.):

247. Ապաշխարությամբ բոլոր մեղքերը քավվում են:

ա. Թեև բյուր չարիքներով վիրավորված լինենք, պիտի հավատանք, որ Քրիստոսի մարդասիրությամբ քավություն և թողություն կգիտնենք (Խոսրով, Մեկն. Ժամակարգ):

բ. Բոլոր մեղավորներին ապաշխարությամբ է լինում թողություն (Եփրեմ, Մեկն. Ավետ. համաբարբ. գլ. Ժ.):

գ. Համարձակությամբ ասում են, որ չկա մեղք, որ չենթարկվի ապաշխարության (Նույն տեղը):

248, 249, 250, 251. Աստված խոստացել է, կամենում է և կարող է մեզ մաքրել բոլոր մեղքերից, երբ ինքներս խոստովանենք դրանք:

ա. Ես պիտի ներեմ նրանց անիրավությունները և նրանց մեղքերը այլևս չպիտի հիշեմ (Եփրեմ. լա. 34):

բ. Եթե ձեր մեղքերը մուգ կարմիր լինեն, ես սպիտակ ձյուն կդարձնեմ, իսկ եթե լինեն որդան կարմրի նման, իբրև (սպիտակ) բարդ կդարձնեմ (Եսայի, Ա 18):

գ. չեմ ցանկանում ամբարիշտի մահը, ինչպես նաև նրա ետ դառնալը իր չար ճանապարհից ու ապրելը (Եզեկ. ԼԳ 11):

դ. Չի ուզում (Տերը), որ որևէ մեկը կորստյան մատնվի, այլ ուզում է, որ ամենքը ապաշխարեն (բ. Պետր. Գ 9):

ե. Ես եմ, ես նույն եմ, որ ջնջում եմ քո անօրենությունը ինձ համար (Եսայի, ԽԳ 25):

զ. Եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ է նա և արդար՝ մեր մեղքերը մեզ ներելու և մաքրելու համար մեզ ամեն անիրավությունից:

252. Հաղորդության խորհուրդը Քրիստոսը սահմանեց իրեն մատնելու գիշերը, այսինքն՝ Բաղարջակերաց տոնի առաջին երեկոյան:

ա. Տեր Հիսուս, այն գիշերը, երբ մատնվեց, հաց վերցրեց, գոհություն մատուցեց, կտրեց և ասաց. «Այս է իմ մարմինը, որ ձեզ համար է արեք այս իմ հիշատակի համար»: Նույն ձևով էլ ընթրիքից հետո վերցրեց բաժակը և ասաց. «Այս բաժակը նոր ուխտ է իմ արյունով. արեք այս իմ հիշատակի համար, քանի անգամ էլ որ խմեք»: (Ա Կորնթ. ԺԱ 23-25):

բ. Եվ Բաղարջակերաց տոնի առաջին օրը աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին. «Ո՞ր ես կամենում՝ պատրաստենք քեզ համար զատկական ընթրիքը, որ ուտես» Եվ Հիսուս նրանց ասաց. «Գնացեք քաղաք այսինչ անձի մոտ և նրան ասացեք. Վարդապետն ասում է՝ իմ ժամանակը մոտեցել է, քեզ մոտ եմ անելու զատիկը իմ աշակերտների հետ միասին»: Եվ աշակերտները արեցին, ինչպես Հիսուս իրենց հրամայեց, ու պատրաստեցին զատկական ընթրիքը: Եվ երբ երեկո եղավ. տասներկու աշակերտների հետ սեղան էր նստել: Եվ մինչ նրանք դեռ ուտում էին, Հիսուս հաց վերցրեց, օրհնեց ու կտրեց և տվեց աշակերտներին ու ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է իմ մարմինը»: Եվ բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Խմեցե՛ք դրանից բոլորդ, որովհետև այդ է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար (Մատթ. իգ. 17-21, 26-28):

գ. Եվ Բաղարջակերաց տոնի առաջին օրը, երբ զատկի գառն էին մորթում Եկան (աշակերտները) այն քաղաքը ու զատկական ընթրիքը պատրաստեցին: Երբ երեկո եղավ, նա (Հիսուս) եկավ Տասներկուսի հետ միասին: Եվ մինչդեռ ուտում էին, Հիսուս հաց վերցնելով՝ օրհնեց և կտրեց, տվեց նրանց ու ասաց. «Առե՛ք, այս է իմ մարմինը»: Եվ բաժակը վերցնելով՝

գոհություն հայտնեց, տվեց նրանց, և բոլորն էլ նրանից խմեցին: Եվ Հիսուս ասաց նրանց. «Այս է Նոր Ուխտի իմ արյունը, որ կեթափվի շատերի համար» (Մարկ. ԺԴ 12, 16, 17, 22-24):

դ. Եկավ Բաղարջակերաց օրը, երբ օրենք էր մորթել պասեքը: Եվ աշակերտները գնացին և պատրաստեցին պասեքը: Եվ երբ ժամը հասավ, սեղան նստեց (Հիսուս), և տասներկու առաքյալներն էլ՝ իր հետ Եվ հացը վերցնելով՝ գոհություն հայտնեց Աստծուն, կկտրեց, տվեց և ասաց. «Այս է իմ մարմինը, որ շատերի համար է տրված. այս արեք իմ հիշատակի համար»: Նույնպես և բաժակը վերցրեց ընթրիքից հետո և ասաց. «Այս բաժակը Նոր Ուխտ է իմ արյունով՝ ձեզ համար թափված» (Ղուկ. իբ 13, 14, 19-20):

253, 254. Հաղորդության խորհուրդը արժանի է կատարել անխմոր (բաղարջ) հացով և (անջուր) գինով:

ա. Պետք է սեղանին դնել անխմոր հաց և անխառն գինի ըստ սուրբ Գրիգորի մեզ ավանդածի, որովհետև սուրբ Լուսավորիչը, օրինականից բերելով այս առաքելաբար հրաման տվեց կատարել իր ժառանգորդներին, և մենք նույնպես պետք է միշտ կատարենք և նորաձև ոչինչ չանենք (Հովհ. Իմաստ. կանոն Ը տե՛ս Պատմ. Հայ. հատ. Բ էջ 649):

բ. Տաք (այսինքն՝ թարմ) հացով և խառն բաժակով, որոնք սեղանին են դրվում սարկավազների ձեռքով, քահանան օրհնում է և կատարում է խորհուրդը (այն կանոններից մեկն է, որոնք Երուսաղեմի Մարտիրոս Պատրիարքը գրեց և ուղարկեց Լուսավորչի որդի սուրբ Վրթանեսին՝ նրա խնդրանքով, Տիրոջ 340 տարում: Տե՛ս Կանոնագրքում, «Պատ. Հայ.», հատ. Ա, էջ 422):

գ. Իսրայելի որդիները, երբ պատրաստվել էին Եգիպտոսից դուրս գալ, Մովսեսը սահմանեց, որպեսզի նրանք իրենց հետ չվերցնեն խմորածը, այլ իրենց տներում սպառեն յոթ օրում և միայն բաղարջով կերակրվեն այդ յոթ օրերում: Բաղարջը տերունական խորհրդի կատարման օրինակն էր, իսկ յոթ օրը՝ կյանքի յոթ դարերի: Բոլորի համածր, ովքեր դուրս են գալիս Եգիպտական անհավատությունից ու ճանապարհվում են դեպի վերին ավետյաց աշխարհը, սահմանում է մեղքի խմորը իրենց հետ չվերցնել, այլ կերակրվել անխառն և Աստվածային հացով, զգալի և իմանալի, այսինքն՝ Աստծու մարմնով և խոսքով, որը ելնում է նրա բերանից (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Մանվել կոյսրին):

դ. Կուսածին և անախտական մարմնին հարմար է, որ օրինակ լինի բաղարջը և ոչ թե խմորվածը (Նույն տեղը):

255. Հայաստանյաց Եկեղեցին միայն բաղարջ հացով և գինով, առանց ջրի խառնուրդի, կատարում է հաղորդության խորհուրդը:

ա. Սուրբ գրքում մեզ համար գրված է, թե պատարագը մատուցում են միայն գինով, առանց ջրի խառնուրդի Այս ավանդությունը մեզ հասել է մեր սուրբ Գրիգոր լուսավորչից, ինչպես որ նա

ընդունել էր նախնի սուրբ Հայրերից, որ եղել են նրանից առաջ (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

բ. (Պատարագի բաժակի մեջ) ջուր չենք լցնում, այլ անխառն գինով որպես Քրիստոսի անխառն արյուն, կատարում ենք խառնուրդը (Նույն տեղը):

գ. Ըստ կարգի ասենք նաև Տիրոջ արյան բաժակի մասին, որ ավանդությամբ հաստատվել է սուրբ Գրիգորի կողմից միայն մեզ մոտ և այլ եկեղեցում չկա, ըստ որի գինին պետք է լինի անխառն և ոչ ջրով խառնած: Որի առաջին պատճառն է քանի որ Քրիստոսի անխառն արյունը միավորվել է անխառն Բանին, նույն խորհրդով և նրա բաժակը անխառն ենք անում, որը ընդհանուր անունից է հայտնի, որովհետև եթե անջուր գինին անխառն է կոչվում, պարզ է թե ջրով խառնածը անխառն ասել չենք կարող (Նույն, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

256. Քրիստոսը անխմոր հացով և անխառն գինով ավանդեց հաղորդության խորհուրդը:

ա. Ճշմարիտ գառը (Քրիստոսը) երբ համաձայն օրինակի կերավ դառնությունը և բաղարջը եղեգի հետ, հին ուխտը կատարելուց հետո սկիզբ դրեց նոր ուխտին՝ ըստ ավետարանական պատմության: Եվ սեղանից առնելով հացը, այսինքն՝ բաղարջը, քանի որ Բաղարջակերաց տոնի առաջին օրն էր, ասաց՝ այս է իմ մարմինը (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

բ. Տերը, երբ ձեռն առավ բաժակը, ասաց. «Այս է նոր ուխտի իմ արյունը», և ավելացրեց, թե «Ես այլևս որթատունկի բերքից չեմ խմի մինչև այն օրը, երբ ձեզ հետ կխմեմ նորը իմ Հոր արքայության մեջ»: Եվ երանելի Հովհան Ոսկեբերանը այս խոսքը մեկնաբանելիս ըստ Մատթեոսի ավետարանի ասաց. «Սրանով մյուս չար հերձվածը արմատից հանվում է, որովհետև կան մարդիկ, որոնք սուրբ խորհրդի ժամանակ ջուր են օգտագործում: Որթի բերքից, ասում է, որթը գինի է ծնում և ոչ թե ջուր» (Նույն տեղը):

գ. Քրիստոսը, որ պատարագի (զոհի) խորհրդով մոտեցավ վերնատանը, գրված է միայն գինի առավ ձեռը և ասաց. «Այս է իմ արյունը», իսկ ջրիտ անունը բնավ չի հիշատակվում, ինչպես որ առսաց խորհուրդը կատարելուց հետո, թե «Այլևս որթատունկի բերքից չեմ խմի», և որթը գինի է ծնում և ոչ թե ջուր, որպես ասում է Հովհան Ոսկեբերանը ավետարանի մեկնության մեջ (Նույն, Թուղթ՝ գրված Ալեքսին):

դ. Բաղարջ հացով և անապական գինով (Քրիստոսի կողմից) մեզ ավանդվեց սուրբ խորհուրդը (Կարթագենի Կիպրիանոս եպիսկոպոս, ողորմության ճառում):

ե. Հոր աթոռակիցը մեզ համար տվեց իր արյունը և որի համար անխառն գինով, որպեսզի չկարծենք Աստծու անխառն արյան մեջ խառնակություն կա (Կյուրեղ Ալեքսանդրացի, «Պարապ.» գրքում):

257. Գինին, ինչ գույն էլ ունենա, սուրբ պատարագի ժամանակ պետք է խորհրդանշի Քրիստոսի արյունը:

ա. Քրիստոսի արյան նյութը գինին է, ինչ գույնի էլ լինի, ընդունելի է՝ թե՛ սև, թե՛ կարմիր և թե՛ սպիտակ (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

258. Սուրբ հաղորդության ժամանակ հացի խորհրդանշանով բաշխվում է Քրիստոսի մարմինը, իսկ գինու խորհրդանշանով՝ Քրիստոսի արյունը:

ա. Օրինության բաժակը, որ օրհնում ենք, արդարև հաղորդություն չէ՞ Քրիստոսի արյան. հացը, որը կտրում ենք, արդարև հաղորդություն չէ՞ Քրիստոսի մարմնի (Ա Կորնթ. Ժ 16):

բ. (Պետք է) հավատալ, որ փրկարար խորհուրդը ստուգապես Քրիստոսի մարմինն ու արյունն է, որով միանում ենք Քրիստոսին և նրան ժառանգակից լինում (Խոսրով, Մեկն. Պատ):

գ. Երբ հաց ու գինի ենք տեսնում, Աստծու Որդու մարմինն ու արյունն ենք հասկանում: Եվ փրկարար է կոչվում, որովհետև նրանով փրկվեցինք և կփրկվենք ապրելիս և մեռնելուց հետո (Նույն տեղը):

դ. Հացի նշանով քեզ տրված է լինում մարմինը, իսկ գինու նշանով քեզ տրված է լինում արյունը (Ոսկեբերան, Ճառ Դ, խորհրդած. համար, 3):

ե. (Քրիստոսը) Կառափնայում ուսուցանելիս ժողովրդին բնարձրաձայն ասաց. «Նա, ով չի ուտում իմ մարմինը և չի խմում իմ արյունը, իր մեջ կյանք չունի»: Ասաց «իմ մարմինը» և ոչ թե «մարմնի օրինակը»: Դրանից հետո խոսքով ասածը գործով կատարեց: Որովհետև «Առավ, ասում է, հացը, գոհացավ, օրհնեց, սրբեց, տվեց աշակերտներին և ասաց. «Առե՛ք, կերե՛ք սրանից, այս է իմ մարմինը» և ոչ թե «նրա օրինակը»: Նույնպես և բաժակը արյան անվանեց և ոչ թե արյան օրինակ, որը ճաշակողներն աղաղակում էին. «Հիսուսի արյունը մեզ մաքրում է բոլոր մեղքերից»: Եվ նա, ով անարժանությամբ է ուտում ու խմում, ոչ թե օրինակն է անարգում, այլ Տիրոջ մարմինը: Քանի որ օրինակը մարմնի գծագիր պատկերն է Արդ՝ տինչպես որ գծագրված պատկերը կենդանի չէ և ոչ էլ կենդանացնելու զորություն ունի, այդպես էլ սա՝ եթե օրինակ էր, ուրեմն ո՛չ ինքն էր կենդանի, ո՛չ էլ ուրիշներին էր մաքրում Օրինակ է անվանում, որ գոյի գաղափարն ունի և ո՛չ զորությունը Իսկ մարդը մարդու օրինակը չէ, այլ՝ համաբնություն է կոչվում: Այդպես էլ սա Աստծու համաբնությունն է և ոչ թե օրինակը, որի հպամար որպես Աստված զորություն ունի մաքրելու մեղքերը (Ն. Լամբ. Մեկն Պատ.):

զ. Մենք կրկնակի աչք պետք է ստանանք՝ մարմնի և հոգու, որպեսզի մարմնի աչքով տեսնենք հացը քահանայի ձեռքում, իսկ հոգու աչքով տեսնենք նույն հացը ճշմարտապես՝ Բանն Աստծու մարմինը և միտքը և հոգին, որ միացրեց Աստվածությանը կույսից մարմին առնելով (Բարսեղ ճոն, Մեկն. Մարկ. գլ. ԺԴ):

է. Աստվածեղեն պատարագի ժամանակ փռածը մետաքսե մաքուր կտավ է, որը Արեմաթացի Հովսեփը սպասարկությունն է: Որովհետև ինչպես որ նա, Տիրոջ մարմինը պատեց կտավով և գերեզմանը դրեց, որ միջոցով բոլոր ազգերը մարդկանց հարություն պարգևեց, այսպես և մենք, մետաքսյա կտավի վրա դրված հացը և բաժակը օրհնությամբ սրբելով, ճշմարտապես, առանց կասկածելու, հավատով ճաշակում ենք Տիրոջ մարմինն ու արյունը: Եվ նա մեզ

անապականություն է շնորհում<sup>39</sup> (Գ. Աստվածաբան, Թուղթ՝ գրված Դորոթեոսին): Տե՛ս նաև 259. Թ, 348. Դ:

259, 260, 261. Ովքեր արժանապես հաղորդվում են սուրբ և Աստվածային (հաղորդություն) խորհրդին, ընդունում են ներելի մեղքերի թողություն, հոգով միտանում են Քրիստոսին և արժանանում ժառանգելու հավիտենական կեանքը:

ա. Նրա Որդու Հիսուսի արյունը մաքրում է մեզ ամեն մեղքերից (Ա Հովհ. Ա 7):

բ. Այնտեղ (եկեղեցում) կանգնած սրբության սեղանին իր մարմինը և արյունն է բաշխում և մեզ է տալիս նորոգություն և մեր մեղքերին թողություն (Շարակ.):

գ. Մենք սովոր ենք Քրիստոսի մարմինը և արյունը սրբություն կոչել, որ միշտ ճաշակում ենք և սրբվում նրանով (Ն. Լամբ. Մեկն. Սաղմ.):

դ. Ով ուտում է իմ մարմինը և ըմպում իմ արյունը, կբնակվի իմ մեջ և ես՝ նրա մեջ (Հովհ. Զ 57):

ե. Ոչ միայն Մովսեսի նման պիտի խոսեք Աստծու հետ կամ ետևից տեսնեք Աստծուն, այլև՝ ձեռքով շոշափեք անշոշափելին, շրթունքներով համբուրենք Տիրոջը, բերանով ճաշակենք բլուրի կերակրիչին, մեր սրտերի մեջ ընդունենք և հոգով միանանք նրան և շնորհքի միջոցով լինենք Աստված՝ Աստծու հետ միավորվելով (Ն. Շնորհ. Թուղթ ընդհ. Քահանաներին):

զ. Հաղորդություն է կոչվում, որովհետև նա միանում է մեզ, իսկ մենք՝ նրան (Խոսքով, Մեկն. Պատ.):

է. Թե մեկն այս հացից ուտի, հավիտենապես կապրի Եթե չուտեք մարդու Որդու մարմինը և չըմպեք նրա արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա: Ով ուտում է իմ մարմինը և ըմպում իմ արյունը, հավիտենական կյանք ունի Հովհ. 52. 54-55):

ը. Ով հավատով ու սիրով ճաշակում է այն խորհրդի (հաղորդության) գորությունը, նա մաքրվում է մեղքերից (Ն. Լամբ. Մեկն. Պատ.):

թ. Ովքեր արժանապես ճաշակում են երկնքից իջած հացը՝ աշխարհի կյանք տվողին, և ըմպում են կենդանի Աստծու անմահացուցիչ արյունը, նրանք աստվածաման են լինում ու Աստծուն միանում՝ ճանաչելով, որ Տերը քաղցր է: Այս բանը գիտեն խորհրդագետները. նրանց իմացությանն են թողնում: Եթե նրանք առանց խղճմտանքի են մոտենում սուրբ սեղանին, ճաշակում են անարատ գառան մարմինը և խմում մեղսաքավիչ արյունը, ինչպիսի՛ ուրախությամբ են լցվում՝ միանալով Աստծուն (Ս. Շնորհ. Մեկն. Ա Պետ. ճառ.): Տե՛ս 258. Բ Ե:

262, 263. Պատրաստություններ, որոնք պահանջում են արժանապես ընդունելու հաղորդության խորհուրդը:

ա. Առանց խոստովանության մեղք չի քավվում, և առանց ապաշխարության ոչ ոք հաղորդության արժանի չի լինում (Խոսքով, Մեկ. Ժամակարգ):

<sup>39</sup> Այս միտքը վկայակոչում է Ն. Լամբրոնացին (Պատ. -ի մեկն. -ն մեջ):

բ. (Մեր) մտքերն ու խորհուրդները մաքրիր, որպեսզի մենք էլ հաղորդվենք սրբությամբ (Շարակ.):

գ. Քրիստոս ինքը մարմնացեալ և արյունացյալ սրբության սեղանի վրա հրամայեց սրբությամբ ուտել և ըմպել:

դ. (Ո՛վ քահանաներ), մաքուր հոգով, սուրբ սրտով, անարատ հավատով, մեծ հույսով, պարզ մտքով, կատարյալ սիրով, ահով և դողով սպասավորեցե՛ք աստվածային խորհրդին, և խողովակի միջոցով հոսող ջրի նման անմտաբար մի՛ անցեք աղոթքի սրբազան խոսքերի միջով, որոնք մատուցում եք թող ձեզանից ոչ ոք անարժանությամբ աստվածային խորհրդին չսպասավորի, և կամ ժողովրդից որևէ մեկին առանց քննելու հաղորդություն չտա, որպեսզի Հուդայի և (Տիրոջը) խաչողների հետ չդատապարտվի: Ոչ ոք առանց ճշմարիտ խոստովանության, իր հոգում ծածկելով մեղքի գործերը, տերունական խորհրդի սպասավորությունը թող չմոտենա, որպեսզի չչարժի Աստծու բարկությունը իր աշխարհի վրա և դուրս չգցի Աստվածային հարսանիքից Արդ, աղաչում ենք՝ երկնայիտն խորհրդի կատարումը մարմնական գործ մի՛ համարեք, այլ ահով ու դողով սպասավորեցե՛ք աստվածայիններին, ° որովհետև, օրինակ, եթե սուրբ սերովբեն ունելիի կարիք ուներ սեղանի վրա կայծակներին մոտենալու համար, ապա մեզ՝ հողեղեններիս ու մեղավորներիս, որքա՞ն մաքրություն ու զգուշություն է պետք՝ նմանօրինակ ճշմարտությանը մերձենալիս: Դրա համար դուք՝ սուրբ խորհրդի սպասավորներդ, պարտավոր եք միտքն ու զգայարանները պարսպել ամեն տեսակի վնասակար բաների դեմ այն ժամանակ և առավելապես այն օրը, երբ պատրաստվելու ենք Աստծուն մոտենալ: Որովհետև եթե Աստված Մովսէին ասաց, որ մեռած մորթիներով (Նկատի ունի կոշկիկները. խմբ.) չկոխի այն տեղը, ուր երևաց Աստվածային հուրը, որքա՞ն ավելի մեզ է պետք, որ մեր միջից մաքրենք մեղքի մեռելությունը և հետո մոտենանք Աստվածային խորհրդին (Ն. Շնորհալի, Թուղթ ընդ. քահանաներին):

264. Քրիստոսը վճռեց, որպեսզի այր և կին միմյանցից անբաժան լինեն:

ա. Ապա ուրեմն (այր ու կին) ոչ թե երկու, այլ մեկ մարմին են. Արդ, ինչ որ Աստված միավորեց, մարդը թող չբաժանի (Մար. ԺԹ 6):

265. Ամուսնությունը սահմանվեց Քրիստոսի սրբազան խորհրդով:

ա. Մարդիկ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց եկեղեցին և իր անձը մատնեց նրա համար Մարդիկ պարտավոր են սիրել իրենց կանանց իբրև իրենց մարմինները. ով սիրում է իծր կնոջը, ինքն իրեն է սիրում. որովհետև ոչ ոք երբեք իր անձը չի ատում, այլ սնում և խնամում է այն, ինչպես որ Քրիստոս՝ եկեղեցին

բ. Ամուսնությունը չուխտեցիր, այլ այն և քահանայապետաբար օրհնեցիր և հաստատեցիր քո ճշմարիտ խոսքովդ, թե «Որ Աստված միավորեց, թող մարդը չբաժանի» (Մեծն Մաշտոց):

266. Այր և կին օրինավոր ամուսնությամբ միանում են այնպես, ինչպես Քրիստոսի հոգևոր միավորումն է եկեղեցուն: Տե՛ս 265. Ա:

267. Անվավեր է այն պսակը, որ լինում է առանց փեսայի և հարսի համաձայնության:

ա. Քահանաներից ոչ ոք թող բռնավորների ստիպմամբ, առանց այր և կնոջ կամքի, պսակադրություն չկատարի Քանգի այդ պսակը անհաստատ է և լուծարելի, և պսակադիրներն անպատիժ չեն մնա (Ն. Շնորհալի, Թուղթ ընդ. քահանաներին):

268. Ամուսնությունը կարգված է ավելացնելու բանական ծնունդները և մարդուն անառակության վտանգից հեռու պահելու:

ա. Աճեցե՛ք և բազմացե՛ք (Ծննդ. Ա 28):

բ. Իսկ եթե ժուժկալություն չունեն (ամուրիները և այրիները), թող ամուսնանան. որովհետև լավ է ամուսնանալ, քան կրքով այրվել (Ա Կորնթ. Է 9):

գ. Լավ է տղամարդու համար կին արարածին չմերժենալ: Բայց չպոռնկանալու համար, յուրաքանչյուր մարդ թող իր կինը ունենա, և ամեն կին՝ իր մարդը (Ա Կորնթ. Է 1-2):

269. Օրենքով մարդ կարող է ամուսնանալ երկրորդ կամ երրորդ անգամ իր կողակցի մահից հետո:

ա. Կինը կապված է իր մարդուն մինչև այքան ժամանակ, որ իր մարդը կենդանի է: Իսկ երբ նրա մարդը մեռնի (Նույնպես և մարդը՝ երբ կինը մեռնի), ազատ է ամուսնանալու ում հետ ուզենա, բայց միայն Տիրոջով (Ա Կորնթ. Է 39):

բ. Տե՛ր, օրհնի՛ր քո ամուսնացող ծառաների այս երկրորդ ամուսնությունը, որպեսզի այն ընդունելով իրենց կյանքում՝ նրանք սուրբ եկեղեցուն միանան հավատով, հույսով ու սիրով (Մեծն Մաշտոց):

գ. Ովքեր ամուսնացել են մեկ անգամ, (այսինքն՝ երկրորդ անգամ ամուսնիանալը) չպետք է բամբասվի ու նախատվի Առանց մեղադրանքի է և երկրորդ հարսանիքը (Կյուրեղ Երուսաղ. Կոչ. ընծ. գլ. Դ):

դ. Հիվանդության պատճառով ուշացած երրորդ ամուսնության հրամանը համաձայնեցնում ենք կանոնական գրքերով (Ն. Լամբ. Թուղթ՝ գրված Լևոն արքային):

270. Չորրորդ, հինգերորդ և ավելի անգամ ամուսնությունները օրինավոր չեն համարվում:

ա. Առաջին (ամուսնությունը) օրենքով է, երկրորդը՝ ներելով ու գիջելով, երրորդը՝ պարականոն: Ով այս թվից անցնում է, գլխովին խոզ է (Գրիգոր Աստվածաբան, ճառ լէ.):

271. Քրիստոսն իր աշակերտներին կարգ տվեց երկինք համբառնալու ժամանակ:

ա. Եպիսկոպոսությունը սկիզբ առավ, ըստ Մելքիսեդեկի կարգի, նրանից, ով քահանայապետությունը երդունով վերցրեց Հորից՝ ոչ ըստ իր Աստվածության, այլ՝ մարդկության Եվ ոչ նույն այդ քահանայապետությունը, որը Նա Հորից ընդունեց, որպեսզի խաչի մահով մեռնելով, Իր արյունով գնի մարդկանց, երկինք համբարձվելիս Իր աշակերտներին շնորհեց՝ ըստ Դուկասի ավետարանի, թե. «Բարձրացնելով իր ձեռքերը, օրհնեց նրանց» (Ն. Շնորհալի, Թուղթ ընդ. Եկեղեցու առաջնորդներին):

բ. Նրանց հանեց լեռան գլուխը և բարձրացնելով իր Աստվածեղեն ձեռքը՝ օրհնեց՝ նրանց տալով Աստվածային բոլոր շնորհները և բարձրության բոլոր աստիճանները, որպեսզի նրանք ունենան և տան նրանց, ովքեր փոխարինելով իրենց՝ ստանձնում են նույն պաշտոնը (Իզնատիոս Վ. Մեկն. Դուկ. ԻԴ 49):

272. Ովքեր կարգ են ստանում, նրանք ընդունում են հոգևոր կարողություն՝ մոտենալու Եկեղեցու ծառայությանը, հովվելու ժողովրդին և կատարելու սրբազան խորհուրդները:

ա. Մինչ նրանք Տիրոջ պաշտամունքի մեջ էին և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց նրանց. «Բառնաբասին և Սողոսին առանձնացրեք ինձ համար, որ անեն այն գործը, որին ես դրանց կոչել եմ»: Այն ժամանակ ծոմ պահելով և աղոթելով՝ ձեռք դրեցին նրանց վրա և ուղարկեցին (Գործք. Ժգ. 2-3):

բ. Նա շնորհ տվեց ոմանց լինելու առաքյալներ, ոմանց՝ մարգարեներ, ոմանց՝ ավետարանիչներ, ոմանց՝ հովիվներ և ուսուցիչներ՝ հաստատելու համար սրբերին իրենց պաշտոնի կատարման մեջ, ի շինություն Քրիստոսի մարմնի (Եփես. Դ 11-12): Տե՛ս նաև 215. Ա:

273. Կարգի աստիճանները յոթն են:

ա. Եկեղեցու աստիճանավորների՝ դպիրների, սակավագների, քահանաների, որոնց ձեռնադրում են եպիսկոպոսները, կարգի կանոնն ու սկիզբը յոթն են, իսկ առաջինը կղերիկոսների (Ժառանգավոր) աստիճաններն են՝ սաղմոսերգուները և ավելածուները, այնուհետև մյուսները՝ յուրաքանչյուրն ըստ կարգի (Մեծն Մաշտոց):

բ. Ողջունում են քահանայական սուրբ դասին՝ Եկեղեցին և սարկավագներին և կիսասարկավագներին և դպիրներին և ընթերցողներին և դռնապաններին և աշխատողներին (Իզնատիոս Աստվածագայաց, Թուղթ՝ գրված անտիոքայիներին, գլ. Դ):

274. Եպիսկոպոսությունը համարվում է գերագույն, քան յոթ հոգևոր կարգի յոթ աստիճանները, որոնք պարունակում է իր մեջ:

ա. Քանզի հոգևոր առաջնորդության այս մեկ գործը անվանվում է (ըստ հին տպագ. ՝ բաժանվում է) բազմաթիվ տիտղոսների և զանազան մեծ ու փոքր պաշտոնների՝ կաթողիկոսության և քահանայության: Քանի որ ով սրանց մեջ մեծ է, նա ծայրագույն բեռան տիակ է, որպես բոլորին իր մեջ պարունակող: Սակայն ըստ գործի յուրաքանչյուրի օրենսդրությունները

(ըստ հին տպագ. անվանումները) թե՛ քահանայության, թե՛ քահանայապետության նույնն են (Ն. Շնորհալի, Թուղթ ընդ.):

275. Կաթողիկոսը, պաշտոնի գերազանցությամբ և ծայրագույն իշխանությամբ բոլոր եպիսկոպոսներից ավելի բարձր լինելով, կոչվում է և եպիսկոպոսապետ:

ա. Կրթանես եպիսկոպոսապետը (Մ. Խորենացի, «Պատ. Հայ.», գիրք Գ, գլ. Ե):

բ. Հայոց եպիսկոպոսապետ եղավ Ասպուրակետը՝ հինգ տարի Նույն տեղը, գլ. խա.):

գ. (Կաթողիկոսները) պատվի առավելություն ունեն, քան արքեպիսկոպոսները: Որովհետև (կաթողիկոսը) ոչ միայն իր վիճակի տերն է, այլև բոլոր վայրերի, ուր իր ազգն ու ազգակիցներն են: Իշխանություն ունի նրանց համար ձեռնադրելու եպիսկոպոս և (օրհնելու) մեռոնը. որի համար էլ անվանվում է կաթողիկոս (Ն. Լամբ. Եկեղեցու կարգերի քննությունը):

276. Կարգի աստիճանները տրվում են եպիսկոպոսի աղոթքներով և ձեռնադրությամբ:

ա. Ընտրեցին Ստեփանոսին, որ հավատով և Սուրբ Հոգով լցված մի մարդ էր, և Փիլիպպոսին, Պրոքորոնին, Նիկանովրային, Տիմոթեոսին, Պարմենայիտն, Նիկողայոսին, որ անտիոքցի մի նորադարձ էր. նրանց կանգնեցրին առաքյալների առաջ և, աղոթք անելով, նրանց վրա ձեռք դրեցին (Գործք. Զ 5-7):

բ. Յուրաքանչյուր եկեղեցու վրա երեցներ ձեռնադրեցին, պահեցողությամբ հանդերձ աղոթք արեցին և նրանց հանձնեցին Տիրոջը (Գործք ԺԴ 22):

277. Քահանայի և եպիսկոպոսի ձեռնադրության ժամանակ կատարվում է օծում:

ա. Եվ Ահարոնի որդիների համար կպատրաստես շապիկներ, գոտիներ, խույրեր՝ նրանց պատվի և փառքի համար և դրանք կհագնես Ահարոնին ու նրա որդիներին: Նրանց կօծես, նրանց ձեռքերին կլցնես (Օծության յուղը) և նրանց կսրբես, որպեսզի ինձ համար քահանայություն անեն (Ել. իր. 40-41):

բ. Մովսեսը օծության յուղից թափեց Ահարոնի գլխին, օծեց և սրբեց նրան (Ղևտ. Ը 12):

գ. Քահանաները պատվում են Սուրբ Հոգու օծմամբ (Շարակ.):

278, 279. Միայն նրանք են արժանի ընդունելու եկեղեցական կարգը, ովքեր բավական գիտելիքներ ունենալով՝ կարող են սովորեցնել նաև ուրիշներին, ովքեր վկայված են ժողովրդից իրենց վարքով հավատի սրբության պամար:

ա. Եվ ինչ որ լսեցիր ինձանից բազում վկաներով, ավանդիր այն հավատարիմ մարդկանց, որ կարող լինեն ուրիշներին էլ ուսուցանել (բ. Տիմոթ. բ 2):

բ. Նա (եպիսկոպոսը) պետք է ունենա բարի վկայություն նաև դրսեցիներից (սարկավագները) թող պահեն հավատի խորհուրդը մաքուր խղճով: Նախ իրենք թող փորձի ենթարկվեն և եթե անմեղադրելի գտնվեն, ապա պաշտոն կատարեն (Ա Տիմոթ. Դ 7, 3-10):

280, 281, 282. Եկեղեցական կարգի համար անարժան են տգետ այրերը, խենթերը, անչափահասները, նաև նրանք, որոնք մարմնով կամ նրա անդամներով արատավոր կամ պակասավոր են:

ա. Որովհետև դու գիտություն մերժեցիր, ես էլ քեզ եմ մերժում, որպեսզի ինձ համար քահանա չդառնաս, ասում է Աստված (ովս. Դ 6):

բ. Ձեռքերդ շտապով որևէ մեկի մի՛ դիր և ուրիշների մեղքերին մասնակից մի՛ եղիր (Ա Տիմոթ. Ե 22):

գ. Եպիսկոպոսը պետք է անարատ լինի, մեկ կնոջ մարդ, հեզ, խոհեմ, պարկեշտ, հյուրասեր, ուսուցանելու ընդունակ, ոչ նախատող, ոչ բռնացող, այլ՝ հանդարտաբարո, ոչ կռվազան, ոչ բփողասեր, ոչ նորադարձ, որպեսզի, գոռոզանալով, Սատանայիտն վիճակված դատապարտության մեջ չընկնի: նույնպես և սարկավագները թող լինեն պարկեշտ, ոչ երկդիմի խոսող, ոչ գինեսեր, ոչ շահամոլ (Ա Տիմոթ. Գ 2, 3, 6, 9):

դ. Յուրաքանչյուր քաղաքում երեցներ կարգես որ լինի անբասիր, մեկ կնոջ մարդ պետք է, որ եպիսկոպոսն անբասիր լինի, որպես Աստծու տնտես (Տիտ. Ա 5, 6, 7):

ե. Այս ախտն (արծաթասիրությունն) է պատճառը, որ անարժաններն են հրավիրվում Աստվածային (գործերի) սպասավորության՝ ի կորուստ կոչողների ու կոչվածների, և արժանավորները, և սրբերը՝ պիղծ: Եվ այս պատճառով եկեղեցում բազում խառնաշփոթություններ են լինում, որոնք խոտելի են Աստծու համար (Ն. Շնորհ. Թուղթ. ընդ. եկեղեցու առաջնորդներին):

զ. Այն մարդը որն արատ ունի, թող Աստծուն պատարագ չմատուցի Կաղը, կույրը, կարճունչը, ականջջատը, ոտքը կամ ձեռքը կտրած մարդը, քոստը, որքինոտը, փոշտանկը: Ահարոն քահանայի սերդից արատ ունեցող ոչ մի մարդ չմոտենա Աստծուն զոհ մատուցելու, որովհետև նա արատ ունի և թող չմոտենա Աստծուն պատարագ մատուցելու, որովհետև Աստծու պատարագները սուրբ սրբոց են նա վարագույրին չպետք է մերձենա, սեղանին չպետք է մոտենա, որովհետև արատավոր է (Ղևտ. ԻԱ 17-23):

283. Քրիստոսը առաքյալներին զորություն կամ իշխանություն տվեց բժշկելու հիվանդներին:

ա. Հիվանդներին բժշկեցե՛ք (Մատթ. Ժ 8):

284. Հիվանդների օծումը սահմանվել է ընդունողներին զորացնելու հույսով, որ գտնեն մարմնի հիվանդությունների բժշկության և թեթև մեղքերի թողության:

ա. Հիվանդ է ձեզանից մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին, և նրանք նրա վրա թող աղոթք անեն, թող յուղով օծեն նրան Տիրոջ անունով: Տերը նրան ոտքի կկանգնեցնի: Եվ եթե մեղք գործած լինի, այդ նրան պիտի ներվի (Հակոբ. Ե 14-15):

285, 286. Առաքյալները բժշկում են հիվանդներին՝ մերթ միայն ձեռքերը նրանց վրա դնելով և մերթ օժելով նրանց մարմինը յուզով Տիրոջ անունով:

ա. Եվ պատահեց, որ Պոպլիոսի հայրը, ջերմով և փորլուծությամբ հիվանդացած, անկողին ընկնի: Պողոսը նրա մոտ մտավ և աղոթելով ձեռքը նրա վրա դրեց ու նրան բժշկեց (Գործք. Իր. 8):

բ. (Առաքյալները) բազում հիվանդների օժում էին յուզով ու նրանց բժշկում (Սարկ. Ջ 13): Տե՛ս նաև 284:

287. Կարելի է նաև առանց յուզով օժելու կատարել հիվանդների համար սահմանված խորհուրդը, որպես սովորությունն է Հայաստանյաց եկեղեցու:

ա. Յուզը աղոթքը զորավոր է դարձնում և բուժիչ դեզի դեր է կատարում, որի համար եթե այդ երկուսը միասին լինեն, բարի է: Իսկ եթե ծուլության կամ մեկ այլ պատճառով յուզով օժելը խափանվում է, ապա աղոթքը անդադար պետք է լինի (Խոսրով, Մեկն. Ժամակ.):

բ. Հավատով եղած աղոթքը կփրկի հիվանդներին: Միմյանց համար աղոթք արեք, որպեսզի բժշկվեք, քանզի արդարի աղոթքը շատ ազդեցիկ է և օգնում է (Հակոբ Ե 15-16):

գ. Յուզը չի տալիս հիվանդին առողջության համար, այլ Տիրոջ անունը (Սարգիս Շնորհալի, Մեկն. Հակ. ճառ ԺԱ): Տե՛ս նաև 285. Ա:

288. Շնորհների և պարգևների բաշխումը լինում է ձրի, Աստծու բարեսրտությունից:

ա. Աստվածայինները բոլորը պարգևներ են և նվերներ և ընիծաներ, որ տիրաբար շնորհում է իր ծառաներին, որովհետև ըստ գործերի համաձայնություն չունենք խնդրելու, այլ միայն ապավինում ենք հավատին (Խոսրով, Մեկն. Ժամակարգ.):

բ. Աստծու նվերները շնորհ և ողորմություն են, այսինքն՝ անհատույց նվիրատվություն (Նույն տեղը):

գ. Շնորհները կոչվում են անհատույց նվերները,, ինչպես այս, որ Աստված տալիս է մարդկանց (Ն. Լամբ. Մեկն. Առակ. գլ. խե.):

289. Աստված իր շնորհներով մարդու միտքն ու կամքը շարժում է դեպի բարին կամ նրան գործակից է դառնում բարիքներ կատարելու:

ա. Աստված է, որ հաջողեցնում է ձեր մեջ կամենալը և կատարելը իր հաճության համար (Փիլիպ. Բ 13):

բ. Բայց գիտենք, թե ամեն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստծուն (Հռոմ. Ը 28):

290. Տարբեր են պարգևները, որոնք Աստված տալիս է իր ընտրյալներին:

ա. Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, մյուսին՝ գիտության խոսք՝ նույն Հոգուց, մյուսին՝ հավատ՝ նույն Հոգով, մյուսին՝ բժշկումների շնորհ՝ նույն Հոգով, մյուսին՝ զորավոր

գործերի կարողություններ, մյուսին՝ մարգարեություն, մյուսին՝ հոգիները գորացնելու շնորհ, մյուսին՝ տեսակ-տեսակ լեզուներով խոսելու շնորհ, մյուսին լեզուների թարգմանության շնորհ (Ա Կորնթ. ԺԲ 8-10):

291. Աստված իր պարգևները բաշխում է, ում, ինչքան և ինչպես կամենիում է:

ա. Այն ամենը միևնույն Հոգին է առաջացնում և բաժանում յուրաքանչյուրին՝ ինչպես որ կամենում է (Ա Կորնթ. ԺԲ 11):

բ. (Սուրբ Հոգին) շնչում է, որտեղ կամենում է, որքան ախորժում է, երբ և որքան ինչպես որ կամենում է, այնպես բաժանում է շնորհները (Շարակ.):

292. Երեք անձիք էլ հավասարապես բոլոր պարգևների պատճառն ու աղբյուրն են:

ա. Թեև կան շնորհների զանազանություններ, բայց պարզևող Հոգին նույնն է: Թեև կան զանազան պաշտոններ, բայց բոլորն էլ Տիրոջն են -ծառայում: Թեև կան գործելու զանազան կարողություններ, բայց նույնն է Աստված, որ գործում է ամեն բան ամենքի մեջ (Ա Կորնթ. ԺԲ 4-6):

բ. Ըստ էության պատճառի՝ միակ Հորից է (Սուրբ Հոգին), իսկ ըստ ունակության և շնորհաբաշխության՝ հավասարապես Հորը և Որդունը (Ն. Շնորհ. Թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

293. Շնորհները հատկապես Սուրբ Հոգին է բաշխում:

ա. Գովեցե՛ք կենդանարար Սուրբ Հոգուն, որ եկեղեցում արդարներին առատորեն պարգևներ է բաշխում (Շարակ.):

բ. Կենաց աղբյուրդ, շնորհներ բաշխող Հոգիդ, իջնելով բարձրունքից, քո անապական պարգևները բաշխեցիր առաքյալներին (Նույն տեղը):

գ. (Սուրբ Հոգին) անսպառ աղբյուր է, որից բաշխվում են տիեզերական շնորհները (Նույն տեղը):

դ. Արարածների շնորհատուն, որ Հորից է, ճշմարիտ Հոգին է (նույն տեղը):

294, 295, 296, 297, 298. Շնորհները Աստված է տվել մարդկանց՝ նրանց միտքը լուսավորելու, նրանց մաքրելու մեղքերից կամ արդարացնելու, նրանց կամքը ուղղելու դեպի բարին, նրանց գորացնելու այս աշխարհի գործերի համար և հանդերձյալ աշխարհում փառավորելու հավիտենական երանությամբ:

ա. Տե՛ր, լույս տուր իմ (մտքի) աչքերին (Սաղ. ԺԲ 4):

բ. Այդ լույսն էր ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ (Հով. Ա 9):

գ. Ինքը՝ սրբության սրբոցը, մեր բանական բնության մշտական լուսավորիչն է (Գ. Լուս. Հաճախ. ճառ Ա):

դ. Լուսավորի՛ր իմ միտքը այս պահին՝ քեզ հաճույքով աղոթելու (Ժամագիրք):

- ե. Շնորհը՝ գործված շատ մեղքերի, արդարություն բերեց (Հռոմ. Ե 16):
- զ. Որ ասում են Կյուրոսին իմացած եղի՛ր և իմ ամբողջ կամքը կատարի՛ր (Եսայի, խդ. 28):
- է. Բարիքներ կամեցող, կամարար Տեր, մի՛ թողնիր ինձ, որպեսզի իմ կամքով գնամ, այլ ինձ առաջնորդի՛ր միշտ գնալու քո բարեսեր կամքով (Ժամագիրք):
- ը. Տերը իր երկյուղածների համար զորություն է (Սաղ.):
- թ. Տեր, մեզ զորացրո՛ւ քո պատվիրանների պահպանության համար (Ժամագիրք):
- ժ. Շնորհի՛ր մեզ՝ միշտ երկյուղով ծառայելու քեզ սիրելու ամբողջ սրտով (Ժամագիրք):
- ժա. Մեղքի վարձը մահն է, իսկ Աստծու շնորհը՝ հավիտենական կյանք (Հռոմ. Զ 23):
- ժբ. Նրա շնորհով արդարացված, ժառանգներ լինենք հավիտենական կյանքի հույսով (Տիտ. Գ 7):

299, 300, 301. Աստծու շնորհները կարող ենք ընդունել եկեղեցու խորհուրդների միջնորդությամբ, ճշմարիտ խոնարհությամբ և Աստծուց աղոթքով խնդրելով:

ա. Ջանց մի առ այն շնորհը, որ քո մեջ է, որ տրվեց քեզ մարգարեությամբ, երեցների ձեռնադրումով (Ա Տիմոթ. Դ 14):

բ. Սուրբ Հոգու շնորհը հավատացյալներին բաշխումն է քահանաների միջոցով՝ մկրտությամբ, ձեռնադրությամբ, Տիրոջ մարմինն ու արյունը բաշխելով և այլ քահանայությամբ (Ն. Շնորհ. Մեկն. Բարձր.):

գ. Տերը անբարտավաններին հակառակ է և շնորհները տալիս է խոնարհներին (Առակ. Գ 34):

դ. Խնդրեցեք Աստծուց, և նա կտա ձեզ, փնտրեցեք և կգտնեք, բախեցեք, և կբացվի ձեր առաջ. որովհետև, ով որ ուզի, ստանում է, ով որ փնտրի, գտնում է և ով որ բախի, նրա առաջ կբացվի (Մատթ. Է 7-8): Տե՛ս նաև 215. Ա, Բ:

302. Մեռելների մարմինները Աստվածային կարողության ներգործությամբ հարություն են առնում վերջին օրը՝ միավորվելով իրենց հոգիներին:

ա. Քանի որ մարդու Որդի Է դրա վրա ինչն<sup>օ</sup> էք զարմանում, որովհետև կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմանում են, կլսեն նրա ձայնը և դուրս կգան. ովքեր բարի գործեր են արել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի հարության համար (Հովհ. Ե 27-29):

բ Անսխալելի դեղ կենաց, բոլոր մեռելների համար սքանչելի գործեր ես կատարում: Ամենաստեղծ, անեկբայելի, որ հրով կիզվածին, հողմի քշածին, գազանի ժանիքներով սպանվածին ակնթարթորեն նույն հյութականությամբ անդադար կերպով վերակենդանացնում ես (Գ. Նարեկ. բան Զ):

- գ. Անսպասելի ժամանակին,
- Հանկարծակի գիշերվա կեսին,
- Երբ ձայներն են հնչում,

Գաբրիելի փողն է գոչում:

Երբ հոգիները սլանան,

Որտեղ փակված այժմ կան,

Կգան, նույն մարմնին կմիանան,

Որոնք Ադամից ցայժմ կան (Ն. Շնորհալի, Ողբերգ. գիրք Դ):

դ. Հարություն առնելու ժամանակ, Աստծու հրամանով ակնթարթորեն հավաքվում են մարմնի տարրերը՝ առնելու բանական հոգին՝ ոչ ուրիշներինը, այլ իրենցը (նույն, Մեկն. Բարձր.):

ե. Մենք հոգու աշակերտներս Աստծուն արժանի և մեր խոստովանությանը կխորհենք, եթե այս մարմինը, որ բարու և չարի սպասավոր եղավ, հարություն առնի ոչ թե երևակայությամբ, այլ ճշմարտությամբ: Նույն մարմինը՝ և՛ ոսկորները, և՛ եղունգները և՛ կռճիկները և՛ ջղերը և՛ այն ամենը, ինչ մեկ անգամ մարմնինն են եղել՝ հողերը և մարմնի մեծ և փոքր մասերը, ամբողջությամբ ու անթերի վերակենդանանում են ստանալու այն ամենի փոխարեն, ինչ որ գործեցին՝ բարի կամ չար: Եվ դու սրանց վրա մի տարակուսիր՝ իբրև անհնարին բաների, որովհետև ինչ անհնարին է մարդկանց, հնարավոր է Աստծուն (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. ճառ Դ, հորդորակ):

303. Աշխարհի վերջում մեռելների հարությունը ուրանում էին սաղուկեցիները, էպիկուրյանները, սաղուկեցիները, Հիմենոսը, Փղետրոսը:

ա. Սաղուկեցիներից ոմանք, որոնք հակառակում էին, թե հարություն չկա, մոտենալով հարցրին նրան և ասացին (Դուկ. ի 27):

բ. Երբ լսեցին մեռելների հարության մասին, ոմանք (էպիկուրյան և ստոյիկյան փիլիսոփաներից) ծաղրի էին ենթարկում (Գործք. ԺԷ 32):

գ. Ոմանք (Հիմենոսը և Փիղետրոսը) շեղվեցին ճշմարտությունից և ասում են, թե մեռելների հարությունը արդեն իսկ եղել է նրանք կործանում են ոմանց հավատը (բ. Տիմոթ. Բ 18):

304, 305, 306, 307. Հարություն առնելու ժամանակ արդարների մարմինները լինելու են ավելի պայծառ, փառավոր, գեղեցիկ, արագաշարժ, նուրբ, թեթև, անցավակիր, անապական ու անմահ, քան այս կյանքում:

ա. Այն ժամանակ արդարները երկնքի արքայության մեջ կծագեն ինչպես արեգակը (Մատթ. ԺԳ 43):

բ. Նորոգվելու է մեր խոնարհ մարմինը, որպեսզի այն կերպարանակից լինի իր փառավոր մարմնին (Փիլիպ. Գ 21):

գ. Տիրոջ ավետիսով մեռյալները հարություն են առնում և բոլոր սրբերը անձառ փառքով զարդարվում են (Շարակ.):

դ. Երբ Քրիստոսը՝ ձեր կյանքը, հայտնվի, այն ժամանակ որքան էլ նրա հետ կհայտնվենք փառքով (Կողոս. Գ 4):

ե. Կայսրությանն և կայծակի նման եղեգի միջով կընթանան (Իմաստ. Գ 7):

գ. Ինքը նրանց աչքերից կարբի բոլոր արտասուքները և այլևս չի լինի ո՛չ ցավ, ո՛չ աշխատանք(Հայտն. ԻԱ 4):

է. Սերմանվում է ապականությամբ և հարություն է առնում առանց ապականության (Ա Կորնթ. ԺԵ 42):

ը. Փողի ձայնով նորոգվում են ննջեցյալների հոգիները և հարություն են առնում մեռյալներից անապական մարմնով (Շարակ.):

թ. Ըստ քո արվեստավոր խոսքի՝

Դարձյալ նույն բնությանն են խառնվում.

Եվ ոչ թե այժմյան լուծանելիին<sup>40</sup>,

Այլ դրախտում գտնվող անեղծին (Ն. Շնորհ. Ողբերգ. գիրք Գ):

ժ. Եվ այլևս մեռնել անգամ չէին կարող, որովհետև հրեշտակների նման են և Աստծու որդիներ (Ղուկ. Ի 36):

308. Քրիստոսը մյուս անգամ գալու է աշխարհի վերջում՝ դատելու մարդկանց:

ա. Մարդու Որդին գալու է իր Հոր փառքով՝ իր հրեշտակների հետ միասիտն և այն ժամանակ յուրաքանչյուրին կհատուցի ըստ իր գործերի (Մատթ. ԺԶ 27):

309, 310 Քրիստոսը իր երկրորդ գալստյան ժամանակ դատելու է բոլոր մարդկանց՝ ողջերին և մեռածներին՝ յուրաքանչյուրին հատուցելով ըստ իր գործերի:

ա. Բոլորս էլ կանգնելու ենք Քրիստոսի աստյանի առաջ (Հռոմ. ԺԴ 10):

բ. Այս բանն են վկայել տալիս Աստծու և Հիսուս Քրիստոսի առաջ, որ դատելու է կենդանիներին և մեռածներին՝ իր հարության օրը, երբ գա իր արքայությամբ (բ. Տիմոթ. Դ 1):

գ. Մենք բոլորս Քրիստոսի աստյանի առաջ պիտի ներկայանանք, որպեսզի յուրաքանչյուրն ստանա, ինչ որ արել է ավելի առաջ իր մարմնով՝ թե՛ բարի և թե՛ չար (բ. Կորնթ. Ե 10):

դ. Պիտի գա նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու կենդանիներին և մեռածներին (Հանգ.):

ե. Քրիստոսը Աստծու Որդին է ողջերին և մեռածներին դատողը (Գ. Լուսավ. Ագաթ. - երկում):

զ. Մարդկանց բնությունն է վերակենդանացնում

Եվ նրանց ըստ իրենց գործերի է հարուցում:

Չարերին չար վճիռ է կայացնում

Եվ հավիտենական հրով տանջում:

Իսկ ովքեր բարիք են գործել, փառավորեցնում է

Եվ անճառելի փառքով փառավորում է (Ն. Շնորհալի. Հավատի խոսք):

է. Գալիս, իջնում է մեծ ու ահեղ թագավորը,

Բոլոր անեղ ու ստեղծված էակներից հայտնին:

<sup>40</sup> Նկատի ունի մարդկային քայքայվող մարմինը. խմբ.:

Հարուցանում է նրանց, ովքեր գերեզմանում են,  
Եվ նստում է Աստվածային մեղադրող աթոռին՝  
Բարիքներին տհալով անձառ բարիքներ արքայությունում,  
Իսկ չարերին՝ հավիտենական չար հուրը գեհեճում (Ն. Շնորհալի, Երկնքի մասին): Տե՛ս նաև  
308. Ա:

311, 312. Արդարները ժառանգելու են երկնային արքայությունը, իսկ մեղավորները  
մատնվելու են հավիտենական դատապարտության:

ա. Այն ժամանակ թագավորը պիտի ասի նրանց, որ իր աջին են. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալներ,  
ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը (Մատթ. իե. 34):

բ. Այն ժամանակ նա պիտի ասի նրանց, որ իր ձախին են. «Անիծյալներ, գնացե՛ք ինձանից  
հավիտենական կրակը, որ պատրաստվար է սատանայի և իր հրեշտակների համար (Մատթ. իե.  
41):

գ. Այս խոսքերը ավետարանվեցին ամենուրեք և միշտ ավետարանվում են, ըթե արդարների  
ու սրբերի դասերը, որոնք իրենց անձուկ ցույց տվեցին օրինակ, կցորդ եղան Քրիստոսի  
չարչարանքներին, փառքին հաղորդակից լինելու և արժանանալու են երկնքի մուտքին,  
հարսանիքի առագաստին ու անձառ փեսայի խնդությանը: Իսկ մեղավորները արժանի են  
տանջանքների, խավարի և գեհեճի (Ս. Շնորհալի-Մեկն. Ա Պետ. ճառ Դ):

313. Երկնային արքայությունը, երանավետ ու մշտենջենական վիճա է:

ա. Դուք արժանի լինե՛ք Աստծու արքայությանկը, որի համար էլ նեղություն ենք կրում: Եվ  
արդար է Աստծու առաջ, որ ձեզ նեղողներին նեղություն հատուցվի, իսկ ձեզ՝ նեղություն  
կրածներիդ՝ հանգիստ մեզ հետ, երբ Տեր Հիսուս հայտնվի երկնքից՝ իր հրեշտակների զորքով (բ.  
Թեսաղ. Ա 5-7):

314, 315. Արդարների համար այն աշխածրիում լինում են անչափ վայելքներ  
Աստվածայինների տեսության դեմ հանդիման, Քրիստոսի հրեշտակների և բոլոր սրբերի հետ  
հավիտենական ու համատեղ կեցաղավորությամբ:

ա. Հայր, ում որ ինձ տվիր, կամենում եմ, որ ու ես եմ, նրանք էլ ինձ հետ լինեն (Հովհ. ԺԷ 24):

բ. Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես նա կա (Ա Հովհ. Գ 2):

գ. Դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի ու ես լինում, դուք ևս այնտեղ լինենք  
(Հովհ. Ժդ 3):

դ. Հափշտակվենք - տարվենք ամպերի վրայով Տիրոջ առաջ օդում և այդպես մշտապես  
Տիրոջ հետ լինենք (Ա Թեսաղ. Դ 16):

ե. Մոտեցել եք Սինն լեռանը և կենդանի Աստծու քաղաքին, երկնային Երուսաղեմին,  
հրեշտակների բյուրավոր բանակներին (Եբր. Ժբ 22):

գ. Արևելքից և արևմուտքից շատերը պիտի գան ու երկնքի արքայության մեջ սեղան պիտի նստեն Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ (Մատթ. ը 11):

է. Ամենափրկիչը ավետիսը (Ավետարան) տվեց աշակերտներին թե «ուր ես լինեմ, դուք ևս այնտեղ եղեք և ամենայն ժամ փառքն եք տեսնելու»:

316. Ղատապարտությունը հավիտենական է, հոգու և մարմնի զարհուրելի տանջանքներով լի վիճար:

ա. Նրանք պիտի գնան դեպի հավիտենական տանջանք (Մատթ. իե. 46):

317. Այն աշխարհում մեղավորների պատիժները կլինեն Աստծու երանելի տեսությունից զրկվելը, խղճի պագնապը և այլն:

ա. Եվ այն ժամանակ ես նրանց պիտի ասեմ. «հեռու կացեք ինձանից դուք ամենքդ, որ անօրինություն եք գործում» (Մատթ. է 23):

բ. Ուր նրանց որդը չի մեռնում, և կրակը չի հանգչում (Մարկ. Թ 47):

գ. Այնտեղ պիտի լինի լաց և ատամների կրճտում (Մատթ. Ը 12):

318. Արարածներին դատել հավասարապես կարող են երեք անձինք կամ սուրբ Երրորդությունը:

ա. Այն օրը, երբ Աստված պիտի դատի մարդկանց գաղտնի գործերը, ըստ իմ ավետարանի, Հիսուս Քրիստոսի միջոցով (Հռոմ. Բ 16):

բ. (Ասում է)՝ որևէ կմեկին ոչ թե Հայրն է դատհում, այլ բոլորին դատելու իրավունքը տվեց իր Որդուն: (Հայրը) իրեն ոչ թե դատաստանից հեռու է պահում, այլ իր ակնարկելով Որդու միջոցով է դատում: Այսպես՝ երբ Հայրն ակնարկում է, Որդին դատում է: Դարձյալ տարբեր չէ Հոր ակնարկելը Որդու ակնարկելուց, այլ միևնույն է (Կյուրեղ Երուսաղեմցի. Կոչ. ընծ. գլ. ժե):

319. Դատելու իրավունքը տրված է Որդուն այն ժամանակվանից, երբ նա հավիտենապես ծնվեց Հորից:

ա. Հայրը ոչ մեկին չի դատում, այլ ամեն դատաստան տվել է իր Որդուն Եվ նրան իշխանություն տվեց դատամտան անելու (Հովհ. Ե 22-27):

բ. Ինքն (Որդին) է Աստծուց սահմանված դատավորը, որ դատելու է կենդանիներին և մեռածներին (Գործք. Ժ 42):

գ. Իսկ դու՝ թագավորդ, նստում ես

Մեծ բեմում, դատաստանի աթոռին,

Որովհետև Հայրը չի դատում երկրածնին,

Այլ իրավունքները քեզ տվեց՝ Միածնիդ (Ն. Շնորհալի, Ողբերգ. գիրք Գ): Տե՛ս նաև 318. Բ:

320, 221. Միայն Աստծու Որդին իրավունք ունի մեզանից մեռած մարմնով երևալու վերջին օրը դատող կամ դատավոր մարդու կերպարանքով:

ա. Բարձրացնելով երկնքի ամենաբարձր տեղը՝ իշխանաբար նստեց իր սկզբնաժառանգ աթոռիսն Հորը հավասար անկորուստ ստացածով և աննվազ իրեն հատուկ հատկություններով, որոնցով էլ գալու է հատուցման դատաստանի համար (Գ. Նարեկ. բան. ԼԴ):

բ. Երբ կգա Հոր փառքով,

Կույսից առած նույզ մարմնով (Ն. Շնորհ. Հավատի խոսք):

գ. (Աստված սահմանել է մի օր, երբ աշխարհը արդարությամբ պիտի դատի այն մարդու (Հիսուսի) ձեռքով, որի միջոցով որոշեց հավաստիք տալ ամենքին՝ նրան մեռելներից հարություն տալու (Գործքի. Ժ 31):

Տե՛ս նաև 310. Դ:

322. Թե երբ է լինելու այս աշխարհի վերջը, մենք չգիտենք, այլ Աստված գիտի:

ա. Ձեզ տրված է իմանալ այն ժամերը և ժամանակները, որ Հայրը հաստատեց իր իշխանության մեջ (Գործք. Ա 7):

323. Հույս կա հանդերձյալ աշխարհում Աստծուց ակնկալելու խոստացած բարիքները:

ա. Մենք կամեր մեջ հեծեծում ենք՝ սպասելով որդեգրությանը՝ մեր մարմնի փրկությանը, որովհետև հույսով փրկվեցինք. իսկ տեսանելի հույսը հույս է, քանի որ մի բան, որ մեկը տեսնում է, էլ ինչո՞ւ հուսա. իսկ եթե հույս ունենք մի բանի, որը չենք տեսնում, ուրեմն՝ համբերությամբ սպասում ենք դրան (Հռոմ. Ը 23-25):

324. Աստված մեզ խոստացել է կյանք, հանգիստ և երանության անվախճան հավիտենականության մեջ:

ա. Ով իմ խոսքը լսում է ու հավատում է նրան, ով ինձ առաքեց, ընդունում է հավիտենական կյանքը (Հռոմ. Ե 24):

բ. Եվ այս է այն խոստումը, որը խոստացավ մեզ, այն է՝ հավիտենական կյանքը (Ա Հովհ. Բ 25):

գ. Իմ ոչխարներն իմ ձայնը լսում են, և ես ճանաչում եմ նրանց. և նրանք գալու են իմ ետևից. և ես նրանց կտամ հավիտենական կյանք (Հովհ. Ժ 27-28):

դ. Իմ լուծը ձեր վերցրեք և ձեզ համար հանգիստ պիտի գտնենք (Մատթ. ԺԱ 29):

ե. Երանի է այն ծառային, որին տերը, գալով, կգտնի այդպես արած (Մատթ. ԻԴ 46):

զ. Հոգով Հոգով առաքինիներին անձառ երանության մեջ է վայելեցնում (Գ. Լուս. Հաճախ. գլ. Ա):

325. Աստված հանդերձյալ ըկյանքի բարիքները խոստացավ մարգարեների, նաև բացահայտ կերպով իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

ա. Աստված բազմապիսի ձևերով և այլազան օրինակներով նախապես խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով. այս վերջին օրերին մեզ հետ խոսեց իր Որդու միջոցով, որին ժառանգ նշանակեց ամեն ինչի, և որի միջոցով ստեղծեց տիեզերքը (Եբր. Ա 1-2): Տե՛ս նաև 324. Ա, Բ:

326. Քրիստոսի երանատուր վարդապետությունը:

ա. Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:

Երանի՛ սգավորներին, որովհետև նրանք պիտի մխիթարվեն:

Երանի՛ հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն:

Երանի՛ նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի հագնան:

Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն:

Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն:

Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն:

Երանի՛ նրանց, որ հալածվում են արդարության համար, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը:

Երանի՛ է՛ ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն և իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք՝ սուտ ասեն: Ցնծածեք և ուրախացեք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է, Քանի որ այսպես հալածեցին մարգարեներին, որոնք ձեզանից առաջ են եղել (Մատթ. Ե 3-12):

327. Սերը Աստծուննի է, որով սիրում ենք Աստծուն՝ մեր բուն բարությունն ու վերջին վախճանին:

ա. Աստծու սերը սիրված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ (Հռոմ. Ե 5):

բ. Պատվիրանի գլխավորը սերն է՝ բխած սուրբ սրտից, բարի խղճմտանքից և անկեղծ հավատից (Ա Տիմոթ. Ա 5):

գ. Սիրենք Աստծուն, որովհետև առաջինը նաև սիրեց մեզ (Ա Հովհ. Դ 19):

328. Աստծու սերը մեզանից պահանջում է, որպեսզի մենք կատարենք նրա պատվիրաններն ու հրամանները:

ա. Եթե ինձ սիրում եք, կպահեք իմ պատվիրանները: Ով իմ պատվիրաններն ընդունում և դրանք պահում է, նա է՛, որ ինձ սիրում է Եթե մեկը սիրում է ինձ, իմ խոսքը կպահի (Հովհ. ԺԴ 15. 21-23):

բ. Ով պահում է նրա խոսքը, Աստծու սերը նրա մեջ ճշմարտապես կատարյալ է (Ա Հովհ. Բ 5):

գ. Սրանով ենք ճանաչում, թե սիրում ենք Աստծու Որդուն, երբ սիրենք Աստծուն և կատարենք նրա պատվիրանները. Քանզի այս է Աստծու հանդեպ մեր սերը. որ պահենք նրա պատվիրանները (Ա Հովհ. Ե 2-3):

329. Աստվածային օրենքները հրամայում են՝ ոչ միայն չարը չգործել, այլև բարին կատարել:

ա. Դուք, որ սիրում եք Տիրոջը, ատեցե՛ք չարությունը (Սաղ. դգ. 10):

բ. Սովորեցե՛ք բարիք գործել (Եսայի, Ա 17):

գ. Բարություն փնտրեցե՛ք և ոչ թե չարություն, որպեսզի ապրեք, և ձեզ հետ լինի ամենակալ Տեր Աստվածը (Ամովս. Ե 14):

330. Խղճմտանքը (այն է՝ բնական օրենքը), ի բնե մարդու մեջ արմատացած է, որպեսզի նա հասկանա բարին ու չարը, ճիշտն ու սխալը և այլն:

ա. Հեթանոսները, որ օրենք չունեն, բնականորեն են օրենքի գործերը կատարում. նրանք օրենք չունենալով, իրենք իրենց համար իսկ օրենք են: Նրանք ցույց են տալիս, թե Աստծու օրենքի պահանջները գրված են իրենց սրտերում՝ իրենց խղճի վկայությամբ:

բ. Երբ Կայենի օրոք թաքցված ամբաստան ամբարշտությանն տատանում եղավ, իսկ որոշ մարդկանց տատանման փոխարեն խղճմտանք տվեց: Խղճմտանքը մեծ մարգարե է, հանդիմանում է և թաքնվում: Բնական է այս ոտխը, որովհետև վկա է ընդդեմ անիրավության: Երբ որևէ մեկը արդար վճիռ է մեջ բերում, նա անվրեպ ընդունում է և հաստատում (Եփրեմ, Ենովքի և Եղիայի մասին ասված ճառից):

գ. (Տե՛ր), խղճմտանքը բնական գիտությամբ պարփակեցիր (մարդու մեջ), որպեսզի չհոգնես գաղտնի հանցանքների դատելով, որովհետև եթե մեկը կամենա թաքցնել, խղճմտանքը ակամա խոստովանել կտա: Չատավորը լռում է, իսկ խղճմտանքը խոստովանում է, ամբաստանյալը լռում է, իսկ խղճմտանքը խոստանում է, մեղքը թաքցնվում է, իսկ խղճմտանքը հայտնում է նրա մասին (Նույն տեղը):

331. Բնական օրենքի լույսը Աստված լցրել է մարդկանց մեջ հենց ստեղծման օրից:

ա. Իմ օրենքը ձեր սրտում է (Եսայի, ԺԱ 7):

բ. Բնական խոսքը իմաստությունն է ասում, որի սերմը ընդունեցինք Աստծու արարչությամբ, և նա բուսնեց որպես շառավիղ մեր գեղեցիկ ու վայելուչ բնության մեջ (Ս. Շնորհալի, Մեկն. Հակ. ճառ Ե):

գ. Մերկությունն է գիտությունը և ճանաչողությունը (բարու և չարի), որ ազդում է մեզանից յուրաքանչյուրի վրա: Այն, որ բոլոր մարդիկ ունեն այս, հայտնի է (Եփրեմ, Ենովքի և Եղիայի մասին ասված ճառից):

դ. (Աստված) մարդկանց մեջ սերմանեց ու տնկեց (խղճմտանքի) այսքան ազդեցություն (Նույն տեղը):

ե. Բնական ընտրության համար ամեն ոք Աստծուց բավական չափով ստեղծվեց (Ն. Լամբ. Մեկն. Առակ. գլ. Ժ.):

332. Մարդկանց խղճմտանք տվեց, որպեսզի նրանով ճանաչեն, թե ում պետք է հետևեն և ումից խորշեն:

ա. Հեզությամբ ընդունեցեք ձեր մեջ սերմանված խոսքը, որ կարող է փրկել ձեր հոգիները (Հակոբ, Ա 21):

բ. Փորձեք ամեն ինչ (մտքով), բարին ամուր պահեցեք, հեռու մնացեք բոլոր չար բաներից (ա. Թեսալ. Ե 21-22):

333. Մտքի կամ խղճի դատողությունը ոչ բոլորի մեջ է միատեսակ, ճշմարիտ և մաքուր:

ա. Ամեն ինչ մաքուր է խղճմտանքով մաքուր եղողների համար, բայց պիղծերի և անհավատների համար ոչ մի բան մաքուր չէ: Եվ նրանց միտքն ու խղճմտանքը պղծված են (Տիտոս, Ա 15):

334. Բնական օրենքներից առաջ եկան բոլոր քաղաքական և դատաստանական օրենքները:

ա. Երկնային իմաստությունը պակաս նպատակավոր չեղավ մեր բնության բարեկարգմանը, որով և լրացվեցին քաղաքական օրենքները և դատաստանական գործերը և չափը և կշիռը, և առևտրում կատարվող փոփոխությունները և սրանց նման այլ երևույթները (Ս. Շնորհալի, մեկն. Հակ. Հորդորակ, Ը):

բ. Եթե հեթանոսները անիրավությունից հաջողություն տեսնեն, բնությամբ օրենքները չէին գործի: Բայց քննեցին, որովհետև ըստ անհաս նախախնամության տեսչության՝ օրինապահը երջանկանում էր, իսկ անօրենը ստրկանում: Դրա համար էլ գտան ու սիրեցին օրենքը և նրա միջոցով բարեկարգեցին քաղաքներն ու գավառները (Ն. Լամբ. Մեկն. Առակ. գլ. Ժբ):

335. Պարտավոր ենք հնազանդվել բոլոր քաղաքական և դատաստանական օրենքներին, որոնք հաստատվել են օրինավոր թագավորների, իշխանների կամ առաջնորդների կողմից:

ա. Հնազանդ եղեք մարդկային ամեն իշխանության՝ թե թագավորիտն, որպես գերագույն հեղինակություն ունեցող մեկի, թե կառավարիչների, ործպես նրանից ուղարկվածների (Ա Պետրոս Բ 13-14):

բ. Ով հակառակում է իշխանությանը, Աստծու հրամանին է հակառակում (Հռոմ. ԺԳ 2):

գ. Ձեր գործերի մեջ հնազանդ մնիացե՛ք կայսեր, որ հոգու գայթակղություն չլինի (Իգնատիոս Աստվածազգ. Թուղթ՝ բզրված անտիոքացիներին, գլ. Գ):

դ. Արդ քանի որ (թագավորը) Աստծու սպասավոր է կոչվում, հետևաբար պետք է երկնչել, ինչպես Աստծուց, այդպես էլ նրա սպասավորներից, և ձգտել հնազանդ լինել նրանց՝ նրանց օրենքների կատարմամբ (Ն. Լամբ. Մեկն. Առակ. գլ. իդ.): Տե՛ս նաև 362. Ա, Բ Գ:

336. Օրինավոր թագավորները, դատավորները և իշխանները Աստծու սպասավորներն են:

ա. (Ո՛վ թագավորներ, ո՛վ դատավորներ), Տիրոջ կողմից ձեզ տրվեց իշխանություն, իսկ Քարծրյալի կողմից՝ հպարտություն Որովհետև նրա թագավորության սպասավորներն եք (Իմաստ. Զ 4-5):

բ. (Իշխանը) Աստծու պաշտոնյա քեզ՝ բարի գործերի համար (Հռոմ. ԺԳ 4):

գ. Չկա ազգ, որ չունենա դատավորների դատաստանի իրավունք: Եվ աշխարհի իշխանության այս բոլոր կարգերը սնահմանված են Տիրոջ կողմից՝ ըստ նրա նախախնամության առ մարդկային ազգը: (Գ. Լուս. Հաճախ. ճառ Ը):

337. Հին և Նոր օրենքները տրվեցին Աստծու կողմից:

ա. Անհավասիկ օրեր պիտի գան, - ասում է Տերը, - և իսրայելի տան հետ ու Հուդայի տան հետ նոր ուխտ պիտի կատարեմ, բայց ոչ միայն այն ուխտի, որ կնքեցի նրանց հայրերի հետ այն օրը, երբ նրանց ձեռքից բռնեցի՝ Եգիպտոսից դուրս հանելու համար: Բայց այս է այն ուխտը, որը պիտի կնքեմ Իսրայելի տան հետ այն օրից հետո, - ասում է տերը (Երեմ. լա. 31-33, Եբր. Ը 8-10):

բ. Գրված է, թե՛ «Աբրահամը երկու որդի ուներ, մեկը՝ ծնված աղախնից և մեկը՝ ազատ կնոջից»: Սա այլաբանություն է, որովհետև սրանք երկու կտակարաններն են (Հինը և Նորը) (Գաղատ. Դ 22-24):

գ. Հավատում ենք և Սուրբ Հոգուն, որ խոսեց օրենքների մարգարեների և ավետարանների մեջ (Հանգանակ):

դ. Մեկն է Հայր աստված, և Հին ու Նոր կտակարանների տեղն է (Կյուրեղ Երուսաղ. Կոչ. ընծ. գլ. ԺԴ):

ե. Պարտ և պատշաճ է ձեզ հիշել ճշմարիտ հանգամանքները նախապես ասված խոսքերի Միննույն Սուրբ Հոգու ազդմամբ գրվեցին Հին և Նոր կտակարանները՝ եղան և՛ օրենքներն ու մարգարատեությունները, և՛ ավետարաններն ու առաքյալների թղթերը (Նույն, տեղը գլ. Ժէ):

338, 339. Հին օրենքը ավանդվեց հրեական ազգին Մովսեսի և այլ մարգարեների միջոցով, և Նորը ճանաչեցինք առաքյալների միջոցով:

ա. (Մարգարեները) արժանի եղան հոգու աստվածային շնորհներին, ամենքին սովորեցրին Աստծու օրենքները, նրա կամքը ու երկնավոր հրամանների ուղիղ կարգը ամենքի առջև դրեցին, ինչպես նրանց մարգարեական մատյաններն են հաստատորեն պատմում (Գ. Լուս. Ագաթ. -ի երկում 256):

բ. Եթե ամուր ու անսասան մնաք հավատի մեջ և անխախտ՝ հույսի մեջ այն Ավետարանի, որ լսեցիք և որ քարոզվեց երկնքի տակ գտնվող բոլոր արարածներին, և որին ես՝ Պողոսը, սպասավոր եղա (Կողոս. Ա 23):

340. Գրավոր օրենքները տրվեցին Աստուծուց օժանդակություն բնականին, որպեսզի նրանով լուսավորվածներս կարողանանք նորից հեռու մնալ և բարիք գործել:

ա. Մեղքը չէի ճանաչի այլ կերպ, քան օրենքով. և ցանկությունը չէր ճանաչի, եթե օրենքը ասած չլիներ՝ մի ցանկացիր (Հռոմ. Է 7):

բ. (Աստված) ոչնչից լինելիություն տվեց ամենայն ինչ և բարեպաշտության հանգամանքները սուվորեցրեց Սուրբ Գրքով, որպեսզի (մարդիկ) կարողանան խուսափել չարից և անել բարին (Գ. Լուս. Հաճախ. ճառ. Բ):

գ. Պիղծ են անօրենները, որովհետև օրենքը մերլեռնությանը որպես օգնություն տրվեց: Նրանք օրենքներից հեռացան և մեր բնության ուղղությունից մոլորվեցին, և Աստված ասաց. «Անիծյալ լինի ամեն ոք, ով չի պահպանում գրքերում գրված օրենքները» (Ն. Լամբ. Մեկն. Առակ. գլ. Դ):

դ. Մարդիկ չգիտեն, որ գոյություն ունի իմանալի Աստված կամ իմանալի կյանք, կամ թե մտքի համար բնական է այն խորհել մինչև Աստված տվեց (գրավոր) օրենքները և երևալով նրանց՝ բարձրացրեց մինչև իր իմանալի գիտությունը: Եվ քիչ-քիչ թույլատրելի եղավ մարդկանց՝ իմացությամբ մոտենալ Աստծուն (Նույն տեղը):

ե. Հանդիմանությամբ և խրատով Հին օրենքների և Նորով լուսավորված ենք բարի գործերի ընտրության և բնությանն ուղղության համար (Նույն տեղը, գլ. Զ):

341. Բնական օրենքների սկզբունքները անգիր դրոշմված են բոլոր մարդկանց սրտերում:

ա. Եվ այս սկզբունքները բնական օրենքների կամ բարոյական օրենքները հավիտենականության սկզբից սերմանված են մարդկանց սրտերում, և սրանցով առավել ևս լեցուն են արդար Հայրերը (Եփրեմ, Մեկնի. Ել. գլ. Ե): Տե՛ս նաև 331.:

342. Բարոյական օրենքների պահպանությունը կարևոր է:

ա. Ով սիրում է Տիրոջը, կատարում է օրենքը: Մի շնացիր, մի սպանիր, մի գողացիր, սուտ մի վկայիր, մի ցանկացիր և ուրիշ ինչ պատվիրան էլ որ կա, այս խոսքի մեջ է բովանդակվում, թե՛ սիրի՛ր ընկերոջը ինչպես քո ազգը (Հռոմ. ԺԳ 8-9):

343. Բարոյական օրենքները կարևորագույն բացատրությունների հավելվածներով վերստին հաստատվեցին Քրիստոսի կողմից: Տե՛ս 348:

344. Քրիստոսի հավատացյալներս հինի օրենքների այստեղ՝ արարողականի և դատաստանականի տիրապետության տակ չենք:

ա. Եղբայրներ, աղախնի որդիներ չենք (Հին կտակարանի, որ ընդօրինակն է Աբրահամի Հազար աղախնի), այլ՝ ազատ (Նորոգված կտակի, որ ընդօրինակն է ազատ Սառայի միջոցով), այլն ազատությամբ, որով Քրիստոս մեզ ազատ դարձրեց (Գաղատ. Դ 31):

բ. Քանզի օրենքի տակ չենք, այլ՝ շնորհի (Հռոմ. Զ 14):

345. Հին կտակարանի արարողության օրենքները նոր օրենքներ խորհուրդների նախանկար օրինակներն են կամ ստվերները:

ա. Գալիք բարիքների ստվերն էր օրենքը և ոչ թե իրողությունների բուն կերպարանքը (Եբր. Ժ 1):

բ. Ուրեմն, թող ոչ ոք ձեզ չդատապարտի ուտելու կամ ըմպելու, տոնական օրերի, նորալուսնի կամ շաբաթի հարցում, որոնք գալիք բաների ստվերներն են, բուն մարմինը Քրիստոսն է (Կողոս Բ 16-17):

գ. Մինչ այն ժամանակ (այսինքն՝ մինչև Քրիստոսը) (արարողական օրենքները) ուրվագծեր էին և ոչ մարմիններ, և խորհուրդներ էին և ոչ ճշմարիտ կատարում (Եփրեմ, Մեկն. Ղևտ. գլ. Դ):

346. (Արարողական) հին օրենքները Քրիստոսի աշխարհ գալով դադարեցին իրենց լրումն առնելով նրանից:

ա. (Ղևտական կամ ահարովնյան) Քահանայություն փոփոխելով՝ (այլ քահանայություն՝ ըստ Մելքիսեդեկի կարգի) պետք է, որ օրենքի (Մովսեսական քահանայության) փոփոխություն էլ լիներ (Խափանվեր, դադարեր, վերանար) (Եբր. Է 12):

բ. նա (Քրիստոս) է մեր խաղաղությունը, որ երկուսը (երկու ազգին կամ ժողովրդին՝ հրեաներին և հեթանոսներին) մեկ դարձրեց. (խրատական կամ արարողական օրենքը, որ հրեաներին գատում էր հեթանոսներից) քանդեց իր մարմնի մեջ միջնորմը՝ թշնամությունը՝ զոհելով իր մարմինը կամ մահվամբ) և հրամաններով տրված պատվիրանների օրենքը ջնջեց (ավետարանական վարդապետությամբ) (Եփես. Բ 14-15):

գ. Քրիստոսն է օրենքի վախճանը բոլոր հավատացյալների արդարացման համար (Հռոմ. Ժ 4):

դ. Մի կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա ջնջելու, այլ լրացնելու (Մատթ. Ե 17):

դ. Մի՛ կարծեք, թե ես եկա վերացնելու օրենքները կամ մարգարեներին. չեկա վերացնելու, այլ կատարելու (Մար. Ե 17):

ե. (Մովսեսական) օրենքը մեզ ցույց է տալիս ավետարանը: Նույն բանի համար երբ սա երևաց, նա, որ մարդկանց չկարողացավ ազատել, տեղի տալով հեռացավ, գնաց (Ս. Շնորհալի, Մեկն. Հակ. ճառ Զ):

347. Արարողական օրենքները լրացրեց Քրիստոսը՝ ինքը կատարելով այս աշխարհում եղած ժամանակ:

ա. Իսկ երբ ժամանակը իր լրումին հասավ, Աստված ուղարկեց իր Որդուն, որը ծնվեց կնոջից և մտավ օրենքի տակ՝ փրկելու համար նրանց, որ օրենքի տակ էին, որպեսզի մենք որդեգրություն ընդունենք (Գաղատ. Դ 4-5):

բ. Քրիստոսի՝ թվատվածներին սպասավոր լինելը Աստծու ճշմարտության համար էր՝ հաստատուն դարձնելու համար հայրերին տրված խոստումը (Հռոմ. ԺԵ 8):

գ. Ութ օրական թվատվեց, որպեսզի կատարի հայրերի հետ կնքած ուխտը (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

դ. Ըստ օրենքի հանձն է առնում և այս (այսինքն՝ թվատությունը), որպեսզի նախ լրացնի օրենքը և ապա վերացնի, որովհետև նա չէր կարող հրաժարվել այն օրենքներից, որոնք ինքը ավանդեց հայրերին (Իգնատիոս, Մեկն. Դուկ. գլ. Ա, էջ ԿԶ):

ե. Կույսից մարմնացածո՞՝ նախահավիտյան Բանդ, այսօր տաճար եկար՝ կատարելու օրենքները հեթանոսների փրկության համար (Շարակ.):

348. Քրիստոսը հին օրենքների արարողությունները փոխարինեց իր եկեղեցու զանազան խորհուրդներով:

ա. Լրացրեց Մովսեսի օրենքը,

Որ խոսեց Սենայի վրա.

Կերավ դառն օրինակը

Եվ բարարջը եղեզի հետ՝

Հինը փոխելով նորով,

Ստվերը լույսով ճշմարտելով.

Գառան փոխարեն ինքը լինելով,

Գառն Աստծուն նվիրելով:

Բաղարջ հացի տեղ անխմոր՝

Կուսածինիը անսերմնավոր

Տվեց իր մարմինը երկնավոր,

Անապական ու հոգևոր:

Ուխտի ոչխարի արյան փոխարեն՝

Մեզ տվեց իր արյունը ուխտ կրկին

Այս նոր ուխտն է իմ արյան՝

Հին ուխտի արյան փոխարեն (Շարակ.):

բ. Մորթվող անբանական գառների արյան փոխարեն մեզ պարգևեցիր Գառն Աստծու՝ քո փրկարար արյունը (Նույն տեղը):

գ. Կատարում է զատիկը ըստ օրենքի, որպեսզի փոխարինի հինը նորով և ստվերը ճշմարտության լույսով (Ն. Շնորհալի, Թուղթ՝ գրված Ալեքսին):

դ. Գառանից հետո, երբ (Քրիստոսը) բազմեց, վերցրեց հացը, որ ճշմարտություն էր, օրհնեց և արեց իրեն մարմին, և կտրեց և տվեց նրանց (այսինքն՝ աշակերտներին): Եվ այսպես հին գառան մարմնի և արյան փոխարեն, որ սկսեց Եգիպտոսում, կարգեց և հաստատեց իր մարմնի և արյան խորհուրդը (Բարսեղ ձոն, Մեկն. Մարկ. գլ. Ժգ.):

349. Քրիստոսը լրացրեց դատաստանական օրենքները՝ ավելացնելով մշտենջենավոր պարզևներ և պատիժներ՝ ժամանակավորի փոխարեն:

ա. Լսել եք, թե ինչ ասվեց նախնիներին. «Մի սանիր», որովհետև ով որ սանի, ենթակա կլինի դատաստանի: Իսկ ես ձեզ ասում եմ, թե ամեն մարդ, որ գուր տեղը բարկանում է իր եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի, և ով որ իր եղբորը ասի՝ հիմար, ենթակա կլինի ատյանի, և ով որ իր եղբորն ասի՝ աուշ, ենթակա կլինի գեհենի կրակին... Լսել եք, թե ինչ ասվեց. «Մի շնանար», իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում: Եթե քո աջ աչքը քեզ գայթակղեցնում է, հանիր այն և դեն գցիր քեզանից. որովհետև քեզ համար լավ է, որ քո անդամներից մեկը կորչի, և քո ամբողջ մարմինը չընկնի գեհեն:... Լսել եք դարձյալ, թե ինչ ասվեց նախնիներին. «Երդմնագանց մի լինիր, այլ Տիրոջն այն, ինչ երդգել ես»: Իսկ ես ձեզ ասում եմ՝ ամենևին չերդվել. ոչ երկնքի վրա, որովհետև Աստծու աթոռն է, ոչ երկրի վրա, որովհետև նրա ոտքերին ատվանդան է, և ոչ երուսաղեմի վրա, որովհետև մեծ Արքայի քաղաքն է: Եվ քո գլխով էլ չերդվես, որովհետև չես կարող մի մազ իսկ սիտակ կամ սև դարձնել: Այլ ձեր խոսքը լինի այոն՝ այո, և ոչը՝ ոչ. որովհետև դրանից ավելին չարից է.. Լսել եք արդարև, թե ինչ ասվեց. «Իտի սիրես ընկերոջդ և իտի ատես թշնամուն»: Իսկ ես ձեզ ասում եմ. սիրեցեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին, բարություն արեք ձեզ ատողներին ևզ առթեցեք նրանց համար, որ չարչարում են ձեզ և հալածում, որեսզի որդիները լինեք ձեր Հոր, որ երկնքում է (Մատթ. Ե 21, 27-29, 33-37, 43-45):

350. Պետք է երկպագել միակ ճշմարիտ Աստծուն և միայն նրան պաշտել:

ա. Գրված է «Պիտի երկպագես քո Տեր Աստծուն և միայն նրան պիտի պաշտես» (Մար. Դ 10):

բ. Աստծու պատիվն ու պաշտամունքը չի կաելի որևէ մեկին տալ. քանզի նա է արարիչը երկնքի ու հրեշտակների (Գ. Լուս. Ագաթ. -ի երկում 52):

գ. Միայն Աստվածային բնությունն է երկրպագության արժանի (Խոսրով, Մեկն. Ժամակարգ.):

351. Չետք է երկրագել կուռքերին՝ դրոշմված աստվածներին, որ մարդկանց ձեռքի գործերն են, արձանների կամ ատկերների՝ ձուլած, քանդակած կամ նկարած, ինչես նաև երկնքում ու երկրի վրա ստեղծված էակներին:

ա. Դուք ձեզ համար չաստվածներ և կուռքեր չշինեք, արձաններ չկանգնեցնեք և կատկերավոր կոթող չդնեք ձեր երկրում՝ նրան երկրպագելու համար (Ղևտ. իգ. 1):

բ. Որևէ բանի նկատմամբ կուռք չշինես քեզ համար ո՛չ վերևում, ո՛չ ներքևում՝ երկրի վրա, ո՛չ ստորերկրյա ջրերի մեջ: Մի՛ երկրպագիր նրանց, մի՛ պաշտիր նրանց (Բ. օրին. Ե 8-9):

գ. Չուլածո արձաններ չշինես քեզ համար (Ել. ԼԴ 17):

352. Ծածուկ կռապաշտոններ են նրանք, ովքեր իրենց ախտավոր կրքերը աստվածացնելով պաշտում են նրանց:

ա. Ամեն ոռնիկ կամ իղծ կամ ագահ մարդ, որ կռաաշտ է, Աստծու և Քրիստոսի թագավորության մեջ ժառանգություն չունի (Եփես. Ե 5):

բ. Դեն զցեցեք ոռնկություն... և ագահություն, որ կռաաշտություն է (Կողոս. Գ 5):

գ. Լալով են ասում, - ընթանում են որես թշնամիներ Քրիստոսի խաչի. նրանց վախճանը կորուստ է նրանց աստվածը իրենց որովայնն է, և փառքը՝ իրենց ամոթը: Նրանք միայն երկրավոր բաներ են խորհում (Փիլիպ. Գ 18-19):

դ. Ամեն ոք իր ուռկանին է զոհ գնում և իր ախտերն է աստված-ացնում, յուրաքանչյուրը խառնակվում է իր կամքով. մեկը շտաում է հագուրդ տալ իր ցանկություններին, մեկը՝ ագահության և ընչասիրության, մեկը՝ հարբեցողության և պոռնկության, մեկը՝ շահամոլության և վաշխառության (Խոսրով, Մեկն. Ժամակարգ.):

353. Մեր սրբերի պատկերները հարգելը նյութաաշտություն չէ:

ա. Երբ տեսնում ենք Աստծու ընդունած խաչը, երկրպագում ենք ոչ թե երևացող նյութը, այլ աներևույթ Աստծուն: Այդպես էլ նրա միջոցով մենք երկրպագում ենք ոչ թե գեղեցիկ նյութի պատկերին, այլ Քրիստոսին, որը աներևույթ Հայր Աստծու պատկերն է: Իսկ սրբերի պատկերները պատվում ու փառավորում ենք... բայց երկրպագությունը Աստծու նրանց միջոցով ենք մատուցում (Ն. Շնորհալի, թուղթ՝ գրված Մանվել կայսրին):

բ. Արարվածներս պարտավոր ենք միակ Արարչի և փրկչի նկարած պատկերին երկրպագություն ընծայել, իսկ Աստծու մտերիմ ծառաների պատկերն ու անունները, որոնք բնությամբ ծառայակից են մեզ, պատվել ու հարգել՝ ըստ յուրաքանչյուրի արժանավորության, իսկ նրանց առաքինի վարքը, ըստ յուրաքանչյուրի պատկերի տեսքի, մեզ բարի օրինակ դարձնել՝ մտաբերելով նրանց զանազան ձգնությունները, որոնք ճշմարտության համար են: Ով որ անարգում է նրանց, ոչ թե պատկերի նյութն է անարգում, այլ նրան, ում անունով պատկերն է նկարված՝ թե Տիրոջ կթե՛ նրա ժառանգների (Նույն տեղը):

գ. Սրբերի պատկերները (արժանի է) պատվել Աստծու գովքի համար և հիշատակ քաջության (Հովհ. Սարկավազ Վ. Ճառ քահանայության):

դ. (Սրբերի պատկերները պաշտելիս) (չպետք է) նյութապաշտ լինել (Նույն, Բ Բացատր. Հանգ.):

354. Երբ ուզում է լինի, որտեղ ուզում է լինի, չպետք է սուտ բաների համար անհարկի, առանց պահանջի երդվել:

ա. Սաստիկ բռնադատողը (այսինքն՝ նա, ով մեկին ստիպում է երդվել) երդվողից ավելի տանջվելու գեհեճնում (Բարսեղ ճոն, Մեկն. Մարկ. գլ. Թ, հորդորակ):

բ. Եթե որևէ մեկը քեզ (ասի), թե երդվիր, քեզանից կլսի՝ Քրիստոսը հրամայել է և չեմ երդվում (Նույն տեղը):

գ. Չլինի, թե ձեզանից որևէ մեկը Աստծու անունով առանց ծայրագույն պահանջի, հոժարությամբ դիմի երդման սուրբ ավետարանով կամ խաչով (Ն. Շնորհալի, Թուղթ ընդ. իշխաններին):

դ. Առաքինությունը բաժանելով բաժինների՝ սկիզբ դրեցինք նախ չերդվլ և ապա՝ սուտ չերդվել (Ոսկեբեր. Մեկն. ճառ ժա): Տե՛ս նաև 349. ա:

355. Ընկերոջը հայիոյելը Աստծուն անարգել է նշանակում:

ա. Ձեր լեզուն սատանայի գործիք մի՞դարձնեք չար ու դառն հայիոյանքներով, մանավանդ անարգում են հավատն ու հոգին, և՛ ավազանի մկրտությունը, և՛ մկրտող քահանային, և՛ դեմքն ու բերանը, - այս հանցանքները ավելի մեծ են, քան ուրացությունն ու թլփատությունը, որովհետև այլազգիները, որ քրիստոնյային ստիպում են ուրանալ հավատը, Աստծուն անարգել չեն ստիպում: Իսկ ով հավատն է անարգում, ոչ թե մարդուն է անարգում, այլ՝ Աստծուն, որովհետև ամեն Աստվածապաշտի հավատը Աստված է: Ով անարգում մկրտությունն ու մկրտող քահանային, Սուրբ Հոգուն է անարգում, որովհետև մկրտվողները նրանով են ծնվում ավազանից: Ով անարգում է մարդու հոգին և անձը, նորից Աստծուն է վերաբերում հայիոյությունը, որովհետև Հոգին Աստծուց է փչվում, և անձը Աստծու պատկերն է, նույնպես և բերանը ընդունողն է Քրիստոսի մարմինն ու արյունը (Ն. Շնորհալի, Թուղթ ընդ. երկրագործ):

356. Երբ խիստ կարիք ու անհրաժեշտություն կա, միայն այն ժամանակ պետք է երդվել՝ կամ ի փառս Աստծու, կամ ի նպաստ երդվողի, կամ հոգուտ ընկերոջ:

ա. Տերն ասում է, ով Իսրայել, եթե դառնալու լինես, դեպի ինձ դարձիր: Եվ եթե իր բերանից զցի գարշելի բաներ, Երուսաղեմի աստծու համար է: Նա ինձանից կերկնչի ու կերդվի, թե կենդանի է Տերը ճշմարտությամբ (Եփրեմ. Դ 1-2):

բ. Մարդիկ երդվում են նրանով, ով մեծ է իրենցից. և նրանց մեջ եղած ամեն հակառակության վերջնական վճիռը երդումն է (Եբր. Զ 16):

գ. Եթե ծայրահեղ պատճառ լինի երդվելու, թող ոչ ոք աններելի հանցանքով չմեղանչի՝ ուրանալով երդումը և երդմնազանց լինելով, որովհետև առավել չար է երդումն ուրանալը, քան անհավատների առաջ մահվան երկյուղից (հավատը) ուրանալը (Ն. Շնորհալի, Թուղթ ընդ. իշխանների):

357. Մենք պարտավոր ենք միշտ հավատարիմ լինել մեր խոսքերին նայնչափ ու այնպես, որ երբեք հարկ չլինի այդ նույնը երդմամբ հաստատելու:

ա. Ձեր խոսքը լինի. այոն՝ այո և ոչը՝ ոչ (Մար. Ե 37):

բ. Ղուք ձեզ այնպես ճշմարտապես ցույց տվիք բոլորին, որ մարդիկ մինչև անգամ ձեր պարզ խոսքերին հավատան (Ն. Շնորհալի, Թուղթ ընդ. իշխաններին):

358. Քրիստոնյաններին կարգ սահմանեց՝ շաբաթ օրվա փոխարեն կիրակին պահել:

ա. (Քրիստոնյանները) այժմ շաբաթ օրը չեն պահում, այլ կիրակին է սուրբ և առաջին օրը, երբ մեզ համար կյանքը ծագեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով (Իգնատիոս Աստվածագգ. Թուղթ՝ գրված մաղնիսիացիներին, գլ. Գ):

359. Առանց բարի գործերի տոն և կիրակ օրերը դատարկություն են, որն ատելի է Աստծուն:

ա. Ղատարկությունները... և ձեր տոները ատում են ես(Եսայի, Ա 14):

բ. (Աստված չի ընդունում շաբաթվա բարի անգործությունը (Գրիգոր Նյուսացի, Մեկն. երգ.):

360. Մենք պարտավոր են սիրելու պատվել թագավորներին, առաջնորդներին, իշխաններին, ուսուցիչներին և մեր բոլոր խնամակալներին:

ա. Եղբայրներ աղաչում են ձեզ, որ ճանաչեք և գնահատեք ձեր վաստակավորներին, Տիրոջ կողմից ձեր նշանակված վերակացուներին, ինչպես նաև ձեզ խրատողներին. և առավելագույն սիրո համարեցեք նրանց՝ իրենց աշխատանքի համար (Ա Թեսաղ. Ե 12-13):

բ. Ովքեր ծռայության լծի տակ են, նրանցից յուրաքանչյուրը թող իր տերերին պատվի արժանի համարի (Ա Տիմոթ. Զ 1):

գ. Աշակերտը թող մասնակից անի ուսուցչին բոլոր բարի բաներում (Գաղատ. Զ 6):

դ. Վախեցեք Աստծուց, պատվեցեք թագավորներին (Ա Պետրոս Բ 17):

361. Որդիները պարտավոր են հնազանդ լինել իրենց ծնողներին:

ա. Որդիներ, հնազանդ եղեք ձեր ծնողներին ի Տեր, որովհետև դա է ճիշտը (Եփես. Զ 1):

բ. Որդիներ, ամեն ինչում հնազանդ եղեք ձեր ծնողներին, որովհետև հաճելին այդ է Տիրոջ առաջ (Կողոս. Գ 20):

362. Ամեն ոք պարտավոր է միշտ հպատակվել իր օրինավոր թագավորին, իշխանին և առաջնորդին:

ա. Որդյակ, վախեցիր Աստծուց ու թագավորից և նրանցիցոչ մեկի դեմ մի՛ ապստամբիր (Առակ. ԻԴ 21):

բ. Ամեն մարդ, որ իշխանության տակ է, թող հպատակի նրան, քանզի չկա իշխանություն, որ Աստծուց են կարգված:... Իշխանագործները վախ չեն ազդում բարի գործերի համար, այլ՝ չար գործերի: Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանությունից. բարին գործիր և նրանից գովասանք կստանաս: Ղրա համար պետք է հնազանդվել ոչ միայն բարկության համար, այլ նաև խղճմտանքի պատճառով. ասիա թե ինչու հարկեր ենք վճարում. որովհետև նրանք Աստծու սպասավորներն են՝

այդ բանին կանխապես նշանակված: Արդ՝ հատուցեցեք յուրաքանչյուրին իրենց պարտքերը. որին հարկ՝ հարկը, որին մաքս՝ մաքսը, որին երկյուղ՝ երկյուղը, որին պատիվ՝ ատիվը (Հռոմ. ԺԳ 1, 3, 5-7):

գ. Ամեն բան, ինչ արժանի և վայելուչ է, չի վնասի մեր հավատի անդեսին: Մենք պարտավոր ենք հնազանդվել ու նրանց հարկ վճարել... և՛ պատվել նրանց, և՛ աղոթել նրանց կյանքի և մեր բարեկեցության ու խաղաղության համար (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. ճառ. Ե): Տե՛ս նաև 335. Ա, Գ, Դ, 363:

363. Ծառաները պարտավոր են հնազանդվել իրենց տերերին:

ա. Ծառանե՛ր, հնազանդ եղեք ձր մարմնավոր տերերին ահով և դողով և անկեղծ սրտով, ինչպես հնազանդ եք Քրիստոսին. ոչ թե հսկողության տակ. ծառայելով, ոճպես մարդահաճո անձեր, այլ՝ որպես Քրիստոսի ծառաներ՝ կատարելու համար Աստծու կամքը: Հոժարությամբ ծառայեցեք, ինչպես պիտի ծառայեիք Տիրոջը և ոչ թե մարդկանց (Եփես. Ջ 5-7):

բ. Ծառանե՛ր, ամեն ինչում երկյուղով հնազանդ եղեք տերերին, ոչ միայն բարիներին և հեզաբարոներին, այլև դաժաններին, քանի որ Աստուց է այն շնորհը, եր մեկը հանիրավի վիշտ է կրում բարի խղճով (Ա Պետրոս. Բ 18-19): Տե՛ս նաև 360. Բ:

364. Աշակերտներին վայել չէ ապաշնորհ գտնվել ուսուցիչների նկատմամբ: Տե՛ս 360. Ա, Գ:

365. Երախտիք գրողները մեղք են գործում, երբ անփութորեն վշտացնում են բարեգործներին:

ա. Եթե թշնամին ինձ նախատեր, կհամբերեի արդյոք, կամ եթե ինձ ատողը մեծաբաներ ինձ վրա, արդյոք թաքնվեի նրանից: Իսկ դու ինձ հավասար մարդ ես, իմ առաջնորդը, իմ բարեկամը (Սաղ. ծե. 12-13):

366. Օրենքն արգելում է հանիրավի մարդ սպանել:

ա. Անմեղին ու արդարին մի՛ սպանիր (Ել. ԻԳ 7):

367, 368. Երբ զինվորը օրինավոր ու արդար պատերազմում սպանում է թշնամուն, իսկ դահիճը՝ մահապարտին, նրանք իրավացի են՝ ըստ տերության արդարարար վճռի:

ա. Եթե մեկը մրցամարտիկ է, պսակ չի ստանա, եթե ըստ օրենքի չմարտնչի (բ. Տիմոթ. Բ 5):

բ. Աստծու պաշտոնյա է (իշխանը կամ դատավորը) քեզ՝ բարի գործերի համար. իսկ եթե չար գործես, վախեցիր. քանի որ սուրը մեջքին իզուր չէ կապված. Աստծու սպասավորն է նա, վրեժխնդրի՝ բարկության համար, նրա դեմ, որ չարն է գործում (Հռոմ. ԺԳ 4):

գ. Սպանությունը, երբ օրենքով է, ճիշտ է (Ն. Լամբ. Մեկն. Առակ. գլ. նա.):

369, 370. Մեղք են գործում նրանք, ովքեր խոսքով կամ դավադրությամբ սպանում են որևէ մեկին կամ մեկի սպանությանը գաղտնի կամ բացահայտ կողմնակից ու գործակից են դառնում:

ա. Արյունահեղ ու նենգավոր մարդուն պիղծես անում դու, Տե՛ր (Սաղմ. Ե 7):

բ. Արյունահեղ ու նենգավոր մարդիկ թող չապրեն իրենց կյանքի կեսը (Նույն տեղը ԺԴ 24):

371, 372, 373. Մեկին հրապուրել՝ մեղք գործելու, անմեղներին գայթակղեցնելը, եղբայներին կամ ընկերներին ատելը և նրանց բարի համբավը չարախոսությամբ հերքելը մարդասպանությանը հավասար մեղքեր են:

Ով ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, նրա համար լավ կլինի, որ նրա պարանոցից էջի երկնաքար կախվի, և նա սուզվի ծովի խորքը (Մատթ. ԺԸ 6):

բ. (Շտապեք) դեն գցել... նախանձ և ամեն չարախոսություն (Ա Պետրոս. Բ 1):

գ. Ամեն ոք, ով ատում է եղբորը, մարդասպան է (Ա Հովհ. Գ 15):

դ. Ով (իր ընկերոջը) հրապուրում է և սովորեցնում չարություն, սատանա է (Գ. Լուս. Հաճախ. ճառ. Ի):

ե. Եղբայրատացներին մարդասպան է կոչում... Ամեն մարդ, ով նենգ է իր ընկերոջ նկատմամբ, արյունահեղ է (Ն. Լամբ. Մեկն. Սաղմ.):

374. Մեզ կյանք տվողը աստված է, և մենք մեր անձերի տերը չենք:

ա. Աստված, որ ստեղծեց այս աշխարհը և այն ամենը, որ նրա մեջ կա, նա է Տերը երկնքի և երկրի... Նա է տալիս ամեն բանի կյանք և շունչ և ամեն ինչ (Գործք. ԺԷ 24-25):

բ. Կենդանի է պահում մարդկային շունչը, վասնզի ինքը կենդանություն է (Գ. Լուս. Ազաթ. -ի երկում, 64):

գ. Ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է, և որն ստացել ենք Աստծուց. և դուք ձեր տերը չեք (Ա Կորնթ. Զ 19):

375, 376. Պետք է զգուշանալ պոռնկությունից, շնությունից և նման այլ մեղքերից, ինչպես նաև պիղծ կամ անպարկեշտ խոսքերից ու խորհուրդներից:

ա. Փախեք պոռնկությունից (Ա Կորնթ. Զ 18):

բ. Հեռու ձեզնից պոռնկություն և ամեն տեսակ պղծություն... դրանց անունն իսկ թող չհիշվի ձեր մեջ, ինչպես որ վայել է սրբերին. և հեռու ձեզնից զազրախոսություն կամ հիմար խոսք կամ խեղկատակություն, որ վայել չեն (Եփես. Ե 3-4):

377. Չպետք է գողանալ, հափշտակել, զրկել, կողոպտել:

ա. Անիրավության վրա հույս մի՛ դնեք, մի՛ ցանկանաք հափշտակել (Սաղմ. կա. 11):

բ. Չգիտե՞ք, որ անհրավները Աստծու արքայությունը չեն ժառանգում, մի՛ խաբվեք... ո՛չ գողերը, ո՛չ ազահները... ո՛չ հափշտակողները Աստծու արքայությունը չափտի ժառանգեն (Ա Կորնթ. Զ 9-10):

378. Խաբեությունները գնի և վաճառքի մեջ, խարդախությունները չափի ու կշռի մեջ, ինչ ձևով ուզում է լինի, մեղք են:

ա. Վերացրո՛ւ քո վաճառքի խարդախությունը (Եսայի, ծը. 6):

բ. Անհրավություն մի՛ անեք... ո՛չ չափի, ո՛չ կշռի, ո՛չ կանգունի մեջ: Ձեր կշեռքը, ձեր կշռաքարը, ձեր չափը թող արդար լինեն (Ղևտ. ԺԹ 35-36):

գ. Տեսակ-տեսակ կշռաքարեր, տեսակ-տեսակ չափեր, - երկուսն էլ զգվելի են Տիրոջ համար (Առակ. Ի 10):

379. Նոր օնենքի պատվիրանները ավելի կատարյալ են, քան հինները:

ա. Մովսեսական օրենքը թեև մարմնական, մանուկների ձեռքը տրված խաղալիք, որի համար էլ Պողոսը այն կղկղանք է անվանում: Իսկ կատարյալ ասում է ավետարանի օրենքը, որ տրվեց Քրիստոսի և ոչ թե Մովսեսի միջոցով. ազատության և արդարության և որդեգրության օրենքներ են, որոնք երկնային են և մեզ նայել են տալիս երկնքին (Ս. Շնորհալի, Մեկն. Հակ. ճառ Ե):

380. Ովքեր իրենց սրտում կրում են չարության խորհուրդները, ինչպես նաև նրանք, ովքեր հոժար են մեղք գործելու, իսկապես մեղավոր են:

ա. Ամեն ինչ, որ բերան է մտնում, որովայն է գնում և դուրս է ելնում: Իսկ ինչ ելնում է բերանից, սրտից է գալիս, և այն է մարդուն պղծում, քանի որ գլնում են չար խորհուրդներ, սպանություններ, շնություններ, պոռնկություններ, գողություններ, սու վկայություններ, հայիոյանքներ: Այս բոլորն են, որ պղծում են մարդուն (մատթ. ԺԵ 17-20):

381. Ադամի մեղքը անհնազանդությունն էր:

ա. Մեկ մարդու (Ադամի) անհնազանդությամբ շատ մեղավորներ եղան (Հռոմ. Ե 19):

382. Ադամի մեղքից պտղաբերվեց դատապարտությունը նրա բոլոր սերունդների հոգով և մարմնով՝ թե՛ այս և թե՛ այն կյանքում:

ա. Այսժամ (Աստծուն) մեր անհնազանդության սկիզբը եղավ: Խաբվելով մոլորեցնող խրատողից ծառի պտուղը ճաշակելը Աստվածայինից գերադասեցինք: Որի պատճառով մերկացանք փառքից, մահվան դատապարտվեցինք և ընդունելով անիծյալ կյանքը՝ մեղքի թագավորության տակ ընկանք... Չեմ ուզում ասել, թե դրանից մարդկային ազգին ինչպիսի ավստեր եղան հոգով և մարմնով, և օտարություն Աստծուց և բազմատեսակ պատուհասներ,

այստեղից էլ՝ թշնամություններ, ախտալից կյանք ու դժնդակ մահ, և հանդերձյալ կյանքում սպասվում են անհնարին և անսպառ տանջանքներ (Խոսրով, Մեկն. Ժամակարգ.):

383. Ադամի հանցանքով դատապարտվեցին բոլոր մարդիկ:

ա. Մեկ մարդու (Ադամի) հանցանքով բոլոր մարդիկ դատապարտության մատնվեցին (եղավ) (Հռոմ. Ե 18):

բ. Աստծու Որդին ադամի կերպարանքն առավ ծառայի նմանությամբ... ծառայի ամենայն արդարությունները կատարեց... Եվ ինչպես ադամական մեկ մածրմնի միջոցով (մարդիկ) պարտավոր մնացին, նույնպես և տնտսական մեկ մարմնի միջոցով կազատվեն մեղքերի ծառայությունից (Գ. Լուս. Ազաթ. -ի երկուս, 591, 592):

Տե՛ս նա՛ 152. Ա, Բ:

384 Բովանդակ մարդկային բնությունը Ադամին մեղսակից ու դատապարտակից դարձավ:

ա. Մեկ մարդով մեղքը աշխարհ մտավ, և մեղքով էլ՝ մահը, այնպես էլ բոլոր մարդկանց մեջ տարածվեց մահը, որովհետև բոլորն էլ մեղանչեցին (Հռոմ. Ե 12):

բ. Մահը թագավորեց Ադամից մինչև Մովսես նույնիսկ նրանց վրա, որոնք Ադամի հանցանքի նման հանցանք չգործեցին (Հռոմ. Ե 14):

գ. Որպես Ադամն այն առաջին,

Նա, որ իր մեղքով անվանվում է հին,

Որով մեռանք բոլորս էլ

Եվ կորցրինք ցանկալին (Ն. Շնորհալի, Ողբերգ. գիրք Ա):

դ. Հայրենատուր ավանդությունները ինձ թվում են, թե առաջին մարդու անհնազանդությունից եղան, որով մեղքը աշխարհ մտավ, իսկ մեղքից էլ՝ մահը: Եվ այնպես բոլոր մարդկանց վրա տարածվեց մահը, և նրանց համար եղավորպես Հորից ավանդված ժառանգություն (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. Ճառ. Դ):

ե. Ադամի մահը մեռցրեց ամբողջ տոհմը (Եփրեմ, Մեկն. Ավետ. համաբարբառի, գլ. ԻԱ):

385. Չկա մեկը մարդկանցից, որի սկզբանե մեղքերից անշաղախ (մաքուր) ծնված լինի և ոչ ոք չի ծնվում:

ա. Անօրինությամբ հղիացավ և մեղքով ծնե ինձ իմ մարը (Սաղմ. Ժ. 7):

բ. Ո՞վ կա կեղտից մաքուր, իհարկե, ոչ ոք. թե՛ նրա կյանքը երկրի վրա մի օր է տևում (Հոբ. ԺԴ 4):

386, 387, 388, 389. Ղատապարտությունը այս աշխարհում նշանակում է նախ՝ ապականության արատը մեզանում, որի պատճառով զրկվեինք երկնային պարգևներից և անախտավոր կյանքի շնորհներից, որոնք պետք է վայելեինք, եթե մեղք չգործեր Ադամը, և

երկրորդ՝ զգայարանների խզումը մտքից և մարմինը՝ հոգուց, որոնց հետևանքով մեզանում շատացան զանազան պախարակելի կրքերը, ինչպես նաև մարմնի մահը:

ա. Մեղքով ապականված (Ադամը) ապականության սերմը սերմանեց սերնդեսերունդ իրենց ծննդյան օրից (Խոսրով, Մեկն. Ժամակարգ):

բ. Ողբանք Հոր (Ադամի) վիշտը, որ մեղքի պատճառով մերկացավ արարչի փառքից (Շարակ.):

գ. Նախաստեղծի խաբեության պատճառով զրկվեցինք լույսից (Նույն տեղը):

դ. Առաջին պատմուճանը, որ հազցրեց Հոգու օժնամբ. մերկացանք մեղքով նախահո խաբվելով (Նույն տեղը):

ե. սկզբից իսկ սիրեցիր քո ձեռքի ստեղծածներին և շնորհեցիր վայելչության դրախտի հանգստյան անտանջանք զվարճությունը: Անմահ, անհոգ, հավերժական կյանքի ուրախ վիճակը պատրաստեցիր, եթե հաստատ մնացինք ծառից չձաշակելու պատվիրանին (Գ. Լուս. Ազաթ. -ի երկում, 75):

զ. Ընկանք այն փառքից, որ դու էիր տվել, դրախտից վտարվեցինք, դատապարտվեցինք մահվան ու ապականության և տոչորվում ենք հոգսերով և՛ տրտմությամբ, և՛ չարչարանքով, և՛ տեսակ-տեսակ ցավերով, և՛ տառապանքով, և՛ տարակուսանքով՝ զրկվելով քո երեսի սուրբ տեսությունից... և եղկելի ենք հոգով և մարմնով ու մտքով, քանի որ հենց այդ նույն բնությունը կարգվեց մեզ հակառակ (Խոսրով, Մեկն. Ժամակարգ.):

է. ընկել էր պատժի պատուհասի տակ (մարդ պատվիրանազանցությունից հետո), արդարության դատաստանի առջև, դրսից գրավվել մահվան կողմից, նավիրավորվեց, խաչվեց, հոգսերի, ալեկոծության, դժգարությունների, ցավերի, քրտինքի (Գ. Լուս. Ազաթ. - երկում, 668):

ը. Ադամի ձեռքով տարածվեց ապականությունը՝ իմացության ծառի պտուղն ուտելու պատճառով. մարդկանց հոգիները ապականվեցին մեղքի խխտերով, և մարմիններին վիճակվեց ցավով ու տանջանքով հողին դառնալ և հողում ապականվել (Խոսրով, Մեկն. Ժամակարգ.):

թ. Ծառին խաբվելով մահը ձաշակեցինք (Շարակ): Տե՛ս նաև 382. Ա, 384. Ա, Բ Գ, Դ Ե):

390. Ղատապարտությունը այն կյանքում Աստվածային տեսությունից զրկվելն է, ինչպես նաև հոգու տառապանքը, հուսահատությունը և այլն: Տե՛ս 382, 389. Զ:

391, 392. Հավիտենական դատապարտությունից փրկվում են միայ նրանք, ովքեր հավատում են Աստծու Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և հնազանդվում են նրան՝ ընդունելով նրա կողմից սահմանված մկրտությունը:

ա. Ով հավատում է Որդուն, ընդունում է հավիտենական կյանքը (Հովհ. Գ 36):

բ. Ով հավատա և մկրտվի, պիտի փրկվի (Մարկ. ԺԶ 16):

գ. Այսօր նախամոր տրտմության և գիշրային ծննդյան երկունքը լուծվեց,, քանի որ մարմնով մահվան ու ապականության համար ծնվածներին Հոգին վերստինծնվեց լույսի որդիներ երկնավոր Հոր (Շարակ.): Տե՛ս 228, 394. Դ:

393, 394. Առանց հավատալու Քրիստոսին ոչ ոք չի կարող անդատապարտելի մնալ կամ ժառանգել հավիտենական կյանքը, կմնա Աստծու բարկության տակ:

ա. Ով չհավատա, պիտի դատապարտվի (Մարկ. ԺԶ 16):

բ. Ով չի ընդունում Աստծու Որդուն, չի ընդունում նաև կյանքը (Ա Հովհ. Ե 12):

գ. Ով չի հնազանդվում Որդուն, կյանք չի տեսնի, այլ նրա վրա կմնա Աստծու բարկությունը (Հովհ. Գ 36):

դ. Ով թերահավատ լինի Որդու (նկատմամբ) չի տեսնի հավիտենական կյանքը... այլ Աստծու բարկությունը նրա վրա կմնա (Գ. Լուս. Ագաթ. -ի երկում, 436):

395. Կան մեղքեր, որոնք մահացու են և մեղքեր էլ կան, որոնք մահացու չեն, այսինքն՝ ներելի, ու թեթև:

ա. Եթե որևէ մեկը իր եղբորը տեսնի մեղանշած, և եթե մեղքը մահաչափ չէ, թող խնդրի, և Աստված կյանք կտա ոչ մահաչափ մեղանշողին: Մեղք կա, որ մահաչափ է, և ես չեմ տեսնում, ործ նրա համար խնդրես (Ա Հովհ. Ե 16):

բ. Իսրայելի որդիները թող այլևս չմոտենան մատուռի խորանին՝ մահաբեր կյանք ընդունելու համար (Թվոց. ԺԸ 22):

396. Մահացու մեղքերը մեղանշողներին դատապարտում են հավիտենական պատիժների՝ նրանց զրկելով երանական կյանքից:

ա. Ձեր մեղքերը ձեզ բաժանում են Աստծուց (Եսայի, ծթ. 2):

397. Առաքիներություններով պետք է բուժել մեղքի կամ մոլորության ախտերը՝ նրանց դիմադրելով:

ա. Բարկության (հակառակն է) հեզությունը (Գ. Լուս. Հաճախ. Ճառ ԻԳ):

բ. Բարկության ախտերը հեզությամբ է բաժանվում, և ամբարտավանությունը՝ խոնարհությամբ, որկրամոլությունը՝ պարկեշտությամբ... ըչասիրությունն ու ազահությունը՝ մարմնի սակավապետությամբ և հարստությունը արհամարհելով և աղքատությունը սիրելով... ծուլությունը՝ աշխատասիրությամբ (Խոսրով, Մեկն. Ժամակագ.):

398. աստված ատում է բոլոր մեղքրն ու անիրավությունները:

ա. Աստծուն առհասարկ ատելի են ամբարշտոյալն ու իր ամբնարշտությունը (Իմաստ. ԺԴ 9):

399. Այն մեղքերը, որոնք Սուրբ Հոգու դեմ են, աններելի են:

ա. Ամեն մեղք և հաիոյանք կներվեն մարդկանց, բայց Հոգու դեմ հայիոյանքը (այսինքն՝ այն հայիոյությունը, որ Հոգու մասին է կամ Հոգու դեմ) չպիտի ներվի: Եվ ով որ մարդու որդու դեմ

խոսք ասի, նրան պիտի ներվի, բայց ով ասի Սուրբ Հոգու դեմ, նրան չպետք է ներվի ո՛չ այս աշխարհում և ո՛չ էլ հանդերձյալում (Մատթ. ԺԲ 31-32):

400, 401, 402, 403, 404, 405. Աստծուց իսպառ հույսը կտրելը, հաղճնաբար Աստծու վրա հույս դնելը, հայտնի ճշմարտության դեմ մաքառելը, բարի եղբոր դեմ չար նախանձը, անկարեկից խոստովանությունը, համառորեն մեղքերը զղջալը, այս բոլորը աններելի մեղքեր են:

ա. Հուսահատությամբ (մեղքերի) թողություն չի տրվում (Խոսրով, Մեկն. Ժամակարգ.):

բ. Թե՛ զղջումն ուժգին, թե՛ մեղանչումը անսանձ, մոլագար,

Կորստաբեր են հավասարապես.

Թեպետ դրանք իրարից տարբեր,

Բայց ըստէության զուգադրելիս

Կնկատենք, որերկուսն էլ մարդուն

Մղում, հասցնում են նույն վիատության,

Քանի որ մեկը թերահավատում է հզորի ձեռքին՝

Համարելով այն ապիկար, անզոր,

Իսկ մյուսն, անբան ու չոքոտանի

Անասունի պես անզգայացած,

Իսպառ կտրում է առասանն հույսի... (Գ. Նարեկ. բան Ժ.):

գ. Եթե կամավոր կերպով ենք մեղանչում ճշմարտությունն իմանալուց և ընդունելուց հետո, ուրեմն մեղքերի քավության համար այլևս ուրիշ զոհ չի մնում, այլ մնում է դատաստանի ահեղ սպասումը և կրակի կաղապարությունը, որ լափելու է Աստծու հակառակորդներին (Եբր. Ժ 26-27):

դ. Անողորմ դատաստան է լինելու նրա հանդեպ, ով ողորմած չի եղել (Հակոբ Բ 13):

ե. Եթե արհամարհում ես նրա բարության առատությունը և ներողամտությունն ու համբերությունը, չգիտե՞ս, որ Աստծու բարությունը քեզ ապաշխարության է տանում (այսինքն՝ կոչում, հորդում է): Եվ քո խստասրտությամբ ու անզիղջ սրտով քո անձի դեմ բարություն ես դիզում բարկության օրվա և Աստծու արդար դատաստանի հայտնության օրվա համար (Հռոմ. Բ 4-5):

զ. Ովքեր այստեղից գնում են առանց զղջալու, նրանց համար այլևս բարության ակնկալություն չկա, այլ կա պատուհասի պատիժ (Խոսրով, Մեկն. Ժամակարգ.):

406. Մարդ չի կարող բոլորովին ազատ լինել ամենայն ներգործող մեղքերից, բայց աստծու օժանդակությամբ կարող է զգուշանալ հոժարակամ մեղանչելուց:

ա. Իրավ, որ երկրի վրա արդար մարդ չկա, որ բարիք գործի և չմեղանչի (Ժող. Է 20):

բ. Ո՞վ կարող է պարծենալ, թե սուրբ սիրտ ունի, կամ ո՞վ կհամաձայնվի ասել, թե ինքը մեղքերից մաքուր է (Առակ. Ի 9):

գ. Եթե ասենք. «Մենք ոչ մի մեղք չունենք», մենք մեզ ենք խաբում, և ճշմարտություն չկա մեր մեջ:... Եթե ասենք. «Չենք մեղանչել», սուտ ենք հանում նրան (Աստծուն) (Ա Հովհ. Ա 8, 10):

դ. Իմացա, որ այլ կերպ չեմ կարող դիմանալ, եթե Աստված տա (Իմաստ. Ը 21):

ե. Անհաղթահարելի և հաճելի կրքերը մեզ ներքև են քաշում. և խաբողը գուլ է, և մարմինը օգնական, և զգայությունները՝ դրդող, և զվարճությունը՝ ծգող, և չարչարանքները՝ առկա, և անմտությունը՝ մոտիկ, և ծուլությունը՝ խավարեցնող: Այս բոլորից իսկապես ազատվելը անհնար է: Որովհետև ով մեկ անգամ մարմին է ստացել և իր գարշապարը հաստատել հողին, սրանցից զերծ մնալ և մաքուր ու անարատ լինել չի կարող (Ս. Շնորհալի, Մեկն. Ա Պետ. Ճառ Դ, հորդորակ):

407. Աղոթքով արժանի ենք դառնում ընդունելու Աստծու օժանդակությունը:

ա. Համարձակությամբ մոտենանք նրա շնորհի աթոռին, որպեսզի ողորմություն ստանանք և շնորհ գտնենք այն ժամանակ, երբ օգնության կարիք ունենք (Եբր. Դ 16):

408. Աղոթքը աստծուց բարիքների աղաչանք է:

ա. Աղոթքը՝ նրանցից (Աստծուց), բարիքներ խնդրելն է (Սարգիս Շնորհալի, Մեկն. Ա Պետ. գլ. Է):

409. Հրապարակային աղոթքը կատարվում է բազմաթիվ աղոթողների համատեղ ձայնակցությամբ:

ա. Նրա տաճարում բոլորը նրան փառք պետք է տան (Սաղմ. ՃԺԵ. 18-19):

410. Անհատական աղոթքն այն է, երբ մարդ աղոթում է առանձին՝ բարձրաձայն կամ լուռ:

ա. (Սամուելի մայր Աննան) շարունակեց աղոթել Տիրոջ առաջ.. նրա շրթունքները չէին շարժվում, և նրա ձայնը չէր լսվում (Ա Թագ. Ա 12-13):

բ. Թեպետև շրթունքները չէին շարժվում մտքով աղաղակեցիր, քանի որ Աստված լսում է լուռ շրթունքներին (Ոսկեբ. Ճառ քահանայի կանանց):

411, 412. Ամեն ոք, բացի առանձին աղոթելուց, պարտավոր է մասնակցել նաև հրապարակային աղոթքներին:

ա. Կմտնեմ Աստծու սքանչելի տան հարկից ներս՝ զնծալի և կենսուրախ ձայնով խոստովանելու (Սաղմ. խբ. 4-5):

Տե՛ս նաև 413. Ա, Բ:

413. Հրապարակային աղոթքը արժանի է Աստծուն մատուցել նրա տաճարում:

ա. Մտե՛ք նրա դռներից ներս խոստովանությամբ և նրա հարկից ներս օրհնությամբ (Սաղ. ճ. 4):

բ. Տիրոջը երկրպագեցէ՛ք նրա սուրբ սրահում (Նույն տեղը, ԻԹ 2):

գ. Նրանց պիտի ուրախացնեն իմ աղոթքի տանը. նրանց ողջակեզներն ու զոհերը ընդունելի պիտի լինեն իմ սեղանի վրա, որովհետև իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի (Եսայի, ԾՁ 7, Մար. ԻԱ 13): Տե՛ս նաև 409:

414, 415, 416. Անհատական աղոթքը աղոթասերը կարող է կատարել ցանկացած պատշաճ տեղում, այսինքն՝ կամ իր սնյակում, մարդկանցից մեկուսի:

ա. Ուզում եմ, որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ (Ա Տիմ. Բ 8):

գ. Մտիր քո սենյակը, փակիր քո դռները և ծածուկ աղոթիր քո Հորը (Մատթ. Ձ 6):

դ. Առանձին (Քրիստոսը) լեռ բարձրացավ աղոթելու համար (Մատթ. ԺԴ 23):

ե. Խույս էր տալիս դեպի ամայի տեղեր և աղոթքի էր կանգնում (Ղուկ. Ե 16):

զ. Գոհություն մատուցեցէ՛ք... և երախտագիտությամբ օրհնելով ձեր սրտերում Աստծուն (Կողոս Գ 15-16): Տե՛ս նաև 410. Ա:

417. Անկախ ժամից ու ժամանակից, կարելի է աղոթել:

ա. Ամեն ժամ աղոթք արե՛ք (Ղուկ. ԻԱ 36):

բ. Առե՛ք փրկության սաղավարտը և հոգու սուսերը, որ է Աստծու խոսքը: Ամենայն աղոթքներով և աղաչանքներով ամեն ժամ աղոթեցէ՛ք հոգով (Եփես. Ձ 17-18):

գ. Ամեն ժամ (Աստված) մերձ է, եթե կամենում ես կանչել նրան (Ոսկերբեր. Ճեռ քահանայի կոջը):

418. Սովորական կարգի համաձայն հարմար է աղոթել կամ առավոտյան, կամ երեկոյան, կամ կեսգիշերը:

ա. Ղու պետք է վեր կենաս գովության աղոթքի նախքան արևածագը և աղոթքս անես լուսաբացից առաջ (Իմաստ. ԺՁ 28):

բ. Եվ առավոտյան մոտ, լույսը բացվելուց առաջ, (Հիսուսը) վեր րացագ և ելավ գնաց ամայի մի տեղ ու այնտեղ աղոթում էր (Մարկ. Ա 35):

գ. Առանձին լեռ բարձրացավ աղոթելու համար: Եվ երբ երկու եղավ, այնտեղ էր, մենակ (Մատթ. ԺԴ 23):

դ. Գիշերը ձեր ձեռքերը բարձրացրե՛ք դեպի սրբություն և օրհնեցե՛՛ Տիրոջը (Սաղմ. Ճլդ. 2):

ե. Գիշերանց իմ հոգին քեզ է հանում, Աստված (Եսայի ԻԶ 9):

զ. Ամբողջ գիշերն անցկացվեց Աստծուն աղոթելով (Ղուկ. Ձ 12):

419. Մեր աղոթքներում մենք պարտավոր ենք խնդրել Աստծուց այն, ինչ կարևոր է մեր հոգու և մարմնի համար, կամ մեր ժամանակավոր և հավիտենական կյանքի համար:

ա. Աղոթք անելիս շատախոս մի լինեք ինչպես հեթանոսները... Արդ, նրանց չնմանվեք, որովհետև ձեր Հայրը գիտե, թե ինչ է ձեզ պետք, նախքան որ դուք նրանից մի բան ուզեք... Նախ խնդրեցեք Աստծու արքայությունը և նրա արդարությունը (Մատթ. Զ 7, 8, 33):

420, 421, 422. Աստված կատարում է մեր աղաչանքները, եթե ինչ որ խնդրում ենք, մեզ օգտակար լինի՝ իր կամքի համաձայն, նաև եթե մեր խնդրանքը լինի հանուն Հիսուս Քրիստոսի և չար վախճան չունենա:

ա. Ինչ էլ խնդրենք, ըստ նրա կամքի, նա մեզ կլսի (Ա Հովհ. Ե 14):

բ. Ինչ իմ Հորից ուզեք, պիտի տա ձեզ (Հովհ. ԺԶ 23):

գ. Ինչ որ ուզեք իմ անունով, այն կանեն (Հովհ. ԺԴ 13):

դ. Խնդրում ենք և չենք ստանում, որովհետև չարամտորեն եք խնդրում (Հակ. Դ 3):

423, 424. Անարանությամբ մատուցած աղոթքները պիղծ են սրբության սրբոցի առջև և կվերադառնան աղոթողին որպես մեղքեր:

ա. Երբ դուք ձեր ձեռքերը բարձրացնում ե դեպի ինձ, ես իմ դեմքը շուռ եմ տալիս ձեզանից, և եթե շարունակում եք աղոթել, չեմ լսի, որովհետև ձեր ձեռքերը լի են արյամբ (Եսայի, Ա 15):

բ. Իմ սրահները ոտք մի՛ դնեք... ձեր խունկը ինձ համար պիղծ է... Հագեցե՛լ եմ ձեզանից և չեմ ների ձեր մեղքերը (Նույն տեղը, 13-14):

գ. Նրա աղոթքը թող մեղքի փոխվի (Սաղ. ճթ. 7):

425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435. Աղոթելիս պարտավոր ենք զգուշանալ, որպեսզի մեր աղոթքները մարդկանց առաջ չլինեն ցուցադրական կամ կեղծավոր, այլ լինեն ճշմարտությամբ, չաղոթենք միայն շրթունքներով, այլ հոգով և ուշադրությամբ, ոչ թե ձանձրանալով, այլ զվարթությամբ, երկմտությամբ, այլ կատարյալհավատով, ոչ ևե հանդգնությամբ, այլ խոնարհությամբ և Աստծու երկյուղով, ոչ թե հիշաչարությամբ, այլ ներելով նրանց, ովքեր հանցանք գործեցին:

ա. Եվ երբ աղոթես, չլինես կեղծավորների նման, որոնք սիրում են ժողովարաններում և հրապարակի անկյուններում աղոթքի կանգնել, որպեսզի մարդկանց երևան (Մատթ. Զ 5):

բ. Ճշմարիտ երկրպագուները կերկրպագեն Հորը հոգով և ճշմարտությամբ, քանի որ Հայրն էլ իրեն այդպիսի երկրպագուներ է ուզում: Հոգի է աստված, և նրա երկրպագուները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն (Հովհ. Դ 23-24):

գ. Եսային լավ մարգարեացավ ձեր՝ կեղծավորներիդ մասին ասելով. «Այս ժողովուրդը ինձ շրթունքներով է մեծարում, բայց նրանց սրտերը ինձանից հեռու են. իզուր են պաշտում (Մարկ. Է 6-7):

դ. Պիտի աղոթեմ հոգով, պիտի աղոթեմ նաև մտքով (Ա Կորնթ. ԺԴ 15):

ե. Ամեն ժամ պետք է արդոթն և չձանձրանան (Ղուկ. ԺԸ 1):

գ. Արթուն եղեք աղոթքի համար (Ա Պետ. 7):

է. Հավատով թող խնդրի և թող չերկմտի, որովհետև ով երկմիտ է, նման է ծովի հողմակոծ և տարուբերվող ալիքների: Այդպիսի մարդը չակնկալի Աստծուց որևէ բան ստանալ (Հակ. Ա 6-7):

ը. Ամեն ինչ աղոթք անելով խնդրեք և հավատաք, թե կստանաք, կտրվի ձեզ (Մարկ. ԺԱ 24):

թ. Ամուր պահեք շնորհը և այդ շնորհով էլ ծառայենք Աստծուն՝ իրեն հաճելի ձևով՝ ահով և դողով (Եբր. ԺԲ 28):

ժ. Ահով ու դողով աղոթք անենք նրա առաջ (Ժամագիրք):

ժա. Երբ աղոթքի կանգնեք, թե մեկի դեմ մի բան ունեք, ներեցե՛ք (Մարկ. ԺԱ 25):

436, 437, 438, 439, 440, 441. Արժանավորապես աղոթելիս Տիրոջից ստանում ենք ամենայն հոգեկան և մարմնական բարիքներ, հաղթահարում ենք մեղքերը, վանում ենք վշտերը, մխիթարում ենք հոգով, ապավինում ենք ընդդեմ զանազան փորձությունների և դևի և ստանում ենք հավիտենական փրկություն:

ա. Եթե դուք չար եք, գիտեք ձեր որդիներին բարի պարզևներ տալ, որքա՛ն ևս առավել ձեր հայրը, որ երկնքում է, բարիքներ կտա նրանց, որ նրանից ուզում են (Մատթ. Է 11):

բ. Եթե ձեզանից մեկը իմաստությամբ թերի լինի, թող խնդրի Աստծուն, որ բոլորին այն տալիս է առավելապես և չի հանդիմանում (Հակ. Ա 5):

գ. Ձեզանից մեկը վշտի՞ մեջ է ընկել, թող աղոթի. մեկը բերկրանքի՞ մեջ է, սաղմոս թող ասի (Հակ. Ե 13):

ե. Արթուն մնացեք և աղոթք արեք, որպեսզի փորձության մեջ չընկնեք (մատթ. իգ. 41):

զ. Արթուն եղեք, քանի որ ձեր ոտխը՝ Սատանան, մռնչում է առյուծի պես, շրջում և փնտռում է, թե ում կուլ տա: Դիմադրեցեք նրան հաստատուն լինելով հավատի մեջ (Ա Պետ. 8-9):

է. ամեն ոք, ով Տիրոջ անունը կանչի, պիտի փրկվի (Գործք. Բ 21):

## Վերջաբան

«Սուրբ առաքյալներից ավանդված այս դավանությունը, որպես ատվածային ժառանգություն, որդին հորից առնելով հասցրին մինչև մեզ (Սուրբ Հայրերը)առանց հերձվածներին խառնելու... Իսկ մենք Սուրբ Գրքի այս ամբողջ վարդապետությունը ոչ միայն անարատ պիտի պահենք, այլև աղոթքներովառ Աստված հավիտյան պիտի կանչենք ու ասենք... Ո՛վ Հայր և Որդի և Սուրբ Հոգի, Երրորդություն անբաժանելի, քո ավանդած ուղղափառ դավանության խոստովանությունը հաստատուն և աներեր պահիր մեզանում: Չլինի, որ մենք հենց այնպես իմանանք ու ասենք մեր տկարամիտ խոսքերով, այլ դու՝ քո բնությամբ անփոխարինելիդ, ինչպես որ գիտես քո անպատմելի ու խորին իմաստությամբ և որպես եսդ անփոխարինելի քո բնությամբ, այդպես էլ մատակարարիր ու ծանուցիր մեզ այն և մեր բերանները բա՛ց արա նրա խոստովանության համար: Քանի որ մենք մեր գիտությամբ ու իմացությամբ եթե չենք կարող ամբողջապես իմանալ

քո չնչին արարածներին, էլ ինչպես կարող ենք իմանալ քեզ՝ արարածներիս Արարչիդ: Որովհետև ինչ որ ասում ենք քո մասին, ասում ենք այն, ինչ կա քո շուրջը, և ոչ թե քո բնության մասին ենք պատմում: Բացի դրանցից, եթե մեր մարդկային տկարությամբ խոսենք քո անպատմելի փառքի մասին, լինելով մարդ ու մեր խոսքերում հզտությամբ սայթաքող, կարող ենք թույլ տալ զանցանք ըկամ հանցանք, դու, որպես մարդասեր ու ներող, գթա՛ ու թողություն տուր մեզ. եվ քո ճշմարտությունը դի՛ր մեր շրթունքներին որպես ամուր դուռ, որպեսզի մեր բերանները չբացենք առանց քո կամքի: Եվ քո հովիվներիու հոտի այս սուրբ եկեղեցու ամբողջ բազմությունը խնամի՛ր մարմնով ու պահի՛ր ուղղափառ հավատով՝ ըստ առաքելական ավանդությունների, մինչև քո մյուս գալուստը երկնքից» (Սարգիս Շնորհալի, Մեկն. Բ Պետ. հորդորակ Զ):